

# Տ ԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

դատական գործերի  
ժողովածու  
2011-2013

գիրք III



Կազմեցին՝

Շ. Մ. Դոյրոյան, բ.գ.թ

Գ.Ղ. Հայրապետյան

Դատական գործերի ժողովածուում ներկայացված են տեղեկատվության ազատության ոլորտում ՀՀ-ում 2011-2013թ.թ.-ի ընթացքում ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերը: Ներկայացված է յուրաքանչյուր գործի համառոտ նկարագրությունը առնչվող բոլոր փաստաթղթերով՝ հայցադիմում, դատարանի վճիռ և այլն: Ժողովածուն ներառում է նաև տեղեկատվության ազատության դատական պրակտիկայի վերլուծություն, որում ամփոփվում են տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական պրակտիկայի վիճակագրությունը, հիմնական խնդիրները և դրական տեղաշարժերը:

Ժողովածուն հասցեագրված է ոչ միայն ՏԱ ոլորտի մասնագետներին, իրավաբաններին և լրագրողներին, այլև՝ ընթերցողների լայն շրջանակին:

www.foi.am



Դատական գործերի ժողովածուն հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Գրքում արտահայտված տեսակետները հեղինակային են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

- © Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2013թ.
- © Շ. Դոյրոյան, 2013թ.
- © Գ. Հայրապետյան, 2013թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Տեղեկատվության ազատության դատական պրակտիկան 2011-2013.....</b>	<b>5</b>
<b>ԳԼՈՒԽ I</b>	
<b>SU դատական պրակտիկան.....</b>	<b>11</b>
<b>ԳԼՈՒԽ II</b>	
<b>ԻԱԿ դատական գործերի վիճակագրությունը.....</b>	<b>23</b>
<b>ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.....</b>	<b>33</b>
<b>Գործ 1.</b> ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի.....	<b>34</b>
<b>Գործ 2.</b> ԻԱԿ-ն ընդդեմ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի .....	<b>42</b>
<b>Գործ 3.</b> ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության .....	<b>54</b>
<b>Գործ 4.</b> ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության .....	<b>62</b>
<b>Գործ 5.</b> ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության.....	<b>77</b>
<b>Գործ 6.</b> ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերության.....	<b>108</b>
<b>Գործ 7.</b> ԻԱԿ-ն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ փակ բաժնետիրական ընկերության.....	<b>145</b>
<b>Գործ 8.</b> ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի Դեմոկրատական կուսակցության.....	<b>159</b>
<b>Գործ 9.</b> ԻԱԿ-ն ընդդեմ Բարգավաճ Հայաստան կուսակցության .....	<b>204</b>
<b>Գործ 10.</b> ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության .....	<b>211</b>

<b>Գործ 11.</b> ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի.....	<b>236</b>
<b>Գործ 12.</b> ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության.....	<b>297</b>
<b>Գործ 13.</b> ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի հանրապետության Ազգային ժողովի.....	<b>306</b>

# Տեղեկատվության ազատության դատական պրակտիկան 2011-2013

## Ներածություն

**Տ**եղեկատվության ազատության ոլորտը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով, ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով եւ այլ իրավական ակտերով: Հայաստանը որպես մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ, ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող կարեւորագույն միջազգային փաստաթղթերը: Դրանով իսկ Հայաստանը պարտավորվել է հարգել մարդու իրավունքները, այդ թվում՝ արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության իրավունքները:

2005թ.-ից ի վեր Ինֆորմացիայի ազատության կենտրոնն (այսուհետ՝ նաեւ ԻԱԿ) իրականացնում է տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության առաքելությունը: Որպես տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության կարեւորագույն երաշխիք՝ ԻԱԿ-ի ընտրած հիմնական գործիքներից մեկը ռազմավարական դատական գործերի ստեղծումն է: Այսպես, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ոչ միայն ՏԱ իրավունքի խախտման դեպքում պաշտպանում է ՏԱ իր իրավունքը,

այլ նաեւ իրականացնում է ռազմավարական դատավարություն:

Որպես կանոն՝ դատարան դիմելիս իրավաբանները կամ փաստաբանները կոնկրետ դատական գործերով ներկայացնում են իրենց վստահորդների շահերը: Այսինքն, ուսումնասիրում են համապատասխան օրենսդրությունը եւ ձգտում են դատարանում հասնել իրենց վստահորդի համար դրական արդյունքի, այլ կերպ ասած՝ հաղթել դատական գործը: Սակայն որոշ դեպքերում, նախաձեռնվում են դատական գործեր, որոնց նպատակը շատ ավելի լայն է, քան միայն կոնկրետ գործով հաղթանակը կամ վստահորդի մասնավոր շահը. նման գործերը հիմնականում կրում են կամ օրենսդրական փոփոխությունների նպատակ, կամ էլ միտված են սահմանելու օրենսդրության այնպիսի կիրառում, որը կազդի ամբողջ հասարակության վրա<sup>1</sup>: Այսպիսի դատական գործերի նախաձեռնումն էլ հենց ըստ էության ռազմավարական դատավարությունն է:

Ռազմավարական դատավարությունը ներառում է այնպիսի դատական գործերի ընտրություն եւ նախաձեռնություն, որոնց նպատակն է հասարակության մեջ խրախուսել

1. Տես՝ НПО “Эдвокаси Центр по Правам Человека” («Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ»), Стратегические судебные процессы: возбуждение судебного разбирательства в интересах общественности, <http://www.advocacy.kg>.

զգալի փոփոխություններ: Ռազմավարական դատավարություն նախաձեռնելու նպատակն է հասնել երկարատև արդյունքի, այլ ոչ թե հաղթել դատական գործը տվյալ պահին: Սա նշանակում է, որ ռազմավարական դատավարությունները կենտրոնացած են ոչ թե տվյալ դատական գործի վերջնական արդյունքի վրա, այլ այնպիսի արդյունքների ձեռքբերման վրա, որոնք կազդեն հասարակության լայն շերտերի եւ պետական կառավարման մարմինների կամ իշխանության վրա<sup>2</sup>: Այլ խոսքերով՝ ռազմավարական դատավարությունների դեպքում հաղթանակը պարտադիր չէ: Ավելին, երբեմն, ռազմավարական դատավարության ռազմավարական նպատակներից մեկն էլ կարող է լինել կոնկրետ դատական ատյանում դատական գործի պարտությունը:

Ռազմավարական դատավարությունները երբեմն կոչվում են «հանրային շահի պաշտպանության դատական գործեր»: Այս անվանումն էլ ավելի է հստակեցնում ռազմավարական դատավարության իմաստը:

Հայտնի իրավապաշտպան, Կոլումբիայի համալսարանի (ԱՄՆ) իրավունքի պրոֆեսոր Ջեյ Գրինբերգը հանրային շահի պաշտպանության նկատառումով նախաձեռնված դատական գործերի՝ ռազմավարական դատավարության, ազդեցության 2 հիմնական տեսակ է առանձնացնում: Նախ՝ ռազմավարական դատական գործերը ստիպում են դատարաններին մեկնաբանել օրենքը, հստակ ձեւակերպել կամ կանխորոշել սահ-

մանադրությամբ, օրենքներով կամ պայմանագրերով ներկայացված իրավունքներն այնպես, որ կառավարության կամ հասարակության կողմից թույլ տրված իրավախախտումներն ստանան համարժեք արձագանք, իսկ իրավախախտումներից տուժողները՝ համապատասխան օգնություն:

Երկրորդ՝ հանրային շահի պաշտպանության նկատառումով նախաձեռնված դատական գործերը ստիպում են դատարաններին կիրառել այնպիսի օրենքներ եւ նորմեր, որոնք կամ անտեսված են կամ չեն կիրառվում բավարար չափով: Թեեւ պրոֆեսոր Գրինբերգը ներկայացրել է ռազմավարական դատավարությունների ազդեցության տեսակները ԱՄՆ-ում ռազմավարական դատավարությունների փորձի հիման վրա, սակայն նրա ձեւակերպումը բավական հստակ կիրառելի է նաեւ ռազմավարական դատավարությունների նախաձեռնման եվրոպական պրակտիկայի նկատմամբ:

2005թ.-ից ի վեր իրականացնելով տեղեկատվության ազատության իրավունքի խախտման վերաբերյալ բազմաթիվ դատական գործեր (2005-2013թ.թ.-ին ԻԱԿ-ը նախաձեռնել է 41 դատական գործ)՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է ռազմավարական դատավարություն: Այս գործընթացի շնորհիվ ԻԱԿ-ն աստիճանաբար ձեւավորել է տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական նախադեպային դրական պրակտիկա՝ կանխարգելելով ՏԱ իրավունքի խախտումներ:

2. Տես՝ Child Rights International Network, (Երեխայի իրավունքների միջազգային ցանց), <http://www.crin.org>, “What is strategic litigation?” («Ի՞նչ է ռազմավարական դատավարությունը»), ուղեցույց (հեղինակ՝ Պատրիկ Գիրի), 2009թ.:

րը, ինչպես նաեւ կրթելով պաշտոնյաներին:

Ինչպես նշեցինք, ռազմավարական դատավարություն իրականացնելիս կոնկրետ գործով հաղթանակն այնքան կարեւոր չէ, որքան այն հեռահար նպատակի իրականացումը, որի համար նախաձեռնվել է տվյալ դատական գործը: Այսպիսի ռազմավարական դատավարության վառ օրինակ է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի դիմումը ՀՀ Սահմանադրական դատարան:

ԻԱԿ-ը դիմել էր Սահմանադրական դատարան՝ խնդրելով հակասահմանադրական ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ եւ 152-րդ հոդվածները: Այդ հոդվածները սահմանում էին, որ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաներին վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: 2010թ.-ի փետրվարի 5-ին ՀՀ Սահմանադրական դատարանը, քննելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ եւ 152-րդ հոդվածները Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ ԻԱԿ-ի դիմումը, թեեւ որոշեց, որ նշյալ հոդվածները Սահմանադրությանը չեն հակասում, սակայն միաժամանակ արձանագրեց, որ խնդիրը այս ոլորտում օրենսդրական բացի առկայությունն է: Անհրաժեշտ է, որպեսզի իրավասու մարմինը, այսինքն՝ ՀՀ Ազգային ժողովը հա-

մապատասխան նախաձեռնություն իրականացնի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բարեփոխումներ կատարելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի օրենսդրական բացը լրացնելու համար<sup>3</sup>: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի այս նախաձեռնությունն անհետեւանք չմնաց. 2011թ.-ի հունվարի 31-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենք, որով հստակեցվեց նաեւ մարդկանց՝ տեղեկություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը: Փոփոխությունների համաձայն՝ ՏԱ իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու համար այլեւս վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն անհրաժեշտ չէ:

Այսինքն, տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու փաստն արդեն բավարար է պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Արդյունքում, ի վերջո սկսեց գործել ավելի քան 10 տարի չգործած ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը, որը տեղեկատվություն չտրամադրող պաշտոնատար անձանց համար պատասխանատվություն է սահմանում<sup>4</sup>:

3. Տես՝ 2010թ.-ի փետրվարի 5-ի ՍՂՈ-864 որոշում, ՍԴ որոշումը տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի [www.concourt.am](http://www.concourt.am) կայքի ՍԴ որոշումներ բաժնում:

4. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած բոլոր դատական գործերը ներկայացված են ԻԱԿ-ի՝ [www.foi.am](http://www.foi.am) կայքի «Ռազմավարական դատավարությունՄՆ բաժնի «Դատական գործերՄՆ ենթաբաժնում, <http://foi.am/hy/all-cases/page/1/>

հնչպես տեսանք, թեև ԻԱԿ-ի դիմումը ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից մերժվեց, սակայն, արդյունքում հանգեցրեց օրենսդրական փոփոխությունների եւ կարգավորեց տեղեկություն ստանալու իրավունքը ոտնահարած պաշտոնյաներին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման սկզբնական տարիներին՝ 2005-2007թ.թ.-ին, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերը կրում էին կրթական բնույթ. ԻԱԿ-ի՝ դատական գործեր նախաձեռնելու ռազմավարական իմաստը նաեւ պաշտոնյաներին տեղեկատվության ազատության իրավունքի մասին տեղեկացնելն էր: Պատահական չէ, որ 2005թ.-ին ԻԱԿ-ի նախաձեռնած 7 դատական գործերից 5-ի դեպքում մինչեւ դատարանի կողմից վճիռ կայացնելը պատասխանող կողմն արդեն տրամադրել էր դատական գործի առիթ դարձած տեղեկությունները:

Սկզբնական շրջանում՝ 2005-2007թ.թ., ԻԱԿ-ը որպես կանոն դատարաններին էր դիմում տեղեկություն տնօրինող մարմինների կողմից իր հարցումների պատասխանը չստանալու դեպքում բացառապես տեղեկություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջով: Սա եւս հաստատում է, որ սկզբնական շրջանում ԻԱԿ-ի նախաձեռնած դատավարությունների ռազմավարական նշանակությունը ՏԱ իրավունքի մասին տեղեկացնելն ու կրթելն էր, օրենքի նախնական կիրառումն ապահովելը:

ԻԱԿ-ի ռազմավարական դատավարություններն ունեն նաեւ կանխար-

գելիչ նշանակություն: Պրակտիկան ցույց է տալիս, որ մեկ անգամ հայտնվելով դատարանում՝ տեղեկություն տնօրինող մարմինը որպես կանոն վերանայում է իր աշխատածը ՏԱ ոլորտում: Ամեն դեպքում, այդ է վկայում ԻԱԿ-ի փորձը: Մեծամասամբ բոլոր մարմինները, ում դեմ ԻԱԿ-ը դատական գործեր է նախաձեռնել, որպես կանոն, այլեւս չեն արժանացել ԻԱԿ-ի քննադատությանը որպես ՏԱ իրավունքը խախտողներ:

Այսպես, ԻԱԿ-ն ամեն տարի հրապարակում է տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաների Սեւ ցուցակ, որտեղ ներառվում են տեղեկատվության ազատության իրավունքը խախտած մարմինների ղեկավարները: ԻԱԿ-ի նախաձեռնած բոլոր (41) դատական գործերից միայն 1-ի պատասխանողն է, որ դատարանում հայտնվելուց հետո հայտնվել է ԻԱԿ-ի՝ հաջորդ տարիների Սեւ ցուցակում: Դա «Հայ ազգային կոնգրես» դաշինքն է, որի դեմ ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործն ավարտվել էր 2009թ.-ին: Դաշինքը հայտնվել էր ԻԱԿ-ի՝ 2009թ.-ի Սեւ ցուցակում: Մի քանի տարի անց՝ 2012թ.-ին դաշինքը կրկին հայտնվեց ԻԱԿ-ի Սեւ ցուցակում՝ տեղեկություն ստանալու հարցմանը չպատասխանելու համար: Մնացած բոլոր դեպքերում, ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերով պատասխանողները, հայտնվելով տվյալ տարվա Սեւ ցուցակում, դատական գործի ավարտից հետո այլեւս երբեք չեն հայտնվել ԻԱԿ-ի՝ հետագա տարիների Սեւ ցուցակներում:

Տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման պրակտիկայի զարգացմանը զուգահեռ փոխվեցին նաեւ ՏԱ իրավունքի դատական



պաշտպանության խնդիրները: 2008թ.-ից սկսած ռազմավարական դատավարությունների առումով այլևս ժամանակավրեպ էր դատարաններին ներկայացնել միայն ՏԱ իրավունքը խախտած մարմիններին պահանջվող տեղեկությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջ: Անհրաժեշտ էր արդեն, որպեսզի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին արդեն ծանոթ պաշտոնյայի մոտ ձեւավորվի պարտավորվածության զգացում՝ տեղեկություն հարցմանը պատասխանելու համար, որպեսզի պաշտոնյան սկսի գիտակցել ՏԱ իրավունքի կարեւորությունը եւ հասկանա, որ տեղեկություն ստանալու իրավունքը ոտնահարելը անօրինական գործողություն է, ինչը պատասխանատվություն է առաջացնում:

Այսպիսով, 2008թ.-ից ի վեր հնֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերի դեպքում ԻԱԿ-ն ավելի հաճախ սկսեց դատարանից պահանջել վարչական պատասխանատվության ենթարկել ՏԱ իրավունքը խախտած պաշտոնյային<sup>5</sup>: Սակայն վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջները դատարանների կողմից մերժվում էին:

Մինչ 2013թ.-ը բացառիկ եւ միակ դեպքը պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկե-

լու վերաբերյալ ԻԱԿ-ն ընդդեմ Ելփի-նի գյուղապետարանի գործն էր: 2009թ.-ի հուլիսի 6-ին ՀՀ վարչական դատարանը՝ դատավոր Արթուր Պողոսյանի նախագահությամբ, դատական պրակտիկայում աննախադեպ վճիռ կայացրեց՝ բավարարելով Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հայցը՝ պաշտոնատար անձին տեղեկատվություն չտրամադրելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին<sup>6</sup>: Այս որոշման արդյունքում Վայոց ձորի մարզի Ելփի-նի գյուղապետ Խորեն Ավետիսյանը 50.000 դրամ տուգանք վճարեց պահանջվող տեղեկատվությունը ԻԱԿ-ին չտրամադրելու համար: ԻԱԿ-ի ռազմավարական դատավարությունների արդյունքում վերհանվեց ՏԱ գործերով պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական խնդիրը, որն իր լուծումը ստացավ ԻԱԿ-ի կողմից ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու արդյունքում, երբ դատարանը, մերժելով ԻԱԿ-ի դիմումը, փաստեց օրենսդրական բացի առկայությունը, իսկ ՍԴ-ի որոշումից հետո ՀՀ ԱԺ-ն օրենսդրական փոփոխությունների միջոցով վերացրեց ՏԱ իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական բացի խընդոտը:

2009թ.-ը նշանավորվեց ռազավարական նշանակության 2 գործով, որոնք

5. 2008թ.-ից ի վեր ԻԱԿ-ը նախաձեռնել է 33 դատական գործ, որոնցից 18-ի դեպքում ներկայացրել է վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջ: Այս 18 դատական գործերից 4-ը դեռ չեն ավարտվել (2013թ.-ի օգոստոսի 31-ի դրությամբ), 7-ի դեպքում հաշտություն է կնքվել, 5 դեպքում պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը դատարանների կողմից մերժվել է եւ միայն երկու դեպքում՝ բավարարվել:

6. 2013թ.-ին ՀՀ վարչական դատարանը ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի գործով կայացրած որոշմամբ երկրորդ անգամ տեղեկություն տնօրինող մարմնին ենթարկեց վարչական պատասխանատվության ՏԱ իրավունքը խախտելու համար:

նախաձեռնել էին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը եւ «Առավոտ» օրաթերթը (լրագրող Արամ Չաքարյանը): Այս գործերով առաջին անգամ դատարանում քննության առարկա դարձան Էլեկտրոնային փոստով ուղարկված հարցումները:

2009թ.-ի դեկտեմբերի 1-ին ԻԱԿ-ը եւ «Առավոտ» օրաթերթը համատեղ հայցեր ներկայացրեցին ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի եւ ՀՀ Լոռու մարզպետարանի: Այս գործերով դատարանում քննարկման առարկա էր դարձել այն ժամանակ «Առավոտ» օրաթերթի լրագրող Արամ Չաքարյանի Էլեկտրոնային հարցումը: Նշենք, որ ՏԱ մասին ՀՀ օրենքը Էլեկտրոնային հարցումների ներկայացման եւ դրանց պատասխանելու կարգ չի սահմանում: Շիրակի մարզպետարանի դեպքում մարզպետարանի հայտնել էր, որ տեղեկատվություն ստանալու հարցումը չի ստացել, քանի որ առկա է եղել տեխնիկական խնդիր: Մարզպետարանը պատրաստակամություն է հայտնել տրամադրել պահաջվող ողջ տեղեկատվությունը, ուստի կողմերի միջեւ կնքվեց հաշտություն (*գործի մասին ավելի մանրամասն տես՝ ԻԱԿ-ի [www.foi.am](http://www.foi.am) կայքի «Ռազմավարական դատավարություն» բաժնի «Ղատական գործեր» ենթաբաժնում, գործ՝ թիվ 27*):

Իսկ Լոռու մարզպետարանի դեպքում նույնպես մինչեւ դատաքննության ավարտը մարզպետարանը տրամադրեց պահանջվող տեղեկությունները, սակայն այս դեպքում դատարանները գտան, որ մարզպետարանի կայքում տեղադրված Էլեկտրոնային փոստի հասցեն, որով ուղարկվել էր հարցումը, պաշտոնական չէ, եւ որ ոչ պաշտոնական Էլեկտրոնային

փոստի հասցեով Էլեկտրոնային տարբերակով ուղարկված հարցմանը չպատասխանելը չի կարող գնահատվել ոչ իրավաչափ (*գործի մասին ավելի մանրամասն տես՝ [www.foi.am](http://www.foi.am) կայքի «Ռազմավարական դատավարություն» բաժնի «Ղատական գործեր» ենթաբաժնում, գործ՝ թիվ 28*):

Ռազմավարական այս գործը մատնացույց արեց Էլեկտրոնային հարցումներ ներկայացնելու եւ Էլեկտրոնային հարցումներին պատասխանելու կարգերի օրենսդրական բացի եւ այդ բացը լրացնելու անհրաժեշտության վրա: Էլեկտրոնային հարցումների դեպքում ՏԱ իրավունքի խախտման դեպքերը գրեթե չեն դարձել դատարաններում քննության առարկա, ուստի այս ոլորտում ռազմավարական դատավարությունների կարիք կա:

2011թ.-ին ԻԱԿ-ի ռազմավարական դատավարություններին ավելացավ եւս մի ուղղություն. ԻԱԿ-ը սկսեց դատական գործեր նախաձեռնել հանրային նշանակության մասնավոր կազմակերպությունների դեմ: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը սահմանում է տեղեկություն տնօրինողների ցանկը, որտեղ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ մեկտեղ որպես տեղեկատվություն տնօրինող է սահմանում նաեւ հանրային նշանակության կազմակերպություններին եւ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններին:

Ըստ ՏԱ մասին ՀՀ օրենքի՝ հանրային նշանակության կազմակերպություն եւ այն ոչ պետական (այսինքն՝ մասնավոր) կազմակերպությունները, որոնք ապրանքային շուկայում մենա-

շնորհ կամ գերիշխող դիրք ունեն, ինչպես նաեւ հանրությանը ծառայություններ են մատուցում առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում: Բացի այդ, հնարավոր է, որ մասնավոր կազմակերպությունը ֆինանսավորում ստանա բյուջեներից (պետական կամ համայնքային): Այդպիսի մասնավոր կազմակերպությունները նույնպես՝ ըստ ՏԱ մասին ՀՀ օրենքի, համարվում են տեղեկատվություն տնօրինող:

2011թ.-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԻԱԿ-ը չորս դատական գործ սկսեց հանրային նշանակության կազմակերպությունների դեմ՝ ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության, ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ-ի (բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություն), «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի եւ ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի (*գործերի մասին ավելի մանրամասն տես՝ [www.foi.am](http://www.foi.am) կայքի «Ռազմավարական դատավարություն» բաժնի «Դատական գործեր» ենթաբաժնում, գործեր՝ թիվ 29, 31, 32 եւ 33*):

Այս գործերն ունեցան ռազմավարական երկու նշանակություն. նախ, բոլոր գործերով հանրային նշանակության կազմակերպությունները համարվեցին պատշաճ պատասխանողներ, այն է՝ դատական նախադեպով հաստատվեց ՏԱ մասին ՀՀ օրենքի այն դրույթը, ըստ որի՝ հանրային նշանակության կազմակերպությունները նույնպես տեղեկություն տնօրինողներ են: Նշենք, որ ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի եւ ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի գործերով ՀՀ վարչական դատարանն ի սկզբանե որոշում էր կայացրել մեր-

ժել ԻԱԿ-ի հայցադիմումները վարույթ ընդունել՝ գտնելով, որ հայցերը ենթակա չեն վարչական դատարանում քննության, քանի որ նշված ընկերություններն ուղղակի հանդիսանում են շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առեւտրային) ընկերություններ, հետեւաբար «ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից...»: Այլ կերպ ասած՝ դատարանը համարել էր, որ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ն եւ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն հանրային նշանակություն չունեն: Այնինչ, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշմամբ վերոնշյալ ընկերությունները Հայաստանում ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ են համարվում: ԻԱԿ-ն այս որոշումները բողոքարկեց ՀՀ վարչական վերաքննիչ դատարան եւ հասավ հաջողության. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը հաստատեց, որ վերոնշյալ կազմակերպություններն ունեն հանրային նշանակություն եւ պետք է հանդես գան որպես պատասխանող:

Ինչպես նշեցինք, այս գործերն ունեցան ռազմավարական երկու նշանակություն. ԻԱԿ-ն ըննդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի գործով դատարանը բավարարեց ԻԱԿ-ի պահանջը՝ տեղեկություն տնօրինող մարմնի դեկավարին ՏԱ իրավունքը խախտելու համար վարչական պատասխանատվության՝ տուգանքի ենթարկելու վերաբերյալ: Սա երկրորդ դեպքն էր (առաջինը ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետի դատական գործն էր), երբ տեղեկություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյան ենթարկվեց վարչական պատասխա-

նատվության տեղեկություն չտրամադրելու համար. «Դուստր Մարիանա» ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանը տեղեկություն չտրամադրելու համար ենթարկվեց վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 80.000 ՀՀ դրամի չափով (30.000 ՀՀ դրամ ԻԱԿ-ի առաջին հարցմամբ եւ 50.000 ՀՀ դրամ ԻԱԿ-ի կրկնակի հարցմամբ խնդրվող տեղեկությունները չտրամադրելու համար): Դատարանը նաեւ պարտավորեցրեց ՍՊԸ-ին փոխհատուցել ԻԱԿ-ի կատարած՝ 100.000 ՀՀ դրամ դատական ծախսերը:

2012-2013թ.թ.-ին, երբ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը գործում է արդեն շուրջ 10 տարի եւ համահայտնի է, փոխվեց նաեւ ԻԱԿ-ի ռազմավարական դատավարությունների բնույթը: Եթե նախկինում խնդիրը օրենքի մասին իրազեկելն էր եւ տեղեկություն տնօրինող մարմնից պատասխան ստանալը, ապա այժմ, երբ օրենքի եւ իրավունքի մասին պաշտոնյաները լայնորեն իրազեկված են, խնդիրն արդեն պատշաճ, լիարժեք պատասխաններ ստանալն է:

Այսպես, 2012-2013թ.թ.-ին ԻԱԿ-ի նախաձեռնած վեց դատական գործերից միայն երկուսի հիմքում է ընկած եղել տեղեկություն տնօրինողի լուռ մերժումը (երբ տեղեկություն տնօրինողը

անպատասխան է թողել ԻԱԿ-ի հարցումը):

Չորս դեպքում դատարանում վեճի առարկա է տեղեկություն տնօրինող մարմնից ԻԱԿ-ի ստացած պատասխանի բովանդակությունը եւ դրա պատշաճությունը: Դատական գործերից երեքի դեպքում վիճարկվել է տեղեկության տրամադրման մերժման հիմնավորվածությունը, իսկ մի դեպքում պատասխանի լիարժեքությունը: Նշենք, որ այս չորս դատական գործերն էլ դեռ չեն ավարտվել, ուստի գնահատել, թե ինչ արդյունք ունեն կամ կունենան ռազմավարական այս գործերը, դեռ վաղ է: Ռազմավարական այս գործերի արդյունքում կծեւավորվի դրական դատական պրակտիկա, որը կստիպի պաշտոնյաներին հասկանալ, որ տեղեկություն ստանալու հարցմանը թերի, խուսափող պատասխան, անհիմն մերժում կամ անհիմն պատասխան տրամադրելը տեղեկատվության ազատության իրավունքի նույնպիսի խախտումներ են, ինչպիսին հարցումն անպատասխան թողնելն է:

Չարկ է նշել, որ սույն վերլուծության բոլոր տվյալները, այդ թվում՝ չավարտված դատական գործերի մասին տվյալները, ներկայացված են 2013թ. օգոստոսի 31-ի դրությամբ:

## ԳԼՈՒԽ I

## ՏԱ դատական պրակտիկան

## 1.1 ՏԱ դատական պրակտիկայի ձեւավորումը

**Տ**եղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանությունը թափ առավ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 23-ին, ուժի մեջ մտել 2003թ. նոյեմբերի 15-ին), սակայն ՏԱ իրավունքի դատական պրակտիկան իրականում սկսել է ձեւավորվել դեռեւս մինչեւ օրենքի ընդունումը: Մինչեւ 2003թ.-ը ՏԱ մասին առանձին իրավական ակտ Հայաստանը չուներ, եւ ՏԱ իրավունքն ամրագրող հիմնական նորմը ՀՀ նախկին՝ չփոփոխված Սահմանադրության (ՀՀ Սահմանադրությունը փոփոխվել է 2005թ.-ին) 24-րդ հոդվածն էր, որը նույնական է այսօրվա ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածին.

*«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:*

Մինչեւ ՏԱ մասին օրենքի ընդունումը ՏԱ իրավունքը դատական կարգով պաշտպանել փորձում էին հիմնականում ոլորտում ակտիվ հասարակական կազմակերպությունները՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, Հետաքննող լրագրողների ընկերակցությունը, Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը եւ ավտովարորդների իրավունքների պաշտպա-

նության «Աքիլլես» կազմակերպությունը: Համակցելով Սահմանադրական 24-րդ հոդվածը միջազգային իրավական ակտերի դրույթների, ինչպես նաեւ հրապարակայնության եւ ՏԱ վերաբերյալ նորմեր պարունակող ներպետական այլ իրավական ակտերի հետ («ՉԼՍ մասին» ՀՀ օրենք, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենք), այս կազմակերպությունները փորձել են պաշտպանել ՏԱ իրենց իրավունքը, ինչը, սակայն, ոլորտը կարգավորող միասնական իրավական ակտի բացակայության պայմաններում բավական դժվար էր: Մեզ հայտնի է մինչեւ 2003թ.-ը ՏԱ ոլորտում հարուցված 6 դատական գործ, որոնցից միայն 2-ն էին ավարտվել հայցվոր ՀԿ-ի օգտին, այն էլ՝ մասնակի:

ՏԱ ոլորտում առաջին դատական գործը Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբը եւ «Իրավունք» շաբաթաթերթի թղթակից Գագիկ Նիկողոսյանն ընդդեմ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գործն է՝ հարուցված 2001թ.-ի օգոստոսի 30-ին: Այս գործն ավարտվեց հայցվորների պարտությամբ: Վերոնշյալ կազմակերպությունների նախաձեռնած դատական գործերը Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ներկայացրել է դատական գործերի իր I ժողովածուում (*Երեւան, 2006թ., հասանելի է ԻԱԿ-ի [www.foi.am](http://www.foi.am) կայքի «Հրապարակումներ» բաժնի «Գրքեր» ենթաբաժնում*):

Վաղուց արդեն ՏԱ վերաբերյալ դատական գործերի թիվը գերազանցում

Ե հարյուրը: Միայն ԻԱԿ-ը 2005թ.-ից մինչ օրս նախաձեռնել է 41 դատական գործ: Օրենքի ընդունումից հետո նախաձեռնված դատական գործերը սահմանեցին ՏԱ դատական պրակտիկայի զարգացման մի քանի ուղղություններ եւ նախանշեցին ռազմավարական այն կարեւոր հարցերը, որոնց լուծումը պետք է տրվի ՏԱ դատական պրակտիկայի եւ դատական նախադեպերի միջոցով:

## 1.2 ՏԱ դատական պրակտիկայի առանձնահատկությունները

2005թ.-ից ի վեր՝ արդեն 8 տարի է՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է ռազմավարական դատավարություն: Այս ընթացքում ԻԱԿ-ը նախաձեռնել է 41 դատական գործ: ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերի 80%-ը դրական ավարտ են ունեցել: Արդյունքում, ուրվագծվել է ՏԱ ոլորտում դատավարությունների զարգացման եւ ընթացքի որոշակի պրակտիկա, որի առանձնահատկություններին կանդրադառնանք ստորեւ:

### Հաշտություններ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերի մի մասն ավարտվել է պատասխանող կողմի հետ հաշտությամբ, երբ դատարանում պատասխանող կողմն ընդունել է իր մեղքը եւ տրամադրել է դատական գործի հիմքում ընկած եւ նախապես չտրամադրված տեղեկությունները: Այդպիսի գործերը 12-ն են, որոնցից 4-ի դեպքում կնքվել է գրավոր հաշտություն, իսկ 8-ի դեպքում ԻԱԿ-ը հրաժարվել է հայցից, քանի որ ստացել է անհրաժեշտ տեղեկությունները: ԻԱԿ-ի դատական գործերի պրակտիկան ցույց է տալիս, որ հաշտություն կնքվում է այն դեպքում, երբ խոսքը գնում է լուռ

մերժումների մասին, երբ տեղեկություն տնօրինող մարմինը նախապես անպատասխան էր թողել ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու հարցումը:

Միայն 2011-2013թ.թ.-ի ընթացքում նախաձեռնված եւ ավարտված 5 գործերից 3-ի դեպքում ԻԱԿ-ը հաշտություն է կնքել պատասխանող կողմի հետ (տես՝ սույն վերլուծության «Դրական ավարտ ունեցած գործեր» բաժնում): Այս բոլոր 3 դեպքերում էլ դատական գործի պատճառն այն էր եղել, որ տեղեկություն տնօրինողներն անպատասխան էին թողել ԻԱԿ-ի հարցումները, ապա, դատարանում պատրաստակամություն էին հայտնել տրամադրել խնդրվող տեղեկությունները եւ հաշտություն կնքել ԻԱԿ-ի հետ:

Առհասարակ, ԻԱԿ-ի նախաձեռնած բոլոր դատական գործերի համապատկերում՝ եթե դատական գործի հիմքում ընկած է եղել տեղեկություն տնօրինողի լուռ մերժումը, ապա այդ գործերի 90%-ի դեպքում դատաքննության ընթացքում տեղեկություն տնօրինողը տրամադրել է նախկինում չտրամադրած տեղեկությունները: Արդյունքում կա՛մ կնքվել է հաշտություն, կա՛մ ԻԱԿ-ը հրաժարվել է տեղեկություն տրամադրելու պարտավորեցնելու հայցապահանջից: Պրակտիկան ցույց է տալիս, որ հաշ-

տություն կնքելը եւս ունենում է դրական ազդեցություն տվյալ մարմնում ՏԱ ոլորտում դրական փոփոխություններ կատարելու եւ ՏԱ պրակտիկան զարգացնելու համար:

### ՀԿ-ն որպէս հայցվոր

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերի ընթացքում բացի բուն հայցապահանջները քննելուց եղել են դեպքեր, երբ խոսքը գնացել է դատավարական խնդիրների մասին: Այսպէս, մի դեպքում դատարանը համարել էր, որ հասարակական կազմակերպությունը պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարանին դիմելու իրավունք չունի:

2009թ.-ի ապրիլի 9-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր ՀՀ Վարչական դատարան ընդդէմ Չարթոնքի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրելու եւ Չարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով: Վարչական դատարանը Չարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով մերժել էր այն պատճառաբանությամբ, թէ հասարակական կազմակերպությունը վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով Վարչական դատարան դիմելու իրավունք չունի: 2009թ.-ի ապրիլի 23-ին ԻԱԿ-ը դիմեց ՀՀ Վարչական դատարանի նախագահին՝ խնդրելով վերացնել Վարչական դատարանի դատավորի որոշումը Չարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության՝ 50.000 ՀՀ դրամի չափով տուգանքի ենթարկելու պահանջի մասով ԻԱԿ-ի հայցը մերժելու մասին:

ՀՀ Վարչական դատարանը բավարարեց ԻԱԿ-ի բողոքը՝ ամրագրելով, որ հասարակական կազմակերպություն-

նը կարող է դիմել դատարան պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով:

Սա միակ դեպքն էր, երբ դատարանն անդրադարձել էր այն հարցին, թէ ունի արդյոք ՀԿ-ն դատարան դիմելու իրավունք՝ ՏԱ իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով: ԻԱԿ-ի նախաձեռնած մնացած բոլոր դատական գործերի դեպքում ԻԱԿ-ի՝ պատշաճ հայցվոր լինելու հանգամանքը դատարանները կասկածի տակ չեն անել:

### Վարչական իրավախախտման արձանագրություն

ՏԱ իրավունքը խախտելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն՝ 10.000-ից 50.000 դրամի չափով տուգանք: Սակայն այդ հոդվածը իրավախախտ պաշտոնյայի հանդեպ կիրառելը գրեթե անհնար էր: Պատճառը օրենսդրական բացն էր. ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 151-րդ եւ 152-րդ հոդվածների համաձայն՝ ՏԱ իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ էր դատարանին ներկայացնել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: Սակայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի չէր սահմանում այն իրավասու մարմին, որն իրավունք ուներ կազմելու այդ արձանագրությունը: Արդյունքում, արձանագրության պահանջը կար, իսկ արձանագրություն կազմող մարմինը՝ ոչ: Ուստի, դատարանները պաշտոնյանին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ պահանջները չէին բավարարում:

Այս իրավիճակը նաեւ ՏԱ դատական պրակտիկայում ստեղծում էր խառնաշփոթ. դատական պրակտիկայում նշված հարցի վերաբերյալ առկա է իրարամերժ մոտեցում, մասնավորապէս, վարչական դատարանի մի կազմը ԻԱԿ-ի հայցերը՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասով վարույթ չէր ընդունում, մյուս կազմը՝ վարույթ էր ընդունում՝ արձանագրելով, որ նման գործով արձանագրություն կազմող մարմին առկա չէ:

Արդյունքում, ԻԱԿ-ի նախաձեռնած բազմաթիվ դատական գործերով դատարանները մերժում էին ՏԱ իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու մասին ԻԱԿ-ի պահանջը (բացառությամբ ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետարանի դատական գործի):

Այս խնդիրն ԻԱԿ-ը փորձեց լուծել ՅՅ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ եւ 152-րդ հոդվածների սահմանադրականության հարցը բարձրացնելու միջոցով: 2009թ. -ի սեպտեմբերի 9-ին ԻԱԿ-ը դիմեց ՅՅ Սահմանադրական դատարան՝ ՅՅ Վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ եւ 152-րդ հոդվածները հակասահմանադրական ճանաչելու պահանջով: 2010թ. -ի փետրվարի 5-ին ՅՅ Սահմանադրական դատարանը որոշեց, որ այդ հոդվածները Սահմանադրությանը չեն հակասում: Սահմանադրական դատարանը արձանագրեց, սակայն, որ խնդիրը այս ոլորտում օրենսդրական բացի առկայությունն է: Անհրաժեշտ է, որպէսզի իրավասու մարմինը, այսինքն՝ ՅՅ Ազգային ժողովը համապատասխան նախաձեռնություն իրականացնի՝ ՅՅ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՅՅ օրենսգրքում բարեփոխումներ կատարելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտու-

տի օրենսդրական բացը լրացնելու համար:

Արդյունքում, 2011թ. հունվարի 31-ին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՅՅ օրենսգրքում ԱԺ-ն կատարեց փոփոխություններ, որի շնորհիվ տեղեկատվության ազատության վերաբերյալ գործերով վարչական իրավախախտման փաստի վերաբերյալ արձանագրություն կազմելու պահանջը վերացվեց. այդուհետ օրենսգրքի 254-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու դեպքում արձանագրություն չի կազմվում:

### **Վարչական պատասխանատվությունը**

Երկար ժամանակ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը մնում էր բաց: Դատարանները մերժում էին իրավախախտ պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու՝ ԻԱԿ-ի հայցապահանջները՝ օգտվելով օրենսդրական բացից:

Առաջին անգամ տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու համար պաշտոնյան վարչական պատասխանատվության՝ տուգանքի ենթարկվեց 2009թ. -ին: ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետարանի դեմ դատական գործով 2009թ. -ի հուլիսի 6-ին ՅՅ վարչական դատարանը՝ դատավոր Արթուր Պողոսյանի նախագահությամբ, դատական պրակտիկայում աննախադեպ վճիռ կայացրեց՝ բավարարելով ԻԱԿ-ի հայցը՝ պաշտոնատար անձին տեղեկատվություն չտրամադրելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով, որի արդյունքում դատարանը պարտավորեցրեց Վայոց ձորի մարզի Ելփինի



գյուղապետ Խորեն Ավետիսյանին 50.000 դրամ տուգանք մուծելու՝ պահանջվող տեղեկատվությունը ԻԱԿ-ին չտրամադրելու համար: Սա առաջին եւ երկար ժամանակ միակ բացառիկ դեպքն էր ՏԱ դատական պրակտիկայում: Նշենք, որ 2009թ.-ին դեռեւս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն չէր կատարվել եւ ՏԱ իրավունքի խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ էր վարչական իրավախախտման արձանագրություն, որը, օրենսդրական բացի պատճառով հնարավոր չէր կազմել: Չնայած օրենսդրական բացի առկայությանը՝ դատարանն իր վճռով պաշտպանեց տեղեկություն ստանալու մարդու հիմնարար իրավունքը:

Հաջորդ նման վճիռը կայացվեց 4 տարի անց՝ 2013թ.-ին. 2013թ.-ի փետրվարի 19-ին ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի գործով ՀՀ վարչական դատարանն ամբողջությամբ բավարարեց «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու ԻԱԿ-ի պահանջը՝ տուգանք՝ 80.000 ՀՀ դրամի չափով, որից 30.000 ՀՀ դրամը ԻԱԿ-ի առաջին հարցմամբ եւ 50.000 ՀՀ դրամը ԻԱԿ-ի կրկնակի հարցմամբ խնդրվող տեղեկությունները չտրամադրելու համար: Նույն դատական գործով դատարանը պարտավորեցրեց նաեւ պատասխանող «Դուստր Մարիաննա» ընկերությանը փոխհատուցել ԻԱԿ-ի կատարած՝ 100.000 ՀՀ դրամ դատական ծախսերը եւ 3.000 ՀՀ դրամ վճարած պետական տուրքի գումարը:

Այսպիսով, ՏԱ իրավունքը խախտելուց առաջ տեղեկություն տնօրինող մարմնի ղեկավարը/պաշտոնյան այլեւս պետք է հասկանան, որ դատարանում հայտնվելով նրանք ոչ միայն կպարտավորվեն տրամադրել պա-

հանջված տեղեկությունները, այլ նաեւ ստիպված կլինեն վճարել սեփական գրպանից՝ որպես տուգանք, իսկ տեղեկություն տնօրինող մարմինը ստիպված կլինի փոխհատուցել դատական ծախսերը:

## Դատական ծախսերի փոխհատուցումը

Վերջին տարիներին ԻԱԿ-ի նախաձեռնած դատական պրակտիկան զարգանում է այն ուղղությամբ, որ պատասխանող կողմի պարտության դեպքում պատասխանող կողմի վրա է դրվում նաեւ հայցվորի դատական ծախսերի փոխհատուցումը: Բնականաբար, վարչական եւ քաղաքացիական դատական գործընթացներում հայցվորի հաղթանակի դեպքում հայցվորի կրած նյութական վնասի փոխհատուցումը նորություն չէ, սակայն տեղեկատվության ազատության վերաբերյալ գործերում դատական ծախսերի փոխհատուցումը կարծես թե մղված էր ետին պլան: Սակայն վերջին տարիներին ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերը լրացնում են նաեւ այս բացը:

Ինչպես նշեցինք վերլուծության «Վարչական պատասխանատվությունը» բաժնում, 2013թ.-ի փետրվարի 19-ին ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի գործով ՀՀ վարչական դատարանը պարտավորեցրել էր պատասխանող ՍՊԸ-ին փոխհատուցել ԻԱԿ-ի կատարած դատական ծախսերը: Նմանատիպ եւս 2 վճիռ կայացվեց 2012թ.-ին. 2012թ.-ի նոյեմբերի 23-ին ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի դատական գործով Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը պարտավորեցրեց ՊՀ-ին ԻԱԿ-ին տրամադրել պահանջած ողջ

տեղեկատվությունը եւ փոխհատուցել դատական ծախսերը՝ պետտուրքը եւ փաստաբանին վճարված ծախսերը՝ 63.500 ՀՀ դրամի չափով: 2013թ.-ի օգոստոսի 31-ի դրությամբ այս գործը չի ավարտվել եւ գտնվում է ՀՀ վճարբեկ դատարանի վարույթում:

ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության դատական գործով 2012թ.-ի դեկտեմբերի 21-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը ճանաչեց Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ

պարտավորեցրեց ՀԿ-ին տրամադրել տեղեկատվություն եւ փոխհատուցել ԻԱԿ-ի կողմից վճարված պետական տուրքի գումարը եւ փաստաբանի վարձատրության գումարը՝ 100.000 ՀՀ դրամի չափով: ՀԿ-ն բողոքարկեց դատարանի վճիռը վերաքննության կարգով, ապա, ստանալով մերժում, նաեւ վճարբեկության կարգով: Սակայն ՀՀ վճարբեկ դատարանը 2013թ.-ի հունիսի 26-ին կայացրած որոշմամբ վերադարձրեց կուսակցության բողոքը՝ ուժի մեջ թողնելով ԻԱԿ-ի օգտին կայացված՝ առաջին ատյանի դատարանի վճիռը:

### 1.3 ՏԱ դատական պրակտիկայի խնդիրները

2011-2013թ.թ. ընթացքում ԻԱԿ-ի նախաձեռնած 11 դատական գործերը հնարավորություն տվեցին մի շարք վերլուծություններ անել տեղեկատվության ազատության ոլորտում վերջին մի քանի տարիների արդարադատության իրականացման պրակտիկայի շուրջ եւ վերհանել տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտող մի քանի խնդիրներ:

#### Դատարանների կախվածությունը գործադիր իշխանությունից

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 80% դեպքերում նախաձեռնված դատական գործն ունենում է դրական ավարտ: Սա նշանակում է, որ ի տարբերություն նախորդ տարիների՝ այսօր արդեն դատարաններն ավելի քիչ են կաշկանդված պետական մարմինների դեմ վճիռ կայացնելու հարցում: Մյուս կողմից՝ դեռեւս շատ չեն

ՏԱ իրավունքը խախտելու համար վարչական պատասխանատվության ենթարկված պաշտոնյաները: Ուստի, կաշկանդված են արդյոք դատարանները ՏԱ իրավունքը խախտած պաշտոնյաներին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցում, ցույց կտա հետագա տարիների դատական պրակտիկան: Բացի այդ, պրակտիկան ցույց է տալիս, որ դատական գործը շահելով՝ ԻԱԿ-ը դեռեւս կարողացել է իր դատական ծախսերի փոխհատուցումը ստանալ բացառապես ոչ պետական կազմակերպությունների դեմ դատական գործերի դեպքում, իսկ պետական մարմինների դեպքում՝ ոչ: Սա եւս մեկ անգամ խոսում է գործադիր իշխանությունից դատարանների կախվածության մասին:

#### Դատական ակտերի չկատարում

Որոշ դեպքերում դատարանի վճիռը սահմանված ժամկետներում չի կատարվում պատասխանողների կող-

միջ: Ինչպես նախկինում, 2011-2013թ.թ.-ին էլ Իֆորմացիայի ազատության կենտրոնը որոշ դեպքերում ստիպված է եղել դիմել Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն՝ տեղեկություն տնօրինողին դատարանի վճիռը կատարելուն պարտավորեցնելու համար:

### **Դատարանի նկատմամբ վստահության պակաս**

ՏԱ դատական պրակտիկայի ամենացավալի խնդիրներից է մնում դատարանների նկատմամբ վստահության պակասը: Այդ է վկայում այն փաստը, որ ՏԱ ոլորտում դատական գործեր նախաձեռնում են հիմնականում հասարակական կազմակերպությունները, լավագույն դեպքում՝ իրավապաշտպանները: 2011-2013թ.թ.-ի ընթացքում, եւ առհասարակ ԻԱԿ ողջ գործունեության ընթացքում, ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերից ոչ մեկի հիմքում ընկած չի եղել քաղաքացու՝ ՏԱ իրավունքի խախտումը, պատճառով, որ թեւէ շատ քաղաքացիներ են դիմել ԻԱԿ-ին խորհրդատվության համար, սակայն որեւէ քաղաքացի չի դիմել տեղեկատվության ազատության իր խախտված իրավունքի դատական պաշտպանության համար: 2011-2013թ.թ.-ին ԻԱԿ-ի նախաձեռնած միայն 1 դատական գործ է հիմնված լրատվամիջոցի՝ «Անկախ» շաբաթաթերթի՝ ՏԱ իրավունքի խախտման վրա (հիշեցնենք, որ նախկինում ՏԱ իրավունքի խախտման վերաբերյալ եւս 2 դատական գործ ԻԱԿ-ն իրականացրել է «Առավոտ» օրաթերթի հետ համատեղ):

### **Իրավական նորմերի հակասական մեկնաբանում դատարանների կողմից**

Իրավագիտության մեջ ընդունված սկզբունք է, որ օրենքը պետք է լինի կանխատեսելի եւ կիրառվի միատե-

սակ (res judicata սկզբունքի պահանջ): Սա արտացոլված է նաեւ ՀՀ օրենսդրությունում, մասնավորապես՝ ՀՀ Դատական օրենսգիրքը նշում է, որ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները): Սա նշանակում է, որ յուրաքանչյուրն իրավունք ունի դատարանից ակնկալելու նմանատիպ գործով նմանատիպ վճռի կայացում, այնինչ, ԻԱԿ-ի դատական գործերի պրակտիկան ցույց է տալիս, որ բացարձակ նման գործերով միեւնույն դատարանը կարող է կայացնել տարբեր վճիռներ:

Այսպես, ՀՀ վարչական դատարանը 2 տարբեր վճիռներ կայացրեց ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի եւ ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի գործերով: Երկու կազմակերպություններին էլ ԻԱԿ-ը միեւնույն բովանդակությամբ հարցումն էր ուղարկել՝ խնդրելով հայտնել կազմակերպության կաթնամթերքը արտադրվում է բնական կաթից, թե՞ կաթնափոշուց, ինչպես նաեւ տրամադրել ցանկը, թե կազմակերպության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է: 2 կազմակերպություններն էլ ԻԱԿ-ի հարցումը թողել էին անպատասխան: Երկուսին էլ ԻԱԿ-ը դիմել էր կրկնակի հարցմամբ, սակայն կրկնակի հարցմամբ էլ պահանջվող տեղեկությունները չէին տրամադրվել:

ԻԱԿ-ը երկու կազմակերպությունների անգործությունը վիճարկեց դատական կարգով՝ հայցով դիմելով ՀՀ վարչական դատարան եւ խնդրելով

պարտավորեցնել կազմակերպություններին տրամադրել ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև տեղեկությունները չտրամադրելու համար կազմակերպությունների տնօրեններին ենթարկել վարչական պատասխանատվության: Այս երկու դեպքում էլ դատարանը գործը վարույթ էր ընդունել միայն կազմակերպությունների տնօրեններին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով:

«Դուստր Մարիաննա»-ի գործով ՀՀ վարչական դատարանը (դատավոր Ա. Դարբինյան) վճիռ կայացրեց 2013թ.-ի փետրվարի 19-ին, որով ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի հայցը՝ «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրենին տեղեկություն չտրամադրելու համար ենթարկելով վարչական պատասխանատվության եւ պարտավորեցնելով փոխհատուցել ԻԱԿ-ի կատարած դատական ծախսերը:

Իսկ «Աշտարակ-Կաթ»-ի գործով ՀՀ վարչական դատարանը (դատավոր Ա. Միրզոյան) վճիռ կայացվեց 2013թ.-ի մարտի 26-ին, որով ամբողջությամբ մերժեց ԻԱԿ-ի հայցը: ԻԱԿ-ը բողոքարկել է ՀՀ վարչական դատարանի վճիռը վերաքննության կարգով:

Նմանատիպ գործերով հակասական վճիռներ են կայացվել նաև ՀՀ վարչական դատարանը եւ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը: ԻԱԿ-ը «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկից, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալությունից եւ ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչությունից խնդրել էր միեւնույն տեղեկությունները՝

1. Ստացե՞լ են արդյոք պարզեա-

տրումներ Լիցենզավորման գործակալության (Ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցները 2011թ.-ին:

2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության (Ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցների ստացած դրամական պարզեատրումների ընդհանուր գումարը:
4. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության (Ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Երկու դեպքում էլ մերժվել էր ԻԱԿ-ի հարցման 2-րդ կետով խնդրված տեղեկատվության տրամադրումը, այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է: Մերժումներն ԻԱԿ-ը վիճարկել էր դատական կարգով: ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործով Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2012թ.-ի նոյեմբերի 23-ի իր վճռով ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի պահանջը ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ պարտավորեցնել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրելու պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե 2011թ-ին աշխատակիցները ըստ հաստիքների ինչքա՞ն գումարով են պարզեատրվել:

Իսկ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության գործով ՀՀ վարչական դատարանը 2013թ.-ի մարտի 20-ի իր վճռով ամբողջությամբ մերժեց ԻԱԿ-ի հայցը, որով ԻԱԿ-ը (վարչական պատասխանատվության ենթարկելու հետ համատեղ) նույնպես խնդրել էր ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ ՀՀ ֆինանսների նախարարությանը պարտավորեցնել տրամադրել պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե 2011թ.-ին Լիցենզավորման գործակալության եւ Ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցներն ըստ հաստիքների ինչքա՞ն գումարով են պարգևատրվել:

*Այսպիսով, համանման դատական գործերով կայացնելով բացարձակ տարբեր վճիռներ՝ դատարանները մի կողմից իրավական խառնաշփոթ են ստեղծում եւ թույլ չեն տալիս, որպեսզի օրենքը լինի կանխատեսելի եւ կիրառվի միատեսակ, մյուս կողմից՝ էլ ավելի են սրում դատարանների նկատմամբ վստահության պակասը:*

### **Դատարանների կողմից դատական գործի բաղդատում**

Մի շարք դատական գործերով Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, դիմելով դատարան, խնդրել է ոչ միայն ոչ իրավաչափ ճանաչել տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյայի գործողությունները (անգործությունը) եւ տրամադրել պահանջվող տեղեկությունները, այլ նաեւ խնդրել է ՏԱ իրավունքը խախտելու համար պաշտոնյային ենթարկել վարչական պատասխանատվության: Հաճախ, դատարանները մերժում են վարույթ ըն-

դունել ԻԱԿ-ի ներկայացրած բոլոր հայցապահանջները՝ համարելով, որ դրանց մի մասը ենթակա չէ տվյալ (որպես կանոն՝ վարչական) դատարանի քննությանը:

Այսպես, ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի եւ ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի դատական գործերով ՀՀ վարչական դատարանը վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով ԻԱԿ-ի հայցը ընդունել էր վարույթ, իսկ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով՝ մերժել:

Դատարանների այսպիսի դիրքորոշումը կարող է խնդրահարույց լինել: Նախ, օրենսդրության առումով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ վարչական դատարանին տալիս է հնարավորություն առհասարակ քննել տեղեկատվության տրամադրման հարց: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «Վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետեւանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետեւանքով: Այսինքն, եթե դատարանը ՏԱ վերաբերյալ գործով գտնի, որ առկա է ՏԱ իրավունքի խախտում՝ վարչական իրավախախտում, ինչը պարտադիր է վարչական պատասխանատվության ենթարկելու համար, ապա կարող է նաեւ լուծել իրավախախտման հետեւանքները վերացնելու, այն է՝ նախկինում չտրամադրված տեղեկությունը տրամադրելու հարցը, հայցվորին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու հարցը:

ԻԱԿ-ի դատական պրակտիկայում կան գործեր, երբ ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել հայց, որի պահանջն է ճանաչել ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ պատասխանողին պարտավորեցնել տրամադրել հայցվող տեղեկությունները (ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի, ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության): Այսինքն, տեղեկություններ տրամադրելուն պարտավորեցնելու պահանջն այս գործերով քննում է ՀՀ վարչական դատարանը:

Մյուս կողմից, երբ դատարանը տարանջատում է հայցապահանջները, հայցվորը ստիպված է լինում մասնակցել երկու ինքնուրույն դատավարության, իսկ երկու դատական գործընթացն ավելի թանկ արժե եւ ավելի ժամանակատար է. հայցվորը ստիպված կլինի մեկի փոխարեն երկու պետական տուրք վճարել, հայցվորի ներկայացուցիչը ստիպված կլինի երկու տարբեր դատավարություններում ներկայացնել հայցվորին, հետեւաբար պետք է վարձատրվի ավելի շատ եւ այլն: Սա, բնականաբար, հայցվորի համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն է: Ընդ որում, պատասխանողը նույնպես ստիպված է լինում երկու դատավարության մասնակցել: Բացի այդ, երկու դատավարությունն ավելի երկար է տևում, քան մեկը, ուստի ավելի ուշ է լուծվում իրավական խնդիրը, եւ ավելի ուշ է վերականգնվում խախտված իրավունքը:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ մի կողմից հայցապահանջների նման տարանջատումը չի բխում դատավարության կողմերի շահերից, մյուս կողմից էլ ՀՀ վարչական դատարանն ունի բավարար օրենսդրական հիմքեր իրավախախտման փաստը ճանաչելու, տեղեկություն տրամադրելու եւ վարչա-

կան պատասխանատվության ենթարկելու հայցապահանջների միասնական քննությունն իրականացնելու համար:

## Իրազեկման պակաս

Անգամ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից 10 տարի անց դեռեւս կան պաշտոնյաներ, ովքեր անտեղյակ են այս օրենքից կամ պարզապես չեն գիտակցում տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքի կարեւորությունը: Լինում են դեպքեր, երբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստիպված է լինում տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետների կամ օրենքով սահմանված մերժման հիմքերի եւ պատշաճ հիմնավորման վերաբերյալ պարզաբանումներ տալ, տեղյակ պահել դրանց գոյության մասին՝ պահանջելով տեղեկատվություն ստանալու իր հարցումներին սահմանված ժամկետում պատշաճ պատասխան կամ պատշաճ ձեռով հիմնավորված մերժում տալ: Զիչ չեն դեպքերը, երբ ԻԱԿ-ը ստանում է անհիմն մերժում, ապա, կրկնակի հարցմամբ ներկայացնելով օրենքի մեկնաբանություններ, ստանում է լիարժեք պատասխան: Իրազեկման պակասի կամ ՏԱ իրավունքի նկատմանը անտարբերության պատճառ կարող է լինել այն, որ շատ դեպքերում տեղեկություն տնօրինող մարմինը երկարատե գրագրությունից, մերժումներից հետո, կամ հարցմանը չպատասխանելուց հետո դատական գործի ընթացքում ամբողջությամբ տրամադրում է նախապես չտրամադրած տեղեկությունները եւ հաշտություն կնքում ԻԱԿ-ի հետ: Այսինչ, նման ձգձգումը մի կողմից ստիպում է վատնել ժամանակ եւ միջոցներ դատական գործընթացների վրա, որոնք պետք է ավարտվեն հաշտությամբ,

մյուս կողմից էլ մինչեւ հաշտություն կնքելը տեւական ժամանակ չիրացված է մնում յուրաքանչյուրիս ՏԱ հիմնարար իրավունքը:

## Անկատար օրենսդրական դաշտ

Տեղեկատվության ազատության ոլորտում առկա խնդիրներից է այս ոլորտում անկատար օրենսդրական դաշտի առկայությունը: Խնդիրն ինչպես տեղեկատվության ազատության ոլորտում որոշ հարցերի՝ իրավական ակտերով չկարգավորված լինելն է, այնպես էլ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտող, հակասությունների տեղիք տվող այլ իրավական ակտերում առկա դրույթներն են կամ անհրաժեշտ դրույթների բացակայությունն է:

Այդպիսի ակնառու օրենսդրական խնդիրներից է տեղեկատվություն ստանալու համար սահմանված տարբեր վճարների, հաճախ՝ ոչ խելամիտ վճարների առկայությունը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ հետի համաձայն՝ մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս տեղեկատվության տրամադրման համար գանձում չի կատարվում: Սակայն, պետական կառավարման որոշ մարմիններում համապատասխան իրավական ակտերի հիման վրա սահմանված են տեղեկությունների տրամադրման պայմաններ, որոնք տարբերվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պայմաններից:

Այսպես՝ ՀՀ Ոստիկանության ճանապարհային ոստիկանություն ծառայությունը տեղեկատվության տրամադրման համար գանձում է կատարում՝ անկախ այն բանից՝ այդ տեղեկատվությունը գերազանցում է 10

էջը, թե՛ ոչ: Այս դեպքում տեղեկատվության տրամադրման համար սահմանված է 3.000 ՀՀ դրամի չափով վճար: Նույն իրավիճակն է նաեւ ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի պետական կոմիտեի դեպքում, որից տեղեկություն ստանալու համար նույնպես վճար է սահմանված՝ անկախ այն բանից այդ տեղեկատվությունը գերազանցում է 10 էջը, թե՛ ոչ: Մեկ այլ մարմին, որը սահմանում է տեղեկատվության տրամադրման այլ վճարներ Հայաստանի ազգային արխիվն է: Այստեղ, օրինակ, կենսագրական բնույթի տեղեկության տրամադրման համար սահմանված է վճար՝ 5000 ՀՀ դրամ, անշարժ գույքի գործարքների վերաբերյալ՝ նույնպես 5000 ՀՀ դրամ, անշարժ գույքի (մասին արխիվային տեղեկանքի, կամ քաղվածքի, կամ վավերացված քսերոպատճենի համար նույնպես 5000 ՀՀ դրամ: ՏԱ մասին օրենքի դրույթներին հակասող դրույթներ տեղեկության տրամադրման վերաբերյալ պարունակում է նաեւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, ըստ որի՝ իրավաբանական անձանց պետական միասնական եւ պետական գրանցամատյաններից մեկ սուբյեկտի վերաբերյալ պետական ռեգիստրում պահվող եւ ինտերնետային կայքում տեղադրված ամբողջական տեղեկությունների, ինչպես նաեւ իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենների տրամադրման համար նախատեսված է վճար՝ 3000 ՀՀ դրամի չափով: Այսօր Հայաստանում գրանցված է շուրջ 4000 ՀՀ, եւ պետական ռեգիստրից Հայաստանում գրանցված ՀՀ-ների, օրինակ, հասցեները ստանալու համար անհրաժեշտ կլինի վճարեն 12.000.000 ՀՀ դրամ, ինչն, ակնհայտորեն, ողջամիտ գումար չէ:

Այս խնդիրների լուծումն Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեսնում է օրենսդրական փոփոխություն-

ների մեջ. կարծում ենք, բոլոր իրավական ակտերի այն նորմերը, որոնք համահունչ չեն տեղեկատվության ազատության իրավունքի սկզբունքներին, անհարկի խոչընդոտներ են ստեղծում հրապարակայնության եւ պետական մարմինների թափանցիկության ապահովման համար, պետք է վերանայվեն:

### **Ղատական ակտերի հետագա ազդեցությունը**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած ղատական գործերը հիմնականում ունենում են դրական ավարտ, այսինքն, կամ ԻԱԿ-ը հաղթում է դատարանում, կամ էլ դատարանում հայտնվելով՝ տեղեկություն տնօրինող մարմինը շտապում է տրամադրել ղատական գործի հիմք դարձած տեղեկությունները եւ հաշտություն կնքել: Սակայն, պետական մարմինների կողմից դատարաններում պարտություն կրելուց հետո տեղեկատվության ազատության իրավունքի խախտումները չեն նվազում: Այս մասին է վկայում այն, որ, 2013թ.-ին, ՏԱ մասին օրենքի ընդունումից 10 տարի անց, ԻԱԿ-ի ուղարկած տեղեկություն ստանալու հարցումների 15%-ը դեռ մնում է անպատասխան: Մեծ է նաեւ անհիմն մերժումների եւ թերի պատասխանների թիվը: Սացույց է տալիս, որ դատարանի վճիռները չունեն մեծ ազդեցություն գործադիր իշխանության մարմինների գործելաոճի վրա եւ չեն հանդիսանում տեղեկություն տնօրինողների կողմից ՏԱ հիմնարար իրավունքի կիրառման ուղեցույց:



## ԳԼՈՒԽ II

### ԻԱԿ դատական գործերի վիճակագրությունը

2005-2013թ.թ.-ի ընթացքում արդեն ձեւավորվել է տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ դրական դատական պրակտիկա, որում առանցքային դեր ունի Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հասարակական կազմակերպությունը:

ԻԱԿ-ն արդեն հրապարակել է ՏԱ վերաբերյալ դատական գործերի երկու ժողովածու՝ Առաջին ժողովածուն ներառում է 2001-2006թ.թ.-ի ընթացքում ԻԱԿ-ի եւ այլ կազմակերպությունների նախաձեռնած դատական գործերը (17 գործ, որոնցից յոթը նախաձեռնել է ԻԱԿ-ը) տեղեկատվության ազատության ոլորտում, իսկ երկրորդը ներառում է 2007-2010թ.թ.-ի ընթացքում բացառապես ԻԱԿ-ի նախաձեռնած 17 դատական գործերը (*երկու ժողովածուներն էլ հասանելի են ԻԱԿ-ի [www.foi.am](http://www.foi.am) կայքի «Հրապարակումներ» բաժնի, «Գրքեր» ենթաբաժնում*): Նշենք, որ 2007-2010թ.թ.-ին ԻԱԿ նախաձեռնած ոչ բոլոր դատական գործերն են ներառվել դատական գործերի երկրորդ ժողովածուում: Պատճառն այն է, որ որոշ գործեր նախաձեռնվել էին ժողովածուի հրապարակումից քիչ ժամանակ առաջ եւ որեւէ ընթացք դեռևս չէին արձանագրել:

Դատական գործերի 3-րդ ժողովածուն ամփոփում է 2011-2013թ.թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերը (11 գործ), ինչպես նաև նախկինում նախաձեռնված, բայց նախորդ ժողովածուներում չներառված գործերը (երկու գործ):

2011-2013թ.թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախաձեռնել է ՏԱ վերաբերյալ 11 դատական գործ, որոնցից 5-ը դեռևս (2013թ.-ի օգոստոսի 31-ի դրությամբ) չեն ավարտվել: Ավարտված 6 դատական գործերից 5-ն ունեցել են դրական ավարտ: Դրական ավարտված գործերից 3-ի դեպքում ԻԱԿ-ը հաշտություն է կնքել պատասխանող կողմի հետ՝ ստանալով անհրաժեշտ տեղեկությունները, իսկ երկուսի դեպքում դատարանը բավարարել է ԻԱԿ-ի պահանջները: Մի դեպքում դատական գործն ունեցել է բացասական ավարտ՝ դատարանը մերժել է ԻԱԿ-ի հայցը:

Ստորեւ ներկայացնում ենք 2011-2013թ.թ.-ին ԻԱԿ-ի նախաձեռնած 11 դատական գործերը.

## Անավարտ գործեր

1. ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության,
2. ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի,
3. ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի,
4. ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի,
5. ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության,

## Ավարտված գործեր

1. ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի,
2. ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարականներ» համատիրության,
3. ԻԱԿ ընդդեմ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության,
4. ԻԱԿ-ն ընդդեմ Բարգավաճ Հայաստան կուսակցության,
5. ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության,
6. ԻԱԿ-ն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի:

Այս ժողովածուում բացի վերոնշյալ գործերից ներառված է նաեւ ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի դեմ դատական գործը, որը մի մասով կասեցված է եղել 2009թ.-ին եւ վերսկսվել է 2012թ.-ին, ինչպես նաեւ ԻԱԿ-ն ընդդեմ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի գործը, որը սկսել է 2009թ.-ին, սակայն չի ներառվել նախորդ ժողովածուում:

## ԻԱԿ դատական գործերը 2011-2013թ.թ.

### Դրական ավարտ ունեցած գործեր

2011-2013թ.թ.-ի ընթացքում նախաձեռնված եւ ավարտված 6 դատական գործերից 5-ն ունեցել են դրական ավարտ: Այսինքն, կամ դատարանը վճիռ է կայացրել ի օգուտ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, կամ էլ դատական գործի ընթացքում տեղեկություն տնօրինող մարմինը տրամադրել է պահանջվող ամբողջ տեղեկատվությունը եւ հաշտություն կնքել ԻԱԿ-ի հետ:

Դրական ավարտ ունեցած գործերն են.

1. ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի,
2. ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարականներ» համատիրության,
3. ԻԱԿ ընդդեմ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության,
4. ԻԱԿ-ն ընդդեմ Բարգավաճ Հայաստան կուսակցության,
5. ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության:

Դրական ավարտ ունեցած ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի գործն ունեցավ հսկայական ռազմավարական նշանակություն. վերահաստատվեց տեղեկություն ստանալու իրավունքը ոտնահարելու համար պաշտոնյային վարչական պատասխանատվության՝ տուգանքի ենթարկելու դատական պրակտիկան:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի նոյեմբերի 18-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանին՝ խնդրելով հայտնել կազմակերպության կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց, ինչպես նաեւ տրամադրել ցանկը, թե կազմակերպության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Չստանալով պատասխան՝ ԻԱԿ-ը կրկնակի հարցում ուղարկեց կազմակերպությանը, որին ՍՊԸ-ից ստացվեց էլեկտրոնային պատասխան, ըստ որի՝ ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունը մակնշված է կազմակերպության արտադրանքի յուրաքանչյուր տուփի վրա, ինչպես նաեւ հետաքրքրող տեղեկությունները ստանալու համար հղում էր արված կազմակերպության կայքին: Սակայն ԻԱԿ-ի խնդրած տեղեկություններն առկա չէին ոչ կազմակերպության արտադրանքի տուփերի վրա, ոչ էլ կայքում: Ուստի, պատասխանը համարվել է անհիմն:

Արդյունքում, 2011թ.-ի դեկտեմբերի 19-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին տրամադրել ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաեւ խնդրված տեղեկությունները չտրա-

մադրելու համար կազմակերպության տնօրեն Տիգրան Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության:

Անցնելով բավական երկար դատավարական ճանապարհ՝ ԻԱԿ-ը կարողացավ հաղթանակ տանել այս գործում. ՏԱ իրավունքը խախտելու համար «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրենը ենթարկվեց վարչական պատասխանատվության՝ 80.000 ՀՀ դրամի չափով տուգանքի, ինչպես նաեւ «Դուստր Մարիաննա» ընկերությանը պարտավորեցվեց փոխհատուցել ԻԱԿ-ի կրած դատական ծախսերը (*այս գործի վերաբերյալ ավելի մանրամասն տես՝ սույն ժողովածուի 77 էջում*):

Դրական ավարտ ունեցած ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության դատական գործն, անցնելով դատական բոլոր ատյաններով, արդյունքում ավարտվեց ԻԱԿ-ի հաղթանակով: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ.-ի ապրիլի 25-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել Հայաստանի դեմոկրատական կուսակցության ղեկավար Արամ Սարգսյանին՝ խնդրելով տեղեկություններ նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար կուսակցության ծախսած միջոցների մասին: ՀՀ-ն ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: Ուստի, 2012թ.-ի մայիսի 16-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցում ուղարկեց Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը, որը նույնպես մնաց անպատասխան:

2012թ.-ի հուլիսի 2-ին ԻԱԿ-ը հայցով դիմեց Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ-ին 5-օրյա ժամկետում տրամադրել ամբողջական տեղեկատվություն:

2012թ.-ի դեկտեմբերի 21-ին դատարանը հրապարակեց իր վճիռը, որով ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի պահանջը ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՅԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ պարտավորեցնել Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը: Կուսակցությունը բողոքարկեց առաջին ատյանի դատարանի վճիռը ՀՀ վերաքննիչ դատարան, սակայն դատարանը որոշեց մերժել ՀՀ-ի վերաքննիչ բողոքը: ՀՀ-ն բողոքարկեց նաեւ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը վճարեկության կարգով: Սակայն, 2013թ.-ի հունիսի

26-ին կայացված որոշմամբ ՀՀ վճարեկ դատարանը վերադարձրեց ՀՀ-ի վերաքննիչ բողոքը՝ ուժի մեջ թողնելով նախապես ԻԱԿ-ի օգտին կայացված՝ առաջին ատյանի դատարանի վճիռը (*այս գործի վերաբերյալ ավելի մանրամասն տես՝ սույն ժողովածուի 159 էջում*):

Դրական ավարտ ունեցած մնացած 3 գործերի դեպքում ԻԱԿ-ը տեղեկություն տնօրինող մարմինների հետո կնքել է հաշտություն, քանի որ վերջիններս դատական գործի ընթացքում ամբողջությամբ տրամադրել են պահանջվող տեղեկությունները:

### Բացասական ավարտ ունեցած գործեր

2011-2013թ.թ.-ին ԻԱԿ-ի նախաձեռնած եւ ավարտված 5 դատական գործերից միայն մեկն է ունեցել բացասական ավարտ: Այն է.

- ԻԱԿ-ն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի:

### Բողոքարկումներ

2011-2013թ.թ.-ին ԻԱԿ նախաձեռնած եւ չավարտված դատական գործերն են.

- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի,
- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության:

Այս գործերից 2-ը՝ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԱԺ-ի եւ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության, նախաձեռնվել են 2013թ.-ի ապրիլին, ուստի, հաշվի առնելով գործի քննության ժամկետները՝ դրանք դեռեւս համարվում են նոր հարուցված գործեր, եւ այս ժողովածուն կազմվելու պահին դեռեւս նախնական նիստեր էին միայն տեղի ունեցել նշված գործերով: Ինչ վերաբերում է մնացած 3 գործերին, ապա դրանք բոլորն էլ գտնվում են բողոքարկման փուլում:

Մեկ դատական գործով բողոքարկման փուլում է գտնվում ի սկզբանե ԻԱԿ-ի օգտին կայացված վճիռը, այսինքն, դատարանը վճիռ է կայացրել ի օգուտ ԻԱԿ-ի, սակայն պատասխանող կողմը բողոքարկել է այն: Այսպես, ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործը նույնպես առաջին ատյանի դատարանում ԻԱԿ-ի համար դրական ավարտ էր ունեցել. Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը այս դեպքում եւս ճանաչել էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տեղեկատվությունը ստանալու իրավունքի խախտման փաստը եւ պարտավորեցրել էր ՊՅ-ին տրամադրել պահանջվող տեղեկությունները, ինչպես նաեւ պարտավորեցրել էր փոխհատուցել ԻԱԿ-ի կատարած դատական ծախսերը: «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ն բողոքարկել էր դատարանի վճիռը վերաքննության կարգով, եւ այս անգամ ՅՅ վերաքննիչ քաղաքացիական դատարանը բավարարել էր վերաքննիչ բողոքը, բեկանել էր ի օգուտ ԻԱԿ-ի կայացրած վճիռը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ Նոր քննության: ԻԱԿ-ը բողոքարկել է ՅՅ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը վճռաբեկության կարգով: Այս գործը 2013թ. - ի օգոստոսի 31-ի դրությամբ դեռ չի ավարտվել (*այս գործի վերաբերյալ ավելի մանրամասն տես՝ սույն ժողովածուի 236 էջում*):

Երկու դատական գործով բողոքարկման փուլում են գտնվում նաեւ ի սկզ-

բանե ԻԱԿ-ի օգտին չկայացված վճիռները, այսինքն, դատարանը վճիռ է կայացրել ի վնաս ԻԱԿ-ի, եւ ԻԱԿ-ը բողոքարկել է այն: Այսպես, ԻԱԿ-ն ընդդեմ ՅՅ ֆինանսների նախարարության, ՅՅ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՅՅ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության գործով ՅՅ վարչական դատարանն ամբողջությամբ մերժել էր ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկություն տրամադրելուն պարտավորեցնելու, ինչպես նաեւ ՏԱ իրավունքը խախտած պաշտոնյաներին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցը: ԻԱԿ-ը բողոքարկել է ՅՅ վարչական դատարանի որոշումը վերաքննության կարգով: Դատավարության ընթացքում, սակայն, ՅՅ ֆինանսների նախարարությունը տրամադրել է դատական գործի հիմք դարձած տեղեկությունները, եւ ԻԱԿ-ը պատրաստվում է հաշտություն կնքել պատասխանող կողմերի հետ (*այս գործի վերաբերյալ ավելի մանրամասն տես՝ սույն ժողովածուի 211 էջում*):

ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի գործով ՅՅ վարչական դատարանն ամբողջությամբ մերժել էր ԻԱԿ-ի՝ ՏԱ իրավունքը խախտելու համար «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցը: ԻԱԿ-ը բողոքարկել է ՅՅ վարչական դատարանի որոշումը վերաքննության կարգով (*այս գործի վերաբերյալ ավելի մանրամասն տես՝ սույն ժողովածուի 108 էջում*):

## Ղատական գործերի հիմքերը

2011-2013թ.թ. -ին ԻԱԿ-ի նախաձեռնած ղատական գործերը ցույց տվեցին, որ ի տարբերություն 2001-2010թ.թ. -ին նախաձեռնած գործերի, այժմ արդեն ղատական գործի հիմք հաճախ հանդիսանում է ոչ թե ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու հարցմանը չպատասխանելը (լուռ մերժումը), այլ ոչ պատշաճ պատասխանը՝ անհիմն մերժումը կամ անհիմն (թերի) պատասխանը:

Այսպես, 2011-2013թ.թ. -ին ԻԱԿ-ի նախաձեռնած 11 ղատական գործերից 4-ի հիմքը տեղեկություն տնօրինող մարմնի անհիմն մերժումներն են.

- ԻԱԿ-ն ընդդեմ ԱԺ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի

Ամեն դեպքում, լուռ մերժումները դեռեւս մեծ թիվ են կազմում, ուստի դրանք են հաճախ դառնում են ղատական գործի հիմք. հինգ գործի հիմքում լուռ մերժումներն են.

- ԻԱԿ-ն ընդդեմ Բարգավաճ Հայաստան կուսակցության,
- ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության,
- ԻԱԿ ընդդեմ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության:

Մեկ գործի հիմքում եղել է տեղեկություն տնօրինող մարմնի թերի պատասխանը.

- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության:  
Մեկ գործի հիմքում եղել է անհիմն պատասխանը.
- ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի:

## ԻԱԿ-ի հայցապահանջները

Ստորև ներկայացնում ենք, թե 2011-2013թ.թ.-ին դատական գործեր նախա-  
ձեռնելով՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ինչ հայցապահանջներ է  
ներկայացրել:

- **Պարտավորեցնել պատասխանողին տրամադրել հայցված տեղեկատվությունը**

- ԻԱԿ ընդդեմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարականներ» համատիրության,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության,
- ԻԱԿ-ն ընդդեմ Բարգավաճ Հայաստան կուսակցության,
- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի,
- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության,
- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի:

- **Պատասխանողին պարտադրել հայցվող տեղեկատվությունը հրապարակել հանրության համար մատչելի վայրում**

- ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարականներ» համատիրության:

- **Պատասխանողին ենթարկել վարչական պատասխանատվության**

- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի:

- **Ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը**

- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության,

- ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի,
- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության,
- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի:

**Այսպիսով, 2011-2013թ.թ. ընթացքում նախաձեռնած բոլոր 11 դատական գործերի դեպքում ԻԱԿ-ը դատարանից խնդրել է պատասխանողին պարտավորեցնել տրամադրել հայցված տեղեկատվությունը: 7 գործի դեպքում ԻԱԿ-ը նաեւ խնդրել է պատասխանողին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու համար, 4 դեպքում ԻԱԿ-ը դատարանից խնդրել է նաեւ ճանաչել իր՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ մի դեպքում խնդրել է պարտադրել պատասխանողին հայցվող տեղեկատվությունը հրապարակել հանրության համար մատչելի վայրում:**

### **SԱ իրավունքը խախտած մարմինները**

2011-2013թ.թ. ընթացքում SԱ իրավունքը խախտելու համար դատարաններում ամենաշատը հայտնվել են հանրային նշանակության կազմակերպությունները եւ պետական հիմնարկները. ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերից երեքի դեպքում պատասխանող կողմ են եղել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն, «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ն եւ «Համալսարանականներ» համատիրությունը: Երեք պետական հիմնարկ՝ ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալությունը, ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչությունը եւ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն ներառվել են որպես պատասխանող ԻԱԿ- նախաձեռնած երկու դատական գործերում:

Դատարաններում ամենաշատը հայտնված տեղեկություն տնօրինող հաջորդ մարմիններն են կուսակցությունները եւ նախարարությունները. Երկու գործի դեպքում դատարանում պատասխանող են եղել Հայաստանի դեմոկրատական, Բարգավաճ Հայաստան կուսակցությունները: ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը նույնպես հայտնվել է SԱ դատական գործերով պատասխանող կողմի դերում: Նշենք, որ կուսակցությունները որպես պատասխանող դատարաններում ամենաշատը հայտնվածների երկրորդ հորիզոնականում էին նաեւ 2007-2010թ.թ.-ին ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերի դեպքում՝ երեք կուսակցություն՝ ՕԵԿ, ՀԱԿ դաշինք եւ Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն:

Մեկական դատական գործերով դատարանում որպես պատասխանող հանդես են եկել ՀՀ Ազգային ժողովը, կառավարությանն առընթեր մարմին՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը եւ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություն՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն:

---


SԱ դատական պրակտիկային, բոլոր գործերի մանրամասներին եւ դատարանների վճիռներին կարող եք ծանոթանալ ԻԱԿ-ի պաշտոնական կայքի «Ռազմավարական դատավարություն» բաժնում՝ <http://www.foi.am/am/rcontent/14/>



# Գ Ա Տ Ա Կ Ա Ն

# Գ Ո Ր Ծ Ե Ր

# 2011-2013



## **Ք ո ղ ծ 1.**

**ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի  
կառուցապատման եւ ներդրումային  
ծրագրերի իրականացման  
գրասենյակ» ՊՈԱԿ-ի**

## Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ.-ի փետրվարի 27-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը պետական բյուջեից 2006, 2007 եւ 2008թթ. որքա՞ն գումար է կազմել:
2. ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008 թթ.-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրեր:
3. ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008 թթ.-ին որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրերից:

Պատասխան գրությամբ ՊՈԱԿ-ը հայտնել էր, որ 1-ին կետով ներկայացված հարցի պատասխանը պաշտոնապես հրապարակված է «ՀՀ պետական բյուջեի մասին» համապատասխան օրենքներում, իսկ 2-րդ եւ 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առեւտրային գաղտնիք, հետեւաբար նման տեղեկատվություն չի կարող տրամադրվել:

2009թ. մարտի 3-ին ԻԱԿ-ը ՊՈԱԿ-ի պատասխանը բողոքարկեց ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով ոչ իրավաչափ ճանաչել ՊՈԱԿ-ի այն գործողությունները կամ անգործությունը, որով սպառնիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ, եւ պարտավորեցնել «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրել պահանջվող տե-

ղեկատվությունը: ԻԱԿ-ը նաեւ խնդրել էր վարչական պատասխանատվության ենթարկել ՊՈԱԿ-ի տնօրենին, սակայն դատարանը գտել էր, որ նման հայցապահանջը ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին:

2009թ. մայիսի 5-ին մեկ այլ հայցով ԻԱԿ-ը դիմեց Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50.000 ՀՀ դրամի չափով: Այս դատական գործի քննությունը 2009թ.-ի հունիսի 16-ին կասեցվեց՝ մինչեւ ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ վարչական դատարանում դատական գործի քննության ավարտը:

ՊՈԱԿ-ի դեմ 2009թ.-ի մարտի 3-ին վարչական դատարանում սկսված գործն ավարտվեց ԻԱԿ-ի հաղթանակով 2012թ.-ի հունվարի 18-ին, իսկ 2012թ.-ի մարտի 29-ին ՊՈԱԿ-ը Կենտրոնին տրամադրեց դատական վեճի առարկա դարձած տեղեկությունները եւ վճարեց պետական տուրքի գումարը:

ՊՈԱԿ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 2009թ.-ի հունիսի 16-ին կասեցված դատական գործը 2013թ.-ի մարտի 12-ին վերսկսվեց: Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը գործը հանձնեց ՀՀ վարչական դատարանի քննությանը: Այս գործի քննությունը դեռ շարունակվում է:

## Գործի նյութերը

### ՈՐՈՇՈՄ

#### ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Գ. Խանդանյանի, քարտուղարությամբ Ս. Հարությունյանի, մասնակցությամբ հայցվորի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի, պատասխանողի ներկայացուցիչ Գ. Թադևոսյանի, դռնբաց դատական նիստում, Երեւան քաղաքում, 2009թ. հունիսի 16-ին, ուսումնասիրելով ԵԿԴ/0887/02/09 քաղ. գործի նյութերն՝ ըստ հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Շուշան Դոյրոյանի՝ ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ հարցը,

### ՊԱՐԶԵՑ

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով:

16.06.2009թ.-ին նախնական դատական նիստի ժամանակ պատասխանողի ներկայացուցիչ Գ. Թադևոսյանը հայտնեց, որ ՀՀ վարչական դատարանում քննվում է վարչական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի՝ ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին, որն անմիջականորեն կապված է սույն քաղ. գործի հետ, ուստի միջնորդեց կասեցնել գործի վարույթը մինչեւ ՀՀ վարչական դատարանի կողմից քննվող գործով վերջնական ակտ կայացնելը:

Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ. Մեժլումյանն առարկեց միջնորդության դեմ:

Դատարանը, քննելով միջնորդությունը, գտավ, որ այն հիմնավոր է, բխում է ՀՀ քաղ. դատ. օր.-ի 105 հոդվածի 1-ին կետի պահանջներից, ըստ որի՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է սովորաբար գործի քննությունը մինչեւ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 105 հոդվածի 1-ին մասով, 144 հոդվածով՝ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

ԵԿԴ/0887/02/09 քաղաքացիական գործի վարույթը՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Յարությունյանի՝ վարչական պատասխանատվության՝ 50.000 ՀՀ դրամի չափով տուգանքի ենթարկելու պահանջի մասին, կասեցնել՝ մինչեւ ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ-1696/05/09 վարչական գործով վերջնական ակտ կայացնելը:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան գործին մասնակցող անձանց կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝      Գ. ԽԱՆԴԱՆՅԱՆ

ԵԿԴ/0887/02/09

**ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐԶ-ՄԱՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՈՍՁԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ԳՈՐԾԻ ԿԱՍԵՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԸՆԴՀԱՏՈՒԹՅԱՄԲ  
ԱՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«12» մարտի 2013թ.

ք. Երեւան

ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գ. Խանդանյանս (այսուհետ՝ Դատարան), ուսումնասիրելով՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ)՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/0887/02/09 գործի նյութերը եւ Կազմակերպության ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի դիմումը,

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

05.05.2009թ.-ին դիմելով Դատարան՝ Կազմակերպության ներկայացուցիչ Կ. Մեժլումյանը խնդրել է ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով, եւ բռնագանձել 4000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Դատարանի 06.05.2009թ.-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, ու նշանակվել է նախնական դատական նիստ:

16.06.2009թ.-ին գործի վարույթը կասեցվել է՝ մինչեւ ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ/1696/02/09 վարչական գործով վերջնական ակտ կայացնելը:

11.03.2013թ.-ին դիմելով Դատարան՝ Կազմակերպության ներկայացուցիչ Կ. Մեժլումյանը խնդրել է գործի վարույթը վերսկսել եւ միաժամանակ գործն ուղարկել ըստ ընդդատության՝ ՀՀ վարչական դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107 հոդվածի 1-ի կետի համաձայն՝ գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալուց հետո: Տվյալ դեպքում, նկատի ունենալով, որ վերացել են գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքները, մասնավորապես՝ Կ. Մեժլումյանի կողմից դիմումին կից ներկայացվել է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 18.01.2012թ.-ի թիվ ՎԴ/1696/02/09 վարչական գործով վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը, իսկ սույն գործի վարույթը կասեցվել էր մինչեւ հենց այդ գործով վերջնական դատական ակտ կայացնելը, ուստի գտնում եմ, որ գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107 հոդվածի 1-ի կետով նախատեսված կարգով պետք է վերսկսել:

Միաժամանակ, ուսումնասիրելով թիվ ԵԿԴ/0887/02/09 գործը եւ փաստաբան Մեծլումյանի դիմումը՝ գտնում եմ, որ գործը պետք է ըստ ընդդատության ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ դատական օրենսգրքի 22 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանների ենթակայությանը վերապահված գործերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ.-ի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ.-ի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008թ.-ի հունվարի 1-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների եւ ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով:

2) Նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որեւէ պարտականություն:

3) Նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը ներառված է օրենսգրքի «Գործերի ընդդատությունը» վերտառությամբ 3-րդ գլխում եւ վերնագրված է «Գործերի առարկայական ընդդատությունը»: Հոդվածի 1-ին մասը սահմանում է.

1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջեւ այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.

4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից»: (3-րդ գլուխը այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս)

հողվածների պահանջներին հակասող եւ անվավեր 03.02.2009 ՍԴՈ-787 որոշմամբ):

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի «Հիմնական հասկացությունները» վերտառությամբ 3 հոդվածի համաձայն՝

«Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետեւյալ իմաստները.

1) վարչական մարմիններ՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական եւ տարածքային կառավարման, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմիններ՝

ա) ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ նախարարություններ եւ Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ,

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ,

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի եւ համայնքի ղեկավար. քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում:

Եթե վերը թվարկված մարմիններից բացի վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա սույն օրենքի իմաստով՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ.

2) վարչարարություն՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաեւ գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետեւանքներ»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Գործերի հանձնումը մեկ դատարանից մեկ այլ դատարան» վերտառությամբ 86 հոդվածի համաձայն՝

«2. Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝

1) եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ,

3) գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպքերում:

3. Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

4. Մեկ դատարանից մեկ այլ դատարան ուղարկված գործը պետք է քննի այն ստացած դատարանը»:

«Իրավական ակտերի մասին» 86 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Տվյալ դեպքում, «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը պետական մարմին է, որն իրականացնում է վարչարարություն, եւ վերջինիս դեմ ներկայացված պահանջը ծագել է հանրային իրավահարաբերություններից, որի դատական կարգով քննություն-



և՛, վերոգրյալ իրավական նորմերի, ինչպես նաև ԶԶ սահմանադրական դատարանի 03.02.2009 թիվ ՍԴՈ-787 որոշման ուժով վերապահված է ԶԶ վարչական դատարանին:

Ելնելով վերոգրյալներից եւ ղեկավարվելով ԶԶ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86 հոդվածի 2-րդ կետով, 108 հոդվածի 1-ին կետով, 144 հոդվածի 1-ի եւ 2-րդ կետերով, 1441 հոդվածի 2-րդ կետով, 145 հոդվածով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Ըստ հայցի՝ Կազմակերպության ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/0887/02/09 գործի վարույթը վերսկսել եւ այն ըստ ընդդատության հանձնել ԶԶ վարչական դատարանին:

Որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝

Գ. ԽԱՆԴԱՆՅԱՆ

**Գործ 2.**  
**ԻԱԿ-ն ընդդեմ**  
**«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի**

## Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ.-ի հունիսի 10-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Թիվ 2 բուժմիավորում ՓԲԸ-ին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Թիվ 2 բուժմիավորման մանկական պոլիկլինիկայում մինչեւ 7 տարեկան երեխաներին տրամադրվող դեղերի հատկացման կարգը:
2. Անկա անվճար տրամադրվող դեղերի ցուցակի պատճեն:
3. Նաեւ տեղեկացնել, որ եթե երեխան հիվանդ է, եւ բուժման համար անհրաժեշտ դեղորայքը ներառված չէ վերոնշյալ ցուցակում, ապա կա՞ այլ տարբերակ մինչեւ 7 տարեկան երեխային անվճար տրամադրելու այդ դեղը:
4. Ինչպե՞ս եւ տեղեկացնել, թե ի՞նչ անի ծնողը, եթե անվճար տրամադրվող դեղերի ցուցակում կա դեղ, որի կարիքն ունի հիվանդ երեխան, եւ այն բժշկի կողմից չի տրամադրվում:

Չստանալով որեւէ պատասխան ՓԲԸ-ից՝ ԻԱԿ-ը 2009թ.-ի հուլիսի 3-ին դիմեց դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ՓԲԸ-ին տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաեւ ՓԲԸ-ի տնօրենին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու համար:

Դատական գործի քննության ընթացքում «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ն տրամադրեց ԻԱԿ-ի հարցման պատասխանը:

2010թ.-ի ապրիլի 27-ին հրապարակած իր վճռով Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մերժեց ԻԱԿ-ի հայցը՝ մերժելով նաեւ ԻԱԿ-ի երկրորդ պահանջը՝ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի տնօրեն Տիգրան Խաչատրյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

## Գործի նյութերը

### ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն,

Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան

Պատասխանողներ՝ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն՝ Տիգրան Խաչատրյան

03.07.2009թ.

### Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Տեղեկատվություն տրամադրելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պարտադրելու պահանջի մասին

#### 1. Փաստերը, որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 10.06.2009թ.-ին «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի տնօրեն Տիգրան Խաչատրյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել.

«Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել.

1. Թիվ 2 բուժմիավորման մանկական պոլիկլինիկայում մինչեւ 7 տարեկան երեխաներին տրամադրվող անվճար դեղերի հատկացման կարգը:
2. Առկա անվճար տրամադրվող դեղերի ցուցակի պատճեն:
3. Նաեւ տեղեկացնել, թե ինչ պարբերականությամբ եւ ինչ հիմքով է այդ ցուցակը փոփոխվում:
4. Խնդրում ենք տեղեկացնել, որ եթե երեխան հիվանդ է եւ բուժման համար անհրաժեշտ դեղորայքը ներառված չէ վերոնշյալ ցուցակում, ապա կա այլ տարբերակ՝ մինչեւ 7 տարեկան երեխային անվճար տրամադրելու այդ դեղը:
5. Ինչպե՞ս եւ տրամադրեք խնդրեմ տարբերակ, թե ի՞նչ անի ծնողը, եթե անվճար տրամադրվող դեղերի ցուցակում կա դեղ, որի կարիքն ունի հիվանդ երեխան, եւ այն բժշկի կողմից չի տրամադրվում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային անդորրագրի օրինակներով:

Պատասխանողը գրավոր հարցմանը չի պատասխանել եւ պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել:

Նշված փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

## 2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության

- 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է»:

- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ... վրա»: Նույն օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ(կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»: Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ինչպես տեսնում ենք, պահանջվող տեղեկատվությունը գաղտնի չի եղել, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանողը չի տրամադրել 10.06.2009թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ պարտավոր էր տրամադրել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7 հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն. «Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի ... 189.7 ... հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: ՀՀ դատական օրենսգրքի 3 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի ու 4-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանն առաջին ատյանի դատարան է:

Գտնում ենք, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել՝ վարչական տույժի ենթարկելու պատասխանող Բուժմիավորման գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանին, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով, եւ պահանջելու, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանքը՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով: Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

**խնդրում եմ՝**

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ին պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրելու հայցված տեղեկատվությունն ամբողջ ծավալով, այն է՝ տրամադրել «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի մանկական պոլիկլինիկայում մինչև 7 տարեկան երեխաներին տրամադրվող անվճար դեղերի հատկացման կարգը, առկա անվճար տրամադրվող դեղերի ցուցակի պատճեն, ինչպես նաև տեղեկացնել, թե ինչ պարբերականությամբ եւ ինչ հիմքով է այդ ցուցակը փոփոխվում, այլև տեղեկացնել, թե այն դեպքում, երբ երեխան հիվանդ է, սակայն բուժման համար անհրաժեշտ դեղորայքը ներառված չէ վերոնշյալ ցուցակում, ապա կա՞ այլ տարբերակ՝ մինչև 7 տարեկան երեխային անվճար տրամադրելու այդ դեղը, ինչպես նաև տրամադրել տարբերակ, թե ինչ անի ծնողը, եթե անվճար տրամադրվող դեղերի ցուցակում կա դեղ, որի կարիքն ունի հիվանդ երեխան, եւ այն բժշկի կողմից չի տրամադրվում:

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:

Որպես հետեւանք խնդրում ենք լուծել պետական տուրքի հարցը:

Կից ներկայացվում են՝

- 1. Պետական տուրքի վճարման անդորրագիր,
- 2. Լիազորագիր,
- 3. Հարցման օրինակը,
- 4. Փոստային անդորրագիր:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ  
Լիազոր ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան

Գործ ԵԴԿ 1390/02/09թ.

**Վ Ճ Ի Ռ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

27.04.2010թվ.

ք. Երեւան

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը,  
 Նախագահությամբ դատավոր՝ Էդիկ Ավետիսյանի  
 Զարտուղարությամբ՝ Աննա Հակոբյանի

Դատարանում, դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության /ՀՎՀ 02568394, ՊԳՎ ՝ թիվ 21117101863/ ընդդեմ «Թիվ 2 բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանի՝ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ Կարեն Մեծլումյանը սույն հայցը դատարան է ներկայացրել 09.07.2009թ.-ին:

Դատարանի նախագահի կողմից հայցադիմումը 10.07.2009թ.-ին մակագրվել էր դատավոր Էդ. Ավետիսյանին:

13.07.2009թ.-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է: Նշված որոշման դեմ բերվել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.08.2009թ.-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձնելու մասին 13.07.2009թ.-ի որոշումը վերացվել է:

2009 թ.-ի սեպտեմբերի 12-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Գործի վարույթն իրականացվել է նախապատրաստական փուլով:

12.02.2010թ.-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության 12.03.2010թ.-ին ժամը 11:45-ին:

12.03.2010թ.-ին գործի քննությունը հայտարարվել է ավարտված, եւ վճռի հրապարակման օր է հայտարարվել 26.03.2010թ., սակայն նշված օրը գործի քննությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131 հոդվածի 2, 3 կետերի համաձայն, վերսկսել է եւ նշանակվել 13.04.2010թ.-ին ժամը 15:00-ին:

13.04.2010թ.-ին գործի քննությունը հայտարարվել է ավարտված:

Վճռի հրապարակման օր է հայտարարվել 27.04.2010թ.-ի ժամը 10:30-ին:

**2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն 10.06.2009թ.-ին «Թիվ 2 բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու

հարցում է ներկայացրել.

«Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, »Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել.

1. Թիվ 2 բուժմիավորման մանկական պոլիկլինիկայում մինչեւ 7 տարեկան երեխաներին տրամադրվող անվճար դեղերի հատկացման կարգը:
2. Առկա անվճար տրամադրվող դեղերի ցուցակի պատճեն:
3. Նաեւ տեղեկացնել, թե ինչ պարբերականությամբ եւ ինչ հիմքով է այդ ցուցակը փոփոխվում:
4. Խնդրում ենք տեղեկացնել, որ եթե երեխան հիվանդ է, եւ բուժման համար ներառված է դեղորայքը ներառված չէ վերոնշյալ ցուցակում, ապա կ'ա այլ տարբերակ՝ մինչեւ 7 տարեկան երեխային անվճար տրամադրելու այդ դեղը:
5. Ինչպե՞ս եւ տրամադրեք խնդրեմ տարբերակ, թե ինչ անի ծնողը, եթե անվճար տրամադրվող դեղերի ցուցակում կա դեղ, որի կարիքն ունի հիվանդ երեխան, եւ այն բժշկի կողմից չի տրամադրվում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային անդորրագրի օրինակներով:

Պատասխանողը գրավոր հարցմանը չի պատասխանել եւ պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել: Նշված փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

### **Հայցապահանջի իրավական հիմնավորումը**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի 2-րդ պարբերության՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

27.1 հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա: Նույն օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղե-



կուռյանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը: Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ինչպես երեւում է, պահանջվող տեղեկատվությունը գաղտնի չի եղել, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության՝ պատասխանողը չի տրամադրել 10.06.2009թ.-ի գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ պարտավոր էր տրամադրել:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի ... 189.7 ... հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Գտնում են, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել՝ վարչական տույժի ենթարկելու պատասխանող «Թիվ 2 բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանին, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով, եւ պահանջելու, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանքը՝ 50.000 /հիսուն հազար դրամ/ գումարի չափով:

Հայցվորը դատարանից խնդրել էր «Թիվ 2 բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերությանը պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրելու հայցված տեղեկատվությունն ամբողջ ծավալով, այն է՝ տրամադրել «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ մանկական պոլիկլինիկայում մինչեւ 7 տարեկան երեխաներին տրամադրվող անվճար դեղերի հատկացման կարգը, առկա անվճար տրամադրվող դեղերի ցուցակի պատճեն, ինչպես նաեւ տեղեկացնել, թե

ինչ պարբերականությամբ եւ ինչ հիմքով է այդ ցուցակը փոփոխվում, այլ-տեղեկացնել, թե այն դեպքում, երբ երեխան հիվանդ է, սակայն բուժման համար անհրաժեշտ դեղորայքը ներառված չէ վերոնշյալ ցուցակում, ապա կա այլ տարբերակ՝ մինչեւ 7 տարեկան երեխային անվճար տրամադրելու այդ դեղը, ինչպես նաեւ տրամադրել տարբերակ, թե ինչ անի ծնողը, եթե անվճար տրամադրվող դեղերի ցուցակում կա դեղ, որի կարիքն ունի հիվանդ երեխան, եւ այն բժշկի կողմից չի տրամադրվում:

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:

Որպես հետեւանք՝ խնդրում ենք լուծել պետական տուրքի հարցը:

Հայցվորի ներկայացուցիչը դատական նիստին չներկայացավ, սակայն, ներկայացված դիմումով հայտնելով, որ դատարանն, անցնելով դատական ակտի հրապարակմանը, վճռի հրապարակման օրը որոշել է վերսկսել գործի քննությունը, դրա համար ամենայն հավանականությամբ հիմք է հանդիսացել այն, որ պատասխանող ՓԲԸ-ն դատաքննությունն ավարտելուց հետո գրավոր պատասխանել է հայցվորի մոտ մեկամյա վաղեմության հարցմանը եւ ամենայն հավանականությամբ պատասխանի մեկ օրինակն ուղարկել է նաեւ դատարանին, գտնում է, որ եթե դատարանը հաստատված համարի այն փաստը, որ պատասխանողը օրենքով սահմանված ժամկետում չի տրամադրել հարցվող տեղեկատվությունը եւ դա տրամադրել է միայն հայցվորի կողմից դատական պաշտպանության դիմելուց, ավելին, դատաքննությունն ավարտելուց հետո, ապա ամեն դեպքում պետք է պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել պետական տուրքը, միաժամանակ ուղարկված պատասխանով էլ հաստատվում է, որ պատասխանողը հնարավորություն է ունեցել հարցմանը պատասխանել, ինչը չի արել:

Նման պայմաններում եւ վերը նշված փաստերը հաստատված համարելով՝ գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 189.7-րդ եւ 223-րդ հոդվածների համաձայն դատարանը պետք է վարչական պատասխանատվության ենթարկի «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ տնօրեն Տիգրան Խաչատրյանին, որը օրենքով սահմանված ժամկետում չի տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Միաժամանակ դատարանից խնդրել է գործը քննել իր բացակայությամբ՝ հաշվի առնելով վերը նշված հիմնավորումը:

### **3. Պատասխանող կողմի իրավական դիրքորոշումը.**

Պատասխանող կողմը հայցադիմումի պատասխանով դատարանին հայտնել էր, որ «Թիվ 2 բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերության տնօրենը 07.07.2009թ.-ի թիվ 124/12-8/ գրությամբ պատասխանել է, որ հայցվորը իր բարձրագրած հարցերի պատասխանները կարող է ստանալ ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանումից: Այսինքն՝ պատասխանողն ըստ էության պատասխանել է հարցմանը, պատասխանել է մեկ ամսվա ընթացքում, քանի որ փորձել է համապատասխան տեղեկատվությունը տրամադրել, սակայն, պարզելով, որ տվյալ հարցադրումների պատասխանները կարող են տրամադրվել միայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից, տրամադրել է վերը նշված պատասխանը:

Պատասխանողը նման տրամադրել նկատի ունենալով այն, որ այդ հար-

ցադրումներն ընդհանուր եւ տեսական բնույթի են, վերաբերում են դեղերի տրամադրման կարգին, որը սահմանում է ՀՀ առողջապահության նախարարությունը, որն էլ իրավասու է պատասխանել բարձրացված հարցերին:

Այսինքն՝ պատասխանողը, ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ կետով, գրավոր տեղեկացրել է դիմողին պահանջվող տեղեկությունը տնօրինողի տվյալները: Ասվածից հետևում է, որ պատասխանողը պատշաճ կատարել է ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված իր պարտականությունները, ու հիմք չկա ընկերության գլխավոր տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

Ինչ վերաբերում է տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելուն, ապա ինչպես վերը նշվեց, հարցադրումների մի մասի վերաբերյալ տեղեկատվություն կարող է տրամադրել այլ կազմակերպություն, որի մասին նշվել է, իսկ մյուս մասը վերաբերում է երեխաներին անվճար դեղորայք տրամադրելու այլ տարբերակներին, ապա բուժմիավորման գլխավոր տնօրենը պարտավոր չէ այդ հարցերին պատասխանել եւ տարբերակներ առաջարկել դիմողին:

«Թիվ 2 բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Տ. Խաչատրյանի կողմից 11.03.2010թ.-ի հայցվորին տրամադրվել է համապատասխան տեղեկատվությունը:

#### 4. Գործի փաստերը.

**ա)** «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 10.06.2009թ.-ին «Թիվ 2 բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել.

«Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել.

1. Թիվ 2 բուժմիավորման մանկական պոլիկլինիկայում մինչեւ 7 տարեկան երեխաներին տրամադրվող անվճար դեղերի հատկացման կարգը:
2. Առկա անվճար տրամադրվող դեղերի ցուցակի պատճեն:
3. Նաեւ տեղեկացնել, թե ինչ պարբերականությամբ եւ ինչ հիմքով է այդ ցուցակը փոփոխվում:
4. Խնդրում ենք տեղեկացնել, որ եթե երեխան հիվանդ է եւ բուժման համար ներառված դեղորայքը ներառված չէ վերոնշյալ ցուցակում, ապա կա՞ այլ տարբերակ՝ մինչեւ 7 տարեկան երեխային անվճար տրամադրելու այդ դեղը:
5. Ինչպե՞ս եւ տրամադրեք խնդրեմ տարբերակ, թե ինչ անի ծնողը, եթե անվճար տրամադրվող դեղերի ցուցակում կա դեղ, որի կարիքն ունի հիվանդ երեխան, եւ այն բժշկի կողմից չի տրամադրվում:

**բ)** «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ տնօրենը 07.07.2009թ.-ի թիվ 124/12-8/ գրությամբ պատասխանել է, որ հայցվորը իր բարձրացրած հարցերի պատասխանները կարող է ստանալ ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանումից:

գ) «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ գլխավոր տնօրեն Տ. Խաչատրյանի կողմից 11.03.2010թ.-ին հայցվորին տրամադրվել է համապատասխան տեղեկատվությունը, ինչը հաստատվում է պատասխանողի կողմից ներկայացված դիմումով:

### 5. Դատարանի պատճառաբանությունները եւ եզրահանգումները.

Դատարանը, քննելով հայցը, գնահատելով ապացույցները, գտավ հայցը մերժման ենթակա հետեւյալ պատճառաբանությամբ՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն 10.06.2009թ.-ին «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել.

«Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել.

1. Թիվ 2 բուժմիավորման մանկական պոլիկլինիկայում մինչեւ 7 տարեկան երեխաներին տրամադրվող անվճար դեղերի հատկացման կարգը:
2. Առկա անվճար տրամադրվող դեղերի ցուցակի պատճեն:
3. Նաեւ տեղեկացնել, թե ինչ պարբերականությամբ եւ ինչ հիմքով է այդ ցուցակը փոփոխվում:
4. Խնդրում ենք տեղեկացնել, որ եթե երեխան հիվանդ է եւ բուժման համար ներառեչտ դեղորայքը ներառված չէ վերոնշյալ ցուցակում, ապա կա՞ այլ տարբերակ՝ մինչեւ 7 տարեկան երեխային անվճար տրամադրելու այդ դեղը:
5. Ինչպե՞ս եւ տրամադրեք խնդրեմ տարբերակ, թե ինչ անի ծնողը, եթե անվճար տրամադրվող դեղերի ցուցակում կա դեղ, որի կարիքն ունի հիվանդ երեխան, եւ այն բժշկի կողմից չի տրամադրվում:

Հայցվորը դատարանից խնդրել էր պարտավորեցնել պատասխանողին հնգօրյա ժամկետում տրամադրելու հարցված տեղեկատվությունը եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 189.7-րդ հոդվածի համաձայն՝ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանին ենթարկել վարչական պատասխանատվության 50000 դրամի չափով՝ լուծելով նաեւ իրենց կողմից նախապես վճարված պետական տուրքի հարցը:

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ տնօրենը 07.07.2009թ.-ի թիվ 124/12-8/ գրությամբ պատասխանել է, որ հայցվորը իր բարձրացրած հարցերի պատասխանները կարող է ստանալ ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանումից, իսկ 11.03.2010թ.-ին հայցվորին տրամադրվել է համապատասխան տեղեկատվությունը, ինչը հաստատվում է պատասխանողի կողմից ներկայացված դիմումով:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին եւ այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

424-րդ հոդվածի 1-ին մասի պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը: Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի

վարույթի համար անհրաժեշտ հանգամանք է վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի առկայությունը, ինչը կոնկրետ դեպքում բացակայում է:

Այսպիսով՝ դատարանը դատաքննությամբ պարզեց, որ պահանջվող տեղեկատվությունը տրամադրվել է. նման պայմաններում հայցն առարկայազուրկ է եւ ենթակա մերժման:

Դատարանը, քննության առնելով հայցվորի միջնորդությունը նախապես վճարված պետական տուրքը գանձելու մասին, գտավ այն բավարարման ենթակա: Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 140-1411 հոդվածներով՝ դատարանը

#### **Վ Ճ Ո Շ Ց**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ «Թիվ 2 բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերության, «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանի՝ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին մերժել:

Պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել նախապես վճարված 8000 դրամի չափով պետական տուրքը:

Սույն վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից մեկամսյա ժամկետում եւ օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

ԴԱՏԱՎՈՐ՝

ԷԴԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

### **Գործ 3.**

**ԻԱԿ-ն ընդդեմ**

**ՀՀ Արտակարգ իրավիճակների  
նախարարության**

## Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի փետրվարի 7-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն՝ խնդրելով հայտնել, թե կան արդյոք նախարարության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնագերծվել են 2010թ.-ին, եւ եթե կան, ապա խնդրել էր տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները:

ՀՀ ԱԻ նախարարությունը հղում էր արել ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը՝ նշելով, որ այդ փաստաթղթերն առգրավվել են ՀՀ ՀԶԾ-ի կողմից: ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը, սակայն, ԻԱԿ-ին տեղեկացրել էր, որ առգրավված փաստաթղթերի պատճեններն առկա են եւ ի սկզբանե առկա են եղել ԱԻ նախարարությունում: Այսինքն՝ տեղեկատվություն տնօրինողը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն է: Ուստի 2011թ.-ի մարտի 29-ին ԻԱԿ-ը կրկին դիմեց նախարարությանը, սակայն ԱԻ-ը անպատասխան թողեց գաղտնագերծված փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին ԻԱԿ-ի հարցումը:

ԱԻ-ը անպատասխան թողեց նաեւ 2010թ.-ին գաղտնագերծված եւ ԱԻ նախարարության տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի վերաբերյալ ԻԱԿ-ի՝ 2011թ.-ի մայիսի 25-ի եւ 2011թ.-ի հոկտեմբերի 20-ի հարցումները:

ԻԱԿ-ը 2011թ.-ի նոյեմբերի 8-ին դիմեց ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաեւ ՀՀ ԱԻ նախարար Արմեն Երիցյանին ենթարկել վարչական պատասխանատվության 50.000 ՀՀ դրամի չափով:

2012թ.-ի մայիսի 21-ին կայացավ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության գործով դատական նախնական նիստը, որի ժամանակ ԱԻ նախարարությունը տրամադրեց ԻԱԿ-ի պահանջած ողջ տեղեկատվությունը՝ 51 էջից բաղկացած, ինչի արդյունքում էլ կնքվեց հաշտության համաձայնություն ԻԱԿ-ի եւ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության միջեւ (*գործի մասին առավել մանրամասն տեղեկատվություն, ինչպես նաեւ նախարարության տրամադրած տեղեկությունները հասանելի են ԻԱԿ-ի [www.foi.am](http://www.foi.am) կայքի «Ռազմավարական դատավարություն» բաժնի «Դատական գործեր» ենթաբաժնում, գործ՝ թիվ 30*):

## Գործի նյութերը

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին  
Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական  
կազմակերպություն  
լիազորված անձ՝ փաստաբան Աշոտ Ռաֆիկի Վարելյանից  
Պատասխանող՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն

### ՀԱՅՅԱԴԻՄՈՄ

(գործողության կատարման հայց)

Տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու եւ վարչական տույժի  
ենթարկելու պահանջների մասին

### Նախապատմություն.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպու-  
թյունը (հետագայում՝ Հայցվոր) 07 փետրվարի 2011թ.-ին 134-ի 7 թվագրմամբ  
հետեւյալ բովանդակությամբ գրավոր հարցում է կատարել ՀՀ արտակարգ  
իրավիճակների նախարարություն (հետագայում նաեւ՝ Պատասխանող)՝ ի  
դեմս նախարար պարոն Արմեն Երիցյանին.

«Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղե-  
կատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝  
խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Կա՞ն արդյոք ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տնօրինու-  
թյան տակ փաստաթղթեր, որոնք գաղտնագերծվել են 2010 թ.-ին:
2. Եթե այո, ապա խնդրում եմք տրամադրել այդ փաստաթղթերի պատճեն-  
ները:»:

Ի պատասխան նշված հարցմանը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարա-  
րության կողմից 24 փետրվարի 2011թ.-ին թիվ Ե-4/349 գրությամբ հարցմանը  
ներկայացրել է հետեւյալ պատասխանը.

*«Ի պատասխան Ձեր 07.02.2011 թվականի N 134 նամակի՝ հայտնում եմք, որ  
2010 թվականին ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ՀՀ արտակարգ  
իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության  
գործունեության հետ կապված հարուցված քրեական գործի շրջանակներում  
ՀՀ Հատուկ քննչական ծառայության միջնորդությամբ ՀՀ արտակարգ իրավի-  
ճակների նախարարության կողմից գաղտնագերծվել են մի շարք փաստաթղ-  
թեր: Սակայն այդ փաստաթղթերի պատճենները մեր կողմից չեն կարող տրա-  
մադրվել, քանի որ քրեական գործի շրջանակներում նրանք առգրավվել են ՀՀ  
Հատուկ քննչական ծառայության կողմից:»:*

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպու-  
թյունը 16 մարտի 2011թ.-ի 137-ի 3 թվագրմամբ հետեւյալ բովանդակությամբ  
գրավոր հարցում է կատարել ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ ի դեմս  
ծառայության պետ Ա. Միրզոյանին.

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 07.02.2011թ.-ին տեղեկատվություն



ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Կա՞ն արդյոք ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնագերծվել են 2010 թ.-ին:
2. Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները:

Ի պատասխան ԻԱԿ-ի հարցման՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը պատասխանել է, որ 2010թ.-ի ընթացքում ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից գաղտնագերծվել են մի շարք փաստաթղթեր: Սակայն նախարարությունը դրանց պատճենները չի կարող տրամադրել, քանի որ այդ գաղտնագերծված փաստաթղթերն առգրավվել են ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության հետ կապված հարուցված քրեական գործի շրջանակներում:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել ՀՀ հատուկ քննչական ծառայության տնօրինության տակ գտնվող՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2011թ.-ին գաղտնագերծված փաստաթղթերի պատճենները:

Կից ներկայացնում եմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պատասխան գրության պատճենը:»:

Ի պատասխան նշված հարցմանը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից 21 մարտի 2011թ.-ին թիվ 18-60կգ-11 գրությամբ հարցմանը ներկայացրել են հետեւյալ պատասխանը.

*«ՀՀ ԱԻՆ պետական ռեզերվների գործակալության գործունեության հետ կապված քրեական գործով առգրավված, ԱԻՆ-ի կողմից 2010թ. գաղտնագերծված փաստաթղթերի պատճենները տրամադրելու վերաբերյալ Ձեր՝ 16.03.11թ. գրությանը հայտնում եմ, որ քրեական գործով առգրավված փաստաթղթերը հիմնականում վերադարձվել են, քրեական գործում առկա են որոշ փաստաթղթերի բնօրինակներ, որոնք ճանաչվել են որպես սպացույց, առգրավված փաստաթղթերի պատճենները ի սկզբանե մնացել են նախարարությունում:»:*

Վերոնշյալ պատասխանը ստանալուց հետո «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն կրկնակի հարցումներով՝ 29.03.2011թ.-ին, 25.05.2011թ.-ին եւ 20.10.2011թ.-ին, նորից դիմել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն վերոնշյալ տեղեկատվությունը ստանալու վերաբերյալ, սակայն նախարարությունը նշված հարցումներին ո՛չ գրավոր, ո՛չ էլ բանավոր չի պատասխանել եւ չի տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

### Հայցապահանջի իրավական հիմնավորումը եւ պահանջը.

ՀՀ Սահմանադրության

- 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն նսօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված Հայցվորի իրավունքների ու Պատասխանողի պարտականության՝ Պատասխանողը մինչ օրս չի տրամադրել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ վերջինս համաձայն՝ վերոնշյալ Նորմերի պարտավոր էր այն տրամադրել:

Վերոնշյալ հարցումներից եւ ստացված պատասխաններից հետեւում է, որ փնտրվող տեղեկատվությունը պահպանվում է Պատասխանողի մոտ, որն էլ պարտավոր է տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է Հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքները:

Որպես խախտում՝ պատասխանող կողմը ՀՀ ենթակա է նաեւ վարչական պատասխանատվության՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

Այսպես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189.7 հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար՝ համաձայն որի.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազա-

գույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են սույն օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված գործերը:

Գտնում ենք, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի Պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել վարչական տույժի ենթարկել ՅՅ արտակարգ իրավիճակների նախարարին իր ապօրինի արարքի (անգործության) համար, որն արտահայտվել է Օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով, եւ պահանջելու, որ դրա համար՝ որպես պատասխանատվության միջոց, կիրառվի տուգանքը՝ 50.000 (հիսուն հազար) դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով մատնանշված օրենսդրական նորմերի պահանջներով՝ դատարանից խնդրում ենք

1. Պարտավորեցնել ՅՅ արտակարգ իրավիճակների նախարարությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը:
2. ՅՅ արտակարգ իրավիճակների նախարար՝ Արմեն Երիցյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 (հիսուն հազար) ՅՅ դրամի չափով:

Կից ներկայացնում ենք.

1. հայցադիմումը պատասխանողին հանձնված լինելու մասին ապացույց,
2. լիազորագիր,
3. փաստաբանական գործունեության թիվ 133 արտոնագրի պատճեն,
4. հարցումների կրկնօրինակների պատճենները,
5. ՅՅ արտակարգ իրավիճակների նախարարության հարցման պատասխանի պատճեն,
6. ՅՅ հատուկ քննչական ծառայության գրության պատճեն,
7. կազմակերպության պետ. ռեգիստրի վկայականի պատճեն,
8. միջնորդություն:

Հայցվորի ներկայացուցիչ՝

Վշոտ Ռաֆիկի Վարելյան

Վարչական գործ թիվ ՎԴ-6832/05/11

**Վ Ճ Ի Ռ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

04 հունիսի 2012թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը,  
Նախագահությամբ դատավոր՝ Արգիշտի Ղազարյանի,  
մասնակությամբ հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»  
հասարակական կազմակերպության  
ներկայացուցիչ՝ Աշոտ Վարելյանի

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ արտակարգ իրավիճակների նախարարին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին»,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայցադիմում էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ արտակարգ իրավիճակների նախարարին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանը 21.11.2011թ. հայցադիմումն ընդունել էր վարույթ:

21.05.2012թ. կայացած դատական նիստի ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Աշոտ Վարելյանը դատարան է ներկայացրել հայցից հրաժարվելու վերաբերյալ դիմում, որին կից ներկայացրել է հետեւյալ բովանդակությամբ հաշտության համաձայնությունը.

«ՀՀ վարչական դատարանի դատավոր Ա.Ղազարյանի վարույթում գտնվող թիվ ՎԴ/6832/05/11 վարչական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ լիազորված անձ Աշոտ Ռաֆիկի Վարելյան /հետագայում՝ Կողմ 1/ ընդդեմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության լիազորված անձ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավար Համլետ Հակոբյանի/ հետագայում՝ Կողմ 2/՝ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին»:

Կողմերը, ցանկություն ունենալով փոխզիջումների հիման վրա լուծել առկա խնդիրները, արտահայտելով հաշտության հասնելու ձգտումը, կնքեցին սույն հաշտության համաձայնությունը հետեւյալի մասին.

1. Կողմ 2-ը տրամադրում է Կողմ 1-ի կողմից հայցվող տեղեկատվությունը, այն է՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տնօրինության տակ գտնվող 2010թ. գաղտնագրերով փաստաթղթերի պատճենները:

2. Կողմ 1-ը, ստանալով հայցվող տեղեկատվությունը ,պարտավորվում է հրաժարվել հայցադիմումով ներկայացված մնացած պահանջներից, այն է՝ վարչական պատասխանատվության ենթարկել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանին:
3. Պետական տուրքը վճարում է Կողմ 2-ը՝ վճարելով 8.000 դրամ 90000501610 հաշվեհամարին փոխանցելու միջոցով:
4. Սույն հաշտության համաձայնության հետեւանքները կողմերիս հայտնի են:
5. Սույն հաշտության համաձայնությամբ ստանձնված պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու դեպքում՝ կողմերս համաձայն ենք, որ այն կատարվի ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կողմից:
7. Սույն հաշտության համաձայնությունը կազմված է երեք օրինակից, մեկական օրինակ կողմերին, իսկ երրորդ օրինակը ներկայացվում է ՀՀ վարչական դատարանին՝ այն հաստատելու եւ քաղաքացիական գործի վարույթը կարճելու համար:

Սկստի ունենալով, որ հայցվորը հրաժարվել է պահանջներից՝ դատարանը գտնում է, որ վարչական գործի վարույթը պետք է կարճել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն:

Դատարանը միեւնույն ժամանակ գտավ, որ պատասխանողի վրա պետք է դրվի պետական տուրքի վճարման պարտականությունը, քանի որ հաշտության համաձայնությամբ այդ պարտականությունը դրվել է վերջինիս վրա:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 90-րդ, 112-րդ, 113-րդ, 115-րդ հոդվածներով՝ դատարանը

#### **Վ Ճ Ո Շ Ց**

Վարչական գործի վարույթն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ արտակարգ իրավիճակների նախարարին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին պահանջի մասին կարճել:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 8.000 /ուր ի հազար/ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախատեսված, սակայն ՀՀ վարչական դատարանի 21.11.2011թ.-ի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ մինչեւ օրինական ուժի մեջ մտնելը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան:

Օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամովին չկատարելու դեպքում՝ վճիռը կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝

ԱՐԳԻՇՏԻ ՂԱԶԱՐՅԱՆ

## Գործ 4.

ԻԱԿ-ն ընդդեմ

«Համալսարանականներ»

համատիրության

## Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի հունիսի 13-ին եւ 2011թ.-ի հունիսի 30-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով դիմել էր «Չամալսարանականներ» համատիրության նախագահ Արմեն Թադեւոսյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ե՞րբ եւ որտե՞ղ է հրապարակվել «Չամալսարանականներ» համատիրության այն ժողովի հայտարարությունը, որի ժամանակ սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:
2. Ե՞րբ եւ որտե՞ղ է տեղի ունեցել համատիրության նշված ժողովը, եւ համատիրության քանի՞ անդամ է մասնակցել այդ ժողովին:
3. Խնդրում ենք տրամադրել համատիրության այն նիստի արձանագրության պատճեն, որի ընթացքում սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:
4. Խնդրում ենք տրամադրել նաեւ համատիրության այն որոշման պատճենը, որով սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:
5. Որո՞նք են սպասարկման գումարների գնագոյացման հիմքերը, համաձայն որոնց սահմանվել են վերոնշյալ գումարների չափերը: Խնդրում ենք տրամադրել յուրաքանչյուր ծառայության դիմաց հաշվարկված գումարի չափերը՝ առանձին առանձին, եւ դրանց համապատասխան հիմքերը:
6. Խնդրում ենք տրամադրել 2011թ.-ի հունիսի 14-ի դրությամբ համա-

տիրության եւ մասնավոր ընկերությունների կամ անհատների հետ Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի աղբահանության, շենքի մուտքերի եւ հարակից տարածքների մաքրության, արտաքին լուսավորության, աստիճանավանդակների եւ միջանցքների լուսավորության, վերելակների պահպանման եւ այլ ծառայությունների մատուցման համար կնքված պայմանագրերի պատճենները:

7. Խնդրում ենք տրամադրել «Չամալսարանականներ» համատիրության 2011թ.-ի բյուջեի պատճենը:

ԻԱԿ-ի հարցումները մնացել էին անպատասխան:

ԻԱԿ-ը 2011թ.-ի նոյեմբերի 11-ին դիմեց Երեւանի Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ պահանջելով պարտավորեցնել համատիրությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաեւ պարտավորեցնել համատիրությանը հայցվող տեղեկատվությունը հրապարակել հանրության համար մատչելի վայրում:

2011թ.-ի դեկտեմբերի 8-ից մինչեւ 2012թ.-ի հունիսի 28-ը ընկած ժամանակահատվածում դատարանը նախնական վեց նիստ նշանակեց, սակայն վեց նիստերն էլ հետաձգվեցին, եւ դատական գործի նախապարաստում դատաքննության ըստ տեղի չունեցավ, քանի որ պատասխանող կողմը դատական նիստերին չէր ներկայանում. համատիրության նախագահ Արմեն Թադեւոսյանին ոչ թաղապետարանի միջոցով, ոչ էլ փոստային ծառայությամբ դատարանի ուղարկված ծանուցման միջոցով

ծանուցել հնարավոր չէր եղել: 2012թ.-ի հուլիսի 24-ին տեղի ունեցած հերթական նիստի ժամանակ դատարանի որոշմամբ դատական գործը կասեցվեց անորոշ ժամանակով՝ մինչ Արմեն Թադեւոսյանի հայտնաբերումը:

«Յամալսարանականներ» համատիրության նախագահ Արմեն Թադեւոսյանին ծանուցել հնարավոր եղավ միայն 2013թ.-ին, եւ դատարանը 2013թ.-ի հունվարի 8-ի որոշմամբ դադարեցրեց հետախուզումը եւ վերսկսեց դատական գործի քննությունը:

Դատաքննության ընթացքում «Յամալսարանականներ» համատիրությունը ամբողջությամբ տրամադրեց ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները, ինչի արդյունքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը եւ համատիրությունը հաշտություն կնքեցին:

2013թ.-ի փետրվարի 14-ին հրապարակված վճռով դատարանը գործի վարույթը կարճեց:



## Գործի նյութերը

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն

լիազորված անձ՝ փաստաբան Աշոտ Ռաֆիկի Վարելյանսից

Պատասխանող՝ «Համալսարանականներ» համատիրություն

### ՀԱՅՅԱԴԻՍՈՒՄ

Տեղեկատվություն տրամադրելու եւ հրապարակելու պարտավորեցնելու պահանջի մասին

#### Նախապատմություն.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (հետագայում՝ Հայցվոր) 13 հունիսի 2011թ.-ի 143-ի 8 թվագրմամբ եւ 30 հունիսի 2011թ.-ի 45-ի 3 թվագրմամբ հետեւյալ բովանդակությամբ գրավոր հարցում է կատարել «Համալսարանականներ» համատիրության (հետագայում՝ Պատասխանող) նախագահ պարոն Արմեն Թադեւոսյանին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Եր՞բ եւ որտե՞ղ է հրապարակվել «Համալսարանականներ» համատիրության այն ժողովի հայտարարությունը, որի ժամանակ սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:
2. Ե՞րբ եւ որտե՞ղ է տեղի ունեցել համատիրության նշված ժողովը եւ համատիրության քանի անդամ է մասնակցել այդ ժողովին:
3. Խնդրում ենք տրամադրել համատիրության այն նիստի արձանագրության պատճեն, որի ընթացքում սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:
4. Խնդրում ենք տրամադրել նաեւ համատիրության այն որոշման պատճենը, որով սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:
5. Որո՞նք են սպասարկման գումարների գնագոյացման հիմքերը, համաձայն որոնց սահմանվել են վերոնշյալ գումարների չափերը: Խնդրում ենք տրամադրել յուրաքանչյուր ծառայության դիմաց հաշվարկված գումարի չափերը՝ առանձին առանձին, եւ դրանց համապատասխան հիմքերը:
6. Խնդրում ենք տրամադրել 2011թ.-ի հունիսի 14-ի դրությամբ համատիրության եւ մասնավոր ընկերությունների կամ անհատների հետ Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի աղբահանության, շենքի մուտքերի եւ հարակից տարածքների մաքրության, արտաքին լուսավորության, աստիճանավանդակների եւ միջանցքների լուսավորության, վերելակների պահպանման եւ այլ ծառայությունների մատուցման համար կնքված պայմանագրերի պատճենները:

7. Խնդրում եմք տրամադրել «Համալսարանականներ» համատիրության 2011թ.-ի բյուջեի պատճեն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնել դիմողին՝ նշելով մերժման հիմքը:»:

Նշված փաստը հաստատվում է հարցման կրկնօրինակներով եւ փոստային անդորրագրերով:

Պատասխանողը օրենքով սահմանված առավելագույն՝ 30-օրյա ժամկետում հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել եւ ոչ մի կերպ չի արձագանքել:

Պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

**Հայցապահանջի իրավական հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության

- 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում (հետագայում՝ Օրենք), որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նայն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.

- 1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները.
- 2) բյուջեն. ...
- 9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները). »

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված Հայցվորի իրավունքների ու Պատասխանողի պարտականության՝ Պատասխանողը, ի դեմս իր նախագահի, մինչ օրս չի տրամադրել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ վերջինս համաձայն վերոնշյալ նորմերի պարտավոր էր այն տրամադրել: Իսկ Հայցվորի բանավոր պահանջներին վերջինս պատասխանել է, որ տեղեկատվությունը տրամադրել է:

«Համատիրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ համատիրության գործունեության հաշվետվությունը, որտեղ պետք է ընդգրկվեն դրա հաշվեկշիռը եւ այլ տվյալներ, հրապարակվում է ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով:

Նույն օրենքի 30-րդ հոդված համաձայն՝ «Յուրաքանչյուր տարվա համար կառավարիչն ընդհանուր ժողով է ներկայացնում այդ տարվա համատիրության ֆինանսական հաշվետվությունը, ինչպես նաեւ համատիրության հաջորդ տարվա եկամուտները եւ ծախսերը՝ տարանջատելով պարտադիր նորմերի պահանջմանն ուղղված ծախսերը:

Ֆինանսական հաշվետվությունը կազմվում է տարվա վերջում, ստորագրվում նախագահի, կառավարչի եւ վերստուգիչ հանձնաժողովի նախագահի (վերստուգիչի) կողմից եւ ներկայացվում ընդհանուր ժողովի հաստատմանը, ինչպես նաեւ համապատասխան մարմիններ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համատիրության մեջ մի քանի շենք ընդգրկվելու դեպքում ֆինանսական հաշվետվությունը կազմվում է ըստ առանձին շենքերի:»:

Վերոնշյալ հոդվածից հետեւում է, որ փնտրվող տեղեկատվությունը պահպանվում է Պատասխանողի մոտ, որն էլ պարտավոր էր տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է Հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքները:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով մատնանշված օրենսդրական նորմերի պահանջներով, դատարանից խնդրում ենք՝

1. Պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը:
2. Պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը հայցվող տեղեկատվությունը հրապարակել հանրության համար մատչելի վայրում:

Հայցվորի ներկայացուցիչ՝ Աշոտ Ռաֆիկի Վարելյան

ՀՀ ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ

ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ

ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

պատասխանողի եւ նրա գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու եւ գործի վարույթը կասեցնելու մասին

«24» հուլիսի 2012թ.

ք. Երեւան

ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, նախագահությամբ՝ դատավոր Ա. Մելքունյանի, քարտուղարությամբ՝ Ա. Գալիկյանի, մասնակցությամբ հայցվորի ներկայացուցիչ՝ Ա. Վարելյանի, դռնբաց դատական նիստում քննության ամենելով ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրելուն, այն հանրության համար մատչելի վայրում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին հա. ԵԿԴ/2533/02/11 քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցիչ Ա. Վարելյանի գրավոր միջնորդությունը պատասխանողի եւ նրա գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին,

**ՊԱՐՉԵՑ**

Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ա. Վարելյանը, դիմելով դատարանին, խնդրել է պատասխանող «Համալսարանականներ» համատիրության՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրելուն, այն հանրության համար մատչելի վայրում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Վերոհիշյալ հայցադիմումը ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, եւ նշանակվել դատական քննության:

Հայցադիմումում նշված ք. Երեւան, Ալեք Մանուկյան 4-րդ հարկ եւ ք. Երեւան Ծարավ Աղբյուրի փողոց թիվ 55/5 հասցեներով պատասխանող «Համալսարանականներ» համատիրությանը հնարավոր չի եղել պատշաճ կարգով ծանուցել դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին, քանի որ դատարանի կողմից տվյալ հասցեներով ուղարկված փաստաթղթերը, այդ թվում՝ ծանուցումը, հետ են վերադարձվել դատարան՝ փոստատարի հետեւյալ մակագրությամբ՝ տեղափոխված են, այսինքն՝ գործով հնարավոր չի եղել ապահովել պատասխանողի պատշաճ ծանուցումը:

Ի պատասխան դատարանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վարչական շրջանի ղեկավարին ուղղված 17.04.2012թ.-ի գրության՝ Ավան վարչական շրջանի ղեկավար պարոն Մ. Ջավադյանին, եւ 09.07.2012թ.-ին դատարան մուտքագրված գրությամբ հայտնվել է, որ «Համալսարանականներ» համատիրությանը փոստային առաքմամբ ուղարկվել է ծանուցագիրը, որը վերադարձվել է «անհայտ» նշումով:

Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացվել է միջնորդություն, որով վերջինս դատարանից խնդրել է պատասխանող «Համալսարանականներ» համատիրության նկատմամբ հայտարարել հետախուզում՝ հայցադիմումում նշված հասցեով պատասխանողի չգտնվելու հանգամանքից ելնելով:

Դատարանը, քննարկելով միջնորդությունը, գտնում է, որ այն հիմնավոր է եւ ենթակա է բավարարման, քանի որ պատասխանող «Համալսարանականներ» համատիրությանը հայցադիմումում նշված՝ ք. Երեւան, Ալեք Մանուկյան 4-րդ հարկ եւ ք. Երեւան Ծարավ Աղբյուրի փողոց թիվ 55/5 հասցեներով ուղարկված փաստաթղթերը հետ են վերադարձել դատարան, իսկ պատասխանողի ճշգրտված այլ փաստացի գտնվելու վայրի հասցե դատարանին եւ հայցվոր կողմին հայտնի չէ, այդ իսկ պատճառով անհնարին է վերջինիս պատշաճ ծանուցել դատական նիստի վայրի եւ ժամանակի մասին՝ վերջինիս գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունների բացակայության պատճառով, միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94 հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով նույնպես անհնարին է եղել ապահովել պատասխանողի պատշաճ ծանուցումը, ինչը նշանակում է, որ այլ կերպ հնարավոր չէ ապահովել պատասխանողի պատշաճ ծանուցումը՝ գործի դատաքննությունն իրականացնելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94 հոդվածի 2-4 մասերով, 106 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 108 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 144 հոդվածի 1-ին, 1.1-ին եւ 2-րդ մասերով, 144.1 հոդվածի 2-րդ մասով, 145 հոդվածով՝ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

Միջնորդությունը բավարարել:

Պատասխանող «Համալսարանականներ» համատիրության եւ վերջինիս գույքի (ք. Երեւան, Ալեք Մանուկյան 4-րդ հարկ եւ ք. Երեւան Ծարավ Աղբյուրի փողոց թիվ 55/5 հասցեներով) նկատմամբ հայտարարել հետախուզում:

Որոշման կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությանը:

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությանը հանձնարարել պատասխանող «Համալսարանականներ» համատիրությանը եւ վերջինիս գույքը հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ հայտնել դատարանին:

Ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրելուն, այն հանրության համար մատչելի վայրում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին հա. ԵԿԴ/2533/02/11 քաղաքացիական գործի վարույթը կասեցնել՝ մինչեւ պատասխանողի եւ նրա գույքի հայտնաբերելը:

Գործի վարույթը կասեցնելու մասով սույն որոշումը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով այն հայցվորի կողմից ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ մնացած մասով որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից եւ ենթակա է անհապաղ կատարման:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ՄԵԼԸՈՒՄՅԱՆ

ՀՀ ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ  
ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

գործի կասեցված վարույթը վերսկսելու, պատասխանողի նկատմամբ հետախուզումը դադարացնելու եւ գործը քննության նշանակելու մասին

«08» հունվարի 2013թ.

ք. Երեւան

ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Մելքումյանս, ծանոթանալով ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրելուն, այն հանրության համար մատչելի վայրում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին հա. ԵԿԴ/2533/02/11 քաղաքացիական գործին,

**ՊԱՐԶԵՑԻ՝**

Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ա. Վարելյանը, դիմելով դատարանին, խնդրել է պատասխանող «Համալսարանականներ» համատիրության՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրելուն, այն հանրության համար մատչելի վայրում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Վերոհիշյալ հայցադիմումը ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ.-ի հոկտեմբերի 31-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, եւ նշանակվել դատական քննության:

Հայցադիմումում նշված ք. Երեւան, Ալեք Մանուկյան 4-րդ հարկ եւ ք. Երեւան Ծարավ Աղբյուրի փողոց թիվ 55/5 հասցեներով պատասխանող «Համալսարանականներ» համատիրությանը հնարավոր չի եղել պատշաճ կարգով ծանուցել դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին, քանի որ դատարանի կողմից տվյալ հասցեներով ուղարկված փաստաթղթերը, այդ թվում՝ ծանուցումը, հետ են վերադարձվել դատարան՝ փոստատարի հետեւյալ մակագրությամբ՝ տեղափոխված են, այսինքն՝ գործով հնարավոր չի եղել ապահովել պատասխանողի պատշաճ ծանուցումը: Ի պատասխան դատարանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վարչական շրջանի ղեկավարին ուղղված 17.04.2012թ.-ի գրության՝ Ավան վարչական շրջանի ղեկավար պարոն Մ. Ջավադյանին, եւ 09.07.2012թ.-ին դատարան մուտքագրված գրությամբ հայտնվել է, որ «Համալսարանականներ» համատիրությանը փոստային առաքմամբ ուղարկվել է ծանուցագիրը, որը վերադարձվել է «անհայտ» նշումով:

ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 24.08.2012թ.-ին ընդունած որոշմամբ բավարարել է հայցվոր կողմի ներկայացուցչի միջնորդությունը, եւ հայտարարվել է հետախուզում Պատասխանողի եւ վերջինիս գույքի

Նկատմամբ, իսկ հա. ԵԿԴ/2533/02/11 քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև պատասխանողի եւ նրա գույքի հայտնաբերելը:

Հայցվորի ներկայացուցչը 27.12.2012թ.ին դատարան է մուտքագրել դիմում, որով հայտնել է, որ 18.12.2012թ.ին հարկադիր կատարողի կողմից հայտնաբերվել է համատիրության նախագահ Արմեն Թադեւոսյանը, որը 21.12.2012թ.-ին հայցվորին տրամադրել է հայցադիմումով պահանջվող բոլոր փաստաթղթերի պատճենները: Ինչպես նաեւ խնդրել է դատարանից կարճել հա. ԵԿԴ/2533/02/11 քաղաքացիական գործի վարույթը եւ վերացնել պատասխանողի նկատմամբ հայտարարված հետախուզումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալուց հետո: Նկատի ունենալով, որ վերացել է գործով վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքը, մասնավորապես՝ հայցվորի ներկայացուցչը 27.12.2012թ.-ին դատարան է մուտքագրել դիմում, որով հայտնել է, որ 18.12.2012թ.-ին հարկադիր կատարողի կողմից հայտնաբերվել է «Համալսարանականներ» համատիրության նախագահ Արմեն Թադեւոսյանը, որը 21.12.2012թ.-ին հայցվորին՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին տրամադրել է հայցադիմումով պահանջվող բոլոր փաստաթղթերի պատճենները, ինչպես նաեւ խնդրել է դատարանից կարճել հա. ԵԿԴ/2533/02/11 քաղաքացիական գործի վարույթը եւ վերացնել պատասխանողի նկատմամբ հայտարարված հետախուզումը, փաստորեն, հայցվոր կողմը հայցը քննելու պահանջ չունի, այսինքն՝ գործի կասեցումն առաջացրած հանգամանքը վերացել է, ուստի գտնում եմ, որ քաղաքացիական գործի վարույթը պետք է վերսկսել եւ գործով նշանակել դատական նիստ՝ դատարան ներկայացված դիմումին դատական նիստում ընթացք տալու համար, իսկ դատարանի՝ 24.08.2012թ.-ի որոշմամբ «Համալսարանականներ» համատիրության նկատմամբ հայտարարված հետախուզումը պետք է դադարեցնել:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107 եւ 108 հոդվածների 1-ին մասերով, 144 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 144.1 հոդվածի 2-րդ մասով, 145 հոդվածով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

Ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրելուն, այն հանրության համար մատչելի վայրում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին հա. ԵԿԴ/2533/02/11 քաղաքացիական գործի վարույթը վերսկսել եւ գործը նշանակել դատական քննության 2013թ.-ի հունվարի «31»-ին՝ ժամը «10:30»-ին, դատարանում:

Դադարեցնել «Համալսարանականներ» համատիրության նկատմամբ 24.08.2012թ.-ի որոշմամբ հայտարարված հետախուզումը:

Որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱԿՈՐ՝

Ա. ՄԵԼԸՈՒՄՅԱՆ

Գործ հա. ԵԿԴ/2533/02/11

**Վ Ճ Ի Ռ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

14.02.2013թ.

ք. Երեւան

ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը

Նախագահությամբ՝ դատավոր Ա. Մելքունյանի

Քարտուղարությամբ՝ Ա. Գալիկյանի

Մասնակցությամբ՝ Հայցվորի ներկայացուցիչ՝ Ա. Վարելյանի

Դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրելուն, այն հանրության համար մատչելի վայրում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին՝

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչը, դիմելով դատարանին, խնդրել է պատասխանող «Համալսարանականներ» համատիրության՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրելուն, այն հանրության համար մատչելի վայրում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Վերոհիշյալ հայցադիմումը ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ.-ի հոկտեմբերի 31-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, եւ նշանակվել դատական քննության, իսկ 2011թ.-ի հոկտեմբերի 31-ի որոշմամբ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգվել է, եւ որոշվել է այդ հարցին անդրադառնալ վճռով:

Հայցադիմումում նշված ք. Երեւան, Ալեք Մանուկյան 4-րդ հարկ եւ ք. Երեւան Ծարավ Աղբյուրի փողոց թիվ 55/5 հասցեներով պատասխանող «Համալսարանականներ» համատիրությանը հնարավոր չի եղել պատշաճ կարգով ծանուցել դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին, քանի որ դատարանի կողմից տվյալ հասցեներով ուղարկված փաստաթղթերը, այդ թվում՝ ծանուցումը, հետ են վերադարձվել դատարան՝ փոստատարի հետեւյալ մակագրությամբ՝ տեղափոխված են, այսինքն՝ գործով հնարավոր չի եղել ապահովել պատասխանողի պատշաճ ծանուցումը:

Ի պատասխան դատարանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վարչական շրջանի ղեկավարին ուղղված 17.04.2012թ.-ի գրության՝ Ավան վարչական շրջանի ղեկավար պարոն Մ. Ջավադյանին, եւ 09.07.2012թ.-ին դատարան մուտքագրված գրությամբ հայտնվել է, որ համատիրությանը փոստային առաքմամբ ուղարկվել է ծանուցագիրը, որը վերադարձվել է «անհայտ» նշումով:



ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 24.08.2012թ.-ին ընդունած որոշմամբ բավարարել է հայցվոր կողմի ներկայացուցչի միջնորդությունը, եւ հայտարարվել է հետախուզում պատասխանող «Համալսարանականներ» համատիրության եւ վերջինիս գույքի նկատմամբ, իսկ հա. ԵԿԴ/2533/02/11 քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ մինչեւ պատասխանողի եւ նրա գույքի հայտնաբերելը:

Հայցվորի ներկայացուցչը 27.12.2012թ.-ին դատարան է մուտքագրել դիմում, որով հայտնել է, որ 18.12.2012թ.-ին հարկադիր կատարողի կողմից հայտնաբերվել է «Համալսարանականներ» համատիրության նախագահ Արմեն Թադեւոսյանը, որը 21.12.2012թ.-ին հայցվորին՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին տրամադրել է հայցադիմումով պահանջվող բոլոր փաստաթղթերի պատճենները: Ինչպես նաեւ խնդրել է դատարանից կարճել հա. ԵԿԴ/2533/02/11 քաղաքացիական գործի վարույթը եւ վերացնել պատասխանողի նկատմամբ հայտարարված հետախուզումը:

ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 08.01.2013թ.-ի որոշմամբ գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

2012թ.-ի դեկտեմբերի 27-ին հայցվոր Ա. Վարելյանի կողմից դատարան է մուտքագրվել դիմում՝ հայցից հրաժարվելու վերաբերյալ, որով վերջինս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 եւ 42 հոդվածներով հրաժարվել է ներկայացված հայցից եւ խնդրել այդ հիմքով կարճել քաղաքացիական գործի վարույթը: Գործի դատաքննությունն ավարտվել է 2013թ.-ի հունվարի 31-ին, եւ 2013թ.-ի փետրվարի 14-ին նշանակվել է վճռի հրապարակման օր:

**Հայցվորի փաստարկները եւ իրավական դիրքորոշումները**

Դիմելով դատարան՝ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչը դիմելով հայտնել է, որ 13.06.2011թ.-ին 143-ի 8 թվագրմամբ եւ 30.06.2011թ.-ի 145-ի 3 թվագրմամբ գրավոր հարցում է կատարել համատիրության նախագահ Ա. Թադեւոսյանին՝ տեղեկություններ տրամադրելու խնդրանքով, սակայն պատասխանողը խուսափում է տեղեկատվություն տրամադրել:

Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը դատարանից խնդրել է պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրել եւ այն հանրության համար մատչելի վայրում հրապարակել:

2012թ.-ի դեկտեմբերի 27-ին հայցվոր Ա. Վարելյանի կողմից դատարան է մուտքագրվել դիմում՝ հայցից հրաժարվելու վերաբերյալ, որով վերջինս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 եւ 42 հոդվածներով հրաժարվել է ներկայացված հայցից եւ խնդրել այդ հիմքով կարճել քաղաքացիական գործի վարույթը:

### **Պատասխանողի փաստարկները եւ իրավական դիրքորոշումները**

Պատասխանող «Յամալսարականներ» համատիրությունը, լինելով պատշաճ ծանուցված գործով նշանակված դատական նիստերի վայրի եւ ժամանակի մասին, դատարանին անհայտ պատճառներով չի ներկայացել եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95 հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով՝ երկշաբաթյա ժամկետում դատարանին չի ներկայացրել հայցադիմումի պատասխան, ինչպես նաեւ չի ներկայացվել դիմում՝ պատասխան ներկայացնելու ժամկետը երկարաձգելու, կամ դատական նիստին չներկայանալու եւ նիստը հետաձգելու վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին պատշաճ ձեւով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի (դիմողի) չներկայանալը արգելք չէ գործի քննության համար:

Տվյալ դեպքում, գործի դատաքննությունը կայացվել է պատասխանող կողմի բացակայությամբ՝ ելնելով վերոհիշյալ հոդվածի պահանջներից:

### **Դատարանի իրավական վերլուծությունները**

Դատարանը, ուսումնասիրելով գործի հանգամանքները եւ ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտավ, որ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Յամալսարականներ» համատիրության՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրելուն, այն հանրության համար մատչելի վայրում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին հա. ԵԿԴ /2533/02/11 քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման՝ հետեւյալ պատճառաբանություններով.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Հայցի պաշտպանության դատավարական միջոցների տնօրինման ձեւերը սահմանվում են դատական վեճի տնօրինման սկզբունքի հիման վրա, որի ուժով կողմերը որոշում են վեճի հետագա ընթացքն ու լուծման ճանապարհները՝ հայցի իրավունքի՝ պաշտպանության միջոցների տնօրինման միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը հավասար հնարավորություններ է ընձեռում դատավարության կողմերին սեփական իրավունքները պաշտպանելու համար: Կողմերը մի շարք դատավարական իրավունքներից բացի, կարող են քաղաքացիական դատավարության ցանկացած փուլում գործն ավարտել հաշտության համաձայնությամբ:

Քաղաքացիական գործով դատաքննությունը, որպես կանոն, ավարտվում է վճռի կայացմամբ, որն ըստ էության լուծում է կողմերի միջեւ ծագած վեճը: Օրենքով նախատեսված առանձին դեպքերում դատարանը կարող է ավարտել քաղաքացիական գործի քննությունն առանց վեճի ըստ էության լուծման կամ վճռի կայացման:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-Վ-րդ հոդվածի համաձայն, դատարանը կարճում է գործի վարույթը, եթե.

- 1) վեճը ենթակա չէ դատարանում քննությանը,
- 2) նույն անձանց միջեւ, նույն առարկայի մասին միեւնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառությամբ սույն օրենսգրքի 110 հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի,
- 3) նույն անձանց միջեւ, նույն առարկայի մասին եւ միեւնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է արբիտրաժային տրիբունալի վճիռ, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի,
- 4) գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը,
- 5) գործին մասնակցող իրավաբանական անձը լուծարվել է,
- 6) հայցվորը հրաժարվել է հայցից,
- 7) դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը:

Տվյալ դեպքում, քաղաքացիական գործի կարճման հիմք է հանդիսանում վորոհիշյալ հոդվածի 6-րդ կետը, այն է՝ հայցվորը հրաժարվել է հայցից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 հոդվածի 1-ին մասի՝ հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում միևնույն դատաքննության ավարտը, իսկ ըստ 109 հոդվածի 6-րդ մասի՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

Տվյալ դեպքում, 2012թ.-ի դեկտեմբերի 27-ին հայցվոր Ա. Վարելյանի կողմից դատարան է մուտքագրվել դիմում՝ հայցից հրաժարվելու վերաբերյալ, որով վերջինս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 եւ 42 հոդվածներով հրաժարվել է ներկայացված հայցից եւ խնդրել այդ հիմքով կարճել քաղաքացիական գործի վարույթը:

Վերոգրյալի հիման վրա՝ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է վճիռ, եւ դատարանի վճռի մեջ կարող են լուծվել գործին մասնակցող անձանց միջեւ դատական ծախսերի բաշխման եւ բյուջեից պետական տուրքի վերադարձման հետ կապված հարցերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 72 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածի «գ» կետի՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա

չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը:

Տվյալ պարագայում, գործը ենթակա է դատարանի քննությանը. այն դատարանի կողմից ընդունվել է վարույթ եւ քննվել, իսկ հայցվորը նախապես չի վճարել օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, որը ներկայացված թվով երկու ոչ գույքային պահանջների դեպքում կազմում է 8.000 ՀՀ դրամ, միաժամանակ, հայցվորը դիմումով հայցից հրաժարվել է՝ խնդրելով գործի վարույթը կարճել, ուստի դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից նախապես չվճարված եւ դատարանի 31.10.2011թ.-ի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումարը պետք է բռնագանձվի հայցվորից՝ նախապես այն չվճարելու հիմքով՝ հայցից հրաժարվելու եւ գործի վարույթը կարճման ենթակա լինելու պայմաններում:

Դեկլարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 հոդվածի 1-ին մասով, 109 հոդվածի 6-րդ կետով, 110, 124, 130-132 եւ 140-1401 հոդվածներով՝ դատարանը

**Վ Ճ Ո Շ Ց**

Ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության՝ պահանջվող տեղեկատվություն տրամադրելուն, այն հանրության համար մատչելի վայրում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին հա. ԵԿԴ/2533/02/11 քաղաքացիական գործի վարույթը կարճել՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 8.000 (ութ հազար) ՀՀ դրամ՝ որպես գործով նախապես չվճարված եւ օրենքով սահմանված չափով վճարման ենթակա պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ՄԵԼԵՈՒՄՅԱՆ

**Գործ 5.**  
**ԻԱԿ-ն ընդդեմ**  
**«Դուստր Մարիաննա»**  
**սահմանափակ**  
**պատասխանատվությամբ**  
**ընկերության**

## Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի նոյեմբերի 18-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնական կաթից, թե՞ կաթնափոշուց:
2. Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը ոչ, ել/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Ընկերությունն ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: 2011թ.-ի դեկտեմբերի 6-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցում ուղարկեց «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին: Կրկնակի հարցմանն ի պատասխան՝ 2011թ.-ի դեկտեմբերի 16-ին ՍՊԸ-ից ստացվեց էլեկտրոնային պատասխան, ըստ որի՝ ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունը մակնշված է կազմակերպության արտադրանքի յուրաքանչյուր տուփի վրա, ինչպես նաև հետաքրքրող տեղեկությունները ստանալու համար հղում էր արված կազմակերպության կայքին: Սակայն ԻԱԿ-ի խնդրած տեղեկություններն առկա չէին ոչ կազմակերպության արտադրանքի տուփերի վրա, ոչ էլ՝ կայքում: Պատասխանը համարվեց անհիմն:

Արդյունքում, 2011թ.-ի դեկտեմբերի 19-ին Կենտրոնը դիմեց ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ընկերությանը տրամադրել ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև խնդրված տեղեկությունները չտրամադրելու համար

կազմակերպության տնօրեն Տիգրան Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատարանը 2012թ.-ի հունվարի 26-ին որոշում կայացրեց մերժել ԻԱԿ-ի հայցադիմումը վարույթ ընդունել՝ պատճառաբանելով, որ ընկերությունը առևտրային է, հետևաբար՝ «ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից...»: Այլ կերպ ասած՝ դատարանը համարեց, որ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն հանրային նշանակություն չունի: Այնինչ, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշմամբ «Դուստր Մարիաննա» ընկերությունը Հայաստանում ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ է: Իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են հանրային նշանակության կազմակերպություններ եւ տեղեկատվություն տնօրինողներ են:

2012թ.-ի փետրվարի 13-ին ԻԱԿ-ը բողոքարկեց վարչական դատարանի որոշումը: 2012թ.-ի մարտի 5-ին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը ԻԱԿ-ի բողոքը բավարարեց մասնակիորեն: Դատարանը «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասով մերժեց ԻԱԿ-ի հայցապահանջը, իսկ «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ բավարարեց:

Դատարանն իր վճիռը հրապարակեց 2013թ.-ի փետրվարի 19-ին՝ ամբողջությամբ բավարարելով «Դուստր

Մարիաննա» ընկերության տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու ԻԱԿ-ի պահանջը (տուգանք՝ 80.000 ՀՀ դրամի չափով, որից 30.000 ՀՀ դրամը ԻԱԿ-ի առաջին հարցմամբ եւ 50.000 ՀՀ դրամը ԻԱԿ-ի կրկնակի հարցմամբ խնդրվող տեղեկությունները չտրամադրելու համար), ինչպես նաեւ պարտավորեցնելով «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանին փոխհատուցել ԻԱԿ-ի կատարած՝ 100.000 ՀՀ դրամ դատական ծախսերը եւ 3.000 ՀՀ դրամ վճարած պետական տուրքի գումարը (*գործի մասին առավել մանրամասն տեղեկատվություն, ինչպես նաեւ տրամադրած տեղեկությունները հասանելի են ԻԱԿ-ի [www.foi.am](http://www.foi.am) կայքի «Ռազմավարական դատավարություն» բաժնի «Դատական գործեր» ենթաբաժնում, գործ՝ թիվ 31*):

## Գործի նյութերը

### ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն, նախագահ՝ Շուշան Դոյոյան

Ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան

Պատասխանողներ՝

«Դուստր Մարիաննա» ՍՊԸ, «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյան

19.12.2011թ.

### Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին

#### 1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 18.11.2011թ.-ին թիվ 149-ի 7 Տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել է «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանին:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային անդորրագրի պատճեններով:

Առաջին հարցումն անպատասխան մնալուց հետո 2011թ.-ի դեկտեմբերի 6-ին թիվ 150-ի 1 Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցումն է ուղարկվել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանին:

Նշված փաստը հաստատվում է կրկնակի հարցման եւ փոստային անդորրագրի պատճեններով:

Հարցումներով «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանին խնդրվել է տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը. «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի 2010թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն՝ «Դուստր Մարիաննա» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող...»:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց:
2. Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համա-



ձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Առաջին հարցումից մոտ մեկ ամիս, իսկ երկրորդ հարցումից 10 օր անց էլեկտրոնային փոստով հետեւյալ պատասխանն է ստացվել. «*Հարգելի Շուշան Դոյոյան, Ձեր երկու հարցադրումներն էլ վերաբերում են կաթնամթերքի բաղադրությանը: Ուստի պատասխանում եմ.*

*Կաթնամթերքի բաղադրության վերաբերյալ տեղեկատվությունը պարտադիր մակնշված է «Դուստր Մարիաննա» Ընկերության կողմից արտադրվող կաթնամթերքների յուրաքանչյուր տուփի վրա:*

*Այլ տեղեկություններ հետաքրքրելու դեպքում կարող եք օգտվել մեր ընկերության կայքից՝ [www.mariannadairy.com](http://www.mariannadairy.com).*

*Հարգանքներով՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն՝ Տ. Վարդանյան»:*

Նշած փաստը հաստատվում է հայցվորի էլեկտրոնային փոստին՝ [foi@foi.am](mailto:foi@foi.am) ստացված պատասխանով, որից արտատպման միջոցով քաղվածքը վերը մեջբերված է: «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից արտադրվող կաթնամթերքների տուփի վրա, ինչպես նաեւ ընկերության [www.mariannadairy.com](http://www.mariannadairy.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը ոչ մի նշում չի պարունակում այն մասին, թե տվյալ կաթնամթերքը բնական կաթից, թե կաթի փոշուց է արտադրված:

Նշված փաստը հաստատվում է կաթնամթերքի տուփի այդ հատվածի նշումով, ինչպես նաեւ կայքից համապատասխան քաղվածքով, որը դատարանին է ներկայացվում այն լեզվով, որով տեղադրված է կայքում:

## 2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության

- 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է ... հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա»,

- 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են ... հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք, իսկ հանրային նշանակության կազմակերպություն է ... ապրանքային շու-

կայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունը,

- 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:
- 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ինչպես տեսնում ենք, պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության՝ չի տրամադրել 18.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումներով պահանջվող տեղեկատվությունը: Ինչ վերաբերում է էլ. փոստով ստացված տեղեկատվությանը, ապա այն պատշաճ պատասխան չէ, քանի որ եւ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից արտադրվող կաթնամթերքների տուփի վրա, եւ ընկերության [www.mariannadairy.com](http://www.mariannadairy.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը ոչ մի նշում չի պարունակում այն մասին, թե տվյալ կաթնամթերքը բնական կաթից է արտադրված, թե կաթի փոշուց: Բացի այդ, պատասխանը տրվել է 5-օրյա ժամկետի խախտումով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի

- 187.7-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով նախատեսված տեղեկությունը...հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հինսնապատիկի չափով»:
- 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով,
- 254-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն. «Արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի ... 1897 հոդվածներով... նախատեսված դեպքերում»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում ներառված 151 հոդվածի համաձայն. «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով»:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով ու 26 գլխի պահանջներով՝

## Խնդրում են

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Դուստր Մարիանա» ՍՊԸ-ին 18.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի արված հարցումներով պահանջվող տեղեկատվությունը «Դուստր Մարիանա» ՍՊԸ-ի կողմից չտրամադրելու համար վերջինիս տնօրեն Տիգրան Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 18.11.2011թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 (երեսուն հազար) դրամի չափով, իսկ 06.12.2011թ.-ի կրկնակի հարցմամբ պահանջվող նույն տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 (հիսուն հազար) դրամի չափով:

Պարտավորեցնել «Դուստր Մարիանա» ՍՊԸ-ին ամբողջական տեղեկատվություն տրամադրելու 18.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ՝ հայտնելով, թե ընկերության կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց, ինչպես նաեւ տրամադրել ցանկը, թե ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Պատասխանողից բռնագանձել նաեւ դատական ծախսերը, այդ թվում՝ պետական տուրքն ու փաստաբանին վճարված գումարները:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. փաստաբանի հետ կնքված պայմանագրի պատճենը,
3. գումարը փաստաբանի հաշվի համարին փոխանցելու վերաբերյալ ապացույց,
4. հարցումները,
5. հարցումները պատասխանողին ուղարկելու մասին ապացույցներ,
6. պատասխանողից էլ. փոստով ստացված պատասխանի քաղվածքը,
7. հայցադիմումը պատասխանողների կողմից ստանալու մասին ապացույց,
8. լիազորագիր:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ՝

Շուշան Դոյրոյան

ՎԴ/0228/05/12

**ՈՐՈՇՈՄ**

**ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

26.01.2012թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝ դատավոր Ա. Դարբինյան, ուսումնասիրելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊ ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը դատարան ներկայացրած հայցադիմումով խնդրել է.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին 12.11.2011թ.-ին եւ 06.12.2011թ.-ին հարցումներով պահանջվող տեղեկատվությունը ընկերության կողմից չտրամադրելու համար տնօրեն Տիգրան Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 12.11.2011թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 դրամի չափով, իսկ 06.12.2011թ.-ի կրկանկի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 դրամի չափով:

Պարտավորեցնել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին ամբողջական տեղեկատվություն տրամադրելու 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ՝ հայտնելով, թե ընկերության կաթնամթերքը արտադրվում է բնական կաթից, թե կաթնափոշուց, ինչպես նաեւ տրամադրել ցանկը, թե ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը ոչ, եւ /կամ/ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Պատասխանողից բռնագանձել դատական ծախսերը, այդ թվում՝ պետական տուրքն ու փաստաբանին վճարված գումարները»:

Ուսումնասիրելով հայցադիմումը եւ դրան կից փաստաթղթերը՝ դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ դատական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն. «Ցանկացած հարցի՝ դատարանի իրավասությանը ենթակա լինելը որոշում է դատարանը՝ օրենքի հիման վրա»: Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի առաջին մասի համաձայն. «Վարչական դատարանն ըստ էության քննում է վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասի համաձայն. «Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝ հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը, վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով, հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցա-

կան միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը, վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից»:

Նույն հոդվածի երկրորդ մասով սահմանվում է, որ վարչական դատարանին ընդդատյա չեն ՀՀ Սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են՝ սույն օրենսգրքի 107.5-րդ, 189.7-րդ հոդվածներով եւ 198.2-րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով: Նույն օրենսգրքի 189.7-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով: Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով:

Տվյալ դեպքում՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առեւտրային) ընկերություն է, հետեւաբար՝ դատարանը գտնում է, որ ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից եւ չեն համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին, ուստի եւ նույն հոդվածի երկրորդ մասին համաձայն՝ ընդդատյա չեն վարչական դատարանին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության: Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ եւ 125-րդ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածներով՝ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանի դեմ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժել:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ այն ստանալուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

### ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱԸՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն, նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Ներկայացուցիչ՝

Կարեն Մեծլումյան

Պատասխանողներ՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ, «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյան

06.02.2012թ.

### Վ Ե Ր Ա Ը Ն Ն Ի Չ Բ Ո Ղ Ո Ք

Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի եւ վերջինիս տնօրեն Տիգրան Վարդանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցնելու պահանջների մասին:

Վարչական դատարանի 26.01.2012թ.-ի թիվ ՎԴ/0228/05/12 որոշումով հայցադիմումի ընդունումը մերժվել է: Նշված որոշումը ստացվել է 30.01.2012թ.-ին:

#### 2. Բողոքի քննության համար եական նշանակություն ունեցող փաստերը

Հայցադիմումին կից ներկայացված հարցումներում եւ հայցադիմումում նշվել է. «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի 2010թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն՝ «Դուստր Մարիաննա» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող...»:

Վարչական դատարանը, սակայն, հայցադիմումի ընդունումը մերժելով, պատճառաբանել է. «Տվյալ դեպքում՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առեւտրային) ընկերություն է, հետեւաբար՝ դատարանը գտնում է, որ ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից եւ չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին, ուստի նույն հոդվածի երկրորդ մասին համաձայն՝ ընդդատյա չեն վարչական դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության»:

Գտնում եմ, որ վարչական դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասի եւ 79-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի պահանջները՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի

- 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է ... հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա»,
- 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են... հանրային նշանակության կազմակերպությունները եւ դրանց պաշտոնատար անձինք, իսկ հանրային նշանակության կազմակերպություն է... ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով նախատեսված տեղեկությունը... հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է...»:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի 2010թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն. «Դուստր Մարիաննա» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, ինչի մասին տեղեկատվությունը պարունակող իրավական ակտը տեղադրված է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի [www.competition.am](http://www.competition.am) պաշտոնական կայքում: Ինչպես տեսնում ենք, պատասխանողը հանրային նշանակության կազմակերպություն է եւ, դրանից ելնելով էլ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի իմաստով համարվում է տեղեկատվություն տնօրինող ու վարչական պատասխանատվության սուբյեկտ:

Թեեւ հայցի հիմքում դրված է կաթնամթերքի շուկայում պատասխանող ընկերության գերիշխող դիրք ունենալը եւ ըստ այդմ հանրային նշանակության կազմակերպություն լինելը, դատարանը բողոքարկվող որոշման մեջ ընդհանրապես այդ հանգամանքին չի անդրադարձել, եւ դատարանի որոշումից բխում է, որ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առեւտրային) ընկերությունը չի կարող հանրային նշանակություն ունենալ, իսկ դրանից պահանջվող տեղեկատվության հետ կապված վեճն էլ՝ հանրային բնույթ, ինչն ուղղակի հակասում է վերը նշված փաստարկներին ու իրավական հիմնավորումներին:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19.1 գլխի պահանջնորով ու 125 հոդվածով՝

**Խնդրում եմ**

Վերացնել Վարչական դատարանի թիվ ՎԴ/0228/05/12 վարչական գործով 26.01.2012թ.-ի որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչ՝  
Կարեն Մեծլումյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ**

**գործ թիվ ՎԴ/0228/05/12**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«05» մարտի 2012թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)՝ նախագահությամբ դատավոր Ա.Բաբայանի, քննելով ՀՀ վարչական դատարանի 26.01.2012թ.-ի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/0228/05/12 որոշման դեմ հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (ներկայացուցիչ Կարեն Մեժլումյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի, ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա.Դարբինյան) 26.01.2012թ.-ի որոշմամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի, տնօրեն Տիգրան Վարդանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժվել է, որոշմամբ որպես հայցադիմումի ընդունումը մերժելու հիմնավորում նշելով, որ բառացի մեջբերում. «Տվյալ դեպքում՝ «Դուստր Մարիաննա» ընկերությունը շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) ընկերություն է, հետեւաբար՝ դատարանը գտնում է, որ ներկայցված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից եւ չեն համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին, ուստի նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ ընդդատյա չեն վարչական դատարանին», - մեջբերման ավարտ:

ՀՀ վարչական դատարանի 26.01.2012թ.-ի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/0228/05/12 որոշման դեմ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի (ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան) կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի՝ 17.02.2012թ. որոշմամբ ընդունվել է վարույթ: Պատասխանողների կողմից վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները եւ պահանջը.**

Ներկայացված վերաքննիչ բողոքի համաձայն՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցով դիմել է Վարչական



դատարան ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի եւ վերջինիս տնօրեն Տիգրան Վարդանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Վարչական դատարանի 26.01.2012թ.-ի թիվ ՎԴ/0228/05/12 որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Եվ հայցադիմումին կից ներկայացված հարցումներում եւ հայցադիմումում նշվել է. «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի» 2010թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն՝ «Դուստր Մարիաննա» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող...»:

Վարչական դատարանը, սակայն, հայցադիմումի ընդունումը մերժելով, պատճառաբանել է. «Տվյալ դեպքում՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն շահույթ ստանալու նպատակ հետապնդող /առետորային/ ընկերություն է, հետեւաբար՝ դատարանը գտնում է, որ ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից եւ չեն համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին, ուստի նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ ընդդատյա չեն վարչական դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության:

Գտնում է, որ Վարչական դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասի եւ 79-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի պահանջները՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն...«Սույն օրենքի գործողությունը տարածվում է ... հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա», իսկ 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն տնօրինող են ... հանրային նշանակության կազմակերպությունները եւ դրանց պաշտոնատար անձինք, իսկ հանրային նշանակության կազմակերպություն է ... ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի համաձայն՝ «Օրենքով նախատեսված տեղեկությունը... հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է...»:

«ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության կոմիտեի» 2010թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն՝ «Դուստր Մարիաննա» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք

ունեցող, ինչի մասին տեղեկատվությունը պարունակող իրավական ակտը տեղադրված է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի [www.competition.am](http://www.competition.am) պաշտոնական կայքում:

Պատասխանողը հանրային նշանակության կազմակերպություն է եւ, դրանից ելնելով էլ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի իմաստով համարվում է տեղեկատվություն տնօրինող ու վարչական պատասխանատվության սուբյեկտ:

Թեեւ հայցի հիմքում դրված է կաթնամթերքի շուկայում պատասխանող ընկերության գերիշխող դիրք ունենալը եւ ըստ այդմ հանրային նշանակության կազմակերպություն լինելը, Վարչական դատարանը բողոքարկվող որոշման մեջ ընդհանրապես այդ հանգամանքին չի անդրադարձել, եւ Վարչական դատարանի որոշումից բխում է, որ շահույթ ստանալու նպատակ հետապնդող /առեւտրային/ ընկերությունը չի կարող հանրային նշանակություն ունենալ, իսկ դրանից պահանջվող տեղեկատվության հետ կապված վեճն էլ՝ հանրային բնույթ, ինչն ուղղակի հակասում է վերը նշված փաստարկներին ու իրավական հիմնավորումներին:

Վերոգրյալից ելնելով՝ խնդրել է վերացնել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/0228/05/12 վարչական գործով 26.01.2012թ.-ի որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին:

**Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.**

Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի եւ հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանդրության 18-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանդրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Հանրային իրավահարաբերություններում իրավունքների դատական պաշտպանությունն իրականացվում է վարչական դատավարության կարգով՝ հանրային իրավահարաբերություններում իրավունքների դատական պաշտպանության ձեւ:

ՀՀ վարչական դատարանում, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում եւ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական եւ տրամադրվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաեւ ֆիզիկական եւ

իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը սահմանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը:

Դատական պաշտպանության իրավունքի իրականացումը նաեւ վարչական դատավարությունում հիմնված է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա, որն անձի՝ օրենքով տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական ու դատավարական իրավունքները եւ դրանց պաշտպանության եղանակները, այսինքն անձն ինքն է որոշում իր իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի պաշտպանության համար դիմել, թե չդիմել դատարան, իրականացնել, թե չիրականացնել իր դատական պաշտպանության իրավունքը, ինքնուրույն որոշել հարուցված հայցով իր պահանջների առարկան՝ ծավալը, հիմքը եւ այլն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ Օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

**1)** խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀՍահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, այդ թվում՝ եթե

**ա.** խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների եւ ազատությունների իրականացման համար,

**բ.** չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

**2)** նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որեւէ պարտականություն,

**3)** նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա: Վերը նշված նորմերի վերլուծությունից հետեւում է, որ օրենսդիրը, սահմանելով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը վարչական դատարանում, դրանով ամրագրել է նաեւ տվյալ դատարանում այդ իրավունքի իրականացման ձեւը՝ հայց հարուցելը: Միաժամանակ, անձը տնօրինչականության սկզբունքի հիման վրա դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս պետք է առաջնորդվի տվյալ դատական պաշտպանության ձեւի համար օրենսդրությամբ սահմանված կանոններով, մասնավորապես՝ ընդդատություն (ենթակայություն), հայց հարուցելու կանոններ, հայցատեսակներ եւ այլն:

Այսպես՝ Օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդ-

դատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը: Վարչական դատարանին ընդդատյա չեն ՀՀ սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

Օրենսգրքի 65-րդ, 66-րդ, 67-րդ եւ 68-րդ հոդվածների համաձայն վարչական դատարանում հարուցվող հայցերի տեսակներն են՝ «վիճարկման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը, «պարտավորեցման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել, «գործողության կատարման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը եւ «ճանաչման հայցը», որով հայցվորը կարող է

1. պահանջել ճանաչելու որեւէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան,
2. պահանջել ճանաչելու վարչական ակտն առոչինչ լինելը,
3. պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլեւս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝
  - 1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ,
  - 2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ
  - 3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վերը շարադրված իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետեւում է, որ տվյալ դեպքում տնօրինչականության սկզբունքի հիման վրա վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքը իրացնելիս անձը պետք է առաջնորդվի նաեւ օրենսդրի կողմից տվյալ դատական պաշտպանության ձեւի համար սահմանված հետեւյալ կանոններով՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերը, այն վեճերը, տվյալ դեպքում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մասով, որոնք պայմանավորված են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ, որոնք խախտել են կամ անմիջականորեն կարող են խախտել իրավա-

բանական (ֆիզիկական) անձի ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, վարչական դատարանում վարչական գործի վարույթ հարուցելու համար հիմք է վարչական դատարան ներկայացված համապատասխան հայցը՝ «վիճարկման», «պարտավորեցման», «գործողության կատարման», «ճանաչման» հայցերը, այսինքն՝ վարչական դատավարության կարգով անձն ազատ չէ ընտրելու, թե ինչ հայցապահանջ ներկայացնել, այլ այն պետք է բխի հանրային իրավահարբերություններից եւ լինի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված օրենսգրքի 65-68-րդ հոդվածներով սահմանված հայցատեսակներով ներկայացվող պահանջներից որեւէ մեկը, իսկ հակառակ պարագայում, Օրենսգրքով չնախատեսված պահանջով ներկայացված հայցը վարչական դատարանում քննության ենթակա չի լինի, քանի որ դրա քննարկումը եւ դրա արդյունքում համապատասխան լուծումը դուրս է վարչական դատարանի իրավասություններից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության: Միաժամանակ, օրենսդիրը վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքի իրացման Օրենսգրքի վերոգրյալ հոդվածներով սահմանված ընդհանուր կանոններից սահմանել է բացառություններ, որոնք գետեղել է Օրենսգրքի 5-րդ՝ «Հատուկ վարույթներ» բաժնում՝ դրանում սահմանելով գործերի հատուկ կատեգորյաներ, որոնց հարուցման եւ քննության համար ամրագրված կանոնները առանձնանում են ընդհանուր կանոններից:

Օրենսգրքի 5-րդ՝ «Հատուկ վարույթներ» բաժնի 26-րդ գլխում գետեղված են դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթի իրականացման կանոնները, մասնավորապես՝ 151-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով, իսկ 152-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, պետք է նաեւ ներառի՝

- 1) հայցադիմումը ներկայացնելու համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրի եւ ժամանակի մասին տեղեկություններ,
- 2) հայցադիմումի համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթները,
- 3) դիմողի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 17-րդ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայությունը» գլխում գետեղված 223-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են սույն օրենսգրքի 170.5-րդ, 189.7-րդ հոդվածներով եւ 198.2-րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով, իսկ 189.7-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական

ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով: Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա, իսկ 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են համարվում տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք, իսկ հանրային նշանակության կազմակերպություն է համարվում ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները:

Փաստորեն, վերոգրյալ իրավանորմերի համաձայն՝ օրենսդիրը սահմանել է վարչական դատավարության կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթի իրականացման առանձին կանոններ, որոնց համաձայն վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը վարչական դատարանում հարուցվում են նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա, որոնք ներկայացվել են տվյալ դեպքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման վերաբերյալ, որպիսի հոդվածով նախատեսված իրավախախտման սուբյեկտ հանդիսանում են նաև ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների՝ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձինք:

Տվյալ դեպքում՝ ԻԿԿ-ի կողմից վարչական դատարան ներկայացված հայցադիմումով ներկայացվել է երկու պահանջ ընդդեմ երկու պատասխանողի՝

1. «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին 18.11.2011թ.-ի և 06.12.2011թ.-ի արված հարցումներով պահանջվող տեղեկատվությունը, ընկերության կողմից չտրամադրելու համար ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանի վարչական պատասխանատվության ենթարկելու մասին՝ ուղղված ընդդեմ ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանի:

2. «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին 18.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասին՝ ուղղված ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 22.09.2010թ.-ի N 245-Ա որոշմամբ՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն կաթնամթերքի շրջանառության ոլորտի մի շարք ապրանքային շուկաներում համարվել է գերիշխող դիրք ունեցող, որպիսի փաստով ընկերությունը, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի համաձայն, հանրային նշանակություն ունեցող կազմակերպություն է, իսկ ընկերության տնօրենը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 189.7-րդ հոդվածի համաձայն, նշված հոդվածով նախատեսված իրավախախտման սուբյեկտ է ընդդեմ որի, տվյալ դեպքում, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» կազմակերպության կողմից ներկայացված հայցադիմումի հիման վրա հարուցված վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ մասի եւ Օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն՝ ենթակա է քննության Վարչական դատարանում՝ Օրենսգրքի 26-րդ գլխում գետեղված տվյալ հատուկ վարույթի համար նախատեսված կանոններին համապատասխան:

Միաժամանակ, վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ կողմից վարչական դատարան ներկայացված հայցադիմումով ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ ներկայացված պահանջը՝ ընկերությանը 18.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասին, Օրենսգրքով նախատեսված հատուկ վարույթի գործ է, նշված պահանջով վարչական դատարանում գործերի հարուցման եւ քննության համար որեւէ առանձնահատուկ կանոն նախատեսված չէ, ուստի նշված պահանջով վարչական դատարանում գործի հարուցման նկատմամբ տարածվում են Օրենսգրքով սահմանված վարչական գործերի հարուցման եւ քննության ընդհանուր կանոնները, ուստի, նկատի ունենալով, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից հայցադիմումով ներկայացված ընկերությանը 18.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասին պահանջն ուղղված է ընդդեմ իրավաբանական անձ համարվող «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին, այն պայմանավորված չէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ, որոնցով խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, վերաքննիչ դատարանը գտնում է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից վարչական դատարան ներկայացված հայցադիմումով ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացված ընկերությանը 18.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասին պահանջը ենթակա չէ վարչական դատարանում քննության:

Ելնելով վերոգրյալ իրավանորմերից, եզրահանգումներից ու պատճառաբանություններից՝ վերաքննիչ դատարանը գտավ, որ վարչական դատարանի՝

26.01.2012թ.-ի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/0228/05/12 որոշման դեմ հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի (ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ Վարչական դատարանի՝ 26.01.2012թ.-ի թիվ ՎԴ/0228/05/12 «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը ընդդեմ ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանի ներկայացված վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով վերացնել, իսկ ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացված՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով՝ թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 117.14-րդ հոդվածով՝ վերաքննիչ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ վարչական դատարանի 26.01.2012թ.-ի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/0228/05/12 որոշման դեմ հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից բերված վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն:

ՀՀ վարչական դատարանի՝ 26.01.2012թ.-ի թիվ ՎԴ/0228/05/12 «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը ընդդեմ «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանի ներկայացված՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ վերացնել, իսկ ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ ներկայացված տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով՝ թողնել օրինական ուժի մեջ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից եւ կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ԲԱԲԱՅԱՆ



ՎԴ/0228/05/12

**Վ Ճ Ի Ռ**

**Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն**

19.02.2013թ.

ք.Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը,  
 Նախագահությամբ՝ դատավոր Ա. Դարբինյանի  
 Զարտուղարությամբ՝ Յ.Մալխասյանի, Թ.Չիթչյանի  
 Մասնակցությամբ՝  
 Հայցվորի ներկայացուցիչ՝ Կ.Մեժլումյանի

Դռնբաց դատական նիստում քննության առնելով վարչական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Տիգրան Վարդանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասի

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**Դատավարական նախապատմությունը.**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը դատարան ներկայացրած հայցադիմումով ինդդեթ է. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ից 18.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումներով պահանջվող տեղեկատվությունը «Դուստր Մարիաննա» ՍՊԸ կողմից չտրամադրելու համար վերջինիս տնօրեն Տիգրան Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 18.11.2011թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 դրամի չափով, իսկ 06.12.2011թ.-ի կրկանկի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 դրամի չափով:

Պարտավորեցնել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին ամբողջական տեղեկատվություն տրամադրելու 18.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ՝ հայտնելով, թե ընկերության կաթնամթերքն արտադրվում է բնական կաթից, թե կաթնափոշուց, ինչպես նաեւ տրամադրել ցանկը, թե ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, եւ /կամ/ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Պատասխանողից բռնագանձել դատական ծախսերը, այդ թվում՝ պետական տուրքն ու փաստաբանին վճարված գումարները»:

ՀՀ վարչական դատարանի՝ 26.01.2012թ.-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ 05.03.2012թ.-ի որոշմամբ Վարչական դատարանի՝ 26.01.2012թ.-ի թիվ ՎԴ/0228/05/12 «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով վերացվել է, իսկ ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ՝ տեղե-

կատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով, թողնվել է օրինական ուժի մեջ:

Ղատարանի՝ 16.04.2012թ.-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ 18.07.2012թ.-ի որոշմամբ վարչական գործը նշանակվել է դատաքննության:

### **Չայցվորի իրավական դիրքորոշումը.**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը եւ նրա ներկայացուցիչը դատարան ներկայացրած հայցադիմումով եւ դատաքննության ժամանակ հայտնել են, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 18.11.2011թ.-ի թիվ 149 հարցմամբ դիմել է «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն տնօրեն Տիգրան Վարդանյանին:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային անդորրագրի պատճեններով:

Առաջին հարցումն անպատասխան մնալուց հետո 06.12.2011թ.-ի թիվ 150 կրկնակի հարցումն է ուղարկվել Տիգրան Վարդանյանին: Նշված փաստը հաստատվում է կրկնակի հարցման եւ փոստային անդորրագրի պատճեններով:

Չարցումներով՝ Տիգրան Վարդանյանին խնդրվել է տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը. «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի» 2010թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն՝ «Դուստր Մարիաննա» ընկերությունը Չայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող:

Դեկլարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրել են տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնական կաթից, թե կաթնափոշուց:
2. Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Առաջին հարցումից մոտ մեկ ամիս, իսկ երկրորդ հարցումից 10 օր անց էլեկտրոնային փոստով ստացվել է հետեւյալ պատասխանը. «*Չարգելի Շուշան Դոյրոյան, Ձեր երկու հարցադրումներն էլ վերաբերում են կաթնամթերքի բաղադրությանը: Ուստի պատասխանում եմ. «Կաթնամթերքի բաղադրության վերաբերյալ տեղեկատվությունը պարտադիր մակնշված է «Դուստր*

*Մարիաննա» ընկերության կողմից արտադրվող կաթնամթերքների յուրաքանչյուր տուփի վրա: Այլ տեղեկություններ հետաքրքրելու դեպքում կարող եք օգտվել մեր ընկերության կայքից՝ [www.mariannadairy.com](http://www.mariannadairy.com)»:*

Նշած փաստը հաստատվում է հայցվորի էլեկտրոնային փոստին՝ [foi@foi.am](mailto:foi@foi.am) ստացված պատասխանով:

«Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից արտադրվող կաթնամթերքների տուփի վրա, ինչպես նաև ընկերության [www.mariannadairy.com](http://www.mariannadairy.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը, ոչ մի նշում չի պարունակում այն մասին, թե տվյալ կաթնամթերքը բնական կաթից, թե կաթի փոշուց է արտադրված: Նշված փաստը հաստատվում է կաթնամթերքի տուփի այդ հատվածի նշումով, ինչպես նաև կայքից համապատասխան քաղվածքով:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են հանրային նշանակության կազմակերպությունները եւ դրանց պաշտոնատար անձինք, իսկ հանրային նշանակության կազմակերպություն է ... ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունը:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության՝ չի տրամադրել 18.11.2011թ.-ի եւ

06.12.2011թ.-ի՝ հարցումներով պահանջվող տեղեկատվությունը:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային փոստով ստացված տեղեկատվությանը, ապա այն պատշաճ պատասխան չէ, քանի որ եւ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ կողմից արտադրվող կաթնամթերքների տուփի վրա, եւ ընկերության կայքում տեղադրված տեղեկատվությունը որեւէ նշում չի պարունակում այն մասին, թե տվյալ կաթնամթերքը բնական կաթից է արտադրված, թե կաթի փոշուց: Բացի այդ, պատասխանը տրվել է 5-օրյա ժամկետի խախտմամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են սույն օրենսգրքի 189.7-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով, իսկ 254-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի 189.7-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով:

Ի հիմնավորումն պահանջի՝ դատարանին են ներկայացվել ընկերության կայքից քաղվածքներ, տեղեկատվություն ստանալու հարցման եւ կրկին հարցման, պատասխանի քաղվածքի պատճեններ եւ այլ փաստաթղթեր:

Դատարանին խնդրել են հայցն ամբողջությամբ բավարարել:

### **Պատասխանողի իրավական դիրքորոշումը.**

Դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին պատշաճ ծանուցված Պատասխանողը չի ներկայացել դատական նիստին եւ հայցադիմումի պատասխան չի ներկայացրել:

Դեկվարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով՝ դատարանը որոշել է գործը քննել Պատասխանողի բացակայությամբ:

### **Գործի փաստերը.**

Գործի լուծման համար եական նշանակություն ունեն հետեւյալ փաստերը.

1) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 18.11.2011թ.-ի թիվ 149-ի 7 եւ 06.12.2011թ.-ի թիվ 150-ի 1 գրությունների համաձայն՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանին կատարվել է հարցում հետեւյալ բովանդակությամբ.

«1. Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց:  
2. Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է»:

2) Փոստային թիվ RR057879547AM եւ RR050549515AM անդորրագրերի հա-

մաձայն՝ փաստաթղթերը Տիգրան Վարդանյանին առաքելու համար փոստային ծառայությանն են հանձնվել 18.11.2011թ.-ին եւ 06.12.2011թ.-ին:

**3)** Էլեկտրոնային փոստի քաղվածքի համաձայն՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանը Շուշան Դոյդոյանի երկու հարցումներին պատասխանել է, որ հարցադրումները վերաբերվում են կաթնամթերքի բաղադրությանը: Ուստի պատասխանում եմ. «Կաթնամթերքի բաղադրության վերաբերյալ տեղեկատվությունը պարտադիր մակնշված է «Դուստր Մարիաննա» ընկերության կողմից արտադրվող կաթնամթերքների յուրաքանչյուր տուփի վրա: Այլ տեղեկություններ հետաքրքրելու դեպքում կարող եք օգտվել մեր ընկերության կայքից՝ [www.mariannadairy.com](http://www.mariannadairy.com)»:

**4)** Փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրի համաձայն՝ Կարեն Մեժլումյանի եւ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության մինչեւ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր: Ծառայությունների մատուցման արժեքը կազմում է 228.000 ՀՀ դրամ:

**5)** Վճարման թիվ 7 հանձնարարականի համաձայն՝ 30.01.2012թ.-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից Կարեն Մեժլումյանին՝ որպես փաստաբանական ծառայության գումար, փոխանցվել է 228.000 ՀՀ դրամ:

**Իրավական վերլուծությունը.**

Դատարանը, լսելով հայցվորի ներկայացուցչին, գործում եղած ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

տեղեկատվություն՝ տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք.

հանրային նշանակության կազմակերպություն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ...»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տե-

ղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Վերը նշված հոդվածի իմաստով պատասխանատվությունը նախատեսված է նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից օրենքով նախատեսված տեղեկությունն ապօրինաբար չտրամադրելու համար:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 05.03.2012թ.-ի որոշմամբ փաստել է, որ. «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 22.09.2010թ.-ի N 245-Ա որոշմամբ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ կաթնամթերքի շրջանառության ոլորտի մի շարք ապրանքային շուկաներում համարվել է գերիշխող դիրք ունեցող, որպիսի փաստով «Դուստր Մարիաննա» ՍՊԸ, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի համաձայն, հանրային նշանակություն ունեցող կազմակերպություն է, իսկ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրենը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի համաձայն՝ նշված հոդվածով նախատեսված իրավախախտման սուբյեկտ է»:

Գործի քննությամբ, մասնավորապես՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 18.11.2011թ.-ի թիվ 149-ի 7 եւ 06.12.2011թ.-ի թիվ 150-ի 1 գրություններով հիմնավորվել է, որ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանին կատարվել է հարցում հետեւյալ բովանդակությամբ.

- «1. Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց:
2. Ինդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է»:

Փոստային թիվ RR057879547AM եւ RR050549515AM անդորրագրերով հիմնավորվել է, որ փաստաթղթերը Տիգրան Վարդանյանին առաքելու համար փոստային ծառայությանն են հանձնվել 18.11.2011թ.-ին եւ 06.12.2011թ.-ին, այսինքն՝ վերը նշված գրությունների կազմման օրը:

Էլեկտրոնային փոստի քաղվածքի համաձայն՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Շուշան Դոյրոյանի երկու հարցումներին պատասխանել է, որ հարցադրումները վերաբերվում են կաթնամթերքի բաղադրությանը: Ուստի պատասխանում եմ. «*Կաթնամթերքի բաղադրության վերաբերյալ տեղեկատվությունը պարտադիր մակնշված է «Դուստր Մարիաննա» ընկերության կողմից արտադրվող կաթնամթերքների յուրաքանչյուր տուփի վրա: Այլ տեղեկություններ հետաքրքրելու դեպքում կարող եք օգտվել մեր ընկերության կայքից՝ [www.mariannadairy.com](http://www.mariannadairy.com)*»:

Նշված պատասխանի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Դուստր Մարի-

անևա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանի կողմից ստացվել են Հայցվոր ընկերության հարցումները:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Սահմանադրության 47-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը եւ օրենքները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը: Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետեւում է, որ օրենսդրի կողմից երաշխավորվել է յուրաքանչյուր անձի իրավունքն՝ օրենքով սահմանված կարգով դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու իր փնտրած տեղեկությունը, իսկ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
- 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
- 5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները: Նույն օրենքի 9-րդ հոդվածի յոթերորդ մասի համաձայն՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

- 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ,

ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում,

- 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում,
- 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում, նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում, գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետեւում է, որ օրենսդրի կողմից երաշխավորվել է յուրաքանչյուր անձի իրավունքն՝ օրենքով սահմանված կարգով դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ սահմանված ժամկետում ստանալու իր փնտրած տեղեկությունը, իսկ տեղեկության տրամադրումը կարող է մերժվել միայն օրենքով սահմանված հիմքերով: Ընդ որում, տեղեկատվություն փնտրողին սահմանված ժամկետում պետք է տրվի պատշաճ՝ լրիվ եւ սպառիչ պատասխան:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված նորմերի պահանջների պահպանմամբ Պատասխանող պարտավոր էր սահմանված հնգօրյա ժամկետում Հայցվորին կա՛մ տրամադրել փնտրող տեղեկատվությունը, կա՛մ տեղեկացնել տեղեկատվությունը տրամադրելու հետաձգման մասին՝ նշելով դրա պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը, կա՛մ տեղեկացնել փնտրվող տեղեկության չլինելու մասին՝ հնարավորության դեպքում տրամադրելով նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի գտնվելու վայրը, կա՛մ տեղեկատվության տրամադրումը մերժել նույն օրենքով սահմանված հիմքերով: Այսինքն՝ բոլոր դեպքերում սահմանված ժամկետներում եւ կարգով պետք է տրվեր լրիվ եւ սպառիչ պատասխան:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը գտնում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է: Նույն օրենսգրքի 83-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝



պատասխան չներկայացնելը դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Տիգրան Վարդանյանի կողմից չի ներկայացվել հայցադիմումի պատասխան, եւ որեւէ եղանակով չի վիճարկվել Հայցվորի կողմից վկայակոչված այն փաստը, որ հարցումների պատասխանը տրվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված Պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան ներկայացնելու պարտականությունը չկատարելը գնահատելով՝ որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստի ընդունում՝ դատարանն այդ փաստը հաստատված է համարում եւ գտնում է, որ նշված փաստը վերստին ապացուցման կարիք չունի:

Սույն գործի փաստերից հետեւում է, որ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ հարցումներին չի տրվել սպառիչ պատասխան, մասնավորապես՝ պատասխանում սպառիչ նշված չէ փնտրվող տեղեկությունները, իսկ Պատասխանողի կողմից վկայակոչված կայքի համապատասխան էջերի քաղվածքների ուսումնասիրությունից նույնպես հնարավոր չէ ստանալ հարցումների սպառիչ պատասխանը՝ փնտրվող տեղեկատվությունը: Միաժամանակ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ պատասխանողի կողմից օրենքով սահմանված կարգով նաեւ չի մերժվել տեղեկատվության տրամադրումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի հիմքով: Վերոգրյալի հիման վրա՝ դատարանը գտնում է, որ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ պաշտոնատար անձի՝ տնօրեն Տիգրան Վարդանյանի կողմից օրենքով նախատեսված տեղեկությունը չի տրամադրվել, այսինիս՝ վերջինիս արարքը համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի առաջին պարբերության հատկանիշներին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի երկրորդ կետի համաձայն՝ վարչական դատարանները քննում են սույն օրենսգրքի 170.5, 189.7 հոդվածներով եւ 198.2 հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը քննելիս վարչական դատարանը պարզում է, թե տեղի է ունեցել արդյոք վարչական իրավախախտման դեպքը, եւ առկա է արդյոք հայցադիմումում նշված անձի կողմից դա կատարելու փաստը, նախատեսված է արդյոք օրենքով վարչական պատասխանատվություն տվյալ իրավախախտումը կատարելու համար, ինչպես նաեւ նշանակում է կամ մերժում է նշանակել վարչական տույժ:

Այսպիսով՝ դատարանը գտնում է, որ վարչական իրավախախտման՝ օրենքով սահմանված տեղեկատվությունը չտրամադրելու դեպքերը տեղի են ունեցել, դրանք կատարվել են պատասխանողի կողմից, վերը նշված իրավախախ-

տումները կատարելու համար օրենքով նախատեսված է վարչական պատասխանատվություն, ուստի հայցը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի առաջին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու մասով, ենթակա է բավարարման: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 32-րդ հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող եւ ծանրացնող հանգամանքները:

Նկատի ունենալով, որ դատարանին չի ներկայացվել որեւէ ապացույց պատասխանողի գույքային դրության, պատասխանատվությունը մեղմացնող եւ ծանրացնող հանգամանքների վերաբերյալ, ինչպես նաեւ հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը եւ տվյալ հոդվածի սանկցիայով նախատեսված տույժի չափը եւ նույն խախտումը երկու անգամ կատարելու հանգամանքը՝ դատարանը գտնում է, որ Տիգրան Վարդանյանին պետք է ենթարկել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված վարչական պատասխանատվության՝ 18.11.2011թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 ՀՀ դրամի չափով, իսկ 06.12.2011թ.-ի կրկանկի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից եւ գործի քննության հետ կապված այլ ծախսերից: Նույն օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներկայացուցիչներին վճարվելիք գումարները:

Գործի քննությամբ, մասնավորապես՝ փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրով եւ վճարման թիվ 7 հանձնարարականով հիմնավորվել է, որ Կարեն Մեծլումյանի եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի միջեւ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, իսկ ծառայությունների մատուցման արժեքը որոշվել է 228.000 ՀՀ դրամ, որպիսի գումարը 30.01.2012թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից վճարվել է Կարեն Մեծլումյանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է ՀՀ դատական դեպարտամենտի կողմից վկաներին եւ փորձագետներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաեւ մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Նույն հոդվածի ութերորդ մասի համաձայն՝ փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաեւ դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ

դրույքաչափերով. հատուկ վարույթի գործերի վերաբերյալ այլ դիմումների համար բազային տուրքի եռապատիկի չափով:

Հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները, մասնավորապես՝ այն հանգամանքը, որ գործի քննության եւ հրավիրված դատական նիստերի տեղադրությունը, ինչպես նաեւ ներկայացուցչի կատարած աշխատանքների ծավալը՝ դատարանը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցչին վճարվող գումարի գծով դատական ծախսի փոխհատուցման ողջամիտ չափ է համարում 100.000 ՀՀ դրամը:

Նկատի ունենալով, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված հայցը ենթակա է բավարարման, հայցը ներկայացվել է դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու գործերի վարույթով, որպիսին նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Հատուկ վարույթներ» բաժնով (5-րդ բաժին), իսկ պետական տուրքի գումարը նախապես վճարվել է, ինչպես նաև՝ վճարել է ներկայացուցչին վճարվելիք գումարը, ուստի դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ենթակա է բռնագանձման նաեւ 100.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչին վճարված գումարի փոխհատուցում եւ 3.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, 153-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը.

**Վ Ճ Ո Ե Ց**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցը բավարարել:

Տիգրան Վարդանյանին «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 189.7-րդ հոդվածի առաջին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ 18.11.2011թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 ՀՀ դրամի չափով տուգանքի, իսկ 06.12.2011թ.-ի կրկանկի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 ՀՀ դրամի չափով տուգանքի:

Տիգրան Վարդանյանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 3.000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Տիգրան Վարդանյանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության՝ որպես դատական ծախսի՝ ներկայացուցչին վճարված գումարի փոխհատուցում, բռնագանձել 100.000 ՀՀ դրամ:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարան՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ

## **Գործ 6.**

**ԻԱԿ-ն ընդդեմ**

**«Աշտարակ կաթ» փակ  
բաժնետիրական ընկերության**

## Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի նոյեմբերի 18-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց:
2. Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

ՓԲԸ-ն ԻԱԿ-ի հարցումը թողեց անպատասխան: 2011թ.-ի դեկտեմբերի 6-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցում ուղարկեց «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին, որը նույնպես մնաց անպատասխան:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի դեկտեմբերի 19-ին դիմեց ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին տրամադրել ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաեւ ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները չտրամադրելու համար ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին ենթարկել վարչական պատասխանատվության:

2012թ.-ի հունվարի 12-ին՝ այն բանից հետո, երբ ԻԱԿ-ն արդեն հայց էր ներկայացրել դատարան, «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ից պատասխան գրություն ստացվեց, որում ՓԲԸ-ն նշել էր, որ ԻԱԿ-ի առաջին հարցմանը պատասխանել է, սակայն պատասխան նամակը հետ է վերադարձել: «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ն կից ներկայացրել էր պատասխանի կրկնօրինակը, որով հայտնել էր, որ կազմակերպու-

թյան արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկությունն առկա է արտադրանքի մակնշման մեջ եւ չէր ներկայացրել ԻԱԿ-ի խնդրած ցանկը:

ՀՀ վարչական դատարանը 2012թ. հունվարի 23-ին որոշում կայացրեց մերժել ԻԱԿ-ի հայցադիմումը վարույթ ընդունել՝ գտնելով, որ հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության:

2012թ.-ի փետրվարի 2-ին ԻԱԿ-ը բողոքարկեց վարչական դատարանի որոշումը: 2012թ.-ի մարտի 5-ին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը ԻԱԿ-ի վերաքննիչ բողոքը բավարարեց մասնակի: Դատարանը որոշեց «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով ԻԱԿ-ի հայցը բավարարել, իսկ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով՝ մերժել:

Դատարանը 2013թ.-ի մարտի 26-ի իր վճռով ամբողջությամբ մերժեց ԻԱԿ-ի հայցը: Դատարանը համարել էր, որ ՓԲԸ-ի տնօրենի կողմից ԻԱԿ-ին տրամադրվել է գրավոր հարցմամբ պահանջված ամբողջական տեղեկատվություն՝ հաշվի առնելով նաև, որ ՓԲԸ-ի կաթնամթերքների արտադրանքի մակնշումը բովանդակում է պահանջվող տեղեկատվությունը: 2013թ.-ի հունիսի 10-ին ԻԱԿ-ը բողոքարկեց ՀՀ վարչական դատարանի վճիռը ՀՀ վերաքննիչ վարչական դատարան:

Դատական գործը դեռ ընթացքում է:

## Գործի նյութերը

### ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն, նախագահ՝ Շուշան Դոյդոյան

Ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան

Պատասխանողներ՝

«Աշտարակ-Կաթ» ՓԲԸ, «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրեն՝ Ստեփան Ասլանյան

19.12.2011թ.

### Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին

#### 1. Փաստերը, որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 12.11.2011թ.-ին թիվ 149-Ի-5 Տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել է «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրեն Ստեփան Ասլանյանին: Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային անդորրագրի պատճեններով:

Առաջին հարցումն անպատասխան մնալուց հետո 06.12.2011թ.-ին թիվ 150-Ի-2 Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցումն է ուղարկվել «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին: Նշված փաստը հաստատվում է կրկնակի հարցման եւ փոստային անդորրագրի պատճեններով:

Հարցումներով «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրենին խնդրվել է տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը. «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի 2010թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն՝ «Աշտարակ-Կաթ» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ լապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող...»:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց:
2. Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Հարցումներին պատասխան չի տրվել: Նշած փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

## 2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության

- 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի

- 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է... հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա»,
- 3-րդ հոդվածի համաձայն. «Տեղեկատվություն տնօրինող են... հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք, իսկ հանրային նշանակության կազմակերպություն է... ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունը»,
- 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:
- 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին? Նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:
- Ինչպես տեսնում ենք, պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության՝ չի տրամադրել 07.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումներով պահանջվող տեղեկատվությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝

- 187.7-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով նախատեսված տեղեկությունը... հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի

նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

- 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Առաջին ատյանի դատարանները քննում են՝ սույն օրենսգրքի 1897 հոդվածներով սահմանված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով»,
- 254-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն. «Արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի... 1897 հոդվածներով... սահմանված դեպքերում»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում ներառված 151-րդ հոդվածի համաձայն. «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով սահմանված անձանց հայցադիմումով»:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով ու 26-րդ գլխի պահանջներով՝

### Խնդրում եմ

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի արված հարցումներով պահանջվող տեղեկատվությունը «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի կողմից չտրամադրելու համար վերջինիս տնօրեն Ստեփան Ասլանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 12.11.2011թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 դրամի չափով, իսկ 06.12.2011թ.-ի կրկնակի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 դրամի չափով:

Պարտավորեցնել՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին ամբողջական տեղեկատվություն տրամադրելու 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ՝ հայտնելով, թե ընկերության կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց, ինչպես նաեւ տրամադրել ցանկը, թե ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Պատասխանողից բռնագանձել նաեւ դատական ծախսերը, այդ թվում պետական տուրքն ու փաստաբանին վճարված գումարները:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ՝  
Շուշան Դոյրոյան



ՎԴ/0228/05/12

**ՈՐՈՇՈՄ**

**ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

23.01.2012թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, նախագահությամբ՝ դատավոր Ա. Միրզոյանի, ծանոթանալով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված հայցադիմումին եւ դրան կից փաստաթղթերին,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

Հայցվորը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերության, «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Դիմելով դատարան՝ հայցվորը խնդրել է.

- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ին 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումներով պահանջվող տեղեկատվությունը «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի կողմից չտրամադրելու համար վերջինիս տնօրեն Ստեփան Ասլանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 12.11.2011թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 դրամի չափով, իսկ 06.12.2011թ.-ի կրկանկի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 դրամի չափով:
- Պարտավորեցնել՝ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ին ամբողջական տեղեկատվություն տրամադրելու 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ՝ հայտնելով, թե ընկերության կաթնամթերքը արտադրվում է բնական կաթից, թե կաթնափոշուց, ինչպես նաեւ տրամադրել ցանկը, թե ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը ոչ, եւ /կամ/ որ արտադարտեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:
- Պատասխանողից բռնագանձել դատական ծախսերը, այդ թվում՝ պետական տուրքն ու փաստաբանին վճարված գումարները:

Ուսումնասիրելով հայցադիմումը եւ դրան կից փաստաթղթերը՝ դատարանը եզրակացրեց, որ հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ դատական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Ցանկացած հարցի՝ դատարանի իրավասությանը ենթակա լինելը որոշում է դատարանը՝ օրենքի հիման վրա»:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական դատարանն ըստ էության քննում է վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերու-

թյուններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝ հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը, վարչական մարմինների միջեւ այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերահասության կարգով, հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների, գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը, վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից»:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ վարչական դատարանին ընդդատյա չեն ՀՀ սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանները քննում են՝

1) ...

2) սույն օրենսգրքի...189.7-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով»:

Նույն օրենսգրքի 189.7-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելու առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչհարյուրապատիկի չափով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության:

Տվյալ դեպքում՝ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ն ուղղակի շահույթ ստանալու նպատակ հետապնդող (ամբուրային), տնտեսական ընկերություն է, հետեւաբար՝ դատարանը եզրակացնում է, որ ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից եւ չեն համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ սույն հայցադիմումով ներկայացված վերը նշված պահանջները են բխում հանրային իրավահարաբերություններից եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ ընդդատյա չեն վարչական դատարանին: Հետեւաբար՝ վերոգրյալի հիման վրա դատարանը եզրակացնում է, որ հայցվորի

կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով, 79-րդ, 112-րդ, 115-րդ, 117.2-րդ եւ 125-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածներով՝ դատարանը.

**Ո Ր Ո Շ Ե Ց**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ընդդեմ «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերության, «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանի ներկայացրած «վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին» հայցադիմումի ընդունումը մերժել:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Սույն որոշման դեմ ՀՀ վարչական վերաքննիչ դատարան բողոք կարող է բերվել այն ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

գործ թիվ ՎԴ/0092/05/12

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«05» մարտի, 2012թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)՝ նախագահությամբ դատավոր Ա. Բաբայանի, քննելով ՀՀ վարչական դատարանի 23.01.2012թ. «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/0092/05/12 որոշման դեմ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ, «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրեն Ստեփան Ասլանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) 23.01.2012թ.-ի որոշմամբ՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ, ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցնելու պահանջների մասին ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժվել է, որոշմամբ որպես հայցադիմումի ընդունումը մերժելու հիմնավորում նշելով, որ բառացի մեջբերում. «Տվյալ դեպքում՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ ուղղակի շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առեւտրային), տնտեսական ընկերություն է, հետեւաբար՝ դատարանը եզրակացնում է, որ ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից եւ չեն համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

*Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ սույն հայցադիմումով ներկայացված վերը նշված պահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդդատյա չեն վարչական դատարանին», -մեջբերման ավարտ:*

ՀՀ վարչական դատարանի 23.01.2012թ.-ի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/0092/05/12 որոշման դեմ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի 17.02.2012թ.-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Պատասխանողների կողմից վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Ներկայացված վերաքննիչ բողոքի համաձայն՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն հայցով դիմել է Վարչական դատարան ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ և վերջինիս տնօրեն Ստեփան Ասլանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու և տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցնելու պահանջների մասին:

Վարչական դատարանի 23.01.2012թ.-ի թիվ ՎԴ/0092/05/12 որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Եվ հայցադիմումին կից ներկայացված հարցումներում, և հայցադիմումում նշվել է. «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի 2010թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն՝ «Աշտարակ-Կաթ» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող...»:

Վարչական դատարանը, սակայն, հայցադիմումի ընդունումը մերժելով պատճառաբանել է. «Տվյալ դեպքում՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ ուղղակի շահույթ ստանալու նպատակ հետապնդող /առևտրային/ ընկերություն է, հետևաբար՝ դատարանը եզրակացնում է, որ ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից և չեն համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին: Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ սույն հայցադիմումով ներկայացված վերը նշված պահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդդատյա չեն վարչական դատարանին: Հետևաբար՝ վերոգրյալի հիման վրա՝ դատարանը եզրակացնում է, որ հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի հիմքով ենթակա է մերժման»:

Գտնում է, որ Վարչական դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասի և 79-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի պահանջները՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքի գործողությունը տարածվում է... հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա», իսկ 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն տնօրինող են... հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք, իսկ հանրային նշանակության կազմակերպություն է... ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով նախատեսված տեղեկությունը... հանրային նշա-

նակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է ...»:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության կոմիտեի 2010թ. սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն՝ «Դուստր Մարիաննա» ընկերությունը /ըստ եր-ույթի բողոքում տեղ է գտել վրիպակ, քանի նոր հայցադիմումը ներկայացվել է ընդդեմ «Վշտարակ-Կաթ» ընկերության եւ ընկերության տնօրենի/ Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, ինչի մասին տեղեկատվությունը պարունակող իրավական ակտը տեղադրված է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի [www.competition.am](http://www.competition.am) պաշտոնական կայքում:

Պատասխանողը հանրային նշանակության կազմակերպություն է եւ, դրանից ելնելով էլ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187.7-րդ հոդվածի իմաստով՝ համարվում է տեղեկատվություն տնօրինող ու վարչական պատասխանատվության սուբյեկտ:

Թեեւ հայցի հիմքում դրված է կաթնամթերքի շուկայում պատասխանող ընկերության գերիշխող դիրք ունենալը եւ ըստ այդմ հանրային նշանակության կազմակերպություն լինելը, Վարչական դատարանը բողոքարկվող որոշման մեջ ընդհանրապես այդ հանգամանքին չի անդրադարձել, եւ Վարչական դատարանի որոշումից բխում է, որ շահույթ ստանալու նպատակ հետապնդող /առեւտրային/ ընկերությունը չի կարող հանրային նշանակություն ունենալ, իսկ դրանից պահանջվող տեղեկատվության հետ կապված վեճն էլ՝ հանրային բնույթ, ինչն ուղղակի հակասում է վերը նշված փաստարկներին ու իրավական հիմնավորումներին: Վերոգրյալից ելնելով՝ ինդրել է վերացնել ՀՀ վարչական դատարանի հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը:

**Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.**

Զննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի եւ հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Հանրային իրավահարաբերություններում իրավունքների դատական պաշտպանությունն իրականացվում է վարչական դատավարության կարգով՝ հանրային իրավահարաբերություններում իրավունքների դատական պաշտպանության ձեւ:

ՀՀ վարչական դատարանում, վարչական վերաքննիչ դատարանում եւ ՀՀ վճ-

ռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական եւ տրամադրվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը սահմանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը:

Դատական պաշտպանության իրավունքի իրականացումը նաեւ վարչական դատավարությունում հիմնված է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա, որն անձի՝ օրենքով տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական ու դատավարական իրավունքները եւ դրանց պաշտպանության եղանակները, այսինքն՝ անձն ինքն է որոշում իր իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի պաշտպանության համար դիմել, թե չդիմել դատարան, իրականացնել, թե չիրականացնել իր դատական պաշտպանության իրավունքը, ինքնուրույն որոշել հարուցված հայցով իր պահանջների առարկան՝ ծավալը եւ հիմքը եւ այլն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ Օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

- 1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, այդ թվում, եթե՝ ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների եւ ազատությունների իրականացման համար, բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով,
- 2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որեւէ պարտականություն,
- 3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետեւում է, որ օրենսդիրը, սահմանելով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը վարչական դատարանում, դրանով ամրագրել է նաեւ տվյալ դատարանում այդ իրավունքի իրականացման ձեւը՝ հայց հարուցելը:

Միաժամանակ, անձը տնօրինչականության սկզբունքի հիման վրա դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս պետք է առաջնորդվի տվյալ դատական պաշտպանության ձեւի համար օրենսդրությամբ սահմանված կանոններով, մասնավորապես՝ ընդդատություն (ենթակայություն), հայց հարուցելու կանոններ, հայցատեսակներ եւ այլն:

Այսպես՝ Օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը: Վարչական դատարանին ընդդատյա չեն ՀՀ սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

Օրենսգրքի 65-րդ, 66-րդ, 67-րդ եւ 68-րդ հոդվածների համաձայն՝ վարչական դատարանում հարուցվող հայցերի տեսակներն են՝ «վիճարկման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը, «պարտավորեցման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել, «գործողության կատարման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը եւ «ճանաչման հայցը», որով հայցվորը կարող է

1. պահանջել ճանաչելու որեւէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան,
2. պահանջել ճանաչելու վարչական ակտն առոչինչ լինելը,
3. պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլեւս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝
  - 1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ,
  - 2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ
  - 3) դա նպատակ է հետապնդում՝ վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վերը շարադրված իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետեւում է, որ տվյալ դեպքում տնօրինչականության սկզբունքի հիման վրա վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքը իրացնելիս անձը պետք է առաջնորդվի նաեւ օրենսդրի կողմից տվյալ դատական պաշտպանության ձեւի համար սահմանված հետեւյալ կանոններով:



րով՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերը, այն վեճերը՝ տվյալ դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մասով, որոնք պայմանավորված են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ, որոնք խախտել են կամ անմիջականորեն կարող են խախտել իրավաբանական (ֆիզիկական) անձի ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, վարչական դատարանում վարչական գործի վարույթ հարուցելու համար հիմք է վարչական դատարան ներկայացված համապատասխան հայցը՝ «վիճարկման», «պարտավորեցման», «գործողության կատարման», «ճանաչման» հայցերը, այսինքն՝ վարչական դատավարության կարգով անձն ազատ չէ ընտրելու, թե ինչ հայցապահանջ ներկայացնել, այլ այն պետք է բխի հանրային իրավահարաբերություններից եւ լինի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված օրենսգրքի 65-68-րդ հոդվածներով սահմանված հայցատեսակներով ներկայացվող պահանջներից որեւէ մեկը, իսկ հակառակ պարագայում, Օրենսգրքով չնախատեսված պահանջով ներկայացված հայցը վարչական դատարանում քննության ենթակա չի լինի, քանի որ դրա քննարկումը եւ դրա արդյունքում համապատասխան լուծումը դուրս է վարչական դատարանի իրավասություններից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն. վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության: Միաժամանակ, օրենսդիրը վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքի իրացման Օրենսգրքի վերոգրյալ հոդվածներով սահմանված ընդհանուր կանոններից սահմանել է բացառություններ, որոնք զետեղել է Օրենսգրքի 5-րդ «Հատուկ վարույթներ» բաժնում՝ սահմանելով գործերի հատուկ կատեգորիաներ, որոնց հարուցման եւ քննության համար ամրագրված կանոնները առանձնանում են ընդհանուր կանոններից:

Օրենսգրքի 5-րդ «Հատուկ վարույթներ» բաժնի 26-րդ գլխում զետեղված են դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթի իրականացման կանոնները, մասնավորապես՝ 151-րդ հոդվածի համաձայն վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով, իսկ 152-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, պետք է նաեւ ներառի

- 1) հայցադիմումը ներկայացնելու համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրի եւ ժամանակի մասին տեղեկություններ,
- 2) հայցադիմումի համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթները,
- 3) դիմողի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 17-րդ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայությունը» գլխում գետեղված 223-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են սույն օրենսգրքի 170.5-րդ, 189.7-րդ հոդվածներով եւ 198.2-րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով, իսկ 189.7-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով: Նույն խախտումը, որը կատարվել է՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա, իսկ 3-րդ հոդվածի համաձայն տեղեկատվություն տնօրինող են համարվում տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք, իսկ հանրային նշանակության կազմակերպություն է համարվում ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները:

Փաստորեն, վերոգրյալ իրավանորմերի համաձայն՝ օրենսդիրը սահմանել է վարչական դատավարության կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթի իրականացման առանձին կանոններ, որոնց համաձայն վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը Վարչական դատարանում հարուցվում են նաեւ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա, որոնք ներկայացվել են տվյալ դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման վերաբերյալ, որպիսի հոդվածով նախատեսված իրավախախտման սուբյեկտ հանդիսանում են նաեւ ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների՝ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձինք:

Տվյալ դեպքում, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական

կազմակերպության կողմից Վարչական դատարան ներկայացված հայցադիմումով ներկայացվել է երկու պահանջ ընդդեմ երկու պատասխանողի՝

1. «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի արված հարցումներով պահանջվող տեղեկատվությունը «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ կողմից չտրամադրելու համար ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին՝ ուղղված ընդդեմ ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանի եւ
2. «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասին՝ ուղղված ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 22.09.2010թ.-ի N 245-Ա որոշմամբ՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ կաթնամթերքի շրջանառության ոլորտի մի շարք ապրանքային շուկաներում համարվել է գերիշխող դիրք ունեցող, որպիսի փաստով «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն, հանրային նշանակություն ունեցող կազմակերպություն է, իսկ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրենը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի համաձայն, նշված հոդվածով նախատեսված իրավախախտման սուբյեկտ է, ընդդեմ որի տվյալ դեպքում՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված հայցադիմումի հիման վրա հարուցված վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ մասի եւ Օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն ենթակա է քննության Վարչական դատարանում՝ Օրենսգրքի 26-րդ գլխում գետեղված տվյալ հատուկ վարույթի համար նախատեսված կանոններին համապատասխան:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից Վարչական դատարան ներկայացված հայցադիմումով ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ ներկայացված պահանջը՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասին, Օրենսգրքով նախատեսված հատուկ վարույթի գործ է, նշված պահանջով Վարչական դատարանում գործերի հարուցման եւ քննության համար որեւէ առանձնահատուկ կանոն նախատեսված չէ, ուստի նշված պահանջով Վարչական դատարանում գործի հարուցման նկատմամբ տարածվում են Օրենսգրքով սահմանված վարչական գործերի հարուցման եւ քննության ընդհանուր կանոնները, ուստի, նկատի ունենալով, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հայցադիմումով ներկայացված «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասին պահանջն ուղղված է ընդդեմ իրավաբանական անձ համարվող «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ, այն պայմանավորված չէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ, որոնցով խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով,

օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից Վարչական դատարան ներկայացված հայցադիմումով՝ ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ ներկայացված «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասին պահանջն ենթակա չէ Վարչական դատարանում քննության:

Ելնելով վերոգրյալ իրավանորմերից, եզրահանգումներից ու պատճառաբանություններից՝ Վերաքննիչ դատարանը գտավ, որ Վարչական դատարանի՝ 23.01.2012թ.-ի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/0092/05/12 որոշման դեմ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ կողմից բերված վերաքննիչ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ Վարչական դատարանի 23.01.2012թ.-ի թիվ ՎԴ/0092/05/12 «հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը՝ ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրեն Ստեփան Ասլանյանի ներկայացված վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ վերացնել, իսկ ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ ներկայացված տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով՝ թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 117.14-րդ հոդվածով՝ Վերաքննիչ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 26.01.2012թ.-ի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴ/0092/05/12 որոշման դեմ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (ներկայացուցիչ Կարեն Մեծլումյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 23.01.2012թ.-ի թիվ ՎԴ/0092/05/12 «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանի ներկայացված վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով վերացնել, իսկ ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության ներկայացված տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով՝ թողնել օրինական ուժի մեջ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից եւ կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ԲԱԲԱՅԱՆ

Վարչական գործ թիվ ՎԴ/0092/05/12

**Վ Ճ Ի Ռ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

«26» մարտի 2013թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, հետեւյալ կազմով՝  
 նախագահությամբ՝ դատավոր Ա. Միրզոյանի,  
 քարտուղարությամբ՝ ք. Չոհրանյանի,  
 մասնակցությամբ՝  
 հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»  
 ՀԿ ներկայացուցիչ՝ Կ. Մեջլումյան,  
 պատասխանող՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրեն  
 Ստեփան Ասլանյանի ներկայացուցիչ՝ Վ. Խեչյան

դռնբաց դատական կիստույմ, 05.03.2013 թվականին, քննեց վարչական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին:

**ՊԱՐԶԵՑ՝**

**1. Գործի դատավարական նախապատմությունը եւ հայցվորի իրավական դիրքորոշումը**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրեն Ստեփան Ասլանյանի՝ վարչական ատասխանատվության ենթարկելու պահանջի մասին:

Հայցվոր կողմը, դիմելով դատարան, հայտնել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 12.11.2011թ.-ին թիվ 149-ի 5 Տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել է «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրեն Ստեփան Ասլանյանին:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային անդորրագրի պատճեններով:

Առաջին հարցումն անպատասխան մնալուց հետո՝ 06.12.2011թ.-ին թիվ 150-ի-2 Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցումն է ուղարկվել «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին:

Նշված փաստը հաստատվում է կրկնակի հարցման եւ փոստային անդորրագրի պատճեններով:

Հարցումներով «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրենին խնդրվել է տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը. «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի 2010թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն՝ «Աշտարակ-Կաթ» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող...»:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ձեր կախմամբերը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց:
2. Խնդրում եմք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կախմամբերքներից որն է բնական կաթից, որը ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Հարցումներին պատասխան չի տրվել: Նշած փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

Վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածը, 27-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 3-րդ հոդվածը, 6-րդ հոդվածի 1-ին մասը եւ 9-րդ հոդվածի 7-րդ մասը եւ 2-րդ կետը:

Պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության՝ չի տրամադրել 07.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի հարցումներով պահանջվող տեղեկատվությունը:

Վկայակոչել է նաեւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7 հոդվածը, 223-րդ հոդվածի 2-րդ կետը, 254-րդ հոդվածի վերջին պարբերությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26 գլխում ներառված 151-րդ հոդվածի համաձայն. «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով»:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածով ու 26-րդ գլխի պահանջներով՝ դատարանին խնդրել է. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի արված հարցումներով պահանջվող տեղեկատվությունը «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի կողմից չտրամադրելու համար վերջինիս տնօրեն Ստեփան Ասլանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 12.11.2011թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 (երեսուն հազար) դրամի չափով, իսկ 06.12.2011թ.-ի կրկնակի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 (հիսուն հազար) դրամի չափով»:

Դատարանին խնդրել է նաեւ պատասխանողից բռնագանձել դատական

ծախսերը, այդ թվում՝ պետական տուրքն ու փաստաբանին վճարված գումարները:

Գործի քննության ընթացքում հայցվոր կողմը դատարանին հայտնել է նաեւ, որ ընկերության պաշտոնական կայքում տեղադրված ոչ բոլոր ապրանքների փաթեթների վրա առկա մակնշումներն են, որ պարունակում են արտադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկատվություն: Դատական նիստին վկայակոչել է պատասխանողի տեղեկատվական կայքը՝ [www.ashtarakkat.com](http://www.ashtarakkat.com), եւ մատնանշել մի քանի ապրանքատեսակներ:

Գործի քննությանը ներկայացած ժամանակ հայցվոր կողմը պնդել է հայցը եւ դատարանին խնդրել բավարարել այն ամբողջությամբ: Գործի սույն քննության նիստին հայցվոր կողմը չի ներկայացել:

## 2. Պատասխանողի փաստարկները եւ իրավական դիրքորոշումը

Պատասխանող «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ տնօրեն Ստեփան Ասլանյանը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան, որով հայտնել է, որ 12.11.2011թ.-ի թիվ 149-5 տեղեկատվություն ստանալու հարցմամբ հայցվորը դիմել էր պատասխանողին:

17.11.2011թ.-ի թիվ 0-123/2011 գրությամբ պատասխանողը պատասխանել էր հարցմանը, եւ այդ գրությունը 18.11.2011թ.-ին թիվ 0051 փոստային բաժանմունքից առաքվել էր հայցվորի հասցեով՝ ք. Երեւան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ: Հայցվորի հասցեով փոստային առաքումը կատարվել էր պատասխանողին հետադարձ ծանուցմամբ: 22.11.2011թ.-ի ծրարը ետ էր վերադարձվել պատասխանողին՝ ծրարի հետին մասում նշումով՝ «հասցեն փակ է»: Ետ վերադարձման կտրոնի վրա առկա է փոստային ծառայության աշխատակցի ստորագրությունը:

Վերոնշյալից եւ կից փաստաթղթերից հաստատվում է, որ պատասխանողը օրենսդրությամբ սահմանված ժամկետում հարցման պատասխանը առաքել է հայցվորի՝ ք. Երեւան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ հասցեով, սակայն ծրարը ետ է վերադարձվել՝ «հասցեն փակ է» նշումով:

Հայցվորը 06.12.2011թ.-ի թիվ 150-2 տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցմամբ դիմել էր պատասխանողին: Հայտնել է, որ թեեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հիմքը պատասխանողին թույլ է տալիս (իրավունք է ընձեռում) հարցմանը պատասխան չտալ, եթե դա նույն անձի կողմից նույն տեղեկությունը ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, սակայն, երբ ստացել են կրկնակի հարցումը, անմիջապես հեռախոսազանգով կապնվել են հայցվորի գրասենյակ եւ փորձել են ներկայացնել պատասխանը չստանալու հանգամանքները, եւ որոշվել է հարցման պատասխանն ուղարկել էլեկտրոնային փոստի միջոցով:

Այդուհանդերձ, 12.01.2012թ.-ի թիվ 0-132/2012 գրությամբ հայցվորը տեղեկացվել է տեղեկատվությունը ժամանակին չստանալու պատճառների մասին, եւ ուշացումով ներկայացվել է հարցման պատասխանի կրկնօրինակը: Հայցվորը հարցման պատասխանը ստացել է 16.01.2012թ.-ին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդ-

վածը նախատեսում է տեղեկատվությունը ապօրինաբար չտրամադրելու համար վարչական պատասխանատվության միջոց.«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Սույն իրավանորմի դիսպոզիցիայից հետեւում է, որ զանցանքի օբյեկտիվ կողմը պաշտոնատար անձի անգործությունն է՝ պահանջվող տեղեկատվության ապօրինաբար չտրամադրելը:

Հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվությունը իրենց կողմից տրամադրվել է 12.01.2012թ.-ին:

Վերոնշյալ հիմնավորումներում ներկայացրել են, որ պահանջվող տեղեկատվությունը ուշացումով է տրվել պատասխանողից անկախ պատճառներով (մեղքի բացակայությամբ), եւ/կամ պատասխանողը մեղք չունի ոչ իրավաչափ դրություն առաջանալու համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով հիշատակված կանոնակարգումներով՝ խնդրել է դատարանին հայցը մերժել ամբողջությամբ:

Պատասխանող կողմը դատարանին ներկայացված հայցադիմումի պատասխանով հայտնել է նաեւ, որ կից ներկայացրել է «Հայփոստ» ՓԲԸ-ի 10.05.2012թ.-ի թիվ 2/3-872 պատասխանը փաստաբանական հարցմանն առ այն, որ թիվ RR 051132164 AM պատվիրված նամակը՝ հասցեագրված «Ինֆորմացիայի Ազատության Կենտրոն» ՀԿ-ին, ՀՀ ք. Երեւան, Բուզանդի փող. 1/3շ., 4-րդ հարկ հասցեով, «Հայփոստ» ՓԲԸ Երեւան 10 փոստային բաժանմունքի կողմից ետ է վերադարձվել ուղարկողին՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին ՀՀ, ք. Երեւան, 0069, Դրոյի փող. 13 հասցեով, նամակի վրա փակցնելով CN-15 համապատասխան պիտակը «հասցեն փակ է» նշումով:

Հիշատակված պատվիրված նամակը հայցվորին առաքվել էր 18.11.2011թ.՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցումը ստանալուց 5օրյա ժամկետում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն»:

«Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ս. Ասլանյանը չի հրաժարվել տեղեկություն տրամադրելուց, չի տրամադրել ոչ հավաստի տեղեկություն, ինչպես նաեւ չի խախտել տեղեկություն տրամադրելու օրենքով սահմանված կարգը:

ՀՀ ՎԴՕ 25-րդ հոդվածի 1-ին կետին համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում



գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Դատարանին խնդրել է հայցը մերժել:

Պատասխանող կողմը 23.01.2013թ.-ին դատարան է ներկայացրել հայցադիմումի վերաբերյալ դիրքորոշում, որով հայտնել է նաեւ, որ գործն ըստ Էուլյան լուծող դատական ակտ կայացնելիս դատարանը անհրաժեշտ է համարել լրացուցիչ հետազոտել ապացույցները, շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը, այն է՝ ընկերության կողմից արտադրված կաթնամթերքի ստույգ որ արտադրատեսակները չեն բովանդակում տեղեկատվություն (այդ թվում նաեւ մակնշման մեջ) դրանց մեջ բնական կաթի քանակության պարունակության չափի մասին, վերսկսել է գործի քննությունը:

Հայտնել է, որ «Կաթնամթերային արտադրատեսակների բնական կաթի քանակության մասին պահանջը» կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի թիվ 1925-Ն «Կաթին, կաթնամթերքի եւ դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» որոշմամբ: Կանոնակարգի 2-րդ մասում տրված են այն հասկացությունները, որոնք օգտագործվում են կանոնակարգը կիրառելիս:

Կանոնակարգում սահմանված են մասնավորապես հետեւյալ հասկացությունները.

- կաթնամթերք՝ սննդամթերք, որը պատրաստվում է կաթից եւ (կամ) դրա բաղադրամասերից եւ (կամ) երկրորդային կաթնային հումքից՝ առանց դրա մեջ ոչ կաթնային յուղի ու սպիտակուցի օգտագործման:
- Կաթնամթերքը պատրաստում են բնական, նորմալացված, վերականգնված, վերահամակցված, սառեցրած կաթից եւ/կամ դրանց խառնուրդներից:
- Նորմալացում՝ կաթի կամ կաթնամթերքի մեջ բաղադրամասերի պարունակության եւ հարաբերակցության կարգավորման գործընթաց.
- Նորմալացված կաթ (սերուցք)՝ կաթ (սերուցք), որում յուղի եւ (կամ) սպիտակուցի եւ (կամ) չոր յուղազերծ կաթնային մնացորդի զանգվածային մասերի արժեքները կամ դրանց հարաբերակցությունները համապատասխանեցված են նորմատիվ կամ տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերին:

Ընկերությունը հստակ կատարել է կատարում է կանոնակարգով սահմանված պահանջները՝ նշելով, որ արտադրանքի բաղադրությունը իր մեջ պարունակում է «պատրաստված է նորմալացված կաթ» արտահայտությունից: Իսկ նորմալացված կաթը (սերուցք), որում յուղի եւ (կամ) սպիտակուցի եւ (կամ) չոր յուղազերծ կաթնային մնացորդի զանգվածային մասերի արժեքները կամ դրանց հարաբերակցությունները համապատասխանեցված են նորմատիվ կամ տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերին: Այդ արտադրանքները համարվում են «կաթնամթերք»՝ համաձայն կանոնակարգի համապատասխան հիմնավորման, որտեղ նշվում է. «կաթնամթերքը պատրաստում են բնական, նորմալացված, վերականգնված, վերահամակցված, սառեցրած կաթից եւ (կամ) դրանց խառնուրդներից»:

Կանոնակարգի 5-րդ մասի կետ 38-ը սահմանում է կաթի եւ կաթնամթերքի մակնշմանը եւ փաթեթավորմանը ներկայացվող պահանջները, որտեղ ի

թիվս այլ պարտադիր պահանջների՝ նշված են արտադրանքի եւ արտադրատեսակի անվանումները, ջերմամշակման եղանակը, տեսակը, քաշը, էներգետիկ արժեքը, մթերքի բաղադրությունը եւ այլն:

Ընկերությունը, առաջնորդվելով իրավական ակտերի համապատասխան դրույթներով, մասնավորապես՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի հոդված 8-րդ եւ 2006թ.-ի դեկտեմբերի 21-ի թիվ 1925-Ն «Կաթին, կաթնամթերքի եւ դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգ» ՀՀ կառավարության որոշմամբ ամրագրված օրենսդրական պահանջներով՝ կատարում է կաթի ու կաթնամթերքի արտադրանքների համար սահմանված նորմատիվային պահանջները:

Գործի քննությանը ներկայացած ժամանակ պատասխանող կողմը պնդել է ներկայացված առարկությունները եւ դատարանին խնդրել հայցը մերժել: Գործի քննության սույն դատական նիստին պատասխանող կողմը չի ներկայացել:

**3. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, ՀՀ վարչական դատարանի պատճառաբանությունները եւ եզրահանգումները**

Լսելով կողմերի բացատրությունները, ուսումնասիրելով եւ գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ:

Դատաքննության ընթացքում դատարանը պարզված համարեց գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հետեւյալ փաստերը.

- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյրոյանի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղղված 07.11.2011թ.-ի (149-ի 5) «Տեղեկատվություն ստանալու մասին» հացման համաձայն՝ նշվել է հետեւյալը. «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի 2010թ.-ի սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն՝ «Աշտարակ Կաթ» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող...»:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

- 1) Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց:
- 2) Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետ-

ներում»: Նույն հարցման համաձայն՝ հարցման մեջ՝ որպես «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հասցե, նշվել է «ՀՀ, ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ» հասցեն եւ «56-03-60» հեռախոսահամարը:

- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյոյան-Լի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղղված 07.11.2011թ. (149-ի 5) «Տեղեկատվություն ստանալու մասին» հացմունքը «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ում ստացվել է 14.11.2011թ.:
- «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ս. Ասլանյանի կողմից «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահին ուղղված 17.11.2011թ. ամսաթվով թիվ 01-23/2011 գրության համաձայն հայտնվել է հետեւյալը. «Ի պատասխան 07.11.2011թ.-ի 149-ի-5 գրության (ստացված 14.11.2011թ.-ին), ինչպես նաեւ, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության եւ օրենսդրության համապատասխան դրույթներով՝ տեղեկացնում ենք, որ.

  - 1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ «Կաթնափոշի» հասկացությունը: Դրա փոխարեն սահմանված է, օրինակ՝ «անարատ չոր կաթ» արտահայտությունը, որն ստացվում է բնական կաթից
  - 2) Մեր ընկերության կաթնամթերքների բոլոր արտադրատեսակներն էլ արտադրվում են բնական կաթից, իսկ արտադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր արտադրատեսակի համար ներկայացված է մեր ընկերության կողմից արտադրվող եւ վաճառվող արտադրանքի համապատասխան մակնշման մեջ, որը նույնպես ՀՀ օրենսդրության պահանջն է»:

- Պատասխանող «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի կողմից դատարանին ներկայացված փոստային առաքման ծրարի վրա կատարված գրառումների համաձայն՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի 17.11.2011թ.-ի թիվ 01-23/2011 գրությունը 18.11.2011թ.-ին թիվ 0051 փոստային բաժանմունքից, թիվ RR 051132164 AM պատվիրված նամակով առաքվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին, 07.11.2011թ.-ի (149-ի 5) հարցման մասին գրության մեջ նշված ք. Երեւան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ հասցեով՝ հետադարձ ծանուցմամբ: Նույն ծրարի վրա կատարված գրառումների համաձայն՝ ծրարը 22.11.2011թ.-ին ետ է վերադարձվել «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին՝ ծրարի հետին մասում կատարված «հասցեն փակ է» գրառմամբ: Ծրարի վրա փակցված ետ վերադարձի կտրոնի վրա առկա է փոստային ծառայության աշխատողի ստորագրությունը:
- «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից 10.05.2012թ.-ի թիվ 2/3-872 գրությամբ փաստաբանական հարցմանը տրված պատասխանի համաձայն՝ թիվ RR 051132164 AM պատվիրված նամակը հասցեագրվել է «Ինֆորմացիայի Ազատության կենտրոն» ՀԿ-ին՝ ՀՀ ք. Երեւան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ հասցեով, «Հայփոստ» ՓԲԸ-ի Երեւան 10 փոստային բաժանմունքի կողմից ետ է վերադարձվել ուղարկողին՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին ՀՀ, ք. Երեւան, 0069, Դրոյի փող. 13 հասցեով՝ նամակի վրա փակցնելով CN-15 համապատասխան պիտակը՝ «հասցեն փակ է» նշումով:
- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հանրային կապերի պատասխանատու Անահիտ Զոչարյանի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղղված 06.12.2011թ.-ի (150-ի-2) Տեղե-

կատվություն ստանալու մասին կրկնակի հացման համաձայն. «Ինֆորմացիայի ազատության կնտրոնը» 07.11.2011թ.-ին 149-5 թվագրմամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել, որը, սակայն, մնացել է անպատասխան:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի 2010թ. սեպտեմբերի 22-ի թիվ 245-Վ որոշման համաձայն՝ «Աշտարակ-Կաթ» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող ...»:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ ինդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

- 1) «Աշտարակ-Կաթ» ընկերության կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե կաթնափոշուց:
- 2) Ինդրում ենք տրամադրել ցանկը, թե ընկերության կաթնամթերքներից, որն է բնական կաթից, որը ոչ, եւ /կամ/ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում»:

- Հայցվորի կողմից դատարանին ներկայացված 06.12.2011թ. փոստային առաքման մասին անդորրագրի համաձայն՝ RR057879992 AM կոդով նամակը «Հայփոստ» ՓԲԸ-ի թիվ 33 փոստային բաժանմունքից (թիվ 491 առաքանի) առաքվել է Երեւան 0069, Դրոյի 13, Մարզպետունի Ալեքսանյանին, «Աշտարակ Կաթ» ընկերություն:
- «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ս. Ասլանյանի կողմից «Ինֆորմացիայի ազատության կնտրոն» ՀԿ-ի նախագահին ուղղված 12.01.2012թ. ամսաթվով թիվ 01-132/2012 գրության համաձայն՝ հայտնվել է հետեւյալը. «07.11.2011թ. «Ինֆորմացիայի ազատության կնտրոն» ՀԿ-ի կողմից տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղարկվել մեր ընկերություն: Հարցումն ստացել ենք 14.11.2011 թվականին:

18.11.2011թ.-ի «Ինֆորմացիայի ազատության կնտրոն» ՀԿ-ին պատվիրված ծրարով, հետադարձ ծանուցմամբ (պատշաճ կարգով) ուղարկել էինք հարցման պատասխանը: Պատասխանը ծրարով առաքվել էր ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ հասցեով, սակայն ետ էր վերադարձվել «Հասցեն փակ է» նշումով: Ետ վերադարձման ամսաթիվն է՝ 22.11.2011թ.:

Սույն գրությունը կից ներկայացնում ենք Ձեր հարցման պատասխանը՝ ծրարով առաքելու փաստը հաստատող փոստային ծրարի երկերես պատճենը «Հասցեն փակ է» նշումով, ինչպես նաեւ հավաստիացնում ենք՝ մեր կողմից հարցմանը տեղեկատվություն չտրամադրելու միտում չի եղել, ինչպես փորձում եք ներկայացնել հայցադիմումի մեջ:

Անհրաժեշտության դեպքում կարող եք տեսնել ծրարի փակ օրինակը եւ համոզվել ինքներդ: Կից ներկայացնում եմ հարցման պատասխանի կրկնօրինակը»:

Նշված գրությանը կից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի կողմից ուղարկվել է նաեւ ընկերության 17.11.2011թ. ամսաթվով թիվ 01-23/2011 գրության կրկնօրինակը:

- Պատասխանողի կողմից դատարանին ներկայացված 12.01.2012թ. ստացման/հանձնման մասին փոստային անդորրագրի համաձայն՝ AR049468947 AM կոդով նամակը «Յարցման պատասխան, տեղեկատվություն» «Աշտարակ Կաթ» ընկերության կողմից ուղարկվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՅԿ-ին: Նույն անդորրագրի վրա ստանալու մասին կատարված ստորագրության համաձայն՝ առաքանին հանձնվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՅԿ-ին 16.01.2012թ.:
- ԱԶ Կարեն Մեժլումյանի եւ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՅԿ-ի միջեւ 01.12.2011թ.-ին կնքված «Փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ» պայմանագրի համաձայն՝ փաստաբան Կ. Մեժլումյանը պարտավորվել է կազմակերպության հանձնարարությամբ կազմել եւ դատարան ներկայացնել հայցադիմում ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու, տեղեկատվություն տրամադրելու եւ դատական ծախսերը հատուցելու պահանջների մասին, դատարանում մասնակցել գործի քննությանը եւ ոչ բարենպաստ դատական ակտի դեպքում այն բողոքարկել:

Նույն պայմանագրի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման արժեքը սահմանվել է 228.000 ՀՀ դրամ:

- «Ամերիաբանկ»-ի 30.01.2012թ. թիվ 7 Վճարման հանձնարարականի համաձայն՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՅԿ-ի կողմից ԱԶ Կարեն Մեժլումյանին վճարվել է 228.000ՀՀ դրամ գումար:

Վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով դատաքննության ընթացակարգը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածով: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը քննելիս վարչական դատարանը պարզում է, թե տեղի է ունեցել արդյոք վարչական իրավախախտման դեպքը, եւ առկա է արդյոք հայցադիմումում նշված անձի կողմից դա կատարելու փաստը, նախատեսված է արդյոք օրենքով վարչական պատասխանատվություն տվյալ իրավախախտումը կատարելու համար, ինչպես նաեւ նշանակում է կամ մերժում է նշանակել վարչական տույժ»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների մեկնաբանմամբ դատարանը եզրակացնում է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը քննելիս դատարանի կողմից պարզման ենթակա են հետեւյալ հանգամանքները.

- 1) արդյոք տեղի՞ է ունեցել վարչական իրավախախտման դեպքը,
- 2) առկա՞ է արդյոք այդ վարչական իրավախախտումը հայցադիմումում նշված անձի կողմից կատարելու փաստը,
- 3) նախատեսվա՞ծ է արդյոք օրենքով վարչական պատասխանատվություն տվյալ իրավախախտումը կատարելու համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված է վարչական պատասխանատվություն՝ տեղեկատվություն տալու պարտականությունը չկատարելու համար: Նշված 189.7-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Վերը նշված իրավանորմի մեկնաբանմամբ դատարանը եզրակացնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ են հանդիսանում հետեւյալ տարրերը.

- 1) պահանջվող տեղեկության տրամադրումը պետք է նախատեսված լինի օրենքով,
- 2) պահանջվող, օրենքով նախատեսված տրամադրման ենթակա տեղեկությունը պետք է լինի չտրամադրված (պետք է մերժվի կամ որեւէ այլ գործողության կամ անգործության արդյունքում համարվի չտրամադրված այդ տեղեկությունը),
- 3) պահանջվող, օրենքով նախատեսված տրամադրման ենթակա տեղեկության չտրամադրումը սուբյեկտի կողմից (տվյալ դեպքում՝ հանրային նշանակության կազմակերպության պաշտոնատար անձի կողմից) պետք է լինի ապօրինաբար:

Վերը նշված զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից որեւէ մեկի բացակայությունը նշանակում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7.-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման դեպքի բացակայություն ընդհանրապես:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է նշված օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները: Նշված օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

- տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ).
- տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող... կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպու-

թյուններ եւ դրանց պաշտոնատար անձինք.

- հանրային նշանակության կազմակերպություն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ.
- հարցում՝ տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է տեղեկատվության ազատության իրականացման կարգը: Նշված օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված է տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում ներկայացնելու եւ քննարկելու կարգը: Նշված օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 7-րդ մասերի համաձայն՝

1. Գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

3. Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե

- 1) դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները,
- 2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են,
- 3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:

...

7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

- 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը

տրամադրելու վերջնական ժամկետը»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված է տեղեկությունների տրամադրման պայմանները: Նշված օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն. «Հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:

4. Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով՝ սահմանված է պատասխանատվություն՝ տեղեկատվության ազատության խախտման համար: Նշված օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն»:

Տվյալ դեպքում՝ հայցվոր կողմը դատարան ներկայացված հայցային պահանջներով խնդրել է՝

- 1) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ից 12.11.2011թ.-ի հարցումով պահանջվող տեղեկատվությունը «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի կողմից չտրամադրելու համար տնօրեն Ստեփան Ասլանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 12.11.2011թ. հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 (երեսուն հազար) դրամի չափով,
- 2) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ից 06.12.2011թ. արված հարցումով պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար տնօրեն Ստեփան Ասլանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 06.12.2011թ.-ի կրկնակի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 (հիսուն հազար) դրամի չափով:

Տվյալ դեպքում՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյոյանի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղղված 07.11.2011թ. (149-ի 5) «Տեղեկատվություն ստանալու մասին» հացմամբ պահանջվել է տրամադրել տեղեկություններ, թե

- 1) «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կաթնամթերքը արտադրվում է բնական կաթից, թե՞ կաթնափոշուց եւ
- 2) պահանջել են տրամադրել ցանկը, թե Ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված է տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում ներկայացնելու եւ քննարկելու կարգը, որի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձի



կողմից ներկայացված գրավոր հարցումը պետք է լինի ստորագրված, եւ դրա մեջ պետք է նշված լինի իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյոյան-Նի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղղված 07.11.2011թ.-ի (149-ի 5) գրավոր հարցման մեջ՝ որպես «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի գտնվելու վայր նշվել է «ՀՀ, ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ» հասցեն եւ «56-03-60» հեռախոսահամարը: Հայցվորի կողմից դատարանին ներկայացված փոստային անդորրագրի համաձայն՝ նշված գրավոր հարցումը Ընկերությանն առաքելու համար փոստային կապի բաժանմունք է հանձնվել 12.11.2011թ.-ին: Նշված գրավոր հարցումն ընկերությունում ստացվել է 14.11.2011թ.-ին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

Տվյալ դեպքում՝ Ընկերության տնօրեն Ս. Ասլանյանի 17.11.2011թ.-ի թիվ 01-23/2011 գրությամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահի 07.11.2011թ.-ի 149-ի 5 գրավոր հարցմանը (ստացված Ընկերությունում 14.11.2011թ.-ին) տրվել է պատասխան, որով հայտնվել է, որ

- 1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ «Կաթնափոշի» հասկացությունը: Դրա փոխարեն սահմանված է, օրինակ՝ «անարատ չոր կաթ» արտահայտությունը, որն ստացվում է բնական կաթից:
- 2) Ընկերության կաթնամթերքների բոլոր արտադրատեսակներն էլ արտադրվում են բնական կաթից, իսկ արտադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր արտադրատեսակի համար ներկայացված է Ընկերության կողմից արտադրվող եւ վաճառվող արտադրանքի համապատասխան մակնշման մեջ, որը նույնպես ՀՀ օրենսդրության պահանջն է»:

Ընկերության կողմից դատարանին ներկայացված փոստային առաքման ծրարի վրա կատարված գրառումների հիման վրա դատարանը եզրակացնում է, որ Ընկերության 17.11.2011թ.-ի թիվ 01-23/2011 գրությունը 18.11.2011թ.-ին թիվ 0051 փոստային բաժանմունքից, թիվ RR 051132164 AM պատվիրված նամակով առաքվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին, 07.11.2011թ.-ի (149-ի 5) գրավոր հարցման մեջ նշված ք. Երեւան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ հասցեով, հետադարձ ծանուցմամբ, եւ ծրարը 22.11.2011թ.-ին ետ է վերադարձվել «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին՝ ծրարի հետին մասում կատարված «հասցեն փակ է» գրառմամբ, ետ վերադարձի կտրոնի վրա փոստային ծառայության աշխատողի ստորագրությամբ: Նշված հանգամանքը հաստատվում է նաեւ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից 10.05.2012թ.-ի թիվ 2/3-872 գրությամբ, որի համաձայն՝ թիվ RR 051132164 AM պատվիրված նամակը հասցեագրվել է «Ինֆորմացիայի Ազատության Կենտրոն» ՀԿ-ին՝ ՀՀ ք. Երեւան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ հասցեով եւ «Հայփոստ» ՓԲԸ-ի Երեւան 10 փոստային բաժանմունքի կողմից ետ է վերադարձվել ուղարկողին՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին՝ ՀՀ, ք. Երեւան, 0069, Դրոյի փող. 13 հասցեով՝ նամակի վրա փակցնելով CN-15 համապատասխան պիտակը՝ «հասցեն փակ է» նշումով:

Նման պայմաններում, վերը նշված փաստական հանգամանքների եւ իրավական հիմնավորումների հիման վրա՝ դատարանը եզրակացնում է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի 07.11.2011թ.-ի (149-ի-5) գրավոր հարցմանը, որն ուղարկվել է Ընկերությանը 12.11.2011թ.-ի եւ ստացվել է Ընկերությունում 14.11.2011թ.-ի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում տրվել է պատասխան, այն է՝ 17.11.2011թ. թիվ 01-23/2011 գրությունը 18.11.2011թ.-ին թիվ 0051 փոստային բաժանմունքից, թիվ RR 051132164 AM պատվիրված նամակով առաքվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին, 07.11.2011թ.-ի (149-ի 5) գրավոր հարցման մեջ նշված ք. Երեւան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ հասցեով, հետադարձ ծանուցմամբ, եւ ծրարը 22.11.2011թ.-ին ետ է վերադարձվել Ընկերությանը՝ «հասցեն փակ է» լինելու պատճառով: Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ փաստացի հայցվորի գրավոր հարցման հիման վրա Ընկերության տնօրենի կողմից օրենքով սահմանված ժամկետներում տրամադրվել է պահանջվող տեղեկությունը, սակայն գրավոր հարցման պատասխանը հասցեատիրոջը չի հանձնվել պատասխանողի կամքից անկախ պատճառներով, այն է՝ հասցեն փաստացի փակ լինելու պատճառով փոստային ծառայության կողմից հարցման պատասխանը, որով տրամադրվել է պահանջվող տեղեկությունները, վերադարձվել է Ընկերությանը: Հարկ է նշել նաեւ, որ հայցվորի այլ գտնվելու վայրի մասին տվյալներ Ընկերությանը չեն ներկայացվել:

Նման պայմաններում, վերոգրյալի հիման վրա՝ դատարանը եզրակացնում է, որ տվյալ դեպքում տեղի չի ունեցել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված է վարչական իրավախախտման դեպքը, որի կատարման համար պատասխանողը կարող էր ենթարկվել վարչական պատասխանատվության: Այսինքն՝ տվյալ դեպքում առկա չէ հայցվորի գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկությունները Ընկերության տնօրենի կողմից ապօրինաբար չտրամադրման փաստը:

Հայցվոր կողմը դատարան ներկայացված 2-րդ պահանջով պահանջել է նաեւ պատասխանողին 06.12.2011թ.-ի կրկնակի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 (հիսուն հազար) դրամի չափով:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հանրային կապերի պատասխանատու Անահիտ Զոչարյանի կողմից Ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղարկվել է 06.12.2011թ.-ի (150-ի 2) կրկնակի գրավոր հարցումը, որով հայտնել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» 07.11.2011թ.-ին 149-5 թվագրմամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել, որը մնացել է անպատասխան:

Կրկին խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

- «1) «Աշտարակ-Կաթ» ընկերության կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե կաթնափոշուց:
- 2) Տրամադրել ցանկը, թե ընկերության կաթնամթերքներից, որն է բնական կաթից, որը ոչ, եւ /կամ/ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ նույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է նույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

Տվյալ դեպքում՝ հայցվորի կրկնակի գրավոր հարցումը 06.12.2011թ. փոստային առաքմամբ ուղարկվել է Ընկերությանը՝ Երեւան 0069, Դրոյի 13 հասցեով՝ Մարզպետունի Ալեքսանյանին, «Աշտարակ Կաթ» ընկերություն: Ընկերության տնօրեն Ս. Ասլանյանի կողմից «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահին ուղղված 12.01.2012թ.-ի թիվ 01-132/2012 գրությամբ ի պատասխան հայցվորի 06.12.2011թ.-ի (150-ի 2) կրկնակի գրավոր հարցման հայտնել է. «07.11.2011թ.-ի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկվել Ընկերություն, որն ստացել ենք 14.11.2011թ.-ին: Ընկերությունը 18.11.2011թ.-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին պատվիրված ծրարով, հետադարձ ծանուցմամբ (պատշաճ կարգով) ուղարկել է հարցման պատասխանը: Պատասխանը ծրարով առաքվել է ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ հասցեով, սակայն ետ էր վերադարձվել «Հասցեն փակ է» նշումով: Ետ վերադարձման ամսաթիվն է 22.11.2011թ.-ին:

Սույն գրությանը կից ներկայացնում ենք հարցման պատասխանը ծրարով առաքելու փաստը հաստատող փոստային ծրարի երկերես պատճենը «Հասցեն փակ է» նշումով, ինչպես նաեւ հավաստիացնում ենք՝ մեր կողմից հարցմանը տեղեկատվություն չտրամադրելու միտում չի եղել, ինչպես փորձում եք ներկայացնել հայցադիմումի մեջ: Անհրաժեշտության դեպքում կարող եք տեսնել ծրարի փակ օրինակը եւ համոզվել ինքներդ: Կից ներկայացնում եմ հարցման պատասխանի կրկնօրինակը:

Ընկերության տնօրենի կողմից հայցվորին ուղարկվել է նաեւ Ընկերության 17.11.2011թ.-ի թիվ 01-23/2011 գրության կրկնօրինակը: Ուղարկված վերը նշված փոստային առաքանին՝ Ընկերության տնօրենի 12.01.2012թ. թիվ 01-132/2012 պատասխան գրությունը եւ 17.11.2011թ.-ի թիվ 01-23/2011 գրության կրկնօրինակը, հանձնվել է փոստային ծառայությանը 12.01.2012թ.-ին, իսկ 16.01.2012թ.-ին փոստային ծառայության կողմից հանձնվել է հայցվորին:

Վերը նշված փաստական հանգամանքների եւ իրավական հիմնավորումների հիման վրա՝ դատարանը եզրակացնում է, որ հայցվորի կողմից Ընկերության տնօրենին 06.12.2011թ.-ին (150-ի 2) կրկնակի գրավոր հարցումը հանդիսացել է հայցվորի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում Ընկերությանը ներկայացված երկրորդ դիմումը, քանի որ կրկնակի հարցումը նույնությամբ կրկնել է 07.11.2011թ.-ին (149-ի 5) գրավոր հարցմամբ ներկայացված պահանջները: Նման պայմաններում՝ դատարանը եզրակացնում է նաեւ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հիմքով ներկայացված կրկնակի գրա-

վոր հարցմանը ըստ էության կարող էր նաեւ պատասխան չտրվել, սակայն Ընկերության տնօրենը տվյալ դեպքում հաշվի առնելով առաջին հարցման պատասխանը ետ վերադարձված լինելու հանգամանքը, 12.01.2012թ.-ի թիվ 01-132/2012 պատասխան գրությամբ ներկայացրել է պարզաբանում եւ որպէս գրավոր հարցման պատասխան՝ տրամատրել է 17.11.2011թ.-ի թիվ 01-23/2011 գրությունը՝ դրանում առկա տեղեկատվությամբ:

Նման պայմաններում, վերոգրյալի հիման վրա՝ դատարանը եզրակացնում է, որ տվյալ դեպքում հայցապահանջի 2-րդ պահանջի մասով նույնպէս տեղի չի ունեցել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7.-րդ հոդվածով նախատեսված է վարչական իրավախախտման դեպքը, որի կատարման համար պատասխանողը կարող էր ենթարկվել վարչական պատասխանատվության: Այսինքն՝ տվյալ դեպքում նույնպէս առկա չէ հայցվորի գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկությունները Ընկերության տնօրենի կողմից ապօրինաբար չտրամադրման փաստը:

Գործի քննության ընթացքում հայցվոր կողմը դատարանին հայտնել է նաեւ, որ Ընկերության տնօրենի կողմից տրված գրավոր հարցումների պատասխանները հավաստի չեն, թերին են, պարունակում են ոչ լրիվ տվյալներ պահանջված տեղեկությունների մասին: Որպէս նշված դիրքորոշման հիմնավորում հայցվոր կողմը հայտնել է, որ Ընկերության պաշտոնական կայքում տեղադրված ոչ բոլոր ապրանքների փաթեթների վրա առկա մակնշումներն են որ պարունակում են արտադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկատվություն, վկայակոչել է պատասխանողի տեղեկատվական կայքը՝ [www.ashtarakkaf.com](http://www.ashtarakkaf.com), եւ մատնանշել մի քանի ապրանքատեսակներ: Այնուհետեւ, գործի քննության ընթացքում հայցվորը իր կողմից նշված թրություններով մակնշված ապրանքատեսակների վերաբերյալ դատարանին այլ տեղեկատվություն չի ներկայացրել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություններ տրամադրված լինելու դեպքում տեղեկություններ տրամադրողի համար պարտավորություն՝ այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա օրենքով սահմանված կարգով անվճար ճշգրտված տվյալներով տեղեկություններ տրամադրելու համար:

Տվյալ դեպքում՝ հայցվորի կողմից որեւէ գրավոր հարցում ուղղված Ընկերությանը, այն մասին, որ գրավոր հարցման հիման վրա տրամադրված տեղեկությունները ոչ հավաստի են կամ պարունակում են ոչ լրիվ տվյալներ, առկա չէ: Նման պայմաններում՝ դատարանը եզրակացնում է, որ եթե նույնիսկ հայցվորը պատասխանողի կողմից իր գրավոր հարցմանն ի պատասխան տրամադրած տեղեկությունները համարում էր ոչ հավաստի կամ ոչ լրիվ տեղեկություններ պարունակող, ապա նման պայմաններում կարող էր սահմանված կարգով գրավոր հարցմամբ պահանջել ճշգրտված տեղեկություններ: Հարկ է

Նշել, որ հայցվորի կողմից սահմանված կարգով Ընկերությունից սույն վարչական գործով կատարված գրավոր հարցման շրջանակներում ճշգրտված տվյալներով տեղեկություններ չեն պահանջվել: Սման դիրքորոշում հայցվոր կողմը ներկայացրել է ուղղակի գործի քննության ընթացքում: Հայցվոր կողմն իր դիրքորոշմամբ, ըստ էության, Ընկերության կողմից պատասխանով տրամադրված տեղեկությունների ոչ հավաստի, ոչ լրիվ տվյալներ պարունակելու հանգամանքը դիտել է նաեւ օրենքով նախատեսված տեղեկատվությունը պատասխանողի կողմից ապօրինաբար չտրամադրում: Սման պայմաններում դատարանն անհարաժեշտ է համարում անդրադառնալ նաեւ հայցվորի կողմից ներկայացված գրավոր հարցման եւ Ընկերության կողմից տրամադրված պատասխանով տրված տեղեկությունների բովանդակություններին:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյոյան-նի կողմից Ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղղված 07.11.2011թ.-ի (149-ի 5) գրավոր հարցման համաձայն՝ պահանջվել է տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

- 1) Ընկերության կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթ-նափոշուց:
- 2) Տրամադրել ցանկը, թե Ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Ընկերության տնօրեն Ս. Ասլանյանի կողմից «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահին ուղղված 17.11.2011թ. ամսաթվով թիվ 01-23/2011 գրությամբ հայտնվել է հետեւյալը.

- «1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ «Կաթնափոշի» հասկացությունը: Դրա փոխարեն սահմանված է, օրինակ՝ «անարատ չոր կաթ» արտահայտությունը, որն ստացվում է բնական կաթից:
- 2) Ընկերության կաթնամթերքների բոլոր արտադրատեսակներն էլ արտադրվում են բնական կաթից, իսկ արտադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր արտադրատեսակի համար ներկայացված է Ընկերության կողմից արտադրվող եւ վաճառվող արտադրանքի համապատասխան մակնշման մեջ, որը նույնպես ՀՀ օրենսդրության պահանջն է»:

Նույն պատասխանն է տրվել նաեւ կրկնակի հարցմանը: ՀՀ կառավարության 21.12.2006թ.-ի թիվ 1925-Ն որոշմամբ հաստատվել է «Կաթին, կաթնամթերքին եւ դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը»: Կանոնակարգի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Կանոնակարգով սահմանվում են կաթի եւ կաթնամթերքի ու դրանց արտադրության անվտանգությունը բնութագրող, ինչպես նաեւ կաթնամթերքի մակնշման, փաթեթավորման, պահման, փոխադրման, օգտահանման պահանջները եւ համապատասխանության հավաստման ընթացակարգերը:

Կանոնակարգի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված են Կանոնակարգում կիրառված հասկացությունները: Նշված 4-րդ կետի համաձայն՝ սահմանված են հետեւյալ հասկացությունները՝

- «անարատ կաթ» (հում, խմելու)՝ կաթ, որը ենթարկված չէ բաղկացուցիչ

մասերի կարգավորման.

- «անարատ չոր կաթ»՝ 20 տոկոսից ոչ պակաս յուղի զանգվածային մասով կաթնամթերք՝ պատրաստված բացառապես անարատ կաթից.
- «կաթ» (կաթնամթերք, կաթ պարունակող մթերք)՝ թանձրացրած (խտացրած), մանրեազերծված, ջերմամշակման ենթարկված եւ մանրեաբանական ցուցանիշներով արտադրական մանրեազերծման պահանջներին համապատասխանող թանձրացրած (խտացրած) կաթ (կաթնամթերք, կաթ պարունակող մթերք).
- «կաթ»՝ կաթնատու կենդանիների կաթնագեղձերի նորմալ ֆիզիոլոգիական արտազատման մթերք, որն ստացվում է մեկ կամ ավելի կենդանիներից մեկ կամ մի քանի կթերի ընթացքում՝ առանց գտման կամ հավելումների ավելացման, եւ նախատեսված է հեղուկի տեսքով օգտագործման կամ վերամշակման համար:
- «կաթնամթերք»՝ սննդամթերք, որը պատրաստվում է կաթից եւ (կամ) դրա բաղադրամասերից եւ (կամ) երկրորդային կաթնային հումքից՝ առանց դրա մեջ ոչ կաթնային յուղի ու սպիտակուցի օգտագործման:
- Կաթնամթերքը պատրաստում են բնական, նորմալացված, վերականգնված, վերահամակցված, սառեցրած կաթից եւ (կամ) դրանց խառնուրդներից:
- «նորմալացում»՝ կաթի կամ կաթնամթերքի մեջ բաղադրամասերի պարունակության եւ հարաբերակցության կարգավորման գործընթաց.
- «նորմալացված կաթ» (սերուցք)՝ կաթ (սերուցք), որում յուղի եւ (կամ) սպիտակուցի եւ (կամ) չոր յուղագերծ կաթնային մնացորդի զանգվածային մասերի արժեքները կամ դրանց հարաբերակցությունները համապատասխանեցված են նորմատիվ կամ տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերին.
- «պաստերացում»՝ ջերմամշակման գործընթաց՝ 65°C - 100°C ջերմաստիճանում, որն ապահովում է մթերքում մանրէների ախտածին եւ վեգետատիվ բջիջների ոչնչացումը՝ դրանց սկզբնական պարունակության 99,0 տոկոսից ոչ պակաս»:

Կանոնակարգի 4-րդ մասի 5-րդ բաժնով սահմանված է կաթի եւ կաթնամթերքի մակնշմանը եւ փաթեթավորմանը ներկայացվող պահանջները: Նշված 4-րդ մասի 38-րդ կետի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում իրացվող կաթի եւ կաթնամթերքի փաթեթվածքի կամ սպառողական տարայի վրա անմիջապես կամ դրան փակցված պիտակին պետք է լինի հետեւյալ բովանդակությամբ մականշվածք՝

...

ը) մթերքի բաղադրությունը:

Մթերքի բաղադրությունը նշում են դրա բաղադրամասերի անվանացանկով՝ «Բաղադրությունը» վերնագրով: Պատրաստի մթերքի բաղադրության մեջ չմտնող, բայց արտադրական գործընթացի համար գործնականորեն անհրաժեշտ վերամշակման նյութերը, նշում են «Օգտագործելով» բառից հետո.»:

Նման պայմաններում, վերոգրյալի հիման վրա՝ հարկ է նշել, որ Կանոնակարգը իրականում «Կաթնափոշի» հասկացություն չի բովանդակում, ինչպես

Նաեւ չի բովանդակում «Բնական կաթ» հասկացությունը: Կանոնակարգի 4-րդ կետով սահմանված հասկացությունների մեկնաբանմամբ դատարանը եզրակացնում է, որ «Նարատ կաթը» (հում, խմելու) կաթ է, որը ենթարկված չէ բաղկացուցիչ մասերի կարգավորման, իսկ անարատ չոր կաթը 20 տոկոսից ոչ պակաս յուղի զանգվածային մասով կաթնամթերքն է՝ պատրաստված բացառապես անարատ կաթից:

Ընկերության [www.ashtarakkat.com](http://www.ashtarakkat.com) կայքում տեղադրված կաթնամթերքի արտադրատեսակների փաթեթվածքի, սպառողական տարայի վրա կամ դրանց փակցված պիտակին առկա են Կանոնակարգի 4-րդ մասի 5-րդ բաժնի 38-րդ կետով սահմանված բովանդակությամբ մակնշվածքներ: Ընկերության վերը նշված կայքում բերված կաթնամթերքի արտադրատեսակների մակնշվածքներում առկա «Բաղադրությունը» վերնագրի տակ նշված է նաեւ մթերքների բաղադրությունը՝ Կանոնակարգի 38-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան: Ընկերության [www.ashtarakkat.com](http://www.ashtarakkat.com) կայքում տեղադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ անարատ կաթի քանակության վերաբերյալ տեղեկատվությունը (ըստ էության որոնցում առկա է անարատ կաթ) նշված է յուրաքանչյուր արտադրատեսակի արտադրանքի համապատասխան մակնշման մեջ՝ Կանոնակարգով մակնշվածքին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Չարկ է նշել նաեւ, որ Ընկերության կաթնամթերքի որոշ արտադրատեսակների մակնշվածքում բաղադրության տակ նշված է, որ արտադրատեսակը «պատրաստված է նորմալացված կաթից»: Կանոնակարգի համաձայն՝ նորմալացված կաթը (սերուցք) այն կաթն է, որում յուղի եւ (կամ) սպիտակուցի եւ (կամ) չոր յուղազերծ կաթնային մնացորդի զանգվածային մասերի արժեքները կամ դրանց հարաբերակցությունները համապատասխանեցված են նորմատիվ կամ տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերին: Կանոնակարգի դրույթների համաձայն՝ նշված արտադրանքները համարվում են «կաթնամթերք», որտեղ նշվում է. «կաթնամթերքը պատրաստում են բնական, նորմալացված, վերականգնված, վերահամակցված, սառեցրած կաթից եւ (կամ) դրանց խառնուրդներից»:

Վերը նշված փաստական հանգամանքների եւ իրավական հիմնավորումների հիման վրա՝ դատարանը եզրակացնում է, որ տվյալ դեպքում Ընկերության տնօրենի կողմից հայցվորին տրամադրվել է գրավոր հարցմամբ պահանջված ամբողջական տեղեկատվություն՝ հաշվի առնելով նաեւ, որ Ընկերության կաթնամթերքների արտադրանքի մակնշումը բովանդակում է պահանջվող տեղեկատվությունը: Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ առկա չէ տրամադրված տեղեկատվության ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակելու որեւէ փաստ:

Դատարանն, անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, եզրակացնում է, որ այն ենթակա է լուծման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ բավարարված հայցապահանջներին համապատասխան: Տվյալ դեպքում դատարան ներկայացված երկու հայցային պահանջների համար հայցվոր կողմը վճարել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարի մի մասը՝ 4.000 ՀՀ դրամ, ինչը պակաս է սույն տեսակի հայցադիմումների համար սահմանված պետական տուրքի գումարից՝ 2.000 դրամով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված 8-րդ մասի համաձայն՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում գործը լուծվել է ի վնաս հայցվոր կողմի, դատարանը եզրակացնում է, որ ներկայացուցչին վճարված դատական ծախսի գումարի բռնագանձման պահանջի մասով նույնպես պահանջը ենթակա է մերժման:

Հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

### Վ Ճ Ո Շ Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին 12.11.2011թ.-ի եւ 06.12.2011թ.-ի արված հարցումներով պահանջվող տեղեկատվությունը «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի կողմից չտրամադրելու համար վերջինիս տնօրեն Ստեփան Ասլանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու՝ 12.11.2011թ. հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 դրամի չափով, իսկ 06.12.2011թ.-ի կրկնակի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 դրամի չափով պահանջների մասին» մերժել:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 2.000 ՀՀ դրամ՝ որպես դատարան ներկայացված հայցադիմումի համար պակաս վճարված պետական տուրքի գումար:

Ղատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 1 ամիս հետո:

Սույն վճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ մինչեւ դրա օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ՂԱՏԱԿՈՐ՝

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ



**Գործ 7.**  
**ԻԱԿ-ն ընդդեմ**  
**«ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի**

## Գործի համառոտ նկարագրությունը

2011 թ.-ի նոյեմբերի 11-ին «Անկախ» շաբաթաթերթը դիմել էր «ՓՄՁ Ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն (այսուհետ՝ ՈւՎԿ) ՓԲԸ-ին՝ խնդրելով տեղեկություններ ՈւՎԿ-ի կողմից ֆինանսավորված ֆիզիկական եւ իրավաբանական անձանց եւ ֆինանսավորման չափերի մասին: Շաբաթաթերթի հարցմանը «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն պատասխանել է մերժմամբ՝ հայտնելով, որ խնդրվող տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք: Նշենք, որ հարցմամբ խնդրված տեղեկությունները վերաբերել են պետական միջոցներից տրամադրված ֆինանսավորմանը:

«Անկախ» շաբաթաթերթը դիմել էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնին, որպեսզի ԻԱԿ-ն օգնի շաբաթաթերթի լրագրողին անհրաժեշտ տեղեկությունները ստանալու հարցում: «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» 2011 թ.-ի նոյեմբերի 22-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմեց «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Բադալյանին՝ նշելով, որ խնդրվող տեղեկությունները վերաբերում են պետական միջոցներին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն ստեղծման օրվանից մինչեւ վերջին ամփոփման օրն ընկած ժամանակահատվածում քանի՞ իրավաբանական եւ ֆիզիկական անձի է ֆինանսավորել «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ-ին տրամադրված պետական միջոցներից,

2. Որո՞նք են այդ իրավաբանական եւ ֆիզիկական անձինք (խնդրում եմ նշել ամբողջական անունները),

3. «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ-ին տրամադրված պետական միջոցներից որքա՞ն միջոցներ են հատկացվել յուրաքանչյուր իրավաբանական եւ ֆիզիկական անձին:

ՈւՎԿ-ն տրամադրեց թերի, մասնակի պատասխան: Բացի այդ, պատասխանում ՈւՎԿ-ն հղում էր կատարել առեւտրային գաղտնիքին (բանկային գաղտնիք)՝ առանց մանրամասնելու, թե կոնկրետ ՀՀ որ օրենքի որ դրույթով է ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունը համարվում գաղտնիք:

Ուստի, 2011 թ.-ի դեկտեմբերի 23-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» դիմեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով պարտավորեցնել «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ին տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաեւ վարկային կազմակերպության տնօրենին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

Դատարանն իր վճիռը հրապարակեց 2012 թ.-ի մարտի 15-ին՝ մերժելով ԻԱԿ-ը հայցը: Դատարանը գտավ, որ պահանջվող տեղեկատվությունը առեւտրային գաղտնիք է:

## Գործի նյութերը

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանին

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն

լիազորված անձ՝ փաստաբան Աշոտ Ռաֆիկի Վարելյանից

Պատասխանող՝ «ՓՄՁ Ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

### ՀԱՅՅԱԴԻՍՈՒՄ

Տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին

#### Նախապատմություն.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (հետագայում՝ Հայցվոր) 22 նոյեմբերի 2011թ.-ի, թիվ 149-ի 8 թվադրամամբ հետեւյալ բովանդակությամբ գրավոր հարցում է կատարել «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի (հետագայում՝ Կազմակերպություն) տնօրեն՝ պարոն Արթուր Բադալյանին. «Հարգելի պարոն Բադալյան, մեզ է դիմել «Վ.Ի.Վ. Այսօր եւ վաղը» ՍՊԸ «Անկախ» շաբաթաթերթը՝ խնդրելով օգնել տեղեկատվություն ստանալու հարցում: Ի պատասխան 11.11.2011թ.-ի հարցման՝ «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն պատասխանել է մերժմամբ՝ հայտնելով, որ խնդրվող տեղեկությունները համարվում են «բանկային գաղտնիք»: Նշենք, որ 11.11.2011թ.-ի հարցումով խնդրված տեղեկությունները վերաբերել են պետական միջոցներից տրամադրված ֆինանսավորմանը:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ հստակեցված տեղեկությունները պետական միջոցներից տրամադրված ֆինանսավորման վերաբերյալ.

1. «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն, ստեղծման օրվանից մինչեւ վերջին ամփոփման օրն ընկած ժամանակահատվածում քանի իրավաբանական եւ ֆիզիկական անձի է ֆինանսավորել «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ-ին տրամադրված պետական միջոցներից:
2. Որո՞նք են այդ իրավաբանական եւ ֆիզիկական անձինք (խնդրում եմ նշել ամբողջական անունները):
3. «ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ-ին տրամադրված պետական միջոցներից որքա՞ն միջոցներ են հատկացվել յուրաքանչյուր իրավաբանական եւ ֆիզիկական անձին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:»:

Ի պատասխան վերոնշյալ հարցման՝ Կազմակերպությունը ներկայացրել է մասնակի պատասխան՝ հետեւյալ բովանդակությամբ «Հարգելի՛ տիկին Դոյրոյան, ի պատասխան Ձեր կողմից 22.11.2011թ.-ին ուղարկված եւ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից 25.11.2011թ.-ին ստացված տեղեկություն ստանալու մասին հարցման՝ հայտնում ենք, որ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն ստեղծման օրվանից մինչ 28.11.2011թ. ընկած ժամանակահատվածում ներգրավված պետական միջոցներով ֆինանսավորել է թվով 39 (երեսունինը) իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի: Մինչ օրս «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրվել է թվով 46 (քառասունվեց) վարկ՝ ընդհանուր 3.135.800.000 (երեք միլիարդ հարյուր երեսունհինգ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով: «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի վարկային ներդրումների ծավալը 28.11.2011թ.-ի դրությամբ կազմում է 2.566.975.000 (երկու միլիարդ հինգ հարյուր վաթսուևեց միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:

Ձեր հարցման 2-րդ եւ 3-րդ կետերի վերաբերյալ՝ հայտնում ենք, որ ակնկալվող տեղեկություններն իրենցից ներկայացնում են առետրային գաղտնիք (բանկային գաղտնիք), հետեւաբար նշված տեղեկությունների հրապարակումը հնարավոր կլինի միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում: Միեւնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն գործում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա, վերջինիս վերահսկողական դաշտում եւ առաջնորդվում է ֆինանսական համակարգի գործունեությունը կանոնակարգող ՀՀ օրենքներով եւ իրավական ակտերով:»:

Այսպիսով՝ ինչպես երեւում է Կազմակերպության պատասխանից, որը հղում կատարելով առետրային գաղտնիքին (բանկային գաղտնիք) առանց մանրամասացնելու, թե կոնկրետ, որ ՀՀ օրենքի դրույթով, հրաժարվել է հարցմանը ներկայացնել ամբողջական պատասխան:

Գտնում ենք, որ Կազմակերպության կողմից մասնակի պատասխան տրամադրելը (այսինքն՝ հայցվող տեղեկության 2-րդ եւ 3-րդ կետերի վերաբերյալ տեղեկություն չտրամադրելը) խախտում է Հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ ՀՀ օրենքներով երաշխավորված իրավունքը՝ տեղեկություն ստանալու իրավունքը՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

### **Հայցապահանջի իրավական հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության

- 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում

(հետագայում՝ Օրենք), որի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությունը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»: Նայն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը իր գործունեությունը ծավալել է 2009թ.-ի օգոստոսի 07-ի՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 07.08.2009 թ-ին տրված թիվ 28 լիցենզիայի հիման վրա: Ընկերությունը ստեղծվել է ՀՀ Կառավարության 2009թ.-ի հունիսի 26-ի 717-Ա որոշմանը սահմանված «Տնտեսության կայունացման վարկավորման» ծրագրի շրջանակներում եւ նպատակ ունի աջակցել փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացմանը: Կազմակերպությունը, հանդիսանալով վարկային կազմակերպություն, իր գործունեությունը կարգավորում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, որի 141 հոդվածի 3-րդ կետը սահմանում է հետեւյալը՝ ցանկացած անձի պահանջով վարկային կազմակերպությունը պարտավոր է նրան հնգօրյա ժամկետում հնարավորություն ընձեռել ծանոթանալու՝

- ա) վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների (առնվազն վերջին տարեկան) եւ հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճեններին,
- բ) վարկային կազմակերպության պետական գրանցման վկայականի եւ վարկային կազմակերպության կանոնադրության պատճեններին,
- գ) բաժնետոմսերի բաց բաժանորդագրության դեպքում՝ վարկային կազմակերպության բաժնետոմսերի թողարկման ազդագրի պատճենին,
- դ) վարկային կազմակերպության թողարկած պարտատոմսերի եւ այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաեւ այլ իրավական ակտերով նախատեսված տեղեկություններին՝ սահմանված ծավալով եւ կարգով:

Նույն օրենքի 222-րդ հոդվածի 13-րդ կետը սահմանում է՝ որպես բանկ գրանցվելուց եւ լիցենզավորվելուց հետո գործունեության տեսակը փոփոխած վարկային կազմակերպության հաճախորդների մասին տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իմաստով: Այսինքն՝ վերոնշյալ օրենքի հոդվածներից հետեւում է, որ վարկային կազմակերպությունների գործունեությունը չի կարող բանկային գաղտնիք հանդիսանալ, եւ Կազմակերպությունը, գրանցված լինելով, որպես վարկային կազմակերպություն չհանդիսանալով, բանկը չի կարող չտրամադրել հայցվող տեղեկատվությունը՝ մասնավորապես հղում կատարելով «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի վրա:

Բացի վերոգրյալից նշեմ նաեւ, որ Կազմակերպությունը, ստեղծվելով ՀՀ կառավարության կողմից եւ ֆինանսավորվելով ՀՀ պետական բյուջեից, ու այն

վարկերը (միջոցները) որոնք տրամադրվել են վարկառու կազմակերպություններին, տրամադրվել են պետական բյուջեից, իսկ ինչպես հայտնի է պետական բյուջեն ձեւավորվում է (ի թիվս այլ մուտքերի) հարկերից եւ տուրքերից, որոնք վճարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, եւ ՀՀ քաղաքացիները առնվազն իրավունք ունեն տեղեկացված լինել, թե ինչ միջոցների վրա են ծախսվում իրենց կողմից վճարված գումարները:

Այսպիսով՝ վերոնշյալից հետեւում է, որ փևտրվող տեղեկությունը պահպանվում է Կազմակերպության մոտ, որն էլ պարտավոր էր տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է Հայցվորի՝ ՀՀ Սահմանդրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքները: Որպես խախտում՝ Պատասխանող կողմը ենթակա է նաեւ վարչական պատասխանատվության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված հիմքերով՝ հետեւյալ պատճառաբանությամբ: Այսպես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, համաձայն որի.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով»: Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են սույն օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված գործերը:

Գտնում ենք, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի Պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել վարչական տույժի ենթարկել «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության տնօրենին, իր ապօրինի արարքի (անգործության) համար, որն արտահայտվել է Օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով, եւ պահանջելու, որ դրա համար՝ որպես պատասխանատվության միջոց, կիրառվի տուգանքը՝ 50.000 (հիսուն հազար) դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով մատնանշված օրենսդրական նորմերի պահանջներով՝ դատարանից խնդրում ենք՝

1. Պարտավորեցնել «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը:
2. «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության տնօրենին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Հայցվորի ներկայացուցիչ՝ Աշոտ Ռաֆիկի Վարելյան

Քաղաքացիական գործ ԵԿԴ-3189/02/11

**Վ Ճ Ի Ռ**

**Հանուն Հայաստանի Հանրապետության**

15.03.2012թ.

ք. Երեւան

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը հետեւյալ կազմով՝

Նախագահությամբ՝ դատավոր Ա. Սուքոյանի,

քարտուղարությամբ՝ Ս. Արոյանի,

մասնակցությամբ՝

հայցվորի ներկայացուցիչ՝ Ա. Վարելյանի,

պատասխանողի ներկայացուցիչներ՝ Ի. Իսախրյանի, Ռ. Բաղդյանի՝

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ-ի ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲ ընկերության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.12.2011թ.-ի որոշմամբ վարույթ է ընդունվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ-ի հայցն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲ ընկերության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին եւ նախապատրաստվել դատաքննության:

27.02.2012թ.-ի որոշմամբ գործով նշանակվել է դատաքննություն:

**Հայցվորների իրավական դիրքորոշումը**

Հայցվորը դատարան ներկայացրած հայցադիմումով հայտնել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ-ն 22.11.2011թ.-ի թիվ 149-ի 8 գրությամբ հարցում է կատարել «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ տնօրեն Ա. Բաղալյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲ ընկերության ստեղծման օրվանից մինչեւ վերջին ամփոփման օրն ընկած ժամանակահատվածում քանի՞ իրավաբանական եւ ֆիզիկական անձի է ֆինանսավորել «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲ ընկերությունը տրամադրված պետական միջոցներից:
2. Որոն՞ք են այդ իրավաբանական եւ ֆիզիկական անձինք:
3. «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲ ընկերությանը տրամադրված պետական միջոցներից որքա՞ն միջոցներ են հատկացվել յուրաքանչյուր իրավաբանական եւ ֆիզիկական անձանց:

Հայցվորը նշել է, որ Ընկերությունը, վերը նշված հարցմանը ի պատասխան, ներկայացրել է մասնակի պատասխան՝ հայտնելով, որ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲ ընկերությունը մինչև 28.11.2011թ. ընկած ժամանակահատվածում ֆինանսավորել է թվով 39 իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի, տրամադրվել է թվով 46 վարկ՝ ընդհանուր 3.135.800.000 ՀՀ դրամ գումարի չափով, իսկ Ընկերության վարկային ներդրումների ծավալը 28.11.2011թ.-ին կազմել է 2.566.975.000 ՀՀ դրամ: Հարցման 2-րդ եւ 3-րդ կետերին ի պատասխան՝ Ընկերությունը հայտնել է, որ նշված տեղեկություններն առետրային գաղտնիք են, եւ դրանց հրապարակումը հնարավոր կլինի միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ-ն հայտնել է, որ Ընկերությունը, հղում կատարելով առետրային գաղտնիքին, չի մանրամասնել, թե կոնկրետ օրենքի որ դրույթներով է հրաժարվել հարցմանը ներկայացնել ամբողջական պատասխան: Մատնանշելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, 27.1-րդ հոդվածը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ հոդվածի 3-րդ կետը՝ հայտնել է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալել է 07.08.2009թ.-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 07.08.2009թ.-ին տրված թիվ 28 լիցենզիայի հիման վրա: «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲ ընկերությունը ստեղծվել է ՀՀ կառավարության 26.06.2009թ.-ի 717-Ա որոշմամբ սահմանված «Տնտեսության կայունացման վարկավորում» ծրագրի շրջանակներում: Ընկերությունը վարկային կազմակերպություն է եւ իր գործունեությունը կարգավորում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով:

Հղում կատարելով վերը նշված օրենքի 14.1-րդ հոդվածի 3-րդ կետին, 22.2-րդ հոդվածի 13-րդ կետին՝ նշել է, որ վարկային կազմակերպությունների գործունեությունը չի կարող բանկային գաղտնիք հանդիսանալ եւ չի կարող չտրամադրել հայցվող տեղեկատվությունը՝ հղում անելով «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի վրա: Վերոգրյալի հիման վրա հայցվորի ներկայացուցիչ Ա. Վարելջյանը հայտնել է, որ խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքերը:

Հայցվորի ներկայացուցիչը, ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով եւ 223-րդ հոդվածի 2-րդ կետով, գտել է, որ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲ ընկերության տնօրենին պետք է վարչական տույժի ենթարկել:

### **Խնդրել է**

- պարտավորեցնել Ընկերությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը,
- Ընկերության տնօրենին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Դատական նիստի ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Ա. Վարելջյանը պնդեց իր դիրքորոշումը եւ խնդրեց բավարարել հայցը:



### Պատասխանողի իրավական դիրքորոշումը

Պատասխանող «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲ ընկերության ներկայացուցիչներ Ի. Իսախրյանը եւ Ռ. Բաղդյանը դատարան ներկայացրած հայցադիմումի պատասխանով հայտնել են, որ հայցն անհիմն է՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

Պատասխանողը 28.11.2011թ.-ի թիվ 317-11 գրությամբ հիմնավորել է այն հանգամանքը, որ պատասխանողը խուսափել է տեղեկատվություն տրամադրելուց եւ գործելով օրենքի շրջանակներում տրամադրել է միայն այն տեղեկատվությունը, որն իրավունք ուներ տրամադրելու:

Ներկայացուցիչները Նշել են նաեւ, որ պատասխանողն իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ է ներկայացնում իր նկատմամբ վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմնին, ինչպես նաեւ սահմանված հրապարակման ենթակա տեղեկատվությունը հրապարակում է մամուլով եւ տեղադրում է իր ինտերնետային կայքում:

Անդրադառնալով հայցվող տեղեկատվության 2-րդ եւ 3-րդ կետերին՝ հայտնել են, որ Ընկերությունը եւ իր հաճախորդները հանդիսանում են ձեռնարկատիրական գործունեություն ծավալող սուբյեկտներ, ուստի հաճախորդներին տրամադրված վարկի մասին տեղեկությունները հանդիսանում են ինչպես պատասխանողի, այնպես էլ հաճախորդների առեւտրային գաղտնիքը:

Մատնանշելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածը՝ խնդրել է հայցն ամբողջությամբ մերժել:

Պատասխանող կողմը դատական նիստի ընթացքում պնդել է իր հայտնած դիրքորոշումը եւ հայտնել, որ Ընկերությունը վարկային կազմակերպություն է եւ հիմնադրվել է «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2009թ.-ին, ինչպես նաեւ գրանցվել եւ լիցենզավորվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից եւ իր գործունեությունը ծավալում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվային դաշտում:

Նշել է, որ Ընկերությանը տրամադրվել է բյուջետային վարկ, ինչի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության հետ կնքվել է վարկային պայմանագիր, որի համաձայն պատասխանողը մարում է կիսամյակային կտրվածքով սկսած 2009թ.-ից, իսկ վարկի հիմանական գումարը պարտավորվել է մարել սկսած 2014թ.-ի հունիսի 10-ից: Ընկերությունը հանդես է գալիս որպես առեւտրային կազմակերպություն եւ իր անունից տրամադրում է առեւտրային վարկեր ձեռնարկատիրական գործունեություն ծավալող սուբյեկտներին, որոնց վերաբերյալ տրամադրվող առեւտրային վարկերի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի իմաստով առեւտրային գաղտնիք է:

Ներկայացուցիչները հայտնել են, որ վարկավորման գործունեության մեջ գործարար շրջանառության սովորույթ է վարկատուի կողմից իր հաճախորդների, ներառյալ՝ նրանց տրամադրված վարկի վերաբերյալ տեղեկությունները չիրապարակելու կանոնը: Նշված կանոնի պահպանումը շատ կարեւոր է վարկատուի եւ իր հաճախորդների միջեւ վստահության մթնոլորտի ձեւավորման համար: Հաճախորդներն են ընտրում այն կազմակերպությունը, որի ծառայություններից մտադիր են օգտվել, որին վստահում են եւ որից ակնկալում

են վերջինիս գործունեության ընթացքում դրսևորելու ձեռնարկատիրական գործունեության ոլորտում ձեւավորված վարքագիծ՝ պահպանելու վարկավորման գործընթացում հաճախորդների համար առևտրային արժեք ներկայացնող տեղեկությունների գաղտնիությունը, ուստի հաճախորդների մասին տեղեկություններ տրամադրելը կարող է վնասել ինչպես պատասխանողի գործարար համաբն, այնպես էլ իր հաճախորդների ձեռնարկատիրության գործունեությունը, ինչը հանգեցնում է հաճախորդների իրավունքների խախտմանը:

Հայտնել են նաեւ, որ Ընկերության եւ հաճախորդների միջեւ կնքված վարկային պայմանագրերի շրջանակներում վարկը տրամադրվում է հաճախորդի կողմից ներկայացված գործունեության ծրագրին համապատասխան, վարկի տրամադրման եւ սպասարկման ողջ ընթացքը, այդ թվում՝ վարկի տոկոսների եւ մայր գումարի մարումները կատարվում են անկանխիկ ձեւով՝ հաճախորդի բանկային հաշիվներով: Պատասխանողը «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ չհանդիսանալով նշված օրենքի իմաստով երրորդ անձ՝ տիրապետում է բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությանը, ինչի հրապարակումը եւ տրամադրումը արգելվում է «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ եւ 9-րդ հոդվածներով, հետեւաբար՝ պատասխանողը, չտրամադրելով ողջ տեղեկատվությունը, գործել է օրենքի շրջանակներում:

Անդրադառնալով պնդմանը, թե պատասխանող Ընկերությունը խախտել է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով սահմանված հայցվորի իրավունքը՝ մատնանշել է ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը, որոնք սահմանում են անձի սահմանադրական իրավունքների եւ ազատությունների սահմանափակման հնարավորություն այն դեպքում, երբ նման սահմանափակումը պահանջվում է այլոց իրավունքների պաշտպանության նպատակով: Պատասխանող կողմը նշել է, որ ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածով ամրագրված դրույթը չի ներառում առևտրային կազմակերպություններին դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ պատասխան ստանալու իրավունքը:

Ավելացրել են նաեւ, որ Ընկերությունը ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամկետում մամուլում հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները եւ աուդիտային եզրակացությունը, որպիսի տեղեկությունը տրամադրվում է նաեւ պատասխանողի ինտերնետային կայքում, իսկ հայցվորի կողմից հայցվող 2-րդ եւ 3-րդ կետերի վերաբերյալ տեղեկատվությունը չի ներառվում պատասխանողի ֆինանսական հաշվետվությունների մեջ, որոնք ենթակա են պարտադիր հրապարակման եւ ներկայացման ՀՀ կենտրոնական բանկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 03.03.2005թ.-ի թիվ 93-Ա որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, նրանց ներկայացումը եւ հրապարակումը» Կանոնակարգ 15-ի:

Անդրադառնալով Ընկերության տնօրենին ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջին՝ հայտնել են, որ այն եւս անհիմն է, քանի որ վերջինս նշված հոդվածով սուբյեկտ չէ: Վերոգրյալի հիման վրա խնդրել են հայցը մերժել՝ անհիմն լինելու պատճառով:

### Գործի լուծման համար եական նշանակություն ունեցող փաստերը

Դատարանը գտնում է, որ սույն գործի քննության համար եական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 22.11.2011թ.-ի թիվ 149-ի 8 գրությամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ-ն դիմել է «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲ ընկերությանը՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ պետական միջոցներից տրամադրված ֆինանսավորման վերաբերյալ:
2. «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲ ընկերությունը 29.11.2011թ.-ի թիվ 317-11 գրությամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ-ի ուղղված 1-ին հարցին պատասխանել է, իսկ 2-րդ և 3-րդ հարցերի վերաբերյալ հայտնել է, որ դրանք ներկայացնում են առևտրային գաղտնիք:
3. «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲ ընկերության Կանոնադրությունը /գրանցված ՀՀ Կենտրոնական բանտում 16.08.2011թ.-ի թիվ 1/917Ա որոշմամբ/ սահմանում է, որ Ընկերությունը իրավունք ունի իրականացնել վարկային կազմակերպության գործունեություն՝ իրականացնելով փոխառությունների ներգարվվում, սմանատիպ գործարքների կնքում, վարկերի, փոխառությունների տրամադրում, պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման իրականացում և այլն:

### Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վերոգրյալի հիման վրա, վերլուծելով և գնահատելով գործի տվյալներն ու դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից բյուջեներից ֆինանսավորվող ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա: Նշված իրավանորմի տրամաբանությունից բխում է, որ օրենսդիրը տվյալ օրենքի գործողության ոլորտը սահմանափակել է՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց դիմելով:

Սույն քաղաքացիական գործով հայցվորը դատարան է դիմել տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջով՝ որպես իրավական հիմք մատնանշելով ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իրավանորմերը:

Դատարանը ելնելով վերը նշված իրավանորմերի տրամաբանական վերլուծությունից՝ գալիս է այն եզրահանգման, որ պատասխանողը, հանդիսանալով վարկային կազմակերպություն, իր գործունեությունը ծավալում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվային դաշտում և չի գտնվում մատնանշված իրավանորմերի սուբյեկտների շրջանակում: Տևտեսական շրջանառությունում պատասխանողը հանդես է գալիս որպես առևտրային կազմակերպություն և իր անունից տրամադրում է առևտրային վարկեր ձեռնարկատիրական գործունեություն ծավալող սուբյեկտներին:

«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարկային կազմակերպության գործունեություն է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն փոխառություններ ներգարվվելը եւ /կամ/ նմանատիպ գործարքներ կնքելը եւ /կամ/ վարկեր տրամադրելը կամ սույն օրենքով սահմանված այլ ներդրումներ կատարելը:

Այսինքն՝ վարկային կազմակերպությունը, իրականացնելով ձեռնարկատիրական գործունեություն, որպես իր գործունեության հիմնական նպատակ է դիտում շահույթի ստացումը եւ այն մասնակիցների միջեւ բաշխումը, հետեւաբար՝ հանդիսանում է առեւտրային կազմակերպություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվությունը ծառայողական, առեւտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առեւտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար՝ տեղեկությունները, որոնք չեն կարող ծառայողական, առեւտրային կամ բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով: Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետեւում է, որ տեղեկատվությունը առեւտրային կամ բանկային գաղտնիք է, երբ այն ունի առեւտրային արժեք, եւ առկա է կողմի ցանկությունը տեղեկությունը գաղտնի պահելու համար:

Սույն քաղաքացիական գործով հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ-ն պահանջել է «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ից տրամադրել պետական միջոցներից տրամադրված ֆինանսավորման վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները.

1. «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ ստեղծման օրվանից մինչեւ վերջին ամփոփման օրն ընկած ժամանակահատվածում քանի՞ իրավաբանական եւ ֆիզիկական անձի է ֆինանսավորել «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ տրամադրված պետական միջոցներից:
2. Որոն՞ք են այդ իրավաբանական եւ ֆիզիկական անձիք:
3. «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ տրամադրված պետական միջոցներից որքա՞ն միջոցներ են հատկացվել յուրքանջյուր իրավաբանական եւ ֆիզիկական անձանց:

«ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ 29.11.2011թ.-ի թիվ 317-11 գրությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 1-ին հարցին ներկայացրել է ամբողջական պատասխան, իսկ 2-րդ եւ 3-րդ հարցերի վերաբերյալ հայտնել է, որ դրանք իրենցից ներկայացնում են առեւտրային գաղտնիք: Դատարանը հիմնավոր է համարում պատասխանող կողմի դիրքորոշումն այն մասին, որ հայցվորը սխալ է մեկնաբանել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի դրույթները: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային

գաղտնիք: Սույն դեպքում՝ դատարանը, հաստատված համարելով, որ պահանջվող տեղեկատվությունը հանդիսանում է առևտրային գաղտնիք, գտնում է հայցվորի պահանջը վերը նշված հիմնավորումների ուժով մերժման ենթակա: Դատարանը, անդրադառնալով հայցվորի դիրքորաշմանը, թե Ընկերությունը վարկային կազմակերպություն է, եւ «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14.1-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն վարկային կազմակերպությունների գործունեությունը չի կարող բանկային գաղտնիք հանդիսանալ եւ չի կարող չտրամադրել հայցվող տեղեկատվությունը՝ հղում անելով «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի վրա, արձանագրում է, որ այն անհիմն է՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14.1-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ցանկացած անձի պահանջով վարկային կազմակերպությունը պարտավոր է նրան հնգօրյա ժամկետում հնարավորություն ընձեռել ծանոթանալու վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների /ամսվազն վերջին տարեկան/ եւ հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճեններին: «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարկային կազմակերպությունները պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները եւ աուդիտային եզրակացությունը:

Տվյալ պարագայում՝ դատարանը հիմնավոր է համարում պատասխանողի փաստարկն առ այն, որ Ընկերությունը վարկային կազմակերպություն է եւ ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում մամուլում հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները եւ աուդիտային եզրակացությունը, որպիսի տեղեկությունը տրամադրվում է նաեւ պատասխանողի ինտերնետային կայքում, իսկ հայցվորի կողմից հայցվող 2-րդ եւ 3-րդ կետերի վերաբերյալ տեղեկատվությունը չի ներառվում պատասխանողի ֆինանսական հաշվետվությունների մեջ, որոնք ենթակա են պարտադիր հրապարակման եւ ներկայացման ՀՀ Կենտրոնական բանկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի հորիզոնի 03.03.2005թ.-ի թիվ 93-Ա որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, նրանց ներկայացումը եւ հրապարակումը» Կանոնակարգ 15-ի:

Դատարանը, անդրադառնալով հայցվորի պնդմանը, թե պատասխանողը, հայցվող տեղեկատվությունը չտրամադրելով, ոտնահարել է իր՝ ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածով եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով ամրագրված իրավունքները, գտնում է, որ նշված իրավանորմերում ամրագրված դրույթները իրենց մեջ չեն ներառում առևտրային կազմակերպություններին դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ պատասխան ստանալու իրավունքը, հետեւաբար՝ վարկային կազմակերպությունը որպես այդպիսին չի գտնվում նշված իրավանորմների սուբյեկտների շարքում:

Դատարանն, անդրադառնալով Ընկերության տնօրենին 50.000 ՀՀ դրամ գումարի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջին, գտնում է՝ այն անհիմն է՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական իրավախատումների վերաբերյալ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը սահմանում է, որ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ

տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով: Վերը նշված հոդվածից բխում է, որ տվյալ իրավանորմը տարածվում է միայն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց վրա, հետեւաբար՝ սույն օրենքի իմաստով Ընկերության տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը նույնպես ենթակա է մերժման:

### Ղատական ծախսերը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից եւ փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության եւ գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջեւ բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համապատասխան:

Սույն դեպքում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվորը ներկայացրել էր երկու ոչ գույքային պահանջ՝ միջնորդելով պետական տուրքի վճարումը տարածամեկտեղ, իսկ հայցը մերժելու պարագայում, դատարանը գտնում է, որ հայցվորից հօգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձել 8.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

### Վ Ճ Ո Շ Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ-ի հայցն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին մերժել:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ-ից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 8.000 /ուրժ հազար/ ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ՂԱՏԱՎՈՐ՝ Ա. ՍՈՒԲՈՅԱՆ

**Գործ 8.**  
**ԻԱԿ-ն ընդդեմ**  
**Հայաստանի Գեմերատական**  
**կուսակցության**

## Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ.-ի ապրիլի 25-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Հայաստանի դեմոկրատական կուսակցության ղեկավար Արամ Սարգսյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

ՀԴԿ-ն ԻԱԿ-ի հարցումը թողեց անպատասխան: 2012թ.-ի մայիսի 16-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցում ուղարկեց Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը, որը նույնպես մնաց անպատասխան:

Արդյունքում, 2012թ.-ի հուլիս 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմեց Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ՀԴԿ-ին 5-օրյա ժամկետում տրամադրել ամբողջական տեղեկատվություն:

2012թ.-ի դեկտեմբերի 21-ին դատարանը հրապարակեց իր վճիռը, որով ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի պահանջը ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ պարտավորեցնել Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը:

Դատական ծախսերի փոխհատուցման, մասնավորապես՝ ԻԱԿ-ի կողմից փաստաբանին վճարված վարձատրության գումարի փոխհատուցման պահանջը դատարանը բավարարեց մասնակի՝ պարտավորեցնելով պատասխանողին փոխհատուցել ԻԱԿ-ի կողմից վճարված պետական տուրքի գումարը եւ փաստաբանի վարձատրության գումարի մի մասը՝ 100.000 դրամ:

2013թ.-ի հունվարի 21-ին ՀԴԿ-ն բողոքարկեց Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռը ՀՀ վերաքննիչ դատարան: Դատարանն իր վճիռը հրապարակեց 2013թ.-ի մայիսի 2-ին. որոշեց ՀԴԿ վերաքննիչ բողոքը մերժել եւ ուժի մեջ թողնել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ ԻԱԿ-ի օգտին կայացված վճիռը:

2013թ.-ի մայիսի 24-ին ՀԴԿ-ն բողոքարկեց ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը վճարեկության կարգով: Սակայն, 2013թ.-ի հունիսի 26-ին կայացրած որոշմամբ ՀՀ վճարեկ դատարանը վերադարձրեց ՀԴԿ-ի վերաքննիչ բողոքը: Այսինքն՝ ԻԱԿ-ի օգտին կայացված՝ դատարանի վճիռը մնաց ուժի մեջ:

Արդյունքում, ճանաչվեց ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը, իսկ ՀԴԿ-ն պետք է տրամադրի ԻԱԿ-ի պահանջած տեղեկատվությունը, ինչպես նաեւ փոխհատուցի ԻԱԿ-ի կողմից վճարված պետական տուրքի գումարը եւ փաստաբանի վարձատրության գումարը՝ 100.000 դրամի չափով:



## Գործի նյութերը

ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐԶ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական  
կազմակերպություն, նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Պատասխանող՝ «Հայաստանի Դեմոկրատական»  
Կուսակցություն

19.06.2012թ.

### Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին

#### 1. Գործի մինչդատական նախապատմությունն ու փաստերը

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպու-  
թյունը ԱԺ ընտրություններին մասնակցող «ԲՀԿ», «Ժառանգություն», «ՀՅԴ»,  
«ՀԴԿ», «ՀԿԿ», «ՀՀԿ», «ՄՀԿ», «ՕԵԿ» կուսակցություններին ու «ՀԱԿ» դաշին-  
քին 25.04.2012 թ-ին նախընտրական քարոզարշավ իրականացնելու ծախսե-  
րի վերաբերյալ «Տեղեկատվություն ստանալու հարցում» է արել: Հարցմանը  
կուսակցությունների մի մասը պատասխանել է, իսկ «Հայաստանի Դեմոկրա-  
տական» կուսակցությունը չի պատասխանել: Վերջինիս ուղղված հարցումը  
հետ-յալն է եղել. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ եւ 27.1 հոդ-  
վածների, «Տեղեկատվության ազատության մասին» դրույթներով՝ եւս մեկ  
անգամ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրու-  
թյամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրակա-  
նացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական  
միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների  
գումարը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝  
տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստա-  
նալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու  
հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային քաղվածքի օրինակ-  
ներով: 16.05.2012թ.-ին «Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում» է  
ուղարկվել՝ հետեւյալ բովանդակությամբ. «Հարգելի պարոն Սարգսյան, 2012  
թ.-ի ապրիլի 25-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» տեղեկություն  
ստանալու հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղե-  
կությունները.

1. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրու-  
թյամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրակա-  
նացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական

միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

Սակայն, «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» մինչ օրս պատասխան չի ստացել: Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները: Նշված փաստը հաստատվում է 16.05.2012թ. փոստային քաղվածքով եւ հարցման օրինակով: Կրկնակի հարցմանը եւս պատասխան չի տրվել:

## 2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության

- 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա»: Սույն օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կուսակցությունը պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, մամուլում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին հաշվետվություն (այսուհետ՝ հաշվետվություն) եւ օրենքով նախատեսված դեպքերում դրա վերաբերյալ աուդի-

տորական եզրակացությունը, ինչպես նաև սահմանված կարգով այն տեղադրել ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում»:

Վերը նշվածից հետևում է, որ ՀԿ-ի կողմից հարցված տեղեկատվությունը գաղտնի չէ, ավելին՝ բաց տեղեկատվություն է, իսկ Կուսակցությունն էլ պարտավոր է տարվա կտրվածքով այդ մասին մամուլով հրապարակել, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանողը չի տրամադրել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի օրենսգրքի 2-րդ, 87-րդ հոդվածներով՝

**Խնդրում են՝**

«Հայաստանի Դեմոկրատական» Կուսակցությանը պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրելու հայցված տեղեկատվությունը հետեւյալի մասին.

1. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:
3. Խնդրում ենք լուծել նաև պետական տուրքի եւ դատական ծախսերի հարցը:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. լիազորագիր,
3. հարցումների օրինակները,
4. փոստային քաղվածքներ:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ՝

Շուշան Դոյրոյան

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

21.12.2012թ.

ք.Երեւան

ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը

Նախագահությամբ՝ դատավոր Ա. Մեժլումյանի

Քարտուղարությամբ՝ Ա. Գալիկյանի

Մասնակցությամբ՝ Հայցվորի ներկայացուցիչներ՝ Կ. Մեժլումյանի

Դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 02568394, պետական գրանցման համար թիվ 211.171.01863) ընդդեմ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, փաստաբանի վարձատրության՝ 250.000 ՀՀ դրամ գումարի, նախապես վճարված պետական տուրքի՝ 4.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջների մասին.

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Վերոհիշյալ հայցադիմումը ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 09.07.2012թ.-ի որոշմամբ ընդունվել է վարույթ եւ նշանակվել նախնական դատական քննության:

Քանի որ նախնական դատական նիստի ընթացքում իրականացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.8 հոդվածով նախատեսված գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում կատարվող բոլոր գործողությունները, ուստի ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 18.09.2012թ.-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

Գործի դատաքննությունն ավարտվել է 30.10.2012թ.-ին, եւ 13.11.2012թ.-ին նշանակվել է վճռի հրապարակման օր:

ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 13.11.2012թ.-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է ու այն նշանակվել է քննության: Գործի դատաքննությունն ավարտվել է 12.12.2012թ.-ին, եւ 21.12.2012թ.-ին նշանակվել է վճռի հրապարակման օր:

**Հայցվորի փաստարկները եւ իրավական դիրքորոշումը**

Դատարան ներկայացրած հայցադիմումով հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության անունից նախագա-

հը՝ Շ. Դոյոյանը, հայտնել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը ԱԺ ընտրություններին մասնակցող «ԲՀԿ», «Ժառանգություն», «ՀՅԴ», «ՀԿԿ», «ՀՀԿ», «ՄՀԿ», «ՕԵԿ» կուսակցություններին ու «ՀԱԿ» դաշինքին 25.04.2012թ.-ին նախընտրական քարոզարշավ իրականացնելու ծախսերի վերաբերյալ «Տեղեկատվություն ստանալու հարցում» է արել: Հարցմանը կուսակցությունների մի մասը պատասխանել է, իսկ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը հարցմանն ընդհանրապես չի պատասխանել, իսկ վերջինիս ուղարկված հարցման բովանդակությունը հետեւյալն է եղել. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» դրույթներով՝ եւ մեկ անգամ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը»:

Վկայակոչելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի դրույթները՝ հայցվորը նշել է, որ այդ փաստը հաստատվում է հարցման եւ փոստային քաղվածքի օրինակներով:

Հայտնել է, որ 16.05.2012թ.-ին «Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում» է ուղարկվել՝ հետեւյալ բովանդակությամբ. «Հարգելի պարոն Սարգսյան, 2012թ.-ի ապրիլի 25-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը»:

Սակայն, «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» մինչ օրս պատասխան չի ստացել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւ մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոհիշյալ տեղեկությունները»:

Վերը նշված փաստը հաստատվում է 16.05.2012թ.-ի փոստային քաղվածքով եւ հարցման օրինակով, իսկ կրկնակի հարցմանը եւս պատասխան չի տրվել:

29.05.2012թ.-ին թիվ 171-ի 4 համարի գրությամբ հետեւյալ բովանդակությամբ Տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել է «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանին՝ տեղեկատվություն ստանալու հարցում, որտեղ նշել է. «Հարգելի պարոն Մարտիրոսյան, վկայակոչելով «Տեղեկատվության ազատության մա-

սին» ՀՀ օրենքի 1-ին, 6-րդ, 9-րդ հոդվածների դրույթները, Սահմանադրության 27-րդ եւ 27.1 հոդվածները, ինչպես նաեւ «Կուսակցության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ հայցվոր կողմը նշել է, որ ՀԿ-ի կողմից հարցված տեղեկատվությունը գաղտնի չէ, ավելին՝ բաց տեղեկատվություն է, իսկ Կուսակցությունն էլ պարտավոր է տարվա կտրվածքով այդ մասին մամուլով հրապարակել, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ եւ օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների եւ պատասխանողի պարտականության՝ պատասխանողը չի տրամադրել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, ուստի ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով՝ հայցվոր կողմը դատարանից խնդրել է պատասխանող «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրելու հայցված տեղեկատվությունը՝ հետեւյալի մասին.

1. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը»:

Միաժամանակ խնդրել է լուծել պետական տուրքի ու դատական ծախսերի հարցը: Գործի քննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչները պնդել ու հրապարել են հայցը՝ դատարանից խնդրելով այն ամբողջությամբ բավարարել: Հայցվորի ներկայացուցիչ Կ. Մեժլումյանը դատական նիստի ընթացքում ներկայացրել է փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիրը, այնտեղ նշված ծառայությունների մատուցման գումարը ծառայություններ մատուցողին փոխանցված լինելու մասին վճարման հանձնարարականը, ինչպես նաեւ ծառայությունների մատուցման հաշիվը ու, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի նախադեպային մի շարք որոշումներ, դատարանից խնդրել է լուծել դատական ծախսի հարցը եւ պատասխանողից բռնագանձել կազմակերպության կողմից վճարված գումարը:

Նշել է նաեւ, որ հայցվորը դիմել է ՀՀ-ում գործող բոլոր կուսակցություններին, եւ հարցմանը չեն պատասխանել «ԲՀԿ» կուսակցությունը, «ՀԱԿ» դաշինքն ու «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը, որոնցից առաջինը այդ տեղեկատվությունը տրամադրել է դատարանում գործի քննության ընթացքում, ուստի իրենց հրաժարվել են հայցից, «ՀԱԿ» դաշինքն չի հանդիսանում իրավաբանական անձ, ուստի վերջինիս դեմ դատարան դիմել հնարավոր չէ, այստեղ առկա է խնդիր, իսկ քննվող գործով «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը եւս չի պատասխանել հարցմանը ու չի պատրաստվում պատասխանել, իսկ հայցվորը դիմել է կոնկրետ կուսակցություններին, որովհետեւ իրեն անհրաժեշտ էր տեղեկատվություն կոնկրետ այդ պահի դրությամբ ու այդ տեղեկատվությունը կազմակերպությունը նպատակահարմար է գտել ստանալու սկզբնաղբյուրներից՝ կոնկրետ կուսակցություններից:

### **Պատասխանողի փաստարկները եւ իրավական դիրքորոշումը**

Պատասխանող «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը, լինելով պատշաճ ծանուցված գործով նշանակված բոլոր դատական նիստերի, այդ թվում՝ նախապատրաստական ու դատաքննության մասին, դատարան չի

Ներկայացել, դատական նիստին չի մասնակցել, ինչպես նաև գործի քննության ընթացքում դատարանին բանավոր կամ գրավոր դիրքորոշում չի արտահայտել, չի առարկել հայցի դեմ, այսինքն՝ լինելով պատշաճ ծանուցված գործի քննությանը՝ դատարանին անհայտ պատճառներով չի ներկայացել եւ ԶԶ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95 հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով երկշաբաթյա ժամկետում դատարան չի ներկայացրել հայցադիմումի պատասխան, ինչպես նաև չի ներկայացվել դիմում՝ պատասխան ներկայացնելու ժամկետը երկարաձգելու կամ դատական նիստին չներկայանալու եւ նիստը հետաձգելու վերաբերյալ, ուստի դատարանը, ղեկավարվելով ԶԶ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասով, պատասխանողի կողմից սահմանված ժամկետում պատասխան չներկայացնելը գնահատել է որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած եւ դատաքննությամբ հիմնավորված փաստերի ընդունում:

ԶԶ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին պատշաճ ձեւով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի (դիմողի) չներկայանալը արգելք չէ գործի քննության համար:

ԶԶ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախնական դատական նիստի մասին պատշաճ ծանուցված հայցվորի կամ պատասխանողի, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցների չներկայանալու դեպքում նախնական դատական նիստը կարող է անցկացվել նրանց բացակայությամբ:

Տվյալ դեպքում՝ գործը քննվել է պատասխանող դատավարության կողմի բացակայությամբ՝ ելնելով վերոհիշյալ հոդվածների պահանջներից:

**Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը**

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 25.04.2012թ.-ի գրությամբ հարցում է կատարվել «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը՝ խնդրելով տրամադրելու տեղեկատվություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

- «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
- Ծախսած գումարից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը»:

2. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 16.05.2012թ.-ի գրությամբ կրկնակի հարցում է կատարվել «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը՝ խնդրելով տրամադրելու դեռեւս 25.04.2012թ.-ի հարցմամբ պահանջված տեղեկատվությունը՝ հետեւյալ բովանդակությամբ.

- «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
- Ծախսած գումարից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական մի-

չոցները, որքա՞նը կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը»:

Նշվել է, որ մինչ օրս պատասխան չի ստացվել, ուստի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը մեկ անգամ եւս կուսակցությունից խնդրել է տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

3. Համաձայն փոստային համապատասխան բաժանմունքի «Հայփոստ»-ի կողմից կնիքով վավերացված քաղվածքի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ կողմից 25.04.2012թ.-ին հարցումներ են ուղարկվել ՀՀ գործող կուսակցություններին ու դաշինքին, այդ թվում՝ ՀԿԿ:

4. Համաձայն փոստային համապատասխան բաժանմունքի «Հայփոստ»-ի կողմից կնիքով վավերացված քաղվածքի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 16.05.2012թ.-ին հարցումներ են ուղարկվել ՀՀ գործող կուսակցություններին ու դաշինքին, այդ թվում՝ Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը:

5. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության կողմից «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 25.04.2012թ.-ի եւ 16.05.2012թ.-ի հարցումներից ոչ մեկին չի պատասխանվել, գործի քննությանը կուսակցությունը չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը ու հայցադիմումի գրավոր պատասխան չի ներկայացրել:

6. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ու «Մեժլումյան եւ Պետրոսյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ միջեւ 17.07.2012թ.-ի կնքվել է փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր, ըստ որի՝ պայմանագրով նախատեսված ՀԿԿ դեմ նարկայացվող՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին գործով մատուցվող ծառայությունների դիմաց պետք է վճարվեր 250.000 ՀՀ դրամ գումար: Նշված պայմանագրի հիման վրա կողմերը 17.07.2012թ.-ի կազմել ու հաստատել են ծառայությունների մատուցման հաշիվը, որտեղ որպես փաստաբանական ծառայության վճարը կազմել է 250.000 ՀՀ դրամ գումար:

7. Ըստ 18.07.2012թ.-ի վճարման թիվ 89 հանձնարարականի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից «Մեժլումյան եւ Պետրոսյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ հաշվին փաստացի փոխանցվել է 250.000 ՀՀ դրամ գումար՝ ըստ 17.07.2012թ. կողմերի միջեւ կնքված պայմանագրի:

### **Ղատարանի իրավական վերլուծությունները**

Ղատարանը, ուսումնասիրելով գործի հանգամանքները եւ ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտավ, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, փաստաբանի վարձատրության՝ 250.000 ՀՀ դրամ գումարի, նախապես վճարված պետական տուրքի՝ 4.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջների մասին հայցը ենթակա է բավարարման մասնակի՝ ելնելով հետեւյալ պատճառաբանություններից.



Համաձայն ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ամրագրում է. «Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ:

Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչ արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ու «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» Միջազգային դաշնագրի (16 դեկտեմբեր 1966թ.) 14-րդ հոդվածի 1-ին կետի՝ բոլոր անձինք հավասար են դատարանների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքը կատարվում է ժողովրդավարական հասարակությունում (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը՝ արտահայտած Էյրին ընդդեմ Իռլանդիայի, 1979թ. հոկտեմբերի 9-ի վճռում, 12-14 էջեր և Այթ-Մուհուբն ընդդեմ Ֆրանսիայի գործերով, 28.10.1998թ.):

Համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է՝ 6-րդ հոդվածի 1-ին կետը յուրաքանչյուրի համար երաշխավորում է իր քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է «դատարանի իրավունքը», որում դատարան դիմելու իրավունքը, այն է՝ քաղաքացիական գործով

դատարանում հայց հարուցելու իրավունքը, այդ իրավունքի մի մասն է միայն:

Ռատական վարույթի արդար, հրապարակային եւ արագ բնութագրիչները արժեք չեն ունենա, եթե հիշյալ գործընթացներին ընթացք չի տրվում:

Քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս իրավունքի գերակայություն գոյություն ունենալ չի կարող, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (inter alia (ի թիվս այլ դեպքերի՝ Գուլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1975թ. հունվարի 21-ի վճիռ, շարքեր A թիվ 18, 16-18 էջեր, կետ 34 in fine, ինչպես նաեւ 2-ն եւ այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (GC), թիվ 29392/95, 91-93-րդ կետեր, ՄԻԵԿ 2001-Վ):

Եվրոպայի խորհրդին Յայաստանի անդամակցելու պահից սկսած (2002թ. ապրիլի 26)՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պետք է հաշվի առնվի ՀՀ օրենսդրությունը մեկնաբանելիս:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը հավասար հնարավորություններ է ընձեռում դատավարության կողմերին սեփական իրավունքները պաշտպանելու համար: Հայցի պաշտպանության դատավարական միջոցների տնօրինման ձեւերը սահմանվում են դատական վեճի տնօրինման սկզբունքի հիման վրա, որի ուժով կողմերը որոշում են վեճի հետագա ընթացքն ու լուծման ճանապարհները՝ հայցի իրավունքի՝ պաշտպանության միջոցների տնօրինման միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը հստակ սահմանում է դատարան դիմելու իրավունքը, այն է՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի պաշտպանության համար: Նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի վերլուծությունից հետեւում է, որ դատարանը գործի քննության ընթացքում կայացնում է ըստ էության դատական ակտ միայն այն դեպքերում, երբ վերջինիս կողմից ուսումնասիրվում են գործի հանգամանքները եւ ներկայացված ապացույցները, երբ յուրաքանչյուր ապացույց գնահատվում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածը ուղղակի սահմանում է, որ դատարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը, ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերին եւ օրենքներին համապատասխան:

ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտ-

պանության իրավունք, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում եւ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

Դատաքննության ողջամիտ ժամկետը այդ դատաքննության արդարացիության գրավականներից մեկն է:

Ողջամիտ ժամկետի սկզբունքը ունի լայն պայմանագրային, ինչպես նաեւ սովորութային բնույթ եւ կիրառություն: Որպես այդպիսի սովորութային բնույթի ցուցադրում՝ կարելի է վկայակոչել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի բազմաթիվ նախադեպեր (inter alia (ի թիվս)՝ Bagetta case (Baggetta Case, 96 ILR, 465) , Martins Moreira Case (Martins Moreira Case, 96 ILR, 498) , Vernillo v France (Vernillo v. France, 96 ILR, 585) գործեր):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը երեք ու կես տարի դատական գործընթացը ողջամիտ ժամկետի խախտում համարեց (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը՝ արտահայտած Vernillo v. France գործով): Հետեւապես, դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով պահանջվել է ողջամիտ ժամկետի սկզբունքը ,եւ գործի դատաքննությունն իրականացվել է ողջամիտ ժամկետներում՝ ելնելով գործի համար եական նշանակություն ունեցող փաստերի ամբողջական, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունից, իսկ դատավարական ժամկետների ընթացքը պայմանավորվել է գործով հաշտություն կնքելու ու անհրաժեշտ այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ:

Վերոգրյալ միջազգային, սահմանադրական եւ ներպետական օրենսդրական իրավական նորմերի վերլուծությունը թույլ է տալիս կատարել այն եզրահանգումը, որ անձի դատական պաշտպանության իրավունքն ունի ներպետական՝ սահմանադրությամբ եւ օրենքով, ինչպես նաեւ միջազգային նորմերով հստակ ընդգծված պաշտպանություն: Տվյալ պարագայում՝ դատավարության հայցվոր կողմը, օգտվելով վերը նշված իրավական նորմերով իրեն ընձեռված օրենքով չարգելված իրավունքի պաշտպանության՝ դատարան դիմելու իրավունքից, դիմել է դատարան՝ իր իրավունքը պատասխանողի կողմից խախտվելու փաստի հիմքով տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցնելու, դատական ծախսերը հատուցելու պահանջներով, ուստի դատարանը պետք է պարզի, թե առկա է արդյոք հայցվորի նման իրավունք, թե ոչ, եւ միաժամանակ, խախտվել են արդյոք ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կողմի իրավունքները, թե ոչ, բխում է արդյոք վերջինիս պահանջները ներպետական իրավական, մասնավորապես՝ քաղաքացիաիրավական նորմերից, թե ոչ, եւ դատաքննությամբ վերջինս ապացուցել է արդյոք իր կողմից վկայակոչված փաստերի իրավական հիմնավորվածությունը, թե ոչ, եւ միայն այդ դեպքում հնարավոր կլինի բավարարել պահանջները, ինչն իրավաչափ կդիտվի միայն, եթե դատաքննությամբ հաստատվի, որ հայցվոր կողմի պահանջները հիմնավոր են եւ բխում են գործով առկա իրավահարաբերությունները կարգավորող, գործող միջազգային, սահմանադրական եւ ներպետական օրենսդրական իրավական նորմերով սահմանված իրավական դրույթներից:

Գործի դատաքննությամբ դատարանը պարզել է, որ դատավարության կողմերի միջև ծագած վեճն ըստ էության կարգավորվում է տեղեկատվություն տրամադրելու, տեղեկատվության ազատության հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի պահանջներով, սակայն մինչ դրանց ուսումնասիրությունը գործով էական է պարզել իրականում տեղի ունեցած փաստական հանգամանքները՝ դրանց հիման վրա պահանջի վերաբերյալ օբյեկտիվ դիրքորոշում արտահայտելու ու իրավական ակտի այս կամ այն պահանջի կիրառելիությունը որոշելու նպատակով:

Այսպես՝ գործի դատաքննությամբ ու ներկայացված փաստերով դատարանը պարզել ու հաստատված է համարել, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 25.04.2012թ.-ի դրությամբ հարցում է կատարվել «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը՝ խնդրելով տրամադրելու տեղեկատվություն՝ հետեյալ բովանդակությամբ.

1. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

Վերը նշված հարցմանն ի պատասխան՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը որեւէ պատասխան չի ստացել: Այնուհետեւ՝ հիմք ընդունելով հարցման անպատասխան մնալու հանգամանքը՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը կուսակցությանը՝ խնդրելով տրամադրելու դեռեւս 25.04.2012թ.-ի հարցմամբ պահանջված տեղեկատվությունը՝ հետեյալ բովանդակությամբ.

«- Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:

- Ծախսած գումարից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը»:

Նշվել է, որ մինչ օրս պատասխան չի ստացվել, ուստի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը մեկ անգամ եւս կուսակցությունից խնդրել է տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Այն փաստը, որ հարցումներն ուղարկվել են «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը՝ հաստատվել է փոստային համապատասխան բաժանմունքի «Հայփոստ»-ի կողմից կնիքով վավերացված քաղվածքներով, համաձայն որի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 25.04.2012թ.-ին եւ 16.05.2012թ.-ին հարցումներ են ուղարկվել ՀՀ գործող կուսակցություններին ու դաշինքին, այդ թվում՝ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը: Նշված փաստը չի վիճարկել նաեւ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը:

Մինչդեռ գործում առկա նյութերում բացակայում է ապացույց առ այն, որ ՀԴԿ

կողմից «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ 25.04.2012թ.-ի եւ 16.05.2012թ.-ի հարցումներից գեթ մեկին պատասխանվել է՝ անկախ պատասխանի դրական կամ բացասական բնույթից, այսինքն՝ կուսակցության կողմից դրսեւորվել է բացարձակ անգործություն, ինչն ակնհայտ կերպով կրկնվել է նաեւ սույն գործի քննության ընթացքում, երբ կուսակցության կողմից ոչ ոք նշանակված նախնական դատական նիստերին, ինչպես նաեւ դատաքննությանը չեն մասնակցել, հայցի վերաբերյալ որեւէ դիրքորոշում կուսակցությունն առհասարակ դատարանին չի հայտնել, իսկ դատարանը վերսկսել է գործի վարույթը՝ որոշակի հանգամանքներ, հայցի կապակցությամբ պատասխանող կողմի դիրքորոշումը պարզելու նկատառումով, սակայն այս դեպքում եւս պատասխանող դատավարության կողմը դատարանում չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Այսպես՝ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված հայցային պահանջներին օբյեկտիվ իրավական գնահատական տալու համար, դատարանը նախ եւ առաջ անհրաժեշտ է համարում պարզելու այն իրավաբանական փաստերի շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն սույն քաղաքացիական գործի լուծման համար եւ ենթակա են պարզման գործի քննության ընթացքում, քանզի իրավաբանական նշանակություն ունեցող հենց այդ փաստերի համակցությունն էլ կկազմի սույն գործով ներկայացված հայցային պահանջի ապացուցման առարկան: Հաշվի առնելով այն փաստը, որ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերը դատարանը պետք է պարզի հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի ուսումնասիրությամբ՝ դատարանը հարկ է համարում վկայակոչել հարաբերությունները կանոնակարգող ներքոհիշյալ իրավական նորմերի պահանջները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները, իսկ 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 2-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով տրված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների նշանակությունները, մասնավորապես, ի թիվս այլ հասկացությունների, նշված են.

- տեղեկատվության ազատություն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.
- տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթ-

թեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ),

- տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք,
- հարցում՝ տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը, իսկ 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման եւ իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, դատարանի որոշմամբ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
- 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված

մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք)։

5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը։ Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը)։

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը։

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները։ Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը։ Սույն գործի փաստերի առանձնահատկությամբ պայմանավորված՝ դատարանը պարզել է, որ դատավարության կողմերի վեճը կայանում է գրավոր հարցումներով պահանջված տեղեկատվությունը պատասխանողի կողմից առհասարակ չպատասխանվելու ու հայցվող տեղեկատվությունը չստանալու հարցի իրավաչափության շուրջ, հետեւաբար՝ վերը նշված օրենքով սահմանված հոդվածներում պարունակվող իրավական նորմերում առկա բառերն ու արտահայտությունները վերլուծելով դրանց տառացի նշանակությամբ՝ տեղեկատվության տրամադրելու ու այն մերժելու հարցի իրավաչափությունը դիտարկելով ողջ իրավակարգավորման համատեքստում՝ դատարանն արձանագրում է, որ հայցը ենթակա է լուծման՝ նախ եւ առաջ ներքոհիշյալ էական նշանակություն ունեցող փաստերի հաշվառմամբ.

- տեղեկատվություն փնտրողը տեղեկություններ ունեցող կուսակցությունից տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իր իրավունքը (այսուհետ՝ նաեւ Իրավունք) պետք է իրականացնի տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր հարցմամբ (դիմումով),
- Իրավունքը, դրա իրականացման ազատությունը, կարող սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, այսինքն՝ նաեւ այն դեպքում, երբ դա խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.
- Իրավունքը, դրա իրականացման ազատությունը տեղեկատվությունը տիրապտող անձը կարող է սահմանափակել վերը նշված հիմքերի առկայության դեպքում միայն։

Տվյալ դեպքում, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ կողմից 25.04.2012թ.-ի գրությամբ հայցված տեղեկատվությունը համապատասխանել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, իսկ տվյալ գրության 2-րդ կետով ներկայացված, ինչպես նաև «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ կողմից 16.05.2012թ.-ի գրությամբ կրկին պատասխանողից հայցված՝ հարցերին ի պատասխան տեղեկատվություն տրամադրելու մասին խնդրանքը պատասխանող կուսակցության կողմից գրավոր կերպով չի մերժվել, սակայն հայցվող տեղեկատվությունն առհասարակ չի տրամադրվել, հետևապես՝ պետք է փաստել, որ տեղեկատվություն տրամադրելու խնդրանքը կուսակցության կողմից մերժվել է՝ այն առհասարակ չտրամադրվելու հիմքով:

Սույն գործի փաստերով ու դատաքննությամբ մի կողմից դատարանը պարզել է ու հաստատված է համարել, որ պատասխանող կուսակցությունը չունի որևէ հակափաստարկ ընդդեմ հայցով ներկայացված պահանջի ու պահանջվող տեղեկատվությունը տրամադրվելու իրավաչափության հարցի շուրջ, ու չի նշել, թե արդյո՞ք հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվության մասով վերջինս սահմանափակված է այն ստանալու իրավունքից, ու որքանով է իրավաչափ /ի՞նչ իրավական ու փաստական հիմքերով/ իր՝ որպես տեղեկատվությունը առաջնահերթ տնօրինող սուբյեկտի, հայցվող տեղեկատվությունը տեղեկատվություն փնտրողին չտրամադրելու իր վարքագիծը, քանի որ պատասխանող կողմը, դատաքննությամբ դատարանին հայցադիմումի պատասխան չներկայացնելով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95 հոդվածի 5-րդ մասի իմաստով արդեն իսկ ընդունել է հայցադիմումում վկայակոչված փաստերը:

Մյուս կողմից, քննության առարկա դարձնելով հայցված տեղեկատվության բնույթը եւ այն համարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված դրույթներին, ինչպես նաև օրենքով, Սահմանադրությամբ սահմանված հիմնարար պահանջներին՝ դատարանը պարզել ու հաստատված է համարել, որ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության՝ 25.04.2012թ. դրությամբ նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար ծախսված գումարի չափը, ինչպես նաև այդ գումարի մի մասը կուսակցության սեփական միջոցները հանդիսանալու ու կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումար հանդիսանալու վերաբերյալ տեղեկությունները ստանալու տեղեկատվություն փնտրողի իրավունքները որևէ կերպ սահմանափակված չեն եւ ոչ մի իրավական նորմով:

Ավելին՝ ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը եւ բազմակուսակցությունը:

Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը եւ օրենքներին, իսկ գործելակերպը? ժողովրդավարության սկզբունքներին (...):

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունն անհատական անդամության հիման վրա ստեղծված հասարակական միավորում է, որի գործունեության նպատակը հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելն է:



«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի համաձայն՝ կուսակցությունը պարտավոր է

- 1) պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները, ինչպես նաեւ իր կանոնադրությունը, ծրագիրը եւ որոշումները.
- 2) յուրաքանչյուր տարի մամուլում հրապարակել գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով դրա կազմավորման աղբյուրները:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի համաձայն՝ կուսակցության դրամական միջոցները ձեւավորվում են

- 1) անդամակցության վճարներից, եթե դրանք նախատեսված են կուսակցության կանոնադրությամբ,
- 2) նվիրատվություններից,
- 3) սույն օրենքով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումից,
- 4) քաղաքացիական իրավական գործարքներից եւ օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից:

Սահմանադրության 7-րդ հոդվածի վերջին պարբերությամբ ամրագրված է, որ կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունները ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, պետական լիազոր մարմին ներկայացնել ֆինանսական հաշվետվություն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին, 3-րդ մասը նախատեսում է, որ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների եւ ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաեւ ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը: Հաշվառման եւ հաշվետվության (ներառյալ՝ հաշվետվության ձեւերի) կարգը որոշում է պետական լիազոր մարմինը: Կուսակցության կողմից ընտրարշավների նախապատրաստման եւ անցկացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին, իսկ 4-րդ մասի համաձայն՝ կուսակցությունը, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, զանգվածային լրատվության միջոցներում հրապարակում է իր ֆինանսական հաշվետվությունը:

Սահմանադրության ու օրենքի վերը նշված դրույթների համակարգված վերլուծությունից հետեւում է, որ ցանկացած կուսակցություն, որպես հասարակական միավորում, ունենալով հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելու գործունեություն ծավալելու հիմնական նպատակ, յուրաքանչյուր իր կողմից իրականացվող գործողությամբ, ինչպես նաեւ դրսեւորած անգործությամբ պետք է նպաստի այդ նպատակի իրականացմանը եւ պետք է գործի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ

օրենքների հիման վրա, արդյունքում՝ կատարելով նաեւ իր տնօրինության ներքո գտնվող տեղեկություններն օրենքով պարտադիր հրապարակելու իր՝ ոչ միայն օրենքով, այլեւ՝ սահմանադրորեն ամրագրված պարտականությունը, այսինքն՝ ցանկացած կուսակցություն պարտավոր է հանրության համար օրենքով բաց, այսինքն՝ օրենքով, Սահմանադրությամբ նախատեսված՝ հրապարակման ենթակա տեղեկատվություն տրամադրել ցանկացած շահագրգիռ անձի՝ հիմք ընդունելով Սահմանադրության ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, քանի որ հենց կուսակցությունն է հանդիսանում այդ տեղեկատվությունը տնօրինող սկզբնական աղբյուրը, որից հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվի օրենքով սահմանված կարգով ու ժամկետում:

Սույն գործով հաստատված վերը նշված փաստերով, մասնավորապես՝ 25.04.2012թ. եւ 16.05.2012թ. գրություններով բարձրացված հարցերի բովանդակությունը համադրելով «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի ու Սահմանադրության վերը նշված դրույթներով սահմանված՝ հրապարակման ենթակա տեղեկատվության բնույթին ու բովանդակությանը՝ դատարանը հաստատված է համարել, որ հայցվորի կողմից կրկնակի անգամ պահանջված տեղեկատվությունն օրենքի ուժով հանդիսանում է հրապարակման ենթակա, հետեւապես՝ դրանք ենթակա են տրամադրման օրենքով սահմանված կերպով շահագրգիռ անձի կողմից օրենքով սահմանված կարգով նման տեղեկատվություն ստանալու հայցվող դիմումի առկայության դեպքում եւ այն էլ այն դեպքում, երբ տեղեկատվություն փնտրողը՝ սույն գործով հայցվորը, հանդիսանում է հասարակական կազմակերպություն, եւ իրավաչափորեն պետք է արձանագրել, որ վերջինիս կողմից փնտրված տեղեկությունը պետք է ծառայեր կազմակերպության՝ հասարակության համար օգտագար նպատակին, ինչը համահունչ է կուսակցությունների՝ հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելու գործունեություն ծավալելու հիմնական նպատակի հետ, հետեւաբար՝ կուսակցությունն ինքը պետք է դրսեւորեր շահագրգռվածություն օրենքով սահմանված կարգով տրամադրելու հայցվող տեղեկությունը, որը պայմանավորված է նաեւ իր գործունեության հիմնական նպատակով:

Դատարանը փաստում է, որ պատասխանողին ուղղված գրությունների մեջ վկայակոչված հարցերը հիմնավորելու որեւէ պարտավորություն պատասխանող կողմը չէր կրում եւ եւ պարտավոր չէր հայցվող տեղեկատվությունը փնտրել այլ մարմնից՝ անկախ այդ հնարավորության առկայության փաստից, քանի որ տեղեկատվություն փնտրողն ինքն է իր հայեցողությամբ որոշում թե՛ հայցվոր տեղեկատվության բնույթը, թե՛ մարմինը, որը տնօրինում է հայցվող տեղեկատվությունը, իսկ օրենքն այս առումով որեւէ սահմանակում չի նախատեսում, ավելին՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում նշված պահանջի իմաստով՝ 25.04.2012թ. եւ 16.05.2012թ. գրություններում վկայակոչված հարցերը, ինչպես նաեւ տեղեկությունը կոնկրետ կուսակցությունից պահանջելու իր վարքագիծը դիմողը պարտավոր չէր հիմնավորելու, եւ եթե կուսակցությունը գտնում էր, որ տեղեկատվությունը տրամադրման ենթակա չէ, ապա պարտավոր էր օրենքով սահմանված հնգօրյա ժամկետում գրավոր մերժել տեղեկատվության տրամադրումը, կամ այդ ժամկետում տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, իսկ հարցմանն առհասարակ չպատասխանելն ու այդ կապակցությամբ անգործություն դրսեւորելն այս դեպքում որեւէ կերպ դատարանն արդարաց-

ված չի համարում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 3-րդ կետի համաձայն, ի թիվս այլ դեպքերի, տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

Տվյալ դեպքում՝ քննվող գործով պատասխանող կուսակցությունը հայցվորի հարցումներին ի պատասխան որեւէ տեղեկատվություն չի տրամադրել, այնինչ պարտավոր էր ամբողջական տեսքով տրամադրել հավաստի տեղեկատվություն, եւ այն էլ այն ծավալով, ինչ ծավալով այն տնօրինվում էր վերջինիս կողմից:

Մինչդեռ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ բարձրացրած խնդրանքը, չնայած գրավոր չի մերժվել, սակայն պատասխանողի կողմից դրսևորված վարքագծից պետք է արձանագրել մերժման փաստը, իսկ դատարանի վերը նշված պատճառաբանություններից ելնելով՝ նման վարքագծի ոչ իրավաչափ լինել, հետևաբար՝ դատարանի վերը նշված դիրքորոշման լույսի ներքո նաեւ պետք է փաստել, որ կուսակցությունը պարտավոր էր տրամադրելու հայցվող տեղեկատվությունը՝ Օրենքի վերը նշված պահանջից ելնելով, եւ հենց այդ տեղեկատվությունն էլ ակնկալում էր ստանալու տեղեկատվություն հայցող կողմը, իսկ Օրենքի այդ պահանջը պատասխանողի կողմից պահպանվելու ու փաստացի կիրառվելու արդյունքում՝ սույն հայցով պահանջվող տեղեկատվությունը հայցվորը կստանար ու անհարկի չէր խախտվի վերջինիս՝ Օրենքով սահմանված՝ ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը եւ դատական կարգով այն վերականգնելու անհրաժեշտություն ինքնին չէր առաջանա եւ այն էլ այն դեպքում, երբ ՀՀ գործող կուսակցություններին բոլորին կատարվել է նույնաբովանդակ հարցումներ /հիմք՝ փոստային քաղվածքը/, իսկ վերջիններս սահմանված կարգով պատասխանել են գրավոր հարցումներին՝ ի տարբերություն «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության:

«Տեղեկատվության ազատության մասին» 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը, իսկ 11-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

Վերը նշված հոդվածում պարունակվող իրավական նորմերի պահանջները պատասխանողի կողմից կիրառելը ենթադրում է, որ հայցվող տեղեկատվությունը տեղեկատվությունը տնօրինողի կողմից ամեն դեպքում ենթակա էր տրամադրման, հակառակ դեպքում՝ հնգօրյա ժամկետում տեղեկատվությու-

Նը տնօրինողը պարտավոր էր մերժման կամ դրական պատասխանի միջոցով ուղարկել որեւէ արձագանք, ուստի պասիվ վարքագիծ դրսեւորելու կուսակցության դիրքն ամեն դեպքում դատարանը հիմնավոր չի դիտում:

Չեւեւաբար՝ վերը նշված պատճառաբանություններից ու հանգամանքներից ելնելով՝ դատարանը փաստում է, որ պատասխանողը հայցվորի 25.04.2012թ. եւ 16.05.2012թ. գրություններով բարձրացված հարցերին չպատասխանելով, դրսեւորելով անգործություն, այսինքն՝ մերժելով հայցվող տեղեկատվության տրամադրման հայցվորի խնդրանքը՝ կարող էր տեղեկատվությունը տրամադրել գործի քննության ընթացքում, սակայն պատասխանողը քննվող հարցի շուրջ անգործություն է ցուցաբերել նաեւ այս դեպքում՝ գործի քննության ընթացքում դատարանին սահմանված կերպով չներկայացնելով հայցադիմումի պատասխան եւ որեւէ դիրքորոշում: Նշված հանգամանքը եւս վկայում է հայցի հիմնավոր լինելու ու հայցվորի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքն ակնհայտ խախտված լինելու մասին:

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից...2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք ... անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում...այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու...նպատակով»:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով անկախ պետական սահմաններից»:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն մարդու եւ քաղաքացու Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում...այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար...: Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածում ամրագրված է, որ Սահմանադրությամբ ամրագրված մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ եւ ազատություններ:

Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով եւ չի խախտում այլոց իրավունքները եւ ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Այսինքն՝ գործի եւությունից ելնելով կարելու է հատկապես ընդգծել ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ 27 եւ 42 հոդվածների հարաբերությունը, մասնավորապես՝ այն, որ ՀՀ Սահմանադրությունը, ամրագրելով տեղեկատվության եւ խոսքի ազատության իրավունքը, միաժամանակ մեկ այլ՝ 42 հոդվածով սահմանափակում է 27 հոդվածով սահմանված ազատությունը, որի իմաստից հետեւում է, որ նշված ազատությունը կարող է սահմանափակվել օրենքով եւ կիրառվել այնքանով, որքանով դա չի խախտում այլոց իրավունքները՝ դրանով իսկ բացառելով ազատության իրավունքի չարաշահումն ու անձի իրավունքների ու ազատությունների խախտումը, ինչը նշանակում է, որ եթե ներպետական օրենսդրությամբ սահմանված է տեղեկատվություն փնտրելու ու ստանալու ազատության որոշակի սահմանափակում՝ կապված տարածված տեղեկատվությունն օրենքով տրամադրման ենթակա չլինելու փաստի հետ ու այդ մասով տեղեկատվություն ստանալու իրավունքն օրենքով սահմանափակված լինելու փաստի հետ, ապա տեղեկատվություն ստանալու հայցվող կողմի ազատությունը այդ դեպքում սահմանափակված է:

Փաստորեն, վերոգրյալը հիմք ընդունելով՝ հարկ է նշել, որ ցանկացած քաղաքացիաիրավական սուբյեկտ, ՀՀ Սահմանադրության 27 հոդվածով նախատեսված տեղեկատվություն փնտրելու ու ստանալու իրավունքի ազատության սկզբունքներից ելնելով, գրավոր հարցմամբ դիմելով համապատասխան մարմին՝ այն ստանալու խնդրանքով, պետք է նախ եւ առաջ ղեկավարվի ՀՀ Սահմանադրության 42 հոդվածով եւ ազատության իրավունքը իրականացնելի օրենքին համապատասխան: Նույն կերպ պետք է վարվի նաեւ տեղեկատվությունը տնօրինող կողմը, ում ուղղված է հարցումը, քանի որ եւ՝ տեղեկատվություն փնտրողը, եւ՝ այն տրամադրող կողմերը պետք է այդ հարաբերություններում գործեն այնպես, որպեսզի չխախտվեն այլոց իրավունքները եւ ազատությունները՝ այդ կերպ գործելով օրենքի շրջանակներում եւ խուսափելով օրենքով սահմանված պատասխանատվությունից:

Բացի այդ, դատարանն ընդգծում է, որ սահմանադրորեն ամրագրված վերոհիշյալ իրավական նորմերի պահանջը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում, որտեղ ժողովրդավարությունն ունի իր առաջնահերթ դերն ու նշանակությունը, պետք է պաշտպանվի եւ խրախուսվի տեղեկատվություն տրամադրելու իրավունքի իրականացման ազատության, տեղեկատվություն տարածելու գործողությունները, ինչն առավել ընդգծված պետք է ընկալել այն դեպքերում, երբ հարցը վերաբերում է կուսակցություններին, որոնց դերն ու նշանակությունը հասարական ու քաղաքական կյանքում ունի հատուկ ամրագրում հիմնական օրենքում, մասնավորապես՝ Սահմանադրության 7-րդ հոդվածում:

Միաժամանակ, սահմանադրորեն ամրագրված նորմի (ՀՀ Սահմանադրության 43 հոդված) բարձրագույն իրավական պահանջից հետեւում է, որ այդ ազատությունն ու տեղեկատվություն տարածելու, ստանալու, փնտրելու իրավունքները թե տեղեկատվությունը հայցող անձի, թե այն տրամադրող մարմնի կողմից պետք է իրագործվի օրենքի պահանջներից բխող, այսինքն՝ այն որեւէ կերպ չպետք է հակասի օրենսդրի կողմից սահմանված այն չափանիշներին, որոնք պայմանավորված են ժողովրդավարության անհրաժեշտ

տարրերի պահպանման անհրաժեշտությունից, ինչպես նաև պետք է համապատասխանի տեղեկատվության ստացման, փնտրման ու տարածման այն սահմանափակումների շրջանակին, որոնք օրենսդրի կողմից համապատասխան իրավական նորմով հետապնդում են այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության իրավական նպատակ, որի անհրաժեշտությունը պայմանավորվում է ժողովրդավարական հասարակությունը չափանիշներով, ուստի եթե տեղեկատվությունը հայցող անձը գործում է օրենքի պահանջների խախտմամբ՝ չարաշահելով սահմանադրորեն եւ միջազգային պայմանագրերով ամրագրված իր՝ Սահմանադրության 27 հոդվածով, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով ամրագրված իրավունքները, ապա տեղեկատվությունը տնօրինող անձը պարտավոր է սահմանափակել հայցվող կողմի՝ ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ հիմնավորելով սահմանափակման փաստը գործող իրավական ակտերի պահանջներով, սակայն ոչ կամայական կերպով՝ բացառելով քաղաքացիական հասարակության եւ ժողովրդավարական պետության համար ոչ անհրաժեշտ՝ կատարյալ ազատության առկայության փաստը:

Մինչդեռ գործի փաստերով, դատարանի վերը նշված դիրքորոշմամբ պայմանավորված՝ պետք է փաստել, որ քննվող գործով հայցվորի կողմից 25.04.2012թ. եւ 16.05.2012թ. գրավոր դիմումներով պահանջված նույնաբովանդակ տեղեկատվությունն իր բնույթով չի հանդիսացել օրենքով տարածման ոչ ենթակա տեղեկատվություն, ավելին՝ այն հանդիսացել է Սահմանադրությամբ ու օրենքով սահմանված կերպով հրապարակվող տեղեկատվություն, սակայն տեղեկատվությունը չի տրամադրվել պատասխանողի կողմից՝ առանց որեւէ պատճառաբանությամբ, իսկ Օրենքի ուժով պատասխանողը պարտավոր էր տրամադրելու իր տնօրինության ներքո գտնվող ու հայցվող ամբողջ տեղեկությունները, որը բաց է հանրության համար, հետեւապես՝ նաև օրենքով պաշտպանված չէ:

Վերը նշվածներն ամփոփելով՝ դատարանը գործով ապացուցված է համարում տեղեկատվություն ստանալու հայցվորի՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի, Սահմանադրությամբ ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված, պաշտպանված իրավունքի խախտման փաստը, որը սույն վճռով ենթակա է վերականգնման՝ հայցվող տեղեկատվությունը դատական կարգով տրամադրելուն պատասխանող կողմին պարտավորեցնելու միջոցով:

Անդրադառնալով դատական ծախսերից փաստաբանի վարձատրության հարցին՝ դատարանը գտնում է, որ այդ մասով պահանջը հիմնավոր է միայն մասնակի՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

Գործի դատաքննությամբ հաստատվել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ու «Մեժլումյան եւ Պետրոսյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ միջեւ 17.07.2012թ. կնքվել է փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր, ըստ որի՝ պայմանագրով նախատեսված՝ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության դեմ նարկայացվող՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին գործով մատուցվող ծառայությունների դիմաց պետք է վճարվեր 250.000 ՀՀ դրամ գումար: Նշված պայմանագրի հիման վրա՝ կող-

մերը 17.07.2012թ. կազմել ու հաստատել են ծառայությունների մատուցման հաշիվը, որտեղ որպես փաստաբանական ծառայության վճարը կազմել է 250.000 ՀՀ դրամ գումար:

Վերը նշված պայմանագրով սահմանված ծառայությունների արժեքը վճարվել է, մասնավորապես՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ կողմից «Մեժլումյան եւ Պետրոսյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ հաշվին փաստացի փոխանցվել է 250.000 ՀՀ դրամ գումար՝ ըստ 17.07.2012թ. կողմերի միջև կնքված պայմանագրի՝ ըստ 18.07.2012թ.-ի վճարման թիվ 89 հանձնարարականի:

Տվյալ դեպքում, դատարանը արձանագրում է, որ հայցվորի կողմից ներկայացված պահանջը ենթակա է բավարարման մասնակի՝ վերը նշված գումարի մի՝ 100.000 ՀՀ դրամ գումարի չափով, քանի որ նախ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի 1.1 կետի վերլուծությունից հետևում է, որ սույն գործով ծառայությունները պետք է մատուցվեն ոչ միայն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, այլև՝ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում, քանի որ հստակ նախատեսված է, որ ոչ բարենպաստ դատական ակտի դեպքում՝ ծառայություններ մատուցողը պետք է նաեւ այն բողոքարկի:

Այսինքն՝ ծառայությունների մատուցման համար սահմանված վճարը՝ 250.000 ՀՀ դրամ գումարը, սահմանվել է ոչ միայն առաջին ատյանում հայցվորի շահերի պաշտպանության համար, այլ ընդհանուր բոլոր երեք ատյաններում հայցվորի շահերի պաշտպանության համար, ուստի հայցվորի կողմից ներկայացված՝ 250.000 ՀՀ դրամ գումարի պահանջն այս հիմքով ամբողջությամբ բռնագանձելն ինքնին անհիմն է՝ զուրկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 հոդվածով սահմանված փաստաբանին վարձատրելու գումարի չափի խելամտության սկզբունքից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «ՄԵԼՏԵԶՍ ՍՊԸ»-ն եւ Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (գանգատ թիվ 32283/04) 2008թ. հունիսի 17-ի վճիռը, որի 10-րդ կետով արձանագրվել է, որ դատարանի նախադեպային իրավունքի համաձայն դիմումատուին տրամադրվում է իր ծախսերի եւ ծախսերի փոխհատուցում միայն այն դեպքերում, երբ ցույց է տրվում, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ եւ իրենց ծավալով ողջամիտ են:

Բացի այդ, Եվրոպական դատարանը, իր կայացրած վճիռներում, անդրադառնալով դատական ծախսերի հատուցման խնդրին, մշտապես նշում է, որ կրած դատական ծախսերի համար դիմումատուն պարտավոր է ցույց տալ, որ

- 1) այդ ծախսերն իսկապես արվել են
- 2) արվել են անհրաժեշտաբար
- 3) ներկայացված ծախսերը «խելամիտ» են:

Հետևաբար՝ դատարանն արձանագրում է, որ հայցվորն իրավունք ունի դատական ծախսերի եւ վճարումների հատուցման այն չափով, որ չափով որ ապացուցված է, որ այդ ծախսերն արվել են փաստացի եւ անհրաժեշտաբար ու ողջամիտ են իրենց ծավալով, խելամիտ են:

Տվյալ դեպքում, վերը նշված չափանիշները հաշվի առնելով՝ դատարանը գտ-

Նում է, որ ողջամիտ չափ է հանդիսանում կատարված ծախսից միայն մի մասը՝ 100.000 ՀՀ դրամը, որն էլ որպես իր շահերը դատարանում ներկայացնելու համար փաստաբանին փաստացի վճարված ծախսի հատուցում՝ պետք է բռնագանձել պատասխանողից, իսկ սույն գործով հայցվորի կողմից փաստացի կատարված ծախսի մնացած՝ 150.000 ՀՀ դրամ գումարը, մատուցված ծառայությունների ծավալից, բնույթից ելնելով՝ ողջամիտ, անհրաժեշտ ու խելամիտ է:

ՀՀ դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ դատական իշխանություն իրականացնելիս դատավորը պարտավոր է չհաստատել այն դատական ծախսերը, որոնց չափը չի համապատասխանում դրանց ողջամիտ արժեքին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու եւ ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տեւողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաեւ դատական ակտով բռնագանձվող գումարի եւ պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (տե՛ս ըստ հայցի Ֆերդինանտ Առաքելյանի ընդդեմ Հարություն Պետրոսյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, եւ հակընդդեմ հայցի՝ 27.07.2007 թվականի փոխառության գործարքը չկնքված համարելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 29.06.2012թ.-ի թիվ ԵԿԴ/1587/02/10 գործով կայացրած որոշումը):

Ներկայացված դատական ծախսի հատուցման պահանջը քննության առնելով նաեւ Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշման լույսի ներքո, ելնելով վերը նշված չափանիշներից եւ նկատի ունենալով, որ փաստաբանը սույն գործով ի շահ հայցվորի կատարել է կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով սահմանված դատավարական գործողությունները, որոնք, հնարավոր է դեռ չեն ավարտվել, ինչպես նաեւ հաշվի առնելով գործի քննության կարճատեւությունը, այն, որ փաստաբանը գործով մասնակցել է նվազ թվով դատական նիստերի, կազմել է հայցադիմումը, գործն իր բնույթով չէր պահանջում բազմաթիվ իրավական ակտերի ուսումնասիրություն՝ ելնելով վիճելի իրավահարաբերության բնույթից, պայմանագրով սահմանված գումարի չափից՝ դատարանը սույն գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումարի ողջամիտ չափ է համարում 100.000 ՀՀ դրամը:

Ելնելով փաստաբանի վարձատրության չափի խելամտության սկզբունքից, հիմք ընդունելով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից բխող դատարանի կողմից վերը նշված պատճառաբանությունները, ինչպես նաեւ պայմանագրով նախատեսված ու փաստացի կատարված դատական ծախսի չափը՝ դատարանը գտնում է, որ հայցը բավարարման ենթակա լինելու հիմքով՝ պատասխանողը պետք է հայցվորին վճարի խախտված իրավունքը վերականգնելու համար հայցվորի կողմից փաստացի կատարված դատական ծախսը, որը կազմում է 100.000 ՀՀ դրամ,



իսկ մնացած մասով դատական ծախսը հատուցման ենթակա չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 72 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Համաձայն «Պետական տուրքի» մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ:

Նույն «Պետական տուրքի» մասին ՀՀ օրենքի 9 հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված կարգով ներկայացված պահանջով հայցադիմումի համար պետական տուրքը կազմում է՝ ոչ գույքային պահանջով՝ բազային տուրքի քառապատիկի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ դեպքում, հայցվորը դատարան ներկայացրած հայցային պահանջի մասով նախապես վճարել է պետական տուրքի գումար՝ 4.000 ՀՀ դրամի չափով, քանի որ դատարանին ըստ էության ներկայացրել է մեկ ոչ գույքային պահանջ՝ խնդրելով իրավունքի խախտման փաստի ճանաչման հիմքով պարտավորեցնել տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը, հետևաբար՝ հայցի բավարարման պարագայում փաստացի կատարված դատական այս ծախսը եւս պետք է բռնագանձվի իրավունքը պախտած անձի կողմից՝ պատասխանողից՝ ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73 հոդվածով սահմանված՝ բավարարված պահանջների համամասնության կարգով պետական տուրքի բռնագանձման սկզբունքունից:

Վերոգրյալների հիման վրա, ինչպես նաեւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68, 73, 124, 130-132 եւ 140-1401 հոդվածներով՝ դատարանը

### Վ Ճ Ո Շ Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, փաստաբանի վարձատրության՝ 250.000 ՀՀ դրամ գումարի, նախապես վճարված պետական տուրքի՝ 4.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջների մասին հայցը բավարարել մասնակի:

Ճանաչելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը՝ պարտավորեցնել «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը տրամադրելու տեղեկատվություն առ այն, թե «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012 թ. դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար, ինչպես նաեւ տրամադրել տեղեկատվություն առ այն, թե ծախսած գումարից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

«Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունից հոգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես խախտված իրավունքը վերականգնելու համար հայցվորի կողմից փաստացի կատարված խելամիտ, ողջամիտ ու անհրաժեշտ փաստաբանի վարձատրության գումար, ինչպես նաև 4.000 (չորս հազար) ՀՀ դրամ՝ որպես գործով որպես խախտված իրավունքը վերականգնելու նպատակով դատարան դիմելու համար հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության՝ փաստաբանի վարձատրության դատական ծախսի՝ 150.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջի մասով, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում՝ դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎԵՐԱԸՆՆԻՉ ԲԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Բաղաքացիական գործ թիվ  
ԵԿԴ/1524/02/12 Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների  
ընդհանուր իրավասության դատարանի

Վճիռ քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1524/02/12

Նախագահող դատավոր՝ Ա.Մելքումյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը՝

Նախագահող դատավոր՝ Գ. ՄԱՏԻՆՅԱՆ,

Դատավորներ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆ

2013 թվականի մայիսի 2-ին

Դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործով ըստ հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն)՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, փաստաբանի վարձատրության՝ 250.000 ՀՀ դրամ գումարի, նախապես վճարված պետական տուրքի՝ 4.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջների մասին, Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ԵԿԴ/1524/02/12 վճռի դեմ Կուսակցության կողմից բերված վերաքննիչ բողոքը

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

02.07.2012 թվականին Կազմակերպությունը, դիմելով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, խնդրել է պարտավորեցնել Կուսակցությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկությունը հետեւյալի մասին.

1. Արդյոք 25.04.2012 թվականի դրությամբ Կուսակցությունը գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար,
2. Ծախսած գումարներից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքանը՝ Կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

Գործի քննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Կ.Մեծլումյանը խնդրել է Կուսակցությունից բռնագանձել Կազմակերպության կողմից փաստաբանին վճարված գումարը:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 2012 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ԵԿԴ/1524/02/12 վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վերաքննիչ բողոք է ներկայացրել Կուսակցությունը: Վերաքննիչ բողոքին պատասխան չի ներկայացվել:

**2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները եւ պահանջը.**

Սույն վերաքննիչ բողոքը քննվում է հետեւյալ հիմքերի սահմաններում՝ ներքո-հիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը նշել է, որ Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հոդվածների, 8-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները, չի կիրառել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 42-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» Միջազգային դաշնագրի (16 դեկտեմբեր 1966թ.) 14-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 48-րդ, 52-րդ, 53-րդ, 54-րդ եւ 124-րդ հոդվածների պահանջները:

Դատարանի կողմից սահմանափակվել է Կուսակցության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ եւ 6-րդ հոդվածներով նախատեսված իրավունքը: Նշված խախտումը կայանում է նրանում, որ 18.09.2012 թվականին նշանակված նախնական նիստին որպես Կուսակցության ներկայացուցիչ, ներկայացել է Սուրեն Մովսիսյանը, ով այդ ժամանակ չի ունեցել լիազորագիր եւ զրկված է եղել ներկայացնելու Կուսակցության շահերը եւ ներկայացված հայցադիմումի վերաբերյալ Կուսակցության առարկությունները, իսկ 12.12.2012 թվականի ժամը 15.00-ին կայանալիք դատական նիստին լիազորագրով ներկայացել է փաստաբան, սակայն դատական նիստը Դատարանի կողմից չի բացվել:

12.12.2012թ.-ին նշանակված դատական նիստը կայացած չլինելու հանգամանքի վառ ապացույց է հանդիսանում Կուսակցության 15.01.2013թ.-ի թիվ ԵԿԴ/1524/02/12 քաղաքացիական գործով կայացած բոլոր դատական նիստերի արձանագրությունների համակարգչային արձանագրման կրիչը տրամադրելու դիմումի հիման վրա Դատարանի կողմից տրամադրված կրիչը, որտեղ առկա են բացառապես 18.09.2012 թվականի եւ 30.10.2012թ.-ի դատական նիստերի արձանագրությունների ձայնագրությունները:

Դատարանի իրականում չի կիրառել վճռում վկայակոչած ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 42-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» Միջազգային դաշնագրի (16 դեկտեմբեր 1966թ.) 14-րդ հոդվածի դրույթները, եւ խախտել է դրանց պահանջները:

Դատարանի կողմից դատավարական իրավունքի նորմերի հաջորդ ակնառու խախտումը այն է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածը սահմանում է, որ գործի մասնակիցներից որեւէ մեկի ներկայացած չլինելու դեպքում, վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան, իսկ Դատարանը վճիռը Կուսակ-

ցությանն է ուղղարկել ոչ թե 22.12.2012 թվականին? Վճռի հրապարակման հաջորդ օրը, այլ՝ 09.01.2013թ.-ին վճռի հրապարակման 19-րդ օրը:

Դատարանը վճռում նշել է.

«Ողջամիտ ժամկետի սկզբունքն ունի լայն պայմանագրային, ինչպես նաև սովորության ընկոյթ եւ կիրառություն: Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով պահպանվել է ողջամիտ ժամկետի սկզբունքը եւ գործի դատաքննությունն իրականացվել է ողջամիտ ժամկետներում? Ելնելով գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի ամբողջական, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունից, իսկ դատավարական ժամկետների ընթացքը պայմանավորվել է գործով հաշտություն կնքելու ու անհրաժեշտ այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ, սակայն վճռում այդ մասին ուղղակի նշելը դեռեւս չի նշանակում, որ Դատարանն իրականում իրականացրել է սույն գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի ամբողջական, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն»

Դատարանը վճռում նշել է.

«Տվյալ պարագայում, դատավարության հայցվոր կողմը, օգտվելով վերը նշված իրավական նորմերով իրեն ընձեռնված օրենքով չարգելված իրավունքի պաշտպանության՝ դատարան դիմելու իրավունքից, դիմել է դատարան՝ իր իրավունքը պատասխանողի կողմից խախտվելու փաստի հիմքով տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, դատական ծախսերը հատուցելու պահանջներով, ուստի դատարանը պետք է պարզի, թե առկա է արդյոք հայցվորի նման իրավունք, թե ոչ, եւ միաժամանակ, խախտվել են արդյոք ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կողմի իրավունքները, թե ոչ, բխում է արդյոք վերջինիս պահանջները ներպետական իրավական, մասնավորապես՝ քաղաքացիաիրավական նորմերից, թե ոչ, եւ դատաքննությամբ վերջինս ապացուցել է արդյոք իր կողմից վկայակոչված փաստերի իրավական հիմնավորվածությունը, թե ոչ, եւ միայն այդ դեպքում հնարավոր կլինի բավարարել պահանջները, ինչն իրավաչափ կդիտվի միայն, եթե դատաքննությամբ հաստատվի, որ հայցվոր կողմի պահանջները հիմնավոր են եւ բխում են գործով առկա իրավահարաբերությունները կարգավորող, գործող միջազգային, սահմանադրական եւ ներպետական օրենսդրական իրավական նորմերով սահմանված իրավական դրույթներից»:

Գործի դատաքննությամբ դատարանը պարզել է, որ դատավարության կողմերի միջեւ ծագած վեճն ըստ էության կարգավորվում է տեղեկատվություն տրամադրելու, տեղեկատվության ազատության հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի պահանջներով, սակայն մինչ դրանց ուսումնասիրությունը, գործով էական է պարզել իրականում տեղի ունեցած փաստական հանգամանքները? դրանց հիման վրա պահանջի վերաբերյալ օբյեկտիվ դիրքորոշում արտահայտելու ու իրավական ակտի այս կամ այն պահանջի կիրառելիությունը որոշելու նպատակով:

Իրականում անհրաժեշտ է պարզել տեղի ունեցած իրավահարաբերության փաստական հանգամանքները, մասնավորապես՝

- Դատարանը պարտավոր էր պարզել հետեւյալ էական նշանակություն ունեցող հարցերը՝ արդյոք Կուսակցությունը «Տեղեկատվության ազատու-

թյան մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված տեղեկատվություն տնօրինող սուբյեկտ է, թե՛ ոչ, հայցվորը զրկված է եղել փնտրվող տեղեկությունը Կուսակցության կողմից չտրամադրելու պարագայում այլ աղբյուրից ստանալու հնարավորությունից, թե ոչ, հայցվորի փնտրվող տեղեկությունը հրապարակված եղե՞լ է, թե ոչ, Կուսակցությունն ապահովե՞լ էր հայցվորի փնտրվող տեղեկության մատչելիությունը, թե ոչ, Կուսակցությունը պարտավո՞ր է եղել հայցվորի կողմից պահանջվող տեղեկությունը տրամադրել նրան, թե ոչ:

Եթե Դատարանն իրականում կիրառած լիներ կամ էլ ճիշտ մեկնաբաներ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթը, ապա նա միանշանակ կպարզեր, որ Կուսակցությունը չի հանդիսացել եւ հանդիսանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված տեղեկատվություն տնօրինող սուբյեկտ, քանի որ Կուսակցությունը չի համարվում ոչ՝

1. տեղեկություններ ունեցող պետական մարմին,
2. տեղեկություններ ունեցող տեղական ինքնակառավարման մարմին,
3. տեղեկություններ ունեցող պետական հիմնարկ,
4. բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն,
5. հանրային նշանակության կազմակերպություն կամ դրա պաշտոնատար անձ,
6. ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություն:

Իսկ քանի որ Կուսակցությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված տեղեկատվություն տնօրինող սուբյեկտ չէ, հետեւաբար էլ՝ նա պարտավոր չի եղել հայցվորին տրամադրել նրա կողմից հարցվող տեղեկությունը:

Այն, որ 06.05.2012 թվականին ՀՀ-ում տեղի է ունեցել ԱԺ համամասնական կարգով ընտրություններ դա հանրահայտ հանգամանք է:

Այն, որ ՀՀ-ում 06.05.2012 թվականին կայանալիք ԱԺ համամասնական կարգով ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն պարտավոր է եղել սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնել համապատասխան տեղեկատվություն կուսակցության ֆինանսական եւ գույքային միջոցների, ինչպես նաեւ նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների ն դրանց օգտագործման վերաբերյալ, դա եւս հանրահայտ հանգամանք է: Այն, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված տեղեկատվությունը հրապարակել է իր պաշտոնական ինտերնետ կայք էջում, դա եւս անհերքելի եւ հանրահայտ հանգամանք է:

Կուսակցությունը, մասնակցելով ՀՀ-ում 06.05.2012 թվականին կայանալիք ԱԺ համամասնական կարգով ընտրություններին, 2012թ.-ի ապրիլ ամսվա վերջերին հայցվորի կողմից փնտրվող տեղեկությունը սահմանված կարգով ներկայացրել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, իսկ ՀՀ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն էլ հայցվորի կողմից փնտրվող տեղեկությունը հրապարակել է իր պաշտոնական ինտերնետ կայքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ հանրահայտ հանգամանքներն ապացուցման կարիք չունեն: Այս հանգամանքի հանրահայտ լինելու վերաբերյալ տեղյակ է եղել ինչպես հայցվորը, այնպես էլ՝ Դատարանը: Ավելին՝ Դատարանը դատաքննության ժամանակ փաստել է, որ նման տեղեկատվությունը եղել է բաց եւ հասանելի, իսկ հայցվորն էլ հայտնել, որ հարցվող տեղեկությունը ստանալու համար չի դիմել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Ակնհայտ է, որ հայցվորը միանշանակ հնարավորություն է ունեցել իր կողմից հարցվող տեղեկատվությունն այլ տեղեկատվական աղբյուրից՝ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտից, ստանալ, մասնավորապես՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից կամ էլ օգտվել նրա պաշտոնական ինտերնետ կայք էջում հրապարակված տեղեկատվությունից:

Ի դեպ, վերոգրյալի մասին Կուսակցության աշխատակիցների կողմից հայտնվել է հայցվորին, որ իր կողմից հարցվող տեղեկատվությունը տրամադրված է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որն էլ այդ տեղեկատվությունը հրապարակել է իր պաշտոնական ինտերնետ կայքում, որի մասին պարզ եւ հասկանալի պատճառով լռում է հայցվորը:

Միանշանակ է, որ

1. հայցվորը զրկված չի եղել փնտրվող տեղեկությունը Կուսակցության կողմից չտրամադրելու պարագայում այլ աղբյուրից ստանալու հնարավորությունից,
2. հայցվորն իր կողմից փնտրվող տեղեկության հրապարակված լինելու մասին տեղյակ է եղել, ինչպես նաեւ հավելյալ այդ մասին նրան բանավոր կերպով տեղեկացվել է Կուսակցության համապատասխան աշխատակցի կողմից,
3. կուսակցությունն ապահովել էր հայցվորի կողմից փնտրվող տեղեկության մատչելիությունը:

Ակնհայտ է այն էական նշանակություն ունեցող հանգամանքը, որ եթե հայցվորն իրականում ցանկացել է ստանալ իր կողմից փնտրվող տեղեկությունը, ապա ցանկության դեպքում նա կարող էր ստանալ այն, քանի որ իր կողմից փնտրվող տեղեկությունը եղել է բաց եւ հասանելի, որովհետեւ հրապարակված էր:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է «հրապարակում» բառի իմաստը, որը նշանակում է տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ մատչելի դարձնելը: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ արդյոք Կուսակցությունը պարտավոր է եղել հայցվորի կողմից պահանջվող տեղեկությունը տրամադրել նրան, թե ոչ, ապա «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, ըստ որի՝ «Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

- 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին,
- 2) ներկայացնում է ՀՀ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առետրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը,
- 3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Անհերքելի է այն, որ հայցվորի կողմից հարցվող տեղեկությունը չի վերաբերվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասում նշվածներից եւ ոչ մեկին, հետեւաբար՝ Կուսակցությունը գրկված չի եղել հայցվորին իր կողմից հարցվող տեղեկատվության չտրամադրման իրավունքից: Ուստի, Կուսակցությունը հայցվորին չտրամադրելով նրա կողմից հարցվող տեղեկատվությունը, թույլ չի տվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի խախտում:

Դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 8-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաեւ այն, որ Դատարանը խախտել է նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջը:

Դատարանը վճռում վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի դրույթը, ցանկացել է հիմնավորել այն, որ իբրեւ Կուսակցությունը հայցվորի հարցմանը պատասխանելու պարտավորություն է կրել, սակայն հոդվածի դրույթը պարտավորությունը սահմանել է բացառապես իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ պաշտոնատար անձանց համար: Այս հանգամանքը վկայում է Դատարանի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտման հաջորդ փաստի մասին, քանի որ Դատարանը սխալ է մեկնաբանել եւ կիրառել ՀՀ Սահմանադրության 27.1 Վերջ հոդվածի դրույթը:

Դատարանը վճռում նշել է.

«Պատասխանող «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը, լինելով պատշաճ ծանուցված գործով նշանակված բոլոր դատական նիստերի, այդ թվում՝ նախապատրաստական ու դատաքննության մասին, դատարան չի ներկայացել, դատական նիստին չի մասնակցել, ինչպես նաեւ գործի քննության ընթացքում դատարանին բանավոր կամ գրավոր դիրքորոշում չի արտահայտել, չի առարկել հայցի դեմ, այսինքն՝ լինելով պատշաճ ծանուցված՝ գործի քննությանը դատարանին անհայտ պատճառներով չի ներկայացել եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով երկշաբաթյա ժամկետում դատարան չի ներկայացրել հայցադիմումի պատասխան, ինչպես նաեւ չի ներկայացվել դիմում՝ պատասխան ներկայացնելու ժամկետը երկարաձգելու կամ դատական նիստին չներկայանալու եւ նիստը հետաձգելու վերաբերյալ, ուստի դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասով, պատասխանողի կողմից սահմանված ժամկետում պա-



տասխան չներկայացնելը գնահատել է՝ որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած եւ դատաքննությամբ հիմնավորված փաստերի ընդունում»

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներում պատասխանողի կողմից պատասխան չներկայացնելու հանգամանքի վերաբերյալ արտահայտել է իր դիրքորոշումը, ըստ որի՝ պատասխան չներկայացնելը չի կարող համարվել պատասխանողի կողմից հայցվորի ներկայացված պահանջի ընդունում, քանի որ պատասխանողը զրկված չէ իր առարկությունները ներկայացնել դատական նիստի ժամանակ:

12.12.2012թ.-ին նշանակված դատական նիստն անհասկանալի պատճառով չկայանալու արդյունքում Կուսակցությունը զրկվել է Դատարանում իր հակափաստարկները ներկայացնելու հնարավորությունից, ինչը հիմնավորում է այն, որ Դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտում:

Ինչ վերաբերում է Դատարանի վճռում նշված «Գործի քննության ընթացքում դատարանին բանավոր կամ գրավոր դիրքորոշում չի արտահայտել» եւ «Սույն գործի փաստերով ու դատաքննությամբ մի կողմից դատարանը պարզել է ու հաստատված է համարել, որ պատասխանող կուսակցությունը չունի որեւէ հակափաստարկ ընդդեմ հայցով ներկայացված պահանջի ու պահանջվող տեղեկատվությունը տրամադրվելու իրավաչափության հարցի շուրջ, ու չի նշել, թե արդյո՞ք հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվության մասով վերջինս սահմանափակված է այն ստանալու իրավունքից, ու որքանո՞վ է իրավաչափ /ի՞նչ իրավական ու փաստական հիմքերով/ իր՝ որպես տեղեկատվությունը առաջնահերթ տնօրինող սուբյեկտի, հայցվող տեղեկատվությունը տեղեկատվություն փնտրողին չտրամադրելու իր վարքագիծը, քանի որ պատասխանող կողմը, դատաքննությամբ դատարանին հայցադիմումի պատասխան չներկայացնելով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով արդեն իսկ ընդունել է հայցադիմումում վկայակոչված փաստերը» նախադասություններին, նշել է, որ Կուսակցության նախագահը մինչեւ 18.09.2012թ.-ի նախնական դատական նիստը կայանալը հեռախոսով Դատարանին հայտնել է սույն բողոքում նշված Կուսակցության եւ դիրքորոշումը, եւ առարկությունները, եւ հակափաստարկները, հետեւաբար իմաստագուրկ է դառնում Դատարանի կողմից նշված փաստարկները:

Դատարանի կողմից դատավարական իրավունքի նորմերի հաջորդ խախտումը կայանում է նրանում, որ Դատարանը դատաքննության ընթացքում՝ որպես ապացույց է ընդունել հայցվորի կողմից ներկայացված պատճենի տեսքով իր եւ իր ներկայացուցիչի միջեւ կնքված պայմանագիրը, վճարման հանձնարարականը, եւ դրանք հետագուտել ու գնահատել է որպես ապացույցներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ դատաքննությունն սկսվելուց հետո գործին մասնակցող անձի ներկայացրած լրացուցիչ ապացույցներն ընդունում է դատարանը, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է մինչեւ դատաքննությունը սկսվելը նման ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով, իսկ 54-րդ հոդվածի 2-րդ մասում էլ նշված է, որ գրավոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձեւով:

Հայցվոր կողմը գրկված չի եղել նախքան դատաքննությունը սկսվելը նշված փաստաթղթերը դատարան ներկայացնելու հնարավորությունից, իսկ Դատարանն էլ պարտավոր էր չընդունել դրանք: Ավելին՝ հայցվորի ներկայացրած փաստաթղթերն եղել են պատճենի տեսքով, հետեւաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով դրանք չեն համարվել ապացույցներ, իսկ քանի որ դրանք չեն համարվել ապացույցներ, հետեւաբար, Դատարանն իրավունք չուներ դրանք գնահատել եւ հետազոտել, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Կուսակցության կողմից թույլ չի տրվել վճռում նշված եւ ոչ մի նորմատիվ իրավական ակտի աննշան խախտում ,ինչի արդյունքում էլ ակնհայտ է, որ հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումն ամբողջությամբ անհիմն ու առարկայազուրկ է, ինչը նշանակում է, որ նրա կողմից կատարված դատական ծախսերն եղել են ոչ իրավաչափ եւ անտեղի, ուստի Դատարանը պարտավոր էր թույլ չտալ նյութական եւ դատավարական իրավունքի նորմերի խախտումներ եւ հայցադիմումն ամբողջությամբ մերժելու մասին վճիռ կայացնել, իսկ դատական ծախսերի հարցը համարել անհիմն:

Խնդրել է վերաքննիչ բողոքը բավարարել՝ ամբողջությամբ բեկանել եւ փոփոխել Դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ԵԿԴ/1524/02/12 վճիռը եւ կայացնել նոր՝ հայցադիմումը մերժելու մասին դատական ակտ:

**3. Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

1. 25.04.2012թ.-ի գրությամբ Կազմակերպության կողմից հարցում է կատարվել Կուսակցությանը՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը, այն է՝ 25.04.2012 թ. դրությամբ Կուսակցությունը որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար, ծախսած գումարից որքա՞նն է կազմում կուսակցության սեփական միջոցները, որքանը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:
2. 16.05.2012թ.-ի գրությամբ Կազմակերպության կողմից կրկնակի հարցում է կատարվել Կուսակցությանը՝ խնդրելով տրամադրելու դեռեւս 25.04.2012թ. հարցմամբ պահանջված տեղեկատվությունը, որտեղ նշվել է նաեւ, որ մինչ օրս պատասխան չի ստացվել, ուստի Կազմակերպությունը մեկ անգամ եւս Կուսակցությունից խնդրել է տրամադրել հայցվող տեղեկատվությունը:
3. Փոստային համապատասխան բաժանմունքի «Հայփոստ»-ի կողմից կնիքով վավերացված քաղվածքի համաձայն՝ Կազմակերպության կողմից 25.04.2012 թվականին հարցումներ են ուղարկվել ՀՀ գործող կուսակցություններին ու դաշինքին, այդ թվում նաեւ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը:
4. Փոստային համապատասխան բաժանմունքի «Հայփոստ»-ի կողմից կնիքով վավերացված քաղվածքի համաձայն՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 16.05.2012թ.-ին հարցումներ են ուղարկվել ՀՀ գործող կուսակցություններին ու դաշինքին, այդ թվում՝ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը:

5. Կազմակերպության 25.04.2012թ.-ի եւ 16.05.2012թ.-ի հարցումներից ոչ մեկին Կուսակցության կողմից չի պատասխանվել:

**4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները եւ եզրահանգումը.**

Քննելով վերաքննիչ բողոքը նշված հիմքերի եւ հիմնավորումների սահմաններում՝ վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքն անհիմն է, այն ենթակա չէ բավարարման՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը քննում է բողոքում նշված հիմքերի եւ հիմնավորումների սահմաններում, իրավասու է անդրադառնալ միայն այն հարցերին, որոնք վերաբերում են գործին մասնակցող անձանց, սույն վեճի առարկային, բխում են հայցի հիմքերից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 01.02.2008 թ.-ի թիվ 3-89 (ՏԴ) որոշման մեջ նշել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետեւությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը եւ փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը եւ ներքին համոզվունքը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանի կողմից սույն քաղաքացիական գործով իրականացվել է ապացույցների բազմակողմանի եւ օբյեկտիվ քննություն, գործով ներկայացված բոլոր ապացույցները գնահատվել են իրենց համակցության մեջ, ինչի արդյունքում կայացվել է իրավաչափ դատական ակտ: Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է գալիս՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 25.04.2012թ.-ի, այնուհետեւ 16.05.2012թ.-ի գրությամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հարցում է կատարվել «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը, այն է՝ 25.04.2012թ.-ի դրությամբ Կուսակցությունը որքան գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար, ծախսած գումարից որքանն է կազմում կուսակցության սեփական միջոցները, որքանը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը, Կուսակցությունը Կազմակերպության թե՛ 25.04.2012թ.-ի, թե՛ 16.05.2012թ.-ի հարցումներից եւ ոչ մեկին չի պատասխանել: Ներկայումս Կազմակերպությունը, դիմելով դատարան, պահանջել է պարտավորեցնել Կուսակցությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկությունը հետեւյալի մասին.

1. 25.04.2012թ.-ի դրությամբ Կուսակցությունը որքան գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքանն է կազմում կուսակցության սեփական միջոցները, որքանը՝ Կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները, 2-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

Սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

- տեղեկատվության ազատություն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.
- տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ).
- տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք.
- հանրային նշանակության կազմակերպություն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ.

- հարցում՝ տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում.
- հրապարակում՝ տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով, ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ մատչելի դարձնելը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը, իսկ 3-րդ մասի համաձայն՝ Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

**1.** Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա?

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

**2.** Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումն ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

**3.** Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա

- 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին.
- 2) ներկայացնում է ՀՀ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.
- 3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայատանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

Վերը նշված իրավանորմերի եւ սույն քաղաքացիական գործում առկա փաստական հանգամանքների համարդման արդյունքում՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Կազմակերպությունը, օգտվելով իր փնտրած տեղեկությունը ծանոթանալու իրավունքից, դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով փնտրել եւ հարցմամբ դիմելով տեղեկատվության տնօրինողին՝ պահանջել է որոշակի տեղեկություն, սակայն տեղեկատվություն տնօրինողը, տվյալ դեպքում՝ Կուսակցությունը, որեւէ կերպ չի արձագանքել վերը նշված թե՛ 25.04.2012թ.-ի, թե՛ 16.05.2012թ.-ի հարցումներին:

Այս պայմաններում՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, դատաքննությամբ պարզելով, որ Կազմակերպության կողմից 25.04.2012թ.-ի գրությամբ հայցված տեղեկատվությունը համապատասխանել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, իսկ տվյալ գրության 2-րդ կետով ներկայացված, ինչպես նաեւ Կազմակերպության կողմից 16.05.2012 թ.-ի գրությամբ կրկին պատասխանողից հայցված՝ հարցերին ի պատասխան տեղեկատվություն տրամադրելու մասին խնդրանքը պատասխանող կուսակցության կողմից գրավոր կերպով չի մերժվել, սակայն հայցվող տեղեկատվությունն առհասարակ չի տրամադրվել, հետեւապես՝ տեղեկատվություն տրամադրելու խնդրանքը կուսակցության կողմից մերժվել է՝ այն առհասարակ չտրամադրվելու հիմքով, որ պատասխանող կուսակցությունը չունի որեւէ հակափաստարկ ընդդեմ հայցով ներկայացված պահանջի ու պահանջվող տեղեկատվությունը տրամադրվելու իրավաչափության հարցի շուրջ, որ չի նշել, թե արդյոք հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվության մասով վերջինս սահմանափակված է այն ստանալու իրավունքից, ու որքանով է իրավաչափ իր՝ որպես տեղեկատվությունը առաջնահերթ տնօրինող սուբյեկտի, հայցվող տեղեկատվությունը տեղեկատվություն փնտրողին չտրամադրելու իր վարքագիծը, որ Կուսակցության՝ 25.04.2012թ. դրությամբ նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար ծախսված գումարի չափը, ինչպես նաեւ այդ գումարի մի մասը կուսակցության սեփական միջոցները հանդիսանալու ու կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումար հանդիսանալու վերաբերյալ տեղեկությունները ստանալու տեղեկատվություն փնտրողի իրավունքները որեւէ կերպ սահմանափակված չեն եւ ոչ մի իրավական նորմով, որ հայցվորի կողմից կրկնակի անգամ պահանջված տեղեկատվությունն օրենքի ուժով հրապարակման ենթակա է, հետեւապես՝ դրանք ենթակա են տրամադրման օրենքով սահմանված կերպով շահագրգիռ անձի կողմից նման տեղեկատվություն ստանալու հայցվող դիմումի առկայության դեպքում եւ այն էլ այն դեպքում, երբ տեղեկատվություն փնտրողը՝ սգործով հայցվորը, հասարակական կազմակերպություն է, որ հայցվորի կողմից փնտրված տեղեկությունը պետք է ծառայեր կազմակերպության՝ հասարակության համար օգտակար նպատակին, ինչը համահունչ է կուսակցությունների՝ հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելու գործունեություն ծավալելու հիմնական նպատակի հետ, որ կուսակցությունն ինքը պետք է դրսևորեր շահագրգռվածություն օրենքով սահմանված կարգով տրամադրելու հայցվող

տեղեկությունը, որը պայմանավորված է նաեւ իր գործունեության հիմնական նպատակով, որ պատասխանողին ուղղված գրությունների մեջ վկայակոչված հարցերը հիմնավորելու որեւէ պարտավորություն պատասխանող կողմը չէր կրում եւ պարտավոր չէր հայցվող տեղեկատվությունը փնտրել այլ մարմնից՝ անկախ այդ հնարավորության առկայության փաստից, քանի որ տեղեկատվություն փնտրողն ինքն է իր հայեցողությամբ որոշում թե՛ հայցվող տեղեկատվության բնույթը, թե՛ մարմինը, որը տնօրինում է հայցվող տեղեկատվությունը, իսկ օրենքն այս առումով որեւէ սահմանակում չի նախատեսում, իրավացիորեն գտել է, որ Կազմակերպության հայցն ենթակա է բավարարման:

Վերը նշված պատճառաբանությամբ բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ Կուսակցությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված տեղեկատվություն տնօրինող սուբյեկտ չէ, հետեւաբար էլ նա պարտավոր չի եղել հայցվորին տրամադրել նրա կողմից հարցվող տեղեկությունը, որ հայցվորը հնարավորություն է ունեցել իր կողմից հայցվող տեղեկատվությունն այլ տեղեկատվական աղբյուրից՝ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտից ստանալ, մասնավորապես՝ ՀՀ ԿԸՀ-ից կամ էլ օգտվել նրա պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունից, որ հայցվորը զրկված չի եղել փնտրվող տեղեկությունը Կուսակցության կողմից չտրամադրելու պարագայում այլ աղբյուրից ստանալու հնարավորությունից, Վերաքննիչ դատարանն գտնում է անհիմն, վերաքննիչ բողոքը բավարարելու ոչ բավարար հիմք, նկատի ունենալով, որ տեղեկատվություն փնտրողը տեղեկություններ ունեցող Կուսակցությունից տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իր իրավունքը իրականացրել է տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով վերը նշված օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր հարցմամբ (դիմումով), իսկ դրա իրականացման ազատությունը կարող է սահմանափակվել ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում, որպիսի հանգամանքները տվյալ դեպքում առկա չեն:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել նաեւ, որ քննվող գործով հայցվորի կողմից 25.04.2012թ.-ին եւ 16.05.2012թ.-ին գրավոր դիմումներով պահանջված նույնաբովանդակ տեղեկատվությունն իր բնույթով օրենքով տարածման ոչ ենթակա տեղեկատվություն չէ, ավելին՝ այն Սահմանադրությամբ ու օրենքով սահմանված կերպով հրապարակվող տեղեկատվություն է, սակայն տեղեկատվությունը չի տրամադրվել պատասխանողի կողմից՝ առանց որեւէ պատճառաբանությամբ, իսկ Օրենքի ուժով պատասխանողը պարտավոր էր տրամադրելու իր տնօրինության ներքո գտնվող ու հայցվող ամբողջ տեղեկությունները, որը բաց է հանրության համար, հետեւապես՝ նաեւ օրենքով պաշտպանված չէ:

Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ 18.09.2012 թ.-ին նշանակված նախնական նիստին որպես Կուսակցության ներկայացուցիչ ներկայացել է Սուրեն Մովսիսյանը, ով այդ ժամանակ չի ունեցել լիազորագիր եւ զրկված է եղել ներկայացնելու Կուսակցության շահերը եւ ներկայացված հայցադիմումի վերաբերյալ Կուսակցության առարկությունները, իսկ 12.12.2012 թվականի ժամը 15.00-ին կայանալիք դատական նիստին լիազորագրով ներկայացել է փաստաբան, սակայն դատական նիստը Դատարանի կողմից չի բացվել, նշված օրը դատական նիստ չի կայացել, ապա Վերաքննիչ դատա-

րանն այն նույնպես գտնում է անհիմն, վերաքննիչ բողոքը բավարարելու ոչ բավարար հիմք՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

Գործի նյութերի, մասնավորապես դատական նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունից պարզվեց, որ 13.11.2012թ.-ի որոշմամբ Դատարանը վերսկսել է թիվ ԵԿԴ/1524/02/12 քաղաքացիական գործի վարույթը եւ հռչորդ դատական նիստը նշանակել է 12.12.2012թ.-ի ժամը 15:00-ին, Դատարանի վերը նշված որոշումը 16.11.2012 թվականին փոստային առաքման միջոցով ուղարկվել է Կուսակցությանը, որն էլ վերջինս ստացել է 03.12.2012 թ.-ին (հատ. 1-ին, գ.թ.32,33), այսինքն՝ վերջինս պատշաճ ծանուցված է եղել դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին, սակայն 12.12.2012թ.-ի ժամը 15:00-ին նշանակված դատական նիստին չի ներկայացել: Դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերը պատշաճ տեղեկացված են դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով գործը քննել է պատշաճ ծանուցված հայցվորի եւ նրա ներկայացուցչի բացակայությամբ:

Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով վերաքննիչ բողոքի մյուս փաստարկներին, գտնում է, որ սույն քաղաքացիական գործով Դատարանը բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտմամբ եւ պատշաճ գնահատմամբ կայացրել է օրինական եւ հիմնավորված վճիռ, որը բեկանելու հիմքեր վերաքննիչ բողոքում առկա չեն: Հետեւաբար՝ Վերաքննիչ դատարանը անհիմն է համարում վերաքննիչ բողոքում նշված նյութական, դատավարական մի շարք իրավանորմերի խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոք բերած անձի պատճառաբանությունները՝ միաժամանակ նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքում բացակայում են դրանց իրավական հիմնավորումները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ, 221-րդ հոդվածներով՝ վերաքննիչ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

«Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժել:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ԵԿԴ/1524/02/12 վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ սույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան:

Նախագահող դատավոր՝ Գ. ՄԱՏԻՆՅԱՆ

դատավոր՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

դատավոր՝ Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՈՎԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1524/02/12

Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան

Դատավորներ՝ Լ. Գրիգորյան

Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՄ

ՎՃՈՎԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26» հունիսի 2013թ.

ք.Երեւան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը

Նախագահությամբ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

մասնակցությամբ՝ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ,

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ,

Ս. ԴՐՄԵՅԱՆԻ,

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ,

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

քննարկելով ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն)՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.05.2013 թվականի որոշման դեմ Կուսակցության բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը,

**ՊԱՐԶԵՑ**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է պարտավորեցնել Կուսակցությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկությունը, ինչպես նաեւ վերջինիցս բռնագանձել 250.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության ծախս:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ (այսուհետ՝ Դատարան) 21.12.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. վճռվել է «Ճանաչելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը՝ պարտավորեցնել «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը տրամադրելու տեղեկատվություն առ այն, թե «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ. դրությամբ որքան գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:

նացնելու համար, ինչպես նաև տրամադրել տեղեկատվություն առ այն, թե ծախսած գումարից որքանն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքանը կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը: «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունից հոգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես խախտված իրավունքը վերականգնելու համար հայցվորի կողմից փաստացի կատարված խելամիտ, ողջամիտ ու անհրաժեշտ փաստաբանի վարձատրության գումար»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.05.2013թ.-ի որոշմամբ Կուսակցության վերաքննիչ բողոքը մերժվել է եւ Դատարանի 21.12.2012թ.-ի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կուսակցությունը եւ պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.05.2013 թվականի որոշումը:

Վճռաբեկ դատարանը, քննարկելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում նույն օրենսգրքի 231-րդ հոդվածի եւ 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, նոր երեւան եկած կամ նոր հանգամանքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ եւ 5-րդ ենթակետերի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ եւ նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, եւ դրանց հիմնավորումները, կամ որոնք են նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հետեւանքով գործի վերանայման հիմքերը, նույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի որեւէ ենթակետի հիմնավորումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե Վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտն առերեւույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերեւույթ դատական սխալ, առկա է նոր երեւան եկած կամ նոր հանգամանք:

Վերլուծելով բողոք բերած անձի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավար-

րական իրավունքի խախտում: Հետեւաբար բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ եւ 5-րդ ենթակետերի, 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: Հետեւաբար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջին համապատասխան՝ այն ենթակա է վերադարձման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ, 233-րդ եւ 234-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վերադարձնել թիվ ԵԿԴ/1524/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.05.2013 թվականի որոշման դեմ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցության բերած վճռաբեկ բողոքը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից եւ ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**  
 Դատավորներ՝  
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆ  
 Վ. ԱԲԵԼՅԱՆ  
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ  
 Մ. ԴՐՄԵՅԱՆ  
 Է. ՀԱՅՐԻՅԱՆ  
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

**Գործ 9.**  
**ԻԱԿ-ն ընդդեմ**  
**Քարգավան Հայաստան**  
**կուսակցության**

## Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ. ապրիլի 25-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Բարգավաճ Հայաստան կուսակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին՝ խնդրելով տրամադրել հետ-յալ տեղեկությունները.

1. Բարգավաճ Հայաստան կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ հրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

ԲՀԿ-ն ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: Ուստի, 2012թ. մայիսի 16-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցում ուղարկեց Բարգավաճ Հայաստան կուսակցությանը, որը նույնպես մնաց անպատասխան:

2012թ. հուլիս 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմեց Երեւան քաղաքի Արաբկիր եւ Զանաբեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ԲՀԿ-ին 5-օրյա ժամկետում տրամադրել ամբողջական տեղեկատվություն:

2012թ. սեպտեմբերի 12-ին նշանակվել էր ԻԱԿ-ն ընդդեմ ԲՀԿ-ի գործով առաջին դատական նիստը: Նշենք, որ մինչ սեպտեմբերի 12-ը՝ 2012 թ.-ի սեպտեմբերի 4-ին, ԲՀԿ-ն տրամադրեց դատական գործի առարկա դարձած ամբողջ տեղեկատվությունը (*կուսակցության տրամադրած տեղեկությունները հասանելի են ԻԱԿ-ի [www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am) կայքում*): Բացի այդ, սեպտեմբերի 5-ին ԲՀԿ-ն դիմել էր դատարան՝ հայտնելով, որ կատարել է ԻԱԿ-ի պահանջը՝ միջնորդելով գործի վարույթը կարճել:

Ուստի, մինչեւ դատական նիստը ԻԱԿ-ը դիմում ներկայացրեց դատարան, նշելով, որ չի առարկում գործի վարույթը կարճելու դեմ, պայմանով, որ դատարանը կամ պետք է լուծի պետական տուրքի հարցը, եւ հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնազանձվի վճարված պետական տուրքը, կամ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը պետք է ՀՀ-ին կամավոր փոխանցի վճարված պետական տուրքի գումարը:

Մինչ դատական նիստը ԲՀԿ-ն կամավոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոնին» փոխանցեց ԻԱԿ-ի վճարած պետական տուրքի գումարը: Ուստի, 2012թ.-ի հոկտեմբերի 10-ին դատարանն ԻԱԿ-ն ընդդեմ Բարգավաճ Հայաստան կուսակցության դատական գործը կարճելու մասին վճիռը կայացրեց:

## Գործի նյութերը

ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱԹԻ ԱՐԱԲԿԻՐ ԵՎ ԶԱՆԱԶԵՌ-ՁԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ

ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն, նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Պատասխանող՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

19.06.2012թ.

### Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին

#### 1. Գործի մինչդատական նախապատմությունն ու փաստերը

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը ԱԺ ընտրություններին մասնակցող «Բարգավաճ Հայաստան», «Ժառանգություն», «ՀՅԴ», «ՀԴԿ», «ՀՅԿ», «ՀՅԿ», «ՄՅԿ», «ՕԵԿ» կուսակցություններին ու «ՀԱԿ» դաշինքին 25.04.2012թ.-ին նախընտրական քարոզարշավ իրականացնելու ծախսերի վերաբերյալ «Տեղեկատվություն ստանալու հարցում» է արել: Հարցմանը կուսակցությունների մի մասը պատասխանել է, իսկ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ չի պատասխանել: Վերջինիս ուղղված հարցումը հետեւյալն է եղել. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային քաղվածքի օրինակներով:

16.05.2012թ.-ին «Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում» է ուղարկվել՝ հետեւյալ բովանդակությամբ. «Հարգելի պարոն Ծառուկյան, 2012թ.-ի ապրիլի 25-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:

2. Ծախսած գումարներից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

Սակայն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մինչ օրս պատասխան չի ստացել: Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները»:

Նշված փաստը հաստատվում է 16.05.2012թ.-ի փոստային քաղվածքով եւ հարցման օրինակով: Կրկնակի հարցմանը եւս պատասխան չի տրվել:

## 2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա»: Նույն օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կուսակցությունը պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, մամուլում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած

Եւ ծախսած միջոցների մասին հաշվետվություն (այսուհետ՝ հաշվետվություն) եւ օրենքով նախատեսված դեպքերում դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, ինչպես նաեւ սահմանված կարգով այն տեղադրել Յայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում»:

Վերը նշվածից հետեւում է, որ ՀԿ-ի կողմից հարցված տեղեկատվությունը գաղտնի չէ, ավելին՝ բաց տեղեկատվություն է, իսկ Կուսակցությունն էլ պարտավոր է տարվա կտրվածքով այդ մասին մամուլով հրապարակել, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանողը չի տրամադրել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր-ի օրենսգրքի 2, 87 հոդվածներով՝

### Խնդրում եմ

«Բարգավաճ Հայաստան» Կուսակցությանը պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրելու հայցված տեղեկատվությունը հետեւյալի մասին.

1. «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:
3. Խնդրում ենք լուծել նաեւ պետական տուրքի եւ դատական ծախսերի հարցը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. լիազորագիր,
3. հարցումների օրինակները,
4. փոստային քաղվածքներ,

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ՝

Շուշան Դոյրոյան



Գործ համար ԵԱԲԴ /1239/02/12

**ՎՃԻՌ**

**Հանուն Հայաստանի Հանրապետության**

10.10.2012թ.

Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը

Նախագահությամբ դատավոր՝ Ս. Արամյանի  
քարտուղարությամբ՝ Ս. Սամսոնյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության /ՅՎՀԴ՝ 02568394, ՊԳՎ՝ թիվ 211 171 01863/ ընդդեմ «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին.

**ՊԱՐԶԵՑ**

**1. Դատավարական նախապատմությունը**

Հայցադիմումը մուտք է եղել դատարան 2012թ.-ի հուլիսի 2-ին, եւ այն դատարանի 04.07.2012թ.-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը, դիմելով դատարան, խնդրել է «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությանը պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրելու հայցված տեղեկատվությունը հետեւյալի մասին՝ «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքան գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար: Ծախսած գումարներից որքանն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքանը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը, ինչպես նաեւ լուծել պետական տուրքի եւ դատական ծախսերի հարցը:

Սույն գործը չի նախապատրաստվել դատաքննության՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222 գլխի կանոններով: Պատասխանողի կողմից 10.09.2012թ.-ին դատարանում մուտքագրվել է հայցադիմումի պատասխան: Գործում չեն ներգրավվել երրորդ անձինք:

**2. Հայցվորի դիրքորոշումը**

Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 12.09.2012թ.-ին դատարանում մուտքագրել է դիմում, որով դատարանին հայտնել է, որ «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունից ստացվել է պատասխան, ինչպես նաեւ միջնորդություն՝ գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթի կարճմանը իրենք դեմ չեն լինի, եթե դատարանը լուծի պետական տուրքի հարցը եւ հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀՀ-ի բռնագանձվի վճարված պետական տուրքը կամ եթե «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունը կամավոր ՀՀ-ին փոխանցի վճարված պետական տուրքի գումարը:

### 3. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանող «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունը 10.09.2012թ.-ին դատարանին է ներկայացրել հայցադիմումի պատասխան, որով դատարանին հայտնել է, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը կատարել է հայցվորի պահանջը 04.09.2012 թ.-ին:

«Բարգավաճ Հայաստան» Կուսակցության աշխատակազմի ղեկավար Ռ. Մանուկյանը 01.10.2012թ.-ին դատարանում մուտքագրել է դիմում, որով դատարանին հայտնել է, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը կամավոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հաշվին է փոխանցել նշված կազմակերպության կողմից վճարված պետական տուրքի գումարը՝ 4000 դրամ, որի հիմքով էլ խնդրել է կարճել թիվ ԵԱԶԴ /1239/02/12 քաղաքացիական գործի վարույթը:

### 4. Դատարանի վերլուծությունը եւ կիրառելի իրավունքը

Ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը, ներկայացված դիմումը՝ դատարանը գտավ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետի հիմքով գործի վարույթը ենթակա է կարճման, համաձայն որի՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

Փաստորեն հայցվորի գրությունում նշված պայմանը պատասխանողի կողմից կատարվել է, որի դեպքում հայցվորը դեմ չէ գործի վարույթը կարճելուն, այսինքն հայցը չի պնդում, քանի որ պահանջը պատասխանողը կատարել է:

Առաջնորդվելով վեոգրյալ պատճառաբանությամբ եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետով, 130-131 հոդվածներով, դատարանը.

#### ՎճՌԵՑ

1. Թիվ ԵԱԶԴ /1239/02/12 քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին, կարճել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Սույն դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ նշված ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ս. ԱՐԱՄՅԱՆ

**Գործ 10.**  
**ԻԱԿ-ն ընդդեմ**  
**ՀՀ ֆինանսների նախարարության,**  
**ՀՀ ՖՆ Լիցենզավորման**  
**գործակալության եւ**  
**ՀՀ ՖՆ Ֆինանսական**  
**վերահսկողության տեսչության**

## Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ. մայիսի 29-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցումներով դիմել էր ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանին եւ ֆինանսական վերահսկողության տեսչության պետ Սոնա Ղարիբյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ստացե՞լ են արդյոք պարզեւատրումներ (պարզեւավճարներ, նվերներ) Լիցենզավորման գործակալության (ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության (ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցների ստացած դրամական պարզեւատրումների ընդհանուր գումարը:
4. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության (ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Ի պատասխան ԻԱԿ-ի հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել էր թերի պատասխան: Պատասխանը համարվել էր թերի, քանի որ չէին տրամադրվել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի խնդրած՝ Լիցենզավորման գործակալության եւ ֆինանսական վերահսկողության տեսչության՝ պարզեւատրում ստացած աշխատակիցների եւ յուրաքանչյուրի ստացած դրամական պարզեւ-

ատրումների չափի մասին տեղեկությունները (2-րդ հարցի պատասխանը): Ուստի 2012թ. հունիսի 23-ին ԻԱԿ-ը կրկին հարցումներ ուղարկեց՝ խնդրելով տրամադրել ամբողջական եւ սպառիչ տեղեկատվություն:

Ի պատասխան կրկնակի հարցումներին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվեց գրություն, որով մերժվեց հարցումների 2-րդ կետով խնդրված տեղեկատվության տրամադրումը՝ այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է:

Նշենք, որ ԻԱԿ-ը խնդրել է պարզեւատրում ստացած աշխատակիցների մասին տեղեկություն ըստ հաստիքների, այսինքն՝ ոչ անվանական: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդն ի պատասխան ԻԱԿ-ի՝ 2012թ. հունիսի 13-ի հարցման, իր՝ 2012թ. հունիսի 18 թվագրված գրությամբ հայտնել էր, որ քաղաքացիական ծառայողների ստացած պարզեւատրումների արժեքի մասին տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ չկան: Վերոնշյալ երկու պայմանների համակցությունը ցույց է տալիս, որ խնդրվող տեղեկությունը չի վերաբերում անհատական քաղաքացիական ծառայողի անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

Արդյունքում՝ 2012թ. հունիսի 24-ին ԻԱԿ-ը հայցով դիմեց ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով.

1. Ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ ՀՀ ֆինանսների նախարարությանը պարտավորեցնել տրամադրել

պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե 2011թ.-ին Լիցենզավորման գործակալության եւ Ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցներն ըստ հաստիքների ինչքա՞ն գումարով են պարգևատրվել (հարցումների 2-րդ հարցեր):

2. Պահանջվող տեղեկությունների տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանի կողմից երկու անգամ մերժելու, ինչպես նաեւ ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանի եւ ՀՀ ֆինանսների նախարարության Ֆինանսական վերահսկողության տեսչության պետ Սոնա Ղարիբյանի կողմից տեղեկատվություն տրամադրելու հարցումներին չպատասխանելու եւ այդ ձեւով պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար, նրանցից յուրաքանչյուրին տուգանել 30.000 (երեսուն հազար) դրամի չափով:

2013թի մարտի 20-ին ՀՀ վարչական դատարանը հրապարակեց իր վճռը, որով ամբողջությամբ մերժեց ԻԱԿ-ի հայցը: ԻԱԿ-ը 2013թ.-ի հունիսի 1-ին բողոքարկեց ՀՀ վարչական դատա-

րանի վճիռը ՀՀ վերաքննիչ վարչական դատարան: Դատավարության ընթացքում, սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը տրամադրեց դատական գործի հիմք դարձած տեղեկությունները, եւ ԻԱԿ-ը պատրաստվում է հաշտություն կնքել պատասխանող կողմերի հետ (ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած տեղեկությունները հասանելի են ԻԱԿ-ի [www.foi.am](http://www.foi.am) կայքի «Ռազմավարական դատավարություն» բաժնի «Դատական գործեր» ենթաբաժնում, գործ՝ թիվ 36):

2013թ.-ի հունիսի 1-ին ԻԱԿ-ը բողոքարկել է ՀՀ վարչական դատարանի վճիռը ՀՀ վերաքննիչ վարչական դատարան: Դատական առաջին նիստը տեղի կունենա 2013թ.-ի սեպտեմբերի 12-ին, ժամը 15:30-ին: Նշենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը դատաքննության ընթացքում տրամադրել է դատական գործի առարկա դարձած տեղեկությունները, ուստի ԻԱԿ-ը պատրաստվում է հաշտություն կնքել պատասխանողների հետ:

## Գործի նյութերը

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն, Նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան

Պատասխանողներ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն,  
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար՝  
Արմեն Շահնազարյան

ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության պետ՝ Կարեն Թամազյան

ՀՀ ֆինանսների նախարարության Վերահսկողության տեսչության պետ՝ Սոնա Ղարիբյան

23.07.2012թ.

### Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Իրավունքի խախտման փաստը ճանաչելու, վարչական պատասխանատվության ենթարկելու եւ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին

#### 1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ԻԿԿ) 29.05.2012թ-ին թիվ 173-ի 3 եւ 4 համարի գրություններով հետեւյալ բովանդակությամբ Տեղեկատվություն ստանալու հարցումներ են ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանին եւ ֆինանսական վերահսկողության տեսչության պետ Սոնա Ղարիբյանին. «Տեղեկատվություն ստանալու հարցում.

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմ տրամադրել հետեւյալ տեղեկությունները:

1. Ստացել են արդյոք պարզեատրումներ (պարզեաձևեր, նվերներ) Լիցենզավորման գործակալության (ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության (ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցների ստացած դրամական պարզեատրումների ընդհանուր գումարը:
4. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության (ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված հարցումներով առաջադրված հարցերի մի մասին պատասխան է տրվել պատասխանողի 15.06.2012թ. N1.1/1.5/7975-12 գրությամբ:

Նշված փաստերը հաստատվում են 29.05.2012թ. թիվ 173-ի 3 եւ 4 հարցումների եւ 15.06.2012թ. N1.1/1.5/7975-12 պատասխանի օրինակներով:

Առաջին հարցումների թերի պատասխանը ստանալուց հետո 23.06.2012թ. թիվ 174-ի 8 եւ 9 հարցումներով ԻԱԿ-ը կրկին դիմել է հետեւյալ հարցումներով «2012թ.-ի մայիսի 29-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ստացել են արդյոք պարզեատրումներ (պարզեավճարներ, նվերներ) Լիցենզավորման գործակալության (Ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության (Ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցների ստացած դրամական պարզեատրումների ընդհանուր գումարը:
4. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության (Ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Սակայն, «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» ստացել է թերի պատասխան, քանի որ չեն տրամադրվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» խնդրած՝ Լիցենզավորման գործակալության (Ֆինանսական վերահսկողության տեսչության)՝ պարզեատրում ստացած աշխատակիցների եւ յուրաքանչյուրի ստացած դրամական պարզեատրումների չափի մասին տեղեկությունները (2-րդ հարցի պատասխանը):

Նշենք, որ ԻԱԿ-ը խնդրել է պարզեատրում ստացած աշխատակիցների մասին տեղեկություն՝ ըստ հաստիքների, այսինքն՝ ոչ անվանական: Բացի այդ, ՀՀ Զաղաքացիական ծառայության խորհրդի գրության համաձայն՝ քաղաքացիական ծառայողների ստացած պարզեատրումների արժեքի մասին տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ չկան: Վերոնշյալ 2 պայմանների համակցությունը ցույց է տալիս, որ խնդրվող տեղեկությունը չի վերաբերում անհատական քաղաքացիական ծառայողի անձնական կյանքի անձեռնմխելիությանը: Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված վերոնշյալ տեղեկությունները:

Կից ներկայացնում եմ ՀՀ Զաղաքացիական ծառայության խորհրդի գրության պատճենը»:

Նշված հարցմանն ի պատասխան ստացվել է պատասխանողի 03.07.2012թ. թիվ 1.1/1.5/8876-12 գրությունը, որով, հղում կատարելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասին, 134 եւ 136 հոդվածներին, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին ու 2-րդ հոդվածի 11-րդ կետին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին՝ մերժվել է հարցումների 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրումը՝ այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է: Նշված փաստերը հաստատվում են 23.06.2012թ.-ի հարցումներով ու 03.07.2012թ.-ի պատասխանով:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդի աշխատակազմի ղեկավարի 13.06.2012թ.-ի գրության համաձայն ուղղված ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանին՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի հանձնարարությամբ հայտնում եմ, որ քաղաքացիական ծառայողների պարզեւատրումների բնույթի, չափի, արժեքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:

Նշված փաստը հաստատվում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդի աշխատակազմի ղեկավարի 13.06.2012թ.-ի գրությամբ:

## 2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության

- 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի՝

- 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է... հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա»,
- 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են՝ տեղեկություններ ունեցող... պետական հիմնարկներ... եւ դրանց պաշտոնատար անձինք,
- 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:
- 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի



համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ինչպես տեսնում ենք, պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության՝ չի տրամադրել 29.05.2012թ. եւ 23.06.2012թ. հարցումների 2 կետերով պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե աշխատակիցներից ովքեր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքան գումարով (ինչ նվերով):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասին, 134 եւ 136 հոդվածներին, «Զաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին ու 2-րդ հոդվածի 11-րդ կետին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին հղում կատարելով՝ 03.07.2012թ. գրությամբ տեղեկատվության տրամադրման մերժումը եւս անհիմն է, քանի որ տեղեկատվությունը պահանջվել է ըստ աշխատողների հաստիքների, այլ ոչ թե անուն ազգանունների, բացի այդ, աշխատողին տրամադրված պարզելը կամ պարզեւավճարի չափը ո՛չ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131 հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատանքային հարաբերությունների հետ կապված եւ որոշակի աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններ են (աշխատողի անձնական տվյալ) եւ ո՛չ էլ 199-րդ հոդվածով սահմանված՝ աշխատողի աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալներ է:

Այս հարցին անդրադարձել է նաեւ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը՝ իր 07.11.2011թ. թիվ ՎԴ/0480/05/10 որոշմամբ, որի հիմնավորումները ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վկայակոչում ենք որպես իրավական փաստարկ: Նշված դատական ակտով վերաքննիչ դատարանը որոշել է. «Վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011թ.-ի հունիսի 22-ի թիվ ՎԴ/0480/05/10 վարչական գործով կայացրած վճիռը բեկանել եւ փոփոխել՝ կայացնելով նոր դատական ակտ: Այն է՝ Լեւոն Բարսեղյանի հայցը բավարարել մասնակիորեն:

1. Ճանաչել տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը:
2. Պարտավորեցնել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեին, Լեւոն Բարսեղյանին տրամադրել 2010 թվականի հունվարի 18-ի թիվ 1 հարցումով հայցված հետեւյալ տեղեկատվությունը՝ «ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցներից ովքեր են որպես խրախուսանքի միջոց պարգևատրվել «Տերմինալ Պահեստ» ՍՊԸ-ից ձեռք բերված «Breitling» մակնիշի շվեյցարական արտադրության ժամանացույցներով՝ հիշատակել պարգևատրվածներին անուն-ազգանուններով եւ պաշտոններով, ինչպես նաեւ հիշատակելով նրանց հանձնված ժամացույցները՝ ըստ տեսակների»:

Վերաքննիչ դատարանը վերը մեջբերված որոշումը կայացրել է հետեւյալ իրավական հիմնավորումներով. «Բողոք բերած անձի հղումը «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերին, ինչպես

Նաեւ դրա հետ կապված փաստարկները, հիմնավոր չեն՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մշակողի տնօրինության տակ գտնվող անհատական տվյալները խորհրդապահական տեղեկատվություն են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում կարող է սահմանվել անհատական տվյալների հանրամատչելի տեղեկատվության ռեժիմ (հեռախոսային տեղեկատուներ, հասցեների գրքեր, կենսագրական տեղեկատուներ, մասնավոր հայտարարություններ, եկամուտների հայտարարագրում եւ այլն)»: Բողոք բերած անձը, վկայակոչելով նշված իրավական նորմերը, չի հիմնավորել նշված օրենքի իմաստով հայցվող տեղեկատվությունը անհատական տվյալ հանդիսանալու հանգամանքը:

Նման պայմաններում՝ Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծել նշված օրենքով կարգավորվող իրավահարաբերություններին վերաբերող նորմերը:

«Անհատական տվյալների մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենքը կարգավորվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները»:

Նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է, որ «անհատական տվյալ՝ ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը»:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետեւում է, որ օրենքը կարգավորվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները, իսկ անհատական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը:

Այսինքն՝ նշված իրավական նորմերով կարգավորվում են անձի անհատական տվյալների հանրամատչելի տեղեկատվության հետ կապված հարաբերությունները, մինչդեռ տվյալ դեպքում պահանջվում է տրամադրել տեղեկատվություն, որի տրամադրման հետ կապված հարաբերությունները սահմանված են «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցվող տեղեկատվությունը չի հանդիսանում հարկային ծառայողին վերաբերող տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը: Ավելին, այդ տեղեկատվությունը չի կարող համարվել անհատական տվյալ, քանի որ վերաբերում է երկարամյա ծառայության, ծառայողական պարտականությունները եւ հատուկ առաջադրանքները գերազանց

կատարելու, ինչպես նաև աշխատանքի նկատմամբ նվիրվածության համար հարկային ծառայողի նկատմամբ խրախուսանքի տեսակ՝ հուշանվերով պարգևատրում, կիրառելու հետ կապված՝ այսինքն՝ պետական մարմնում գործունեության հետ կապված հարաբերություններին:

Բացի այդ, հարցման պատասխանում նշված օրենքը չի վկայակոչվել, իսկ պահանջվող տեղեկատվությունը, որպես Կոմիտեի համապատասխան աշխատակիցների անհատական (անձնական) կյանքին վերաբերվող տվյալներ, չի դիտվել»:

Ինչպես տեսնում ենք, վարչական վերաքննիչ դատարանը, որպես անհատական տվյալ չի համարել հարցմամբ պահանջվող կոնկրետ անձանց պարգևատրելու վերաբերյալ տեղեկությունները, ուստի առավել եւս այդպիսին չի կարող լինել չկոնկրետացված անձի՝ զուտ հաստիքով, առանց անվան նշման անձի վերաբերյալ նույնաբովանդակ տեղեկությունը, որը ենթակա էր տրամադրման 5-օրյա ժամկետում, սակայն չի տրամադրվել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝

- 189.7-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական... մարմինների... պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով»:
- 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են՝ սույն օրենսգրքի 189.7-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով,
- 254-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն. «Արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի...189.7-րդ հոդվածներով... նախատեսված դեպքերում»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26 գլխում ներառված՝ 151-րդ հոդվածի համաձայն. «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով»:

Պատասխանողներ՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Շահնազարյանը, ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության պետ՝ Կարեն Թամազյանը եւ ՀՀ ֆինանսների նախարարության վերահսկողության տեսչության պետ՝ Սոնա Ղարիբյանը, լինելով պետական մարմնի պաշտոնատար անձինք, պահանջվող տեղեկատվությունը չեն տրամադրել, ուստի ենթակա են վարչական պատասխանատվության:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով ու 26-րդ գլխի պահանջներով՝

**Խնդրում եմ**

1. Ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ ՀՀ ֆինանսների նա-

խարարությանը պարտավորեցնել տրամադրելու պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե 2011թ.-ին Լիցենզավորման գործակալության եւ Ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցները ըստ հաստիքների ինչքան գումարով են պարգևատրվել (հարցումների 2-րդ հարցեր):

2. Պահանջվող տեղեկությունների տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանի կողմից երկու անգամ մերժելու, ինչպես նաեւ ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանի եւ ՀՀ ֆինանսների նախարարության Վերահսկողության տեսչության պետ՝ Սոնա Ղարիբջանի կողմից տեղեկատվություն տրամադրելու հարցումներին չպատասխանելու եւ այդ ձեռով պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար, նրանցից յուրաքանչյուրին տուգանել 30.000 (երեսուն հազար) դրամի չափով:

3. Պատասխանողներից բռնագանձել նաեւ դատական ծախսերի գումարը:

### **ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ**

Եթե դատարանը կգտնի, որ պետք է վճարվեր 8000 դրամից ավել պետական տուրք, ապա, հաշվի առնելով այն, որ հայցվորը ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է եւ այս պահին նյութական սահմանափակ հնարավորություններ ունի, սակայն ցանկանում է օգտվել իր խախտված սահմանադրական իրավունքի դատական պաշտպանության իրավունքից, ուստի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21 եւ 22 հոդվածների համաձայն՝

### **Միջնորդում եմ**

Պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգել եւ հարցը լուծել վեճն ըստ Էության լուծող դատական ակտով:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր.
2. Հարցումները,
3. Պատասխանները,
4. Քաղ. Ծառ. Խորհրդի գրությունը,
5. Հայցադիմումը պատասխանողների կողմից ստանալու մասին ապացույցներ,
6. Լիազորագիր,
7. Արտոնագրի պատճեն:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան

Վարչական գործ ՎԴ/4710/05/12

**Վ Ճ Ի Ռ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

20.03.2013թ.

ք. Երեւան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

Նախագահող դատավոր՝

Կ. Ավետիսյան

քարտուղարությամբ՝

Լ. Սարգսյանի

մասնակցությամբ՝ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչ՝ Կ. Մեծլումյան,

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ նաեւ Կազմակերպության) ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանի, ՀՀ ֆինանսների նախարարության լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանի, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության պետ Սոնա Ղարիբյանի՝ իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է ճանաչել իր իրավունքի խախտման փաստը, պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը եւ տեղեկությունների տրամադրումը մերժելու համար պատասխանող պաշտոնատար անձանց ենթարկել վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատարանի 2012թ.-ի հուլիսի 31-ի որոշմամբ՝ հայցադիմումն ընդունվել է վարույթ, հրավիրվել եւ անցկացվել է նախնական դատական նիստ, իսկ 2012թ.-ի նոյեմբերի 14-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

**2. Հայցվորի իրավական դիրքորոշումը:**

Կազմակերպությունը 2012թ.-ի մայիսի 29-ին թիվ 173-ի3 եւ թիվ 173-ի4 համարի գրություններով տեղեկատվություն ստանալու հարցումներ է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարության լիցենզավորման գործակալության պետին եւ ՀՀ ֆինանսների նախարարության վերահսկողության տեսչության պետին: Նշված հարցումներով առաջադրված հարցերի մի մասին պատասխան է տրվել պատասխանողի 2012թ.-ի հունիսի 15-ի թիվ 1.1/1.5/7975-12 գրությամբ: Առաջին հարցումների թերի պատասխանը ստանալաց հետո՝ 2012 թվականի հունիսի 23-ի թիվ 174-ի 8 եւ թիվ 174-ի 9 հարցումներով կենտրոնը կրկին դիմել է հետեւյալ հարցումներով. «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը»

խնդրել է պարզեատրում ստացած աշխատակիցների մասին տեղեկություն՝ ըստ հաստիքների, այսինքն՝ ոչ անվանական: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի գրության համաձայն՝ քաղաքացիական ծառայողների ստացած պարզեատրումների արժեքի մասին տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ չկան: Վերոնշյալ 2 պայմանների համակցությունը ցույց է տալիս, որ խնդրվող տեղեկությունը չի վերաբերում անհատական քաղաքացիական ծառայողի անձնական կյանքի անձեռնմխելիությանը: Եվս ս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված վերոհիշյալ տեղեկությունները»:

Նշված հարցմանն ի պատասխան՝ ստացվել է պատասխանողի 2012թ.-ի հունիսի 03-ի թիվ 1.1/1.5/8876-12 գրությունը, որով, հղում կատարելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասին, 134-րդ եւ 136-րդ հոդվածներին, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին եւ 2-րդ հոդվածի 11-րդ կետին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, մերժվել է հարցումների 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրումն այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է:

Փաստորեն, չի տրամադրվել տեղեկությունն այն մասին, թե 2011թ.-ին լիցենզավորման գործակալության եւ ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցներն ըստ հաստիքների որքան գումարով են պարզեատրվել:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդի աշխատակազմի ղեկավարի 2012թ.-ի հունիսի 13-ի գրությամբ հայտնվել է, որ քաղաքացիական ծառայողների պարզեատրողների բնույթի, չափի, արժեքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ, նախատեսված չէ:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա: Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են տեղեկություններ ունեցող պետական հիմնարկները եւ դրանց պաշտոնատար անձինք:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած

տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը: Նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվի 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Այնպես է, որ պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության՝ չի տրամադրել 2012 թվականի մայիսի 29-ի եւ 2012 թվականի հունիսի 23-ի հարցումների 2 կետերով պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե աշխատակիցներից ովքեր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքան գումարով:

2012թ.-ի հուլիսի 03-ի գրությամբ տեղեկատվության տրամադրման մերժումը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասին, 134-րդ եւ 136-րդ հոդվածներին, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին ու 2-րդ հոդվածի 11-րդ կետին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին հղում կատարելով)՝ եւս անհիմն է, քանի որ տեղեկատվությունը պահանջվել է ըստ աշխատողների հաստիքների, այլ ոչ թե անուն ազգանունների, բացի այդ աշխատողին տրամադրված պարզեւր կամ պարզեւրված չափը ոչ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ աշխատանքային հարաբերությունների հետ կապված եւ որոշակի աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններ են (աշխատողի անձնական տվյալ) եւ ոչ էլ 199-րդ հոդվածով սահմանված՝ աշխատողի աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալ:

Այս հարցին անդրադարձել է նաեւ վարչական վերաքննիչ դատարանն իր 2011թ.-ի նոյեմբերի 07-ի որոշմամբ (թիվ ՎԴ/0480/05/10 վարչական գործ), որի հիմնավորումները ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարելի է վկայակոչել որպես իրավական փաստարկ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական մարմինների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով: Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են սույն օրենսգրքի 189.7-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով: Նույն օրենսգրքի 254-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում ներառված 151-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են ՀՀ վարչական իրավախախտումների վերաբեր-

յալ օրենսգրքի 223-րդ հոդվածով սահմանված անձանց հայցադիմումով:

Պատասխանողներ ՅՅ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանը, ՅՅ ֆինանսների նախարարության լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանը եւ ՅՅ ֆինանսների նախարարության վերահսկողության տեսչության պետ Սոնա Ղարիբյանը, լինելով պետական մարմնի պաշտոնատար անձինք, պահանջվող տեղեկատվությունը չեն տրամադրել, ուստի ենթակա են վարչական պատասխանատվության:

Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչը խնդրեց հիմք ընդունել հայցադիմումում վկայակոչված փաստարկները եւ հայցը բավարարել՝ միաժամանակ խնդրելով քննարկել նաեւ դատական ծախսերի փոխհատուցման հարցը՝ դատարան ներկայացված ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա:

### 3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը

Պատասխանող ՅՅ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է հայցադիմումի պատասխան՝ վկայակոչելով հետեւյալ առարկությունները:

2012թ.-ի մայիսի 29-ի թիվ 173-ի3 եւ թիվ 173-ի4 գրություններով հայցվորը դիմել է տեղեկատվություն ստանալու համար:

2012թ.-ի հունիսի 15-ի թիվ 1.1/1.5/7975-12 գրությամբ ՅՅ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարը հայցվորին հայտնել է, որ ՅՅ ֆինանսների նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պարգևատրումների համար նախատեսված գումարը 2011 թվականին կազմել է 92.334.100 ՅՅ դրամ: Որպես հավելյալ տեղեկատվություն հայցվորին հայտնվել էր նաեւ, որ ՅՅ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսվել է նաեւ ՅՅ ֆինանսների նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդ (հիմք՝ «ՅՅ բյուջետային համակարգի մասին» ՅՅ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս)՝ 393500.00 հազ. ՅՅ դրամի չափով, ինչպես նաեւ հայտնվել է, որ 2011 թվականին գործակալության եւ տեսչության աշխատակիցները նվերներով չեն պարգևատրվել:

2012թ.-ի հունիսի 23-ի թիվ 174-ի9 եւ թիվ 174-ի8 գրություններով հայցվորը կրկին ներկայացրել է տեղեկատվություն ստանալու վերաբերյալ դիմում՝ կրկին գործակալության եւ տեսչության պետերի անուններով՝ հայտնելով, որ ներկայացված պատասխանները թերի են:

2012թ.-ի հուլիսի 3-ի թիվ 1.1/1.5/8876-12 գրությամբ ՅՅ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի անունից հայցվորին ներկայացվել է իրավական առումով հիմնավորված պատասխան:

Ըստ ներկայացված հայցի պահանջի, ինչպես նաեւ հայցվորի 2012թ.-ի հունիսի 23-ի թիվ 174-ի9 եւ թիվ 174-ի8 գրությունների՝ պարզ է դառնում, որ հայցվորը պահանջում է ներկայացված 4 հարցերից միայն 2-րդի վերաբերյալ տեղեկատվություն, քանզի մնացած 3-ի վերաբերյալ պատասխանները ներկայացված էին սպառիչ:

Այսպես՝ այն հարցին, թե 2011թ.-ին ստացել են արդյոք պարգևատրումներ, պարգևավճարներ, նվերներ լիցենզավորման գործակալության եւ վերահսկողության տեսչության աշխատակիցները, տրվել է հետեւյալ պատասխանը. «Քաղաքացիական ծառայողների պարգևատրման հարցը կարգավորվում է



«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, մասնավորապես՝ օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ պարբերության համաձայն՝ պարգևատրումը միանվագ վճար է, որը տրվում է քաղաքացիական ծառայողին՝ հիմք ընդունելով նրա տվյալ տարվա ծառայողական գործունեության կամ հատուկ առաջադրանքների վերաբերյալ անմիջական ղեկավարի եզրակացությանը կամ կատարողականի արդյունքները:

Նշվածից հետևում է, որ գործատուի կողմից աշխատողին տրամադրվող պարգևատրումները պարտադիր եւ պարբերաբար վճարվող գումար չէ, այլ կապված է աշխատողի կողմից կատարված աշխատանքների որակից, ժամանակից եւ վճարվում է անմիջական ղեկավարի եզրակացության կամ կատարողականի արդյունքների հիման վրա:

Նաեւ հայտնվել է, որ ՀՀ 2011թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է նաեւ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդ:

Այսինքն՝ ելնելով վերոգրյալից՝ լիցենզավորման գործակալության եւ վերահսկողության տեսչության աշխատակիցները եւ ոչ միայն վերջիններս, 2011 թ.-ին տվյալ տարվա ծառայողական գործունեության կամ հատուկ առաջադրանքների վերաբերյալ անմիջական ղեկավարի եզրակացության կամ կատարողականի արդյունքների հիման վրա ստացել են պարգևատրումներ:

Մյուս հարցին, թե որքան է կազմել աշխատակիցների ստացած դրամական պարգևատրողների ընդհանուր գումարը, ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխանել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պարգևատրումների համար նախատեսված գումարը 2011թ.-ին կազմել է 92.334.100 ՀՀ դրամ, իսկ ՀՀ 2011թ.-ի պետական բյուջեով նախատեսված ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդը կազմել է 393.500 հազ. ՀՀ դրամ:

Հաջորդ հարցին, թե որքան է կազմել աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը՝ պատասխանողը հայտնել է, որ 2011թ.-ին գործակալության եւ տեսչության աշխատակիցները նվերներով չեն պարգևատրվել: Քանզի նվերներով պարգևատրում չի եղել, բնականաբար խոսք լինել չի կարող նվերների արժեքի եւ ընդհանուր գումարի վերաբերյալ:

Ստացվում է, որ փաստացի հայցվորի համար թերի է մնացել 2-րդ հարցը, այն է՝ գործակալության եւ տեսչության աշխատակիցներից ովքեր են պարգևատրվել ըստ հաստիքացուցակների, ինչքան գումարով եւ հայցով պահանջը ներկայացված է վերջինիս վերաբերյալ:

Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման եւ իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Հայցվորը պարբերաբար իր գրություններով եւ հայցում շեշտել է, որ նա խնդրել է պարզեւատրում ստացած աշխատակիցների մասին տեղեկություն՝ ըստ հաստիքների, այլ ոչ թե անվանական եւ նշում, որ խնդրվող տեղեկությանը չի վերաբերում անհատական քաղաքացիական ծառայողի անձնական կյանքի անձնամեխելիությանը:

Սակայն մինչ այդ ՀՀ ֆինանսների նախարարությունը գրություններով հայտնել է, որ թե՛ տեսչության եւ թե՛ գործակալության աշխատակիցների թվաքանակը բավականին փոքր է (օրինակ՝ 47 զբաղեցրած հաստիք), եւ այդ տեղեկատվությունն անկհայտորեն կդիտվի որպես անվանական, քանի որ նշված հաստիքներից մի քանիսը գլխավոր մասնագետներ են, մի քանիսը առաջատար, բաժնի պետեր, տեղակալներ, վարորդ, տեսչության պետ, գործավար: Այսինքն՝ ակնհայտ է, որ հայցվորի բերած պատճառաբանությունը, որ տեղեկատվությունը խնդրվում է հաստիքային միավորով, այլ ոչ թե անվանական, անհետք է, քանի որ, օրինակ՝ իմանալով տեսչության պետի հաստիքի պարզեւատրման չափը՝ ակնհայտ է, որ նա կտիրապետի անհատական տեղեկատվության, քանի որ տեսչությունը ունի ընդամենը մեկ պետ: Հետեւաբար՝ ակնհայտ է, որ փնտրվող եւ պահանջվող տեղեկատվության ստացման նպատակն է ձեռք բերել անհատական տվյալներ, որոնց անձեռնմխելիությունը պաշտպանվում է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ ՀՀ օրենքներով:

Բացի այդ, հարկ է նշել, որ աշխատակիցներին պարզեւատրում է տրվում ոչ թե ըստ հաստիքային միավորի, այլ անհատական՝ ելնելով նրանց ծառայողական գործունեության կամ հատուկ առաջադրանքների, աշխատանքային պարտականությունների կատարման որակից, պատրաստվածությանից եւ այլ հատկանիշներից (օրինակ՝ հաստիքով առաջատար մասնագետը, ելնելով աշխատանքային պարտականությունների կատարումից, կարող է պարզեւատրվել ավելի շատ գումարով, քան նույն վարչության բաժնի գլխավոր մասնագետը: Իրավական առումով ոչ մի արգելող նորմ, ինչպես նաեւ պարտադիր նորմ նախատեսված չէ, համաձայն որի աշխատակիցների պարզեւատրումը պետք է իրականացվի ըստ հաստիքների, այլ ոչ թե անհատական):

Սույնով եւս հաստատվում է, որ հայցվորի նպատակն է եղել ստանալ անհատական տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

Այսպես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ դեպքերում, աշխատողի անձնական տվյալները ստացող անձանց նախազգուշացնել եւ պահանջել հավաստում, որ այդ տվյալները կարող են օգտագործվել միայն այն նպա-

տակներով, որոնց համար աշխատողները տեղեկացված են, աշխատողների անձնական տվյալներին ծանոթանալու իրավունք վերապահել միայն հատուկ լիազորությաններ ունեցող անձանց, ընդ որում այդ անձինք կարող են ստանալ աշխատողի միայն անձնական այն տվյալները, որոնք անհրաժեշտ են որոշակի գործառույթ իրականացնելու համար:

Նույն օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողի անձնական տվյալների մշակման եւ պաշտպանման՝ սույն օրենսգրքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով սահմանված կարգը խախտող անձինք օրենքով սահմանված կարգով ենթակա են պատասխանատվության:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությանը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ եւ այլ հաղորդումների գաղտնիությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը հայտնել է, որ գրությամբ պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու համար անհրաժեշտ է պագեւատրում ստացած յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի /աշխատողի/ գրավոր համաձայնությունը, այլապես օրենսգրքով, ալ օրենքներով եւ իրավական ակտերով սահմանված կարգը խախտող անձինք օրենքով սահմանված կարգով կենթակվեն պատասխանատվության:

Ինչ վերաբերում է հայցվորի կողմից վկայակոչված ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի գրությանը, ապա ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաեւ քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական /հատուկ/ ծառայությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաեւ ՀՀ կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային /ծառայողական/ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, եթե քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն: Այսինքն՝ տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ ներկայացված հարցմամբ պահանջվող ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության եւ ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցների կողմից ստացված դրամական պարգեւատրումների գումարի չափի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ նման տեղեկատվության տրամադրման սահմանափակման կամ թույլատրման վերաբերյալ դրույթ սահմանված չէ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ, անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Հետեւաբար՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդն իր գրությամբ հայցվորին հայտնել է, որ «Քաղաքացիական ծառայության մա-

սին» ՀՀ օրենքով քաղաքացիական ծառայողների պարգևատրումների բնույթի, չափի, արժեքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ նախատեսված չեն, սակայն ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդն իր գրությամբ չի մանրամասնել, որ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, եթե քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն, քանի որ իր հարցմամբ հայցվորը ընդամենը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդին հարցրել է, թե արդյոք քաղաքացիական ծառայողների պարգևատրումների բնույթի, չափի, արժեքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ կան, թե՛ ոչ:

Ինչ վերաբերում է հայցի 2-րդ պահանջին, ապա հարկ է նշել, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները եւ մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնական պարտականությունների մեջ:

Թե՛ գործակալությունը, թե՛ տեսչությունը Ֆինանսների նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ են, որոնք առանձին հաշվապահական հաշվառման վարման լիազորություններ չունեն եւ որոնց գործառույթները եւ իրավասության շրջանակները սահմանվում են համապատասխան կանոնադրությամբ: Վերջինիս համաձայն՝ գործակալության եւ տեսչության պետերին ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակիցների պարգևատրումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման իրավասություն վերապահված չէ: Ավելին «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումները իրենց ֆինանսական եւ հաշվապահական ծառայություններն իրականացվում են Նախարարության աշխատակազմի կողմից՝ միասնական կարգով:

Բացի այդ, 2008թ.-ի հոկտեմբերի 17-ի «ՀՀ ֆինանսների նախարարությունից ելք լինող գրությունները ստորագրելու իրավասություններ վերապահելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 849-Ա հրամանով սահմանվել է, թե Նախարարությունից ելք լինող գրությունները որ պաշտոնատար անձանց կողմից պետք է ստորագրված լինեն: Նշված հրամանով ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման ղեկավարներին իրավասություն վերապահված չէ ստորագրել Նախարարությունից ելք լինող գրությունները: Նշված հրամանի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ «ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի գործունեությանը վերաբերող գրությունները, այն ստորաբաժանումների կողմից կազմված գրությունները, որոնց աշխատանքների համակարգման լիազորությունները վերապահված են ՀՀ ֆինանսների նախարարին կամ Նախարարության աշխատակազմի ղեկավարին, ինչպես նաեւ այն գրությունները, որոնց ստորագրելու լիազորությունները չեն վերապահվում նշված

կետի 1-ից 4-րդ ենթակետերում նշված պաշտոնատար անձանց, ստորագրվում են Նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից:

Ի լրումն հայցադիմումի պատասխանի՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ ներկայացված փաստաբանական ծառայությունների մատուցման համար ծախսերի գումարը՝ 254.000 ՀՀ դրամի չափով, համաչափ չէ ներկայացված հայցին: Այսինքն՝ ներկայացուցչի կողմից ներկայացվել են ոչ ողջամիտ փաստաբանական ծախսեր, քանի որ պատասխանողի համոզմամբ իրավաբանական պաշտպանություն իրականացնելու դիմաց ներկայացված ծախսերն ակնհայտ ուռճացված են եւ ողջամիտ չեն՝ հաշվի առնելով գործի բարդության մակարդակը, ծախսված եւ ծախսվելիք ռեսուրսները, կատարած աշխատանքը, դատավարական գործընթացի հարատեւությանը եւ այլն:

Պատասխանող կողմը հայտնել է նաեւ, որ սույն գործով նախնական դատական նիստից հետո համապատասխան աշխատողների հետ իրականացվել է քննարկում, որի արդյունքում աշխատողները չեն տվել իրենց վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու գրավոր համաձայնություն:

Դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին պատշաճ ձեւով տեղեկացված պատասխանողները նիստին չեն ներկայացան:

Դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով, որոշեց գործը քննել պատասխանողների բացակայությամբ:

**4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, դատարանի իրավական վերլուծությունները եւ եզրահանգումները:**

Լսելով հայցվորի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով եւ գնահատելով ներկայացված ապացույցները՝ դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է մերժման ամբողջությամբ՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

Գործի քննությամբ պարզվեց, որ հայցվորը ՀՀ ֆինանսների նախարարության լիցենզավորման գործակալության պետին հասցեագրված 2012 թվականի մայիսի 29-ի թիվ 173-ի3 դիմումով խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

- «1. Ստացե՞լ են արդյոք պարզեատրումներ (պարզեավճարներ, նվերներ) Լիցենզավորման գործակալության աշխատակիցները 2011 թ.-ին:
- 2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (հ՞նչ նվերով):
- 3. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության աշխատակիցների ստացած դրամական պարզեատրումների ընդհանուր գումարը:
- 4. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը»:

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության պետին հասցեագրված 2012թ.-ի մայիսի 29-ի թիվ 173-ի4 դիմումով կազմակերպությունը խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

- «1. Ստացե՞լ են արդյոք պարզեատրումներ (պարզեավճարներ, նվերներ) Լիցենզավորման գործակալության աշխատակիցները 2011 թ.-ին:

2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (հ՛նչ նվերով):

3. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության աշխատակիցների ստացած դրամական պարզեւատրումների ընդհանուր գումարը:

4. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը»:

Ի պատասխան հիշյալ դիմումների՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 2012թ.-ի հունիսի 15-ի թիվ 1.1/1.5/7975-12 գրույթյամբ հայտնվել է, որ «ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բոլոր քաղաքացիական ծառայողներին, այդ թվում՝ լիցենզավորման գործակալության եւ ֆինանսական վերահսկողության տեսչության ախշատակիցներին պարզեւավճարները տրամադրվում են «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, որով սահմանվում են քաղաքացիական ծառայողների պարզեւատրման աղբյուրները, չափերը եւ կարգը: ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պարզեւատրումների համար նախատեսված գումարը 2011թ.-ին կազմել է 92,334.1 հազ. դրամ: (...) Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2011թ.-ին գործակալության եւ տեսչության աշխատակիցները նվերներով չեն պարզեւատրվել»:

ՀՀ ֆինանսների նախարարության լիցենզավորման գործակալության պետին հասցեագրված 2012թ.-ի հունիսի 23-ի թիվ 174-ի8 դիմումով հայտնելով, որ «...Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստացել է թերի պատասխան, քանի որ չեն տրամադրվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» խնդրած՝ Լիցենզավորման գործակալության՝ պարզեւատրում ստացած աշխատակիցների եւ յուրաքանչյուրի ստացած դրամական պարզեւատրումների չափի մասին տեղեկությունները», հայցվորը խնդրել է տրամադրել բաց թողնված տեղեկությունը:

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության պետին հասցեագրված 2012թ.-ի հունիսի 23-ի թիվ 174-ի9 դիմումով հայտնելով, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» ստացել է թերի պատասխան, քանի որ չեն տրամադրվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» խնդրած ֆինանսական վերահսկողության տեսչության՝ պարզեւատրում ստացած աշխատակիցների եւ յուրաքանչյուրի ստացած դրամական պարզեւատրումների չափի մասին տեղեկությունները », հայցվորը խնդրել է տրամադրել բաց թողնված տեղեկությունը:

Ի պատասխան վերը նշված դիմումների՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 2012թ.-ի հուլիսի 03-ի թիվ 1.1/1.5/8876-12 գրույթյամբ հայտնվել է, որ «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաեւ քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաեւ ՀՀ կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ: «Քաղաքացիական ծառայության մա-

սին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, եթե քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:

Այսինքն՝ տվյալ դեպքում, հաշվի առնելով Ձեր կողմից ներկայացված հարցմամբ պահանջվող՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության եւ ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցների կողմից ստացված դրամական պարգևատրումների գումարի չափի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ նման տեղեկատվության տրամադրման սահմանափակման կամ թույլատրման վերաբերյալ դրույթ սահմանված չէ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ, անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

Միեւնույն ժամանակ, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ պարբերության համաձայն՝ պարգևատրումը միանվագ վճար է, որը տրվում է քաղաքացիական ծառայողին՝ հիմք ընդունելով նրա՝ տվյալ տարվա ծառայողական գործունեության կամ հատուկ առաջադրանքների վերաբերյալ անմիջական ղեկավարի եզրակացությունը կամ կատարողականի արդյունքները:

Նշվածից հետեւում է, որ գործատուի կողմից աշխատողին տրամադրվող պարգևատրումները պարտադիր եւ պարբերաբար վճարվող գումար չէ, այլեւ կապված է աշխատողի կողմից կատարված ախտանքների որակից, ժամանակից եւ վճարվում է անմիջական ղեկավարի եզրակացության կամ կատարողականի արդյունքների հիման վրա:

Բացի այդ, պահանջվող տեղեկատվությունը անմիջական կապ ունի աշխատողի անձնական տվյալների հետ, քանի որ հարցմամբ պահանջվում է տրամադրել յուրքանաչյուր աշխատողի կողմից ստացված պարգևավճարի գումարի չափի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաեւ տեղեկատվություն, թե ըստ հաստիքացուցակի ովքեր են պարգևատրվել:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է՝ աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին եւ առողջությունը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ դեպքերում, աշխատողի անձնական տվյալներն ստացող անձան նախագուշացնել եւ պահանջել հավաստում, որ այդ տվյալները կարող են օգտագործվել միայն այն նպատակներով, որոնց համար աշխատողները տեղեկացված են, աշխատողների անձնական տվյալներին ծանոթանալու իրավունք վերապահել միայն հատուկ լիազորություններ ունեցող անձանց, ընդ որում՝ այդ անձինք կարող են ստանալ աշխատողի միայն անձնական այն տվյալները, որոնք անհրաժեշտ են որոշակի գործառույթ իրականացնելու համար: (...) Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ գրությամբ պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու համար անհրաժեշտ է պարգևատրում ստացած յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի (աշխատողի) գրավոր համաձայնությունը:

Նշենք նաեւ, որ Նույնիսկ եթէ տեղեկատվությունը Ձեզ տրամադրվի ըստ հաստիքների, այսինքն՝ ոչ անվանական, ապա հաշվի առնելով տեսչության եւ գործակալության աշխատակիցների փոքրաքանակ թիվը, այդ տեղեկատվությունը կդիտարկվի որպէս անվանական:

Միեւնոյն ժամանակ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի՝ տեղեկատվությանը տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթէ դա խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը»:

Վերը նշվածից բխում է, որ Կազմակերպության պահանջած տեղեկատվությունն առ այն, թէ որքան է կազմել լիցենզավորման գործակալության եւ ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցների կողմից 2011 թվականին ստացած պարզեւավճարների գումարը, չի տրամադրվել, ըստ էության, այն հիմնավորմամբ, որ դրանք անձնական տվյալներ են: Ընդ որում՝ թիվ 1.1/1.5/8876-12 գրությամբ հայտնվել է, որ դրանք կարող են տրամադրվել բացառապէս աշխատողների գրավոր համաձայնության դեպքում, իսկ դատարան ներկայացված լրացուցիչ դիրքորոշումամբ պատասխանողը հայտնել է, որ համապատասխան աշխատողներն իրենց անձնական տվյալները հրապարակելու գրավոր համաձայնություն չեն տվել:

Փաստացի Կազմակերպությունը պահանջել է տրամադրել տեղեկատվություն ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան քաղաքացիական ծառայողների պարզեւատրումների մասին տեղեկատվություն, իսկ պարզեւատրումների հետ կապված հարաբերությունները բնույթով աշխատանքային իրավահարաբերություններ են:

Այսպէս՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթէ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպէս նաեւ քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպէս նաեւ ՀՀ ԿԲ աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթէ համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատավարձը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը եւ գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ վարձատրությունը:



ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գործատուն կարող է խրախուսել աշխատողներին: Աշխատողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետեւյալ տեսակները՝ միանվագ դրամական պարգեւատրում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ « Միջին աշխատավարձի հաշվարկման համար հաշվի են առնվում աշխատանքի վարձատրության բոլոր տեսակները (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ՝ հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ, պարգեւատրումներ եւ այլն), որոնք կիրառվում են տվյալ կազմակերպությունում՝ անկախ վճարման աղբյուրից»:

Նշված նորմերի համակարգային վերլուծության հիման վրա՝ պետք է եզրակացնել, որ դրամական պարգեւատրումը (պարգեւավճարը) աշխատավարձի կազմում ընդգրկվող լրացուցիչ վարձատրություն է, այսինքն՝ աշխատավարձին հավասարեցված վճարում է եւ ըստ այդմ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հիմքով համարվում է անձնական տվյալ (հոդված 131): Իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով գործատուն (տվյալ դեպքում՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը) պարտավոր է աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, որոշակի՝ սույն դեպքին չվերաբերող բացառություններով (երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ դեպքերում):

Միաժամանակ, «Տեղեկատվության ազատության մասին» 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը:

Ամբողջ վերը նշվածի հիման վրա պետք է եզրակացնել, որ Կազմակերպության կողմից պահանջված տեղեկատվությունը՝ որպես անձնական տվյալ, կարող էր տրամադրվել գործատուի կողմից բացառապես այն աշխատողների գրավոր համաձայնությամբ, որոնց անձնական տվյալները փնտրվել են, որպիսի համաձայնություններ տվյալ դեպքում ձեռք չեն բերվել: Հետեւաբար՝ մերժելով պահանջվող տեղեկատվության տրամադրումը՝ պատասխանող կողմը դրսեւորել է իրավաչափ վարքագիծ՝ ապահովելով իր աշխատակիցների անձնական տվյալները պահպանելու իր լիազորությունը:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ պատասխանողի գործողություններով հայցվորի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը չի խախտ-

վել, քանի որ հայցվորը կարող է պահանջել եւ ստանալ այնպիսի տեղեկատվություն, որն օրենքով մատչելի է իրեն՝ առանց որեւէ սահմանափակման: Մինչդեռ, սույն դեպքում անձնական տվյալների տրամադրումը սահմանափակված է ՀՀ օրենսդրությամբ:

Ըստ այդմ՝ իրավունքի խախտումը ճանաչելու եւ պահանջվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավերցնելու մասով հայցն անհիմն է եւ մերժման ենթակա:

Միաժամանակ դատարանն ընդգծում է, որ հայցվորի կողմից վկայակոչված վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումը վերաբերում է այլ իրավահարաբերությունների (անհատական, այլ ոչ թե անձնական տվյալների հետ առնչվող): Հետեւաբար՝ տարբեր են նշված եւ սույն գործերով ինչպես փաստական հանգամանքները, այնպես էլ՝ հարցը կարգավորող իրավանորմերը:

Ինչ վերաբերում է հայցվոր կողմի փաստարկին, որ դիմումով պահանջվել է տեղեկատվություն պարզեւավճարների վերաբերյալ ըստ հաստիքների, այլ ոչ թե անվանական, հետեւաբար ըստ հայցվորի՝ պատասխանողը կարող էր առանց սահմանափակման տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, ապա այն հիմնավոր չէ, քանի որ պարզեւավճարները տրամադրվում են ոչ թե ըստ հաստիքների, այլեւ ըստ յուրաքանչյուր աշխատողի՝ նրա կողմից կատարված աշխատանքների հաշվառմամբ, ինչը նշանակում է, որ միեւնույն հաստիքի պաշտոնը զբաղեցնող տարբեր աշխատողներ կարող են ստանալ տարբեր պարզեւավճարներ: Բացի այդ, պատասխանողի կողմից դատարան ներկայացված ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանումների աշխատանքային հաստիքացուցակի ուսումնասիրության հիման վրա պարզվեց, որ որոշակի պաշտոններ ամրագրված են ընդամենը մեկ հաստիքով, հետեւաբար՝ պարզեւավճարի մասին տեղեկատվությունն ուղղակի նշանակում է այդ հաստիքը զբաղեցնող աշխատողի անձնական տվյալի բացահայտում:

Անդրադառնալով պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցվորի պահանջին՝ դատարանը գտնում է, որ այն նույնպես ենթակա է մերժման՝ սույն դատական ակտում պատասխանողի կողմից դրսեւորված վարքագծի իրավաչ լինելու հաշվառմամբ:

Միաժամանակ նշված պահանջը մերժելու կապակցությամբ դատարանի եզրահանգումը հիմնված է նաեւ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով սահմանված կանոնակարգման վրա, որի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելի առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով: Իսկ սույն դեպքում համապատասխան պաշտոնատար անձինք չեն տրամադրել այնպիսի տեղեկություն, որի տրամադրումը սահմանափակված է օրենքով, հետեւաբար նրանց գործողությունը չի կարող որակվել նշված նորմի դիսպոզիցիային համապատասխանող:

Այսպիսով՝ ամբողջ վերը նշվածի հիման վրա դատարանը գտնում է, որ հայցն անհիմն է եւ մերժման ենթակա ամբողջությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի հիմքով քննարկելով դատական ծախսերի փոխհատուցման հարցը եւ նկատի ունենալով, որ հայցադիմումի, ինչպես նաեւ ներկայացուցչություն իրականացնելու համար հայցվորը վճարել է համապատասխանաբար պետական տուրք եւ ծառայության վճար, իսկ հայցը մերժվում է ամբողջությամբ՝ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով՝ դատարանը

**Վ Ճ Ո Ւ Յ Ց**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանի, ՀՀ ֆինանսների նախարարության լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանի, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության պետ Սոնա Ղարիբյանի՝ իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին, մերժել ամբողջությամբ:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով? պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով? ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

## **Գործ 11.**

**ԻԱԿ-ն ընդդեմ**

**«Քնապահպանական ծրագրերի  
իրականացման գրասենյակ»  
պետական հիմնարկի**

## Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ.-ի մայիսի 29-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ստացել են արդյոք պարզեւատրումներ (պարզեւավճարներ, նվերներ) «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցների ստացած դրամական պարզեւատրումների ընդհանուր գումարը:
4. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ից ստացվեց թերի պատասխան. թէին տրամադրվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» խնդրած «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի՝ պարզեւատրում ստացած աշխատակիցների եւ դրամական պարզեւատրումների չափի մասին տեղեկությունները (2-րդ եւ 3-րդ հարցերի պատասխանները): Ուստի, 2012թ. հունիսի 20-ին ԻԱԿ-ը կրկին հարցում ուղարկեց՝

խնդրելով տրամադրել ամբողջական եւ սպառիչ տեղեկատվություն:

ԻԱԿ-ի ուղարկած երկրորդ հարցմանն ի պատասխան՝ 2012թ. հուլիսի 2-ին ՊՅ-ն տեղեկություն տրամադրեց նաեւ հարցման 3-րդ կետում նշված հարցի վերաբերյալ, սակայն, մերժվեց հարցման 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրում՝ այն պատճառաբանությամբ, թե դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է:

Նշենք, որ ԻԱԿ-ը խնդրել է պարզեւատրում ստացած աշխատակիցների մասին տեղեկություն ըստ հաստիքների, այսինքն՝ ոչ անվանական: Բացի այդ, ՀՀ Զաղաքացիական ծառայության խորհուրդն ի պատասխան ԻԱԿ-ի՝ 2012թ.-ի հունիսի 13-ի հարցման, իր՝ 2012թ.-ի հունիսի 18 թվագրված գրությամբ հայտնել էր, որ քաղաքացիական ծառայողների ստացած պարզեւատրումների արժեքի մասին տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ չկան (*ԻԱԿ-ի հարցումը եւ ՀՀ Զաղաքացիական ծառայության խորհրդի պատասխանը հասանելի են ԻԱԿ-ի [www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am) կայքում*): Վերոնշյալ երկու պայմանների համակցությունը ցույց է տալիս, որ խնդրվող տեղեկությունը չի վերաբերում անհատական քաղաքացիական ծառայողի անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

Արդյունքում, 2012թ.-ի հուլիսի 24-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմց ՀՀ վարչական եւ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարաններ՝ խնդրելով պահանջվող տեղեկությունների տրամադրումը ՀՀ բնապահպանության նախարարու-

թյան «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Վ. Մարտիրոսյանի կողմից երկու անգամ մերժելու համար նրան տուգանել 30.000 դրամի չափով, ինչպես եւ ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին պարտավորեցնել տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը:

2012թ.-ի նոյեմբերի 23-ին դատարանը իրապարակեց իր վճիռը, որով ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի պահանջը ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ պարտավորեցնել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրելու պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե 2011թ.-ին աշխատակիցները՝ ըստ հաստիքների ինչքա՞ն գումարով են պարգևատրվել:

Դատական ծախսերի փոխհատուցման, մասնավորապես՝ ԻԱԿ-ի կողմից փաստաբանին վճարված վարձատրության գումարի փոխհատուցման պահանջը դատարանը բավարարեց մասնակի՝ պարտավորեցնելով պատասխանողին փոխհատուցել ԻԱԿ-ի կողմից վճարված պետական տուրքի գումարը եւ փաստաբանի վարձատրության գումարի կեսը:

2012թ.-ի դեկտեմբերի 17-ին «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»Մ պետական հիմնարկը բողոքարկեց դատարանի վճիռը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան: ՀՀ վերաքննիչ դատարանը 2013թ.-ի ապրիլի 25-ին որոշում կայացրեց բեկանել Երեւան

քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2012թ.-ի նոյեմբերի 23-ին հօգուտ ԻԱԿ-ի կայացրած վճիռը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վերաքննիչ դատարանը մասնավորապես գտել էր, որ առաջին ատյանի դատարանում անհրաժեշտ էր պարզել՝ ՊՀ-ի աշխատողների համաձայնության առկայության կամ բացակայության փաստը իրենց վերաբերյալ ԻԱԿ-ի կողմից պահանջվող տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ: Մինչդեռ, դատարանը դա չի արել: Վերաքննիչ դատարանը գտել է նաեւ, որ առաջին ատյանի դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ դրամական պարգևատրումները եւս կազմում են աշխատավարձի մաս, որի արդյունքում չի իրականացրել բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննություն:

2013թ.-ի մայիսի 29-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» բողոքարկեց ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը վճարելու կարգով: ՀՀ վճարելու դատարանը 2013թ.-ի հունիսի 26-ի իր որոշմամբ վերադարձրեց ԻԱԿ-ի վճարելու բողոքը եւ ուժի մեջ թողեց ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ գործը նոր քննության ուղարկելու մասին որոշումը: Այսինքն, ՊՀ-ի դեմ գործը եւս մեկ անգամ պետք է քննվի առաջին ատյանի դատարանում:

ՀՀ վարչական դատարանում 2012թ.-ի նոյեմբերի 9-ին կայացած դատական նիստի ժամանակ ՀՀ վարչական դատարանը որոշեց գործը կասեցնել՝ մինչեւ գործի մյուս մասով դատարանը վերջնական վճիռ կկայացնի: Դատական գործը դեռ ընթացքում է:

## Գործի նյութերը

ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐԶԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն, նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան

Պատասխանող՝ ՀՀ բնապահպանության նախարարության  
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»  
պետական հիմնարկ

23.07.2012թ.

### Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին

#### 1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ԻԱԿ) 29.05.2012թ.-ին թիվ 171-ի 4 համարի գրությամբ հետեւյալ բովանդակությամբ Տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել է «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրեն՝ Վիկտոր Մարտիրոսյանին. «Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունները:

1. Ստացե՞լ են արդյոք պարզեատրումներ (պարզեավճարներ, նվերներ) «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած դրամական պարզեատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված հարցմամբ առաջադրված հարցերի մի մասին պատասխան է տրվել պատասխանողի 01.06.2012թ. N1-01/151 գրությամբ: Նշված փաստերը հաստատվում են 29.05.2012թ-ին թիվ 171-ի 4 հարցման եւ 01.06.2012թ. N1-01/151 պատասխանի օրինակներով: Աաջին հարցման թերի պատասխանը ստանալուց հետո 20.06.2012թ. թիվ 174-ի 2 հարցմամբ ԻԱԿ-ը կրկին դիմել է պատասխանողին հետեւյալ հարցմամբ , Յարգելի պարոն Մարտիրոսյան,

2012թ.-ի մայիսի 29-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ստացե՞լ են արդյոք պարգեւատրումներ (պարգեւաձեւարներ, նվերներ) «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարգեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (հ՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցների ստացած դրամական պարգեւատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Սակայն, ԻԱԿ-ը ստացել է թերի պատասխան, քանի որ չեն տրամադրվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» խնդրած «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի՝ պարգեւատրում ստացած աշխատակիցների եւ դրամական պարգեւատրումների չափի մասին տեղեկությունները (2-րդ եւ 3-րդ հարցերի պատասխանները):

Ուստի, ղեկավարվելով ՅՅ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՅՅ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված վերոնշյալ տեղեկությունները»:

Նշված հարցմանն ի պատասխան՝ ստացվել է պատասխանողի 02.07.2012թ. թիվ 1-01/160 գրությունը, որով տեղեկություն է տրվել նաեւ հարցման 3-րդ կետում նշված հարցման վերաբերյալ, սակայն հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՅՅ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, ՅՅ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետին եւ 199 հոդվածին մերժվել է հարցման 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրումը՝ այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է:

## **2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը**

ՅՅ Սահմանադրության

- 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ



հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամառաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի՝

- 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է... հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա»,
- 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են՝ տեղեկություններ ունեցող...պետական հիմնարկներ... և դրանց պաշտոնատար անձինք,
- 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»:
- 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ինչպես տեսնում ենք, պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, չի տրամադրել 29.05.2012թ. և 20.06.2012թ. հարցումների 2 կետով պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի որ աշխատակիցներն են պարզեւատրվել (ըստ հաստիքների) և ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետին և 199 հոդվածին հղում կատարելով 02.07.2012թ. գրությամբ տեղեկատվության տրամադրման մերժումը եւս անհիմն է, քանի որ տեղեկատվությունը պահանջվել է ըստ աշխատողների հաստիքների, այլ ոչ թե անվանական, բացի այդ աշխատողին տրամադրված պարզելը կամ պարզեւածարի չափը ո՛չ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ աշխատանքային հարաբերությունների հետ կապված և որոշակի աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններ են (աշխատողի անձնական տվյալ) և ո՛չ էլ 199-րդ հոդվածով սահմանված աշխատողի աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալներ է: Այս հարցին անդրադարձել է նաև ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը իր 07.11.2011թ. թիվ ՎԴ/0480/05/10 որոշմամբ, որի հիմնավորումները ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վկայակոչում ենք որպես իրավական փաստարկ: Նշված դատական ակտով վերաքննիչ դա-

տարանը որոշել է. «Վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011թ.-ի հունիսի 22-ի թիվ ՎԴ/0480/05/10 վարչական գործով կայացրած վճիռը բեկանել եւ փոփոխել, կայացնելով նոր դատական ակտ: Այն է՝ Լեւոն Բարսեղյանի հայցը բավարարել մասնակիորեն:

1. Ճանաչել տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը:
2. Պարտավորեցնել ՀՀ կառավարությանն ամրնթեր պետական եկամուտների կոմիտեին, Լեւոն Բարսեղյանին տրամադրել 2010թ.-ի հունվարի 18-ի թիվ 1 հարցումով հայցված հետեւյալ տեղեկատվությունը՝ «ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցներից ովքեր են որպես խրախուսանքի միջոց պարգևատրվել «Տերմինալ Պահեստ» ՍՊԸ-ից ձեռք բերված «Breitling» մակնիշի շվեյցարական արտադրության ժամանացույցներով՝ հիշատակել պարգևատրվածներին անուն-ազգանուններով եւ պաշտոններով, ինչպես նաեւ հիշատակելով նրանց հանձնված ժամացույցները՝ ըստ տեսակների»:

Վերաքննիչ դատարանը վերը մեջբերված որոշումը կայացրել է հետեւյալ իրավական հիմնավորումներով. «Բողոք բերած անձի հղումը «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերին, ինչպես նաեւ դրա հետ կապված փաստարկները, հիմնավոր չեն՝ հետեւյալ պատճառաբանությամբ. «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Մշակողի տնօրինության տակ գտնվող անհատական տվյալները խորհրդապահական տեղեկատվություն են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ կարող է սահմանվել անհատական տվյալների հանրամատչելի տեղեկատվության ռեժիմ (հեռախոսային տեղեկատուներ, հասցեների գրքեր, կենսագրական տեղեկատուներ, մասնավոր հայտարարություններ, եկամուտների հայտարարագրում եւ այլն)»:

Բողոք բերած անձը, վկայակոչելով նշված իրավական նորմերը, չի հիմնավորել նշված օրենքի իմաստով հայցվող տեղեկատվությունը անհատական տվյալ լինելու հանգամանքը: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծել նշված օրենքով կարգավորվող իրավահարաբերություններին վերաբերող նորմերը: «Անհատական տվյալների մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենքը կարգավորվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները»: Նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է, որ «անհատական տվյալ՝ ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը»: Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետեւում է, որ օրենքը կարգավորվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները, իսկ անհատական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տա-

լիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը:

Այսինքն՝ նշված իրավական նորմերով կարգավորվում են անձի անհատական տվյալների հանրամատչելի տեղեկատվության հետ կապված հարաբերությունները, մինչդեռ տվյալ դեպքում պահանջվում է տրամադրել տեղեկատվություն, որի տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանված են «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցվող տեղեկատվությունը չի հանդիսանում հարկային ծառայողին վերաբերող տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը: Ավելին՝ այդ տեղեկատվությունը չի կարող համարվել անհատական տվյալ, քանի որ վերաբերում է երկարամյա ծառայության, ծառայողական պարտականությունները եւ հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու, ինչպես նաեւ աշխատանքի նկատմամբ սվիրվածության համար հարկային ծառայողի նկատմամբ խրախուսանքի տեսակ՝ հուշանվերով պարգևատրում կիրառելու հետ կապված, այսինքն՝ պետական մարմնում գործունեության հետ կապված հարաբերություններին:

Բացի այդ, հարցման պատասխանում նշված օրենքը չի վկայակոչվել, իսկ պահանջվող տեղեկատվությունը, որպես Կոմիտեի համապատասխան աշխատակիցների անհատական (անձնական) կյանքին վերաբերվող տվյալներ, չեն դիտվել»:

Ինչպես տեսնում ենք, վարչական վերաքննիչ դատարանը, որպես անհատական տվյալ, չի համարել հարցմամբ պահանջվող կոնկրետ անձանց պարգևատրելու վերաբերյալ տեղեկությունները, ուստի առավել եւս այդպիսին չի կարող լինել չկոնկրետացված անձի, զուտ հաստիքով՝ առանց անուն ազգանունի նշման անձի վերաբերյալ նույնաբովանդակ տեղեկությունը, որը ենթակա էր տրամադրման 5-օրյա ժամկետում, սակայն չի տրամադրվել:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ եւ 87-րդ հոդվածներով՝

**Խնդրում եմ**

1. Ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին պարտավորեցնել տրամադրելու պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե 2011թ-ին աշխատակիցները ըստ հաստիքների ինչքա՞ն գումարով են պարգևատրվել:
2. Պատասխանողից բռնագանձել նաեւ դատական ծախսերի գումարը:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան

**Վ Ճ Ի Ռ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

23.11.2012թ.

ք.Երեւան

ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը

Նախագահությամբ՝ դատավոր Ա. Մելքունյանի

Քարտուղարությամբ՝ Ա. Գալիկյանի

Մասնակցությամբ՝ Հայցվորի ներկայացուցիչ՝ Կ. Մեժլումյանի

Պատասխանողի ներկայացուցիչ՝ Ա. Մաթեոսյանի

Դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 01573524)՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցնելու, դատական ծախսերի գումարի բռնագանձման պահանջների մասին.

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության անունից փաստաբան Կարեն Մեժլումյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի՝ խնդրելով ճանաչել հայցվորի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ պատասխանողին պարտավորեցնել տրամադրելու պահանջվող տեղեկատվությունն առ այն, թե 2011թ.-ին աշխատակիցներն ըստ հաստիքացուցակների ինչքան են պարգևատրվել, ինչպես նաեւ բռնագանձել դատական ծախսերը:

Վերոհիշյալ հայցադիմումը ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 27.07.2012թ.-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, նշանակվել է նախնական քննության:

Քանի որ նախնական դատական նիստերի ընթացքում իրականացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1498 հոդվածով նախատեսված, գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում կատարվող բոլոր գործողությունները, դատարանը 08.11.2012թ.-ին կողմերի մասնակցութեան ավարտված է համարել գործի նախապատրաստական քննության փուլը ու որոշում է կայացրել գործը դատաքննության նշանակելու մասին՝ անմիջապես անցնելով դատաքննության փուլ:

Գործի դատաքննությունն ավարտվել է 2012թ.-ի նոյեմբերի 08-ին եւ 2012 թվականի նոյեմբերի 23-ին նշանակվել է վճռի հրապարակման օր:

### Հայցվորի փաստարկները եւ իրավական դիրքորոշումը

Դատարան ներկայացրած հայցադիմումով հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ անունից փաստաբան Կարեն Մեծլումյանը հայտնել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 29.05.2012թ.-ին թիվ 171-ի 4 համարի գրությամբ հետեւյալ բովանդակությամբ Տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել է «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանին՝ տեղեկատվություն ստանալու հարցու, որտեղ նշել է. «Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկությունները՝

1. Ստացե՞լ են արդյոք պարզեատրումներ (պարզեալճարներ, նվերներ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած դրամական պարզեատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»: Նշված հարցմամբ առաջադրված հարցերի մի մասին պատասխան է տրվել պատասխանողի 01.06.2012թ. N1-01/151 գրությամբ:

Նշված փաստերը հաստատվում են 29.05.2012թ-ին թիվ 171-ի 4 հարցման եւ 01.06.2012թ. N1-01/151 պատասխանի օրինակներով:

Առաջին հարցման թերի պատասխանը ստանալուց հետո 20.06.2012թ. թիվ 174-ի 2 հարցմամբ ԻՎԿ-ը կրկին դիմել է պատասխանողին հետեւյալ հարցմամբ. «Հարգելի պարոն Մարտիրոսյան,

2012թ.-ի մայիսի 29-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ?խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ստացե՞լ են արդյոք պարզեատրումներ (պարզեալճարներ, նվերներ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):

3. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցների ստացած դրամական պարգևատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը»:

Սակայն ԻԱԿ-ը ստացել է թերի պատասխան, քանի որ չեն տրամադրվել Կենտրոնի խնդրած «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի՝ պարգևատրում ստացած աշխատակիցների եւ դրամական պարգևատրումների չափի մասին տեղեկությունները (2-րդ եւ 3-րդ հարցերի պատասխանները): Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրել են տրամադրել բաց թողնված վերոնշյալ տեղեկությունները: Նշված հարցմանն ի պատասխան ստացվել է պատասխանողի 02.07.2012թ. թիվ 1-01/160 գրությունը, որով տեղեկություն է տրվել նաեւ հարցման 3-րդ կետում նշված հարցման վերաբերյալ, սակայն հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետին եւ 199 հոդվածին մերժվել է հարցման 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրումը՝ այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է:

Վկայակոչելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 3-րդ, դրույթները, Սահմանադրության 27-րդ եւ 27.1 հոդվածները՝ հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, չի տրամադրել 29.05.2012թ. եւ 20.06.2012թ. հարցումների 2-րդ կետով պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե՛ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի որ աշխատակիցներն են պարգևատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետին եւ 199-րդ հոդվածին հղում կատարելով 02.07.2012թ. գրությամբ տեղեկատվության տրամադրման մերժումը եւս անհիմն է, քանի որ տեղեկատվությունը պահանջվել է ըստ աշխատողների հաստիքների, այլ ոչ թե՛ անվանական, բացի այդ աշխատողին տրամադրված պարգևը կամ պարգևավճարի չափը ո՛չ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131 հոդվածի 1-ին մասով սահմանված՝ աշխատանքային հարաբերությունների հետ կապված եւ որոշակի աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններ են (աշխատողի անձնական տվյալ) եւ ո՛չ էլ 199 հոդվածով սահմանված՝ աշխատողի աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալներ է: Այս հարցին անդրադարձել է նաեւ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, իր 07.11.2011թ. թիվ ՎԴ/0480/05/10 որոշմամբ, որի հիմնավորումները ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի 3-րդ մասի համաձայն հայցվոր կողմը վկայակոչել է որպես իրավական փաստարկ:

Վերը նշված որոշման բռնադատության վրա հիմնվելով՝ հայցվոր կողմը նշել է, որ վարչական վերաքննիչ դատարանը, որպես անհատական տվյալ, չի համարել հարցմամբ պահանջվող կոնկրետ անձանց պարզեցումը վերաբերյալ տեղեկությունները, ուստի առավել եւս այդպիսին չի կարող լինել չկոնկրետացված անձի, զուտ հաստիքով, առանց անուն- ազգանունի նշման անձի վերաբերյալ նույնաբովանդակ տեղեկությունը, որը ենթակա էր տրամադրման 5-օրյա ժամկետում, սակայն չի տրամադրվել:

Վերոգրյալներից ելնելով՝ հայցվորի ներկայացուցիչը դատարանից խնդրել է ճանաչել հայցվորի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ պատասխանողին պարտավորեցնել տրամադրելու պահանջվող տեղեկատվությունն առ այն, թե 2011թ.-ին աշխատակիցներն ըստ հաստիքացուցակների ինչքան են պարզեցատրվել, ինչպես նաեւ բռնագանձել դատական ծախսերը:

Գործի դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, որ հայցադիմումի պատասխանը հիմնված է անվանական տվյալներով տեղեկատվություն չտրամադրելու փաստի վրա, սակայն հայցվոր կողմը պահանջել է տեղեկատվություն ոչ թե ըստ անվանական տվյալների, այլ ըստ հաստիքների, իսկ հարցման մեջ, այնուհետեւ՝ հայցադիմումում հստակ նշված է եղել, որ տեղեկատվությունը պահանջվում է ըստ հաստիքների ու նշված չի եղել տրամադրել ըստ անվանական:

Նշել է, որ պատասխանող կողմի՝ նոր գրությամբ դիմելու պահանջը, հայցվոր կողմի համար ընդունելի չէ, քանի որ ամեն ինչ հստակ նշվել էր հարցման գրության մեջ, իսկ գործի քննության ընթացքում հայցվոր կողմը նշել է, որ պահանջվող տեղեկությունը անվանական բնույթի չէ, քանի որ անհրաժեշտ է պահանջվող տեղեկությունը տրամադրել՝ ըստ հաստիքների միայն:

Յայտնել է, որ մշակույթ է ձեւավորվել, որ երբ հայցվորը դիմում է դատարան՝ պահանջվող տեղեկատվություն դատական կարգով տրամադրելու խնդրանքով, միայն այդ դեպքում է տեղեկատվություն տրամադրող անձը համաձայնվում տրամադրել տեղեկատվությունը, ուստի սույն հայցի իմաստը կայանում է նաեւ նրանում, որ այդ մշակույթը վերացվի ու կողմին տրամադրվի օրենքից բխող տեղեկատվությունը՝ առանց դատական միջամտության:

Նշել է, որ հայցվոր կողմին պատասխանող կազմակերպության տնօրենը առաջարկել է ներկայացնել նոր գրություն՝ հարցում, սակայն իրենք դրա անհրաժեշտությունն չեն տեսնում:

**Պատասխանողի փաստարկները եւ իրավական դիրքորոշումը**

Պատասխանող «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից դատարանին է ներկայացվել հայցադիմումի գրավոր պատասխան, որտեղ նշվել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՅԿ-ն 29.05.2012թ. թիվ 171-ի 4 համարի եւ 20.06.2012թ. թիվ 174-ի 2 համարի հարցումներով դիմել էր պետական հիմնարկի տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանին՝ տեղեկատվություն ստանալու համար: Պետական հիմնարկի տնօրենի կողմից համապատասխանաբար 01.06.2012 թ. N 1-01/151 եւ 02.07.2012 թ. N 1-01/160 գրություններով տրամադրվել էր հայցվոր կողմից պահանջված տեղեկատվությունը:

Սակայն հասարակական կազմակերպությունը համարելով, որ տեղեկատվու-

թյունը տրամադրվել է թերի, դիմել է ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու մասին պահանջով:

Պատասխանող կողմի կարծիքով, հայցվորի պահանջը անհիմն է եւ ենթակա է մերժման, քանի որ հայցվոր կողմը հայցադիմումում նշում է, որ պատասխանողը, լինելով տեղեկատվություն տնօրինող, չի տրամադրել 29.05.2012թ. եւ 20.06.2012թ. հարցումների 2 կետով պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի որ աշխատակիցներն են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքան գումարով (ինչ նվերով):

Հայցվորի այս պնդումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ 02.07.2012թ. պետական հիմնարկի տնօրենը հայցվորին հասցեագրված N 1-01/160 գրությանը նշել էր, որ պետական հիմնարկի բոլոր աշխատողները (թվով 17 հոգի) 2011 թվականի ավարտին ստացել են միայն դրամական պարգեւատրում պետական հիմնարկի աշխատողների հաստիքացուցակի համամասնությամբ՝ ընդհանուր 1.994.740 ՀՀ դրամի չափով: Եթե հայցվոր կողմին չի բավարարել տեղեկությունը կամ անհրաժեշտ էր առավել մանրամասն տեղեկություններ պետական հիմնարկի աշխատողների պարգեւատրման եւ դրա չափի վերաբերյալ, ապա այն չպետք է դիտել որպես պատասխանողի կողմից տրված թերի տեղեկություն կամ պատասխանողի կողմից չտրամադրված տեղեկություն:

Նշեմ նաեւ, որ պետական հիմնարկի տնօրենի կողմից տրված տեղեկությունը հիմնարկի աշխատողների պարգեւատրման վերաբերյալ չի կարող թերի լինել եւ համարվել ապօրինաբար չտրամադրված տեղեկություն, քանի որ պատասխանողի կողմից տրամադրվել է տեղեկություն հայցվորի կողմից 20.06.2012թ. հարցումների 2-րդ կետի վերաբերյալ, այլ հարց է, որ հայցվորը համարում է այն ապօրինաբար չտրամադրված տեղեկություն:

Անդրադառնալով հայցվորի այն պնդմանը, ըստ որի՝ հարցումների 2-րդ կետով պահանջվող տեղեկությունը պետք է տրամադրվեր պարգեւատրված աշխատողների ոչ թե անվանական, այլ ըստ հաստիքների նշումով՝ նշել է, որ հարցման 2-րդ կետով շարադրված նախադասության, այն է. «Եթե այո, ապա ովքե՞ր են պարգեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով)», բովանդակությունից հստակ երեւում է, որ խոսքը վերաբերում է աշխատողների պարգեւատրման վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը անվանական իմաստով, չնայած անվանական բառանշում չի եղել, բայց եւ չի նշանակում, որ այն վերաբերում է զուտ հաստիքային նշագրմամբ պարգեւատրման վերաբերյալ տեղեկության տրամադրմանը, քանի որ պատասխանողը չէր կարող տրամադրել պետական հիմնարկի աշխատողների դրամական կամ նվերով պարգեւատրման վերաբերյալ տեղեկատվություն նրանցից յուրաքանչյուրի համար առանձին-առանձին միայն հաստիքային նշագրմամբ: Դա կարող էր լինել պետական հիմնարկի աշխատողների պարգեւատրման անվանական տվյալներ համապատասխան հաստիքներով նրանցից յուրաքանչյուրի համար առանձին պարգեւատրման չափերով, ինչը եւ կլիներ տրամաբանական: Այս պարագայում՝ պատասխանողը տրամադրել է տեղեկատվություն միայն հաստիքային ցուցակով նախատեսված աշխատողների համար՝ նշելով համապատասխան հաստիքացուցակի համա-



մասնությամբ պարզեւատրման մասին, որը համապատասխան գրությամբ տեղեկացրել էր հայցվորին:

Նշել է նաեւ, որ հայցվորի՝ պետական հիմնարկի պարզեւատրված աշխատողների ըստ հաստիքների նշումով պահանջվող տեղեկության տրամադրման վերաբերյալ տեսակետը հակասում է իր կողմից 20.06.2012թ. թիվ 174-ի 2-րդ կրկնակի հարցման վերաբերյալ պատասխանողին ուղղված գրությամբ արտահայտված այն տեսակետին, որտեղ նշում է, մեջբերում եմ. «...«Սակայն Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» ստացել է թերի պատասխան, քանի որ չեն տրամադրվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» խնդրած «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի՝ պարզեւատրում ստացած աշխատակիցների եւ դրամական պարզեւատրողների չափի մասին տեղեկությունները (2-րդ եւ 3-րդ հարցերի պատասխանները)»:

Հայտնել է, որ հայցվորի կողմից հայցադիմումում արված այն արտահայտությունը, որը վերաբերում էր պետական հիմնարկի աշխատողների պարզեւատրման վերաբերյալ ոչ անվանական նշագրմամբ տեղեկատվության տրամադրմանը (ըստ հայցվորի տեղեկատվությունը պետք է տրամադրվեր ոչ անվանական՝ անուն- ազգանունով, այլ ըստ հաստիքների) խոսում է այն մասին, որ հայցվորը իրեն հարմար տարբերակով է մեկնաբանում իր կողմից պատասխանողին հասցեագրված հարցումների 2-րդ կետով շարադրված նախադասությունը:

Նշել է նաեւ, որ պարզեւատրումը պետական հիմնարկում եղել է ոչ թե ըստ հաստիքների, այլ եղել է ըստ աշխատողների կատարած աշխատանքի, այսինքն՝ պարզեւատրում ստացել է ոչ թե հաստիքը, այլ անձը, աշխատողը, հետեւաբար՝ հայցվորի կողմից հարցման 2-րդ կետով շարադրված նախադասության («Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով)») «ովքե՞ր» բառը անձնական դերանուն է, որը վերաբերում է անձին, անհատին, ցույց է տալիս թե ում է ուղղված խոսքը, այլ ոչ թե ինչին է ուղղված այն: Ըստ հայցվորի, այն ուղղված է զուտ հաստիքին: Հաստիքը դա անձ չէ, այն պատասխանում է ինչ հարցին, հետեւաբար «ովքե՞ր են պարզեւատրվել» բառակապակցությունը վերաբերում է անձին, թե անձը ինչ հաստիք է զբաղեցնում եւ ինչ գումարով է պարզեւատրվել: Ուստի հայցվորի կողմից քերականական ոչ ճիշտ մեկնաբանումն արդեն իսկ կարող է տարընթերցումների տեղիք հանդիսանալ: Այս ամենից պարզ է դառնում, որ հայցվորը վերը նշված նախադասությունը մեկնաբանում է իրեն հարմար տարբերակով, չնայած որ նախադասությունները պետք է հասկանալ եւ մեկնաբանել իր տառացի նշանակությանը համապատասխան:

Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը՝ նշել է, որ պետական հիմնարկի տնօրենը, հանդիսանալով պաշտոնատար անձ, հայցվորին չի տրամադրվել տեղեկատվություն հարցման 2-րդ կետի վերաբերյալ, քանի որ ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան հոդվածները թույլ էին տալիս չտրամադրելու այն՝ հաշվի առնելով վերնշված օրենսդրական ակտերի պահանջները: Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 23 եւ 43 հոդվածները, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը՝ հայտնել է, որ այդհողվածի բովանդակությունից հստակ երեւում է, որ տեղեկատվության տրամադրումը մերժվում է, եթե դա հանդիսանում է նաեւ մարդու անձնական եւ ընտանեկան գաղտնիք, ուստի

պետական հիմնարկի աշխատողների պարգևատրման վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես համարվում է մարդու կամ քաղաքացու անձնական կյանքի բաղկացուցիչ մաս:

Հայցվորը հայցադիմումի մեջ նշել է, մեջբերում. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետին եւ 199 հոդվածին հղում կատարելով 02.07.2012թ. գրությամբ տեղեկատվության տրամադրման մերժումը եւս անհիմն է, քանի որ տեղեկատվությունը պահանջվել է ըստ աշխատողների հաստիքների, այլ ոչ թ՝ անվանական, բացի այդ, աշխատողին տրամադրված պարգևը կամ պարգևավճարի չափը ո՛չ , աշխատանքային օրենսգրքի 131 հոդվածի 1-ին մասով սահմանված՝ աշխատանքային հարաբերությունների հետ կապված եւ որոշակի աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններ են (աշխատողի անձնական տվյալ) եւ ո՛չ էլ 199 հոդվածով սահմանված՝ աշխատողի աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալներ»:

Այսինքն, հայցվորը պարգևատրման վերաբերյալ տվյալներ չի համարում ոչ աշխատողի անձնական տվյալները, ոչ էլ աշխատավարձի վերաբերյալ տվյալները, հետեւաբար՝ պատասխանող կողմն անհիմն է համարում հայցվորի նմանատիպ մեկնաբանությունները հետեւյալ հիմնավորմամբ «Նախ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11 հոդվածի 1-ին մասի համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն՝ դրանցում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի պահանջները ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ աշխատողի անձնական տվյալները աշխատանքային հարաբերությունների հետ կապված եւ որոշակի աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններն են:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետ սահմանում է.« Աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է պահպանել հետեւյալ պահանջները.

1) աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության,....:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 199 հոդվածի համաձայն՝ աշխատողի աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալները տրամադրվում կամ հրապարակվում են միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ աշխատողի համաձայնությամբ:

Հայցվորը պարգևատրումը չի համարում աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալներ, սակայն աշխատանքային օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը եւ գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ վարձատրությունը», իսկ աշխատանքային օրենսգրքի 195 հոդվածի համաձայն աշխատանքի վարձատրության տեսակ է համարվում լրացուցիչ աշխատավարձը, որի մեջ մտնում է նաեւ պարգևատրումը:

Հետեւաբար՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերնշված հոդվածների տառա-

ցի մեկնաբանությամբ պարզ է դառնում, որ հայցվորի կողմից պարզեւատրումը կամ պարզեւատրման չափի վերաբերյալ տփալները ոչ այլ ինչ են, քան աշխատավարձի վերաբերյալ տփալներ:

Հայցվոր կողմը ցանկություն էր հայտնել տեղեկություն ստանալ վերը նշված հարցման 2-րդ կետով պետական հիմնարկի աշխատողների (ըստ հաստիքների) պարզեւատրման եւ դրա չափի վերաբերյալ, եւ նա ստացել է այդ տեղեկատվությունը:

Նշել է, որ հայցվոր կողմը, որպես իրավական փաստ, նշում է նաեւ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.11.2011թ. թիվ ՎԴ/0480/05/10 որոշումը, ուստի պատասխանող կողմն առարկել է եւ համարել է սույն գործի հետ որեւէ առնչություն չունեցող իրավական փաստարկ, քանի որ վարչական վերաքննիչ դատարանը կայացրել է նման որոշում բողոք բերած անձի կողմից «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի իմաստով հայցվոր տեղեկությունը անհատական տվյալ հանդիսանալու հանգամանքը չհիմնավորվելու պատճառով: «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ անհատական տվյալը ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տփալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ աշխատողի անձնական տվյալները աշխատանքային հարաբերությունների հետ կապված եւ որոշակի աշխատողին վերաբերող, գործատուին անհրաժեշտ տեղեկություններն են:

Այստեղ նպատակները տարբեր են, անհատական տվյալը որեւէ կապ չունի անհատի աշխատանքային հարաբերությունների հետ, այն կոչված է նույնականացնել անհատի ինքնությունը: Խոսքը այստեղ վերաբերում է ոչ թե անհատական տվյալներին, այլ որ պետական հիմնարկի աշխատողների պարզեւատրման վերաբերյալ տեղեկատվությունը համարվում է առաջին հերթին անձի, քաղաքացու անձնական կյանքի բաղկացուցիչ մաս, եւ երկրորդ, աշխատողի անձնական, ինչպես նաեւ աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալներ, որը սահմանվում է աշխատանքային օրենսգրքի 134-րդ եւ 199-րդ հոդվածներով, հետեւաբար՝ պետական հիմնարկի տնօրենը չէր կարող տրամադրել հիմնարկի աշխատողների պարզեւատրման վերաբերյալ տեղեկատվություն նրանցից յուրաքանչյուրի համար առանձին, քանի որ բացակայում էր պետական հիմնարկի աշխատողների պարզեւատրման եւ պարզեւատրման չափի վերաբերյալ հայցվորին տեղեկատվություն տրամադրելու համաձայնությունը:

Ելնելով վերոգրյալից եւ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածը՝ պատասխանող հիմնարկի տնօրենը դատարանից խնդրել է հայցվորի պահանջը՝ իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու մասին, ամբողջությամբ մերժել:

Գործի դատաքննության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը հայտնել է, որ իրենք պատրաստ են տրամադրել տեղեկատվությունը՝ դրա ճիշտ ձեւակերպման դեպքում միայն, եթե իհարկե հայցվորը իրաժարվի իր պահանջից:

Իսկ երբ դատարանը պարզաբանել է, որ անհրաժեշտ տեղեկատվությունն արդեն իսկ դատական նիստում հայցադիմումով պարզաբանվել է հայցվորի ներկայացուցչի կողմից, ու միայն պահանջի կատարման դեպքում՝ հայցվորը կհրաժարվի պահանջից, պատասխանողի ներկայացուցիչն ընդգծել է, որ իր վստահորդ իրավաբանական անձի տնօրենը հայտնել է, որ հայցով պահանջվող տեղեկատվությունն իրենք տրամադրել չեն կարող, քանի որ բացակայում է առանձին՝ այդ մասին գրավոր հարցումը, քանի որ միայն այդ դեպքում պարզ կլինի, թե ինչպիսի տեղեկատվություն է դա ու հնարավոր է արդյոք այն տրամադրել, թե՛ ոչ:

Պատասխանողի ներկայացուցիչը նշել է, որ եթե հայցվոր կողմը տեղեկատվությունը պահանջում է ըստ հաստիքների, առանց անհատական տվյալների բացահայտման, ապա իրենք պատրաստ են տրամադրելու այդ տեղեկությունը, սակայն միայն այն դեպքում, երբ կողմը հայցից հրաժարվի, որից հետո իրենք կտրամադրեն պահանջվող տեղեկատվությունը՝ ըստ հաստիքների, ոչ կոնկրետ աշխատակիցների անունները լուսաբանելու:

Հայտնել է, որ եթե դատարանը գտնի, որ պետք է տեղեկատվությունը տրամադրվի առանց անվանական ու ըստ հաստիքների, ապա իրենք կտրամադրեն այն, իսկ կողմը չի ցանկանում հաշտվել:

Նշել է, որ եթե հայցվոր կողմը երաշխիքներ կտա, որ կբավարարվի միայն պահանջվող տեղեկատվությունն ըստ հաստիքների ստանալով, ապա իրենք հաշտության կգան ու ավելացնելու բան չունի:

#### **Գործի լուծման համար եական նշանակություն ունեցող փաստերը**

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 29.05.2012թ.-ի գրությամբ հարցում է կատարվել «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին՝ խնդրելով տրամադրելու տեղեկատվություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

1. Ստացե՞լ են արդյոք պարզեւատրումներ (պարզեւավճարներ, նվերներ) այդ հիմնարկի աշխատակիները 2011թ.-ին,
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքան գումարով (ի՞նչ նվերով),
3. Որքա՞ն է կազմել հիմնարկի աշխատակիցների ստացած դրամական բարգեւատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել հիմնարկի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

2. «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 01.06.2012թ. գրությամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրվել է 29.05.2012թ. գրությամբ բարձրացված 1-ին եւ 4-րդ հարցերով պահանջվող տեղեկատվությունները:

3. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 20.06.2012թ.-ի գրությամբ կրկին հարցում է կատարվել «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին՝ խնդրելով տրամադրելու դեռեւս 29.05.2012թ. գրության 2-րդ եւ 3-րդ

կետերով բարձրացված հարցերի պատասխանները:

4. «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 02.07.2012թ. գրությամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին տրամադրվել է 29.05.2012թ. գրությամբ բարձրացված 3-րդ հարցով պահանջվող տեղեկատվությունը, իսկ 2-րդ հարցով բարձրացված խնդրանքը մերժվել է «Տեղեկատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին մասի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 199 հոդվածի իրավական նորմերի հիմքով, ինչպես նաև հիմք ընդունելով այն փաստը, որ բացակայում է պետական հիմնարկի առանձին աշխատողների 2011 թվականին ստացված պարզեւատրումների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու օրենքով սահմանված համաձայնությունը:

5. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ու «Մեծլումյան եւ Պետրոսյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի միջև 20.08.2012թ. կնքվել է փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր, ըստ որի՝ պայմանագրով նախատեսված՝ «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի դեմ նարկայացվող՝ իրավունքի խախտման փաստը ճանաչելու ու տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին գործով մատուցվող ծառայությունների դիմաց պետք է վճարվեր 127.000 ՀՀ դրամ գումար: Նշված պայմանագրի հիման վրա կողմերը 20.08.2012թ. կազմել ու հաստատել են ծառայությունների մատուցման հաշիվը:

6. Ըստ 20.08.2012թ.-ի վճարման թիվ 109 հանձնարարականի՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից «Մեծլումյան եւ Պետրոսյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ հաշվին փաստացի փոխանցվել է 127.000 ՀՀ դրամ գումար՝ ըստ 20.08.2012թ. կողմերի միջև կնքված պայմանագրի:

### **Դատարանի իրավական վերլուծությունները**

Դատարանը, ուսումնասիրելով գործի հանգամանքները եւ ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտավ, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, դատական ծախսերի գումարի բռնագանձման պահանջների մասին հայցը ենթակա է բավարարման մասնակի՝ ելնելով հետևյալ պատճառաբանություններից.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների աջակցությամբ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր

խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ամրագրում է. «Սահմանադրությամբ ամրագրված մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ եւ ազատություններ:

Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչ արգելված չէ օրենքով եւ չի խախտում այլոց իրավունքները եւ ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Համաձայն «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ու «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» Միջազգային դաշնագրի (16 դեկտեմբեր 1966թ.) 14-րդ հոդվածի 1-ին կետի՝ բոլոր անձինք հավասար են դատարանների առջեւ, ինչպես նաև յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի եւ հրապարակային դատաքննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքը կատարվում է ժողովրդավարական հասարակությունում (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը՝ արտահայտած Էյրիկ ընդդեմ Իռլանդիայի, 1979թ. հոկտեմբերի 9-ի վճռում, 12-14 էջեր եւ Այթ-Մուհուբն ընդդեմ Ֆրանսիայի գործերով, 28.10.1998թ.):

Համաձայն «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է՝ 6-րդ հոդվածի 1-ին կետը յուրաքանչյուրի համար երաշխավորում է իր քաղաքացիական իրավունքներին եւ պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է «դատարանի իրավունքը», որում դատարան դիմելու իրավունքը, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը, հանդիսանում է այդ իրավունքի մի մասը միայն:

Դատական վարույթի արդար, հրապարակային եւ արագ բնութագրիչները արժեք չեն ունենա, եթե հիշյալ գործընթացներին ընթացք չի տրվում:

Քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս իրավունքի գերակայություն գոյություն ունենալ չի կարող, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (inter alia (ի թիվս այլ դեպքերի՝ Գոլդերն ընդդեմ

Միացյալ Թագավորության, 1975թ. հունվարի 21-ի վճիռ, շարքեր A թիվ 18, 16-18 էջեր, կետ 34 in fine, ինչպես նաև 2-ն եւ այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (GC), թիվ 29392/95, 91-93-րդ կետեր, ՄԻԵԿ 2001-վ):

Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցելու պահից սկսած (2002թ. ապրիլի 26) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պետք է հաշվի առնվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մեկնաբանելիս:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը հավասար հնարավորություններ է ընձեռում դատավարության կողմերին սեփական իրավունքները պաշտպանելու համար: Հայցի պաշտպանության դատավարական միջոցների տնօրինման ձեւերը սահմանվում են դատական վեճի տնօրինման սկզբունքի հիման վրա, որի ուժով կողմերը որոշում են վեճի հետագա ընթացքն ու լուծման ճանապարհները՝ հայցի իրավունքի՝ պաշտպանության միջոցների տնօրինման միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը հստակ սահմանում է դատարան դիմելու իրավունքը, այն է՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի պաշտպանության համար:

Նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53 հոդվածի վերլուծությունից հետեւում է, որ դատարանը գործի քննության ընթացքում կայացնում է ըստ էության դատական ակտ միայն այն դեպքերում, երբ վերջինիս կողմից ուսումնասիրվում են գործի հանգամանքները եւ ներկայացված ապացույցները, երբ յուրաքանչյուր ապացույց գնահատվում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: ՀՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածը ուղղակի սահմանում է, որ դատարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը, ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերին եւ օրենքներին համապատասխան:

ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունք, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում եւ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

Դատաքննության ողջամիտ ժամկետը այդ դատաքննության արդարացիության գրավականներից մեկն է:

Ողջամիտ ժամկետի սկզբունքը ունի լայն պայմանագրային, ինչպես նաև սովորության ընդունված է կիրառություն: Որպես այդպիսի սովորության ընդունված ցուցադրում՝ կարելի է վկայակոչել Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի բազմաթիվ նախադեպեր (*inter alia* (ի թիվս)՝ *Bagetta case* (*Baggetta Case*, 96 ILR, 465) , *Martins Moreira Case* (*Martins Moreira Case*, 96 ILR, 498) , *Vernillo v France* (*Vernillo v. France*, 96 ILR, 585) գործեր):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը երեք ու կես տարի դատական գործընթացը ողջամիտ ժամկետի խախտում համարվեց (*Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը՝ արտահայտած Vernillo v. France* գործով):

Հետևապես, դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով պահպանվել է ողջամիտ ժամկետի սկզբունքը և գործի դատաքննությունն իրականացվել է ողջամիտ ժամկետներում՝ ելնելով գործի համար եական նշանակություն ունեցող փաստերի ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունից, իսկ դատավարական ժամկետների ընթացքը պայմանավորվել է գործով հաշտություն կնքելու ու անհրաժեշտ այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ:

Վերոգրյալ միջազգային, սահմանադրական և ներպետական օրենսդրական իրավական նորմերի վերլուծությունը թույլ է տալիս կատարել այն եզրահանգումը, որ անձի դատական պաշտպանության իրավունքն ունի ներպետական՝ սահմանադրությամբ և օրենքով, ինչպես նաև միջազգային նորմերով հստակ ընդգծված պաշտպանություն:

Տվյալ պարագայում, դատավարության հայցվոր կողմը, օգտվելով վերը նշված իրավական նորմերով իրեն ընձեռված օրենքով չարգելված իրավունքի պաշտպանության՝ դատարան դիմելու իրավունքից, դիմել է դատարան՝ իր իրավունքը պատասխանողի կողմից խախտվելու փաստի հիմքով տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, դատական ծախսերը հատուցելու պահանջներով, ուստի դատարանը պետք է պարզի, թե առկա է արդյոք հայցվորի նման իրավունք, թե՛ ոչ, և միաժամանակ, խախտվել են արդյոք ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կողմի իրավունքները, թե ոչ, բխում է արդյոք վերջինիս պահանջները ներպետական իրավական, մասնավորապես՝ քաղաքացիաիրավական նորմերից, թե ոչ, և դատաքննությամբ վերջինս ապացուցել է արդյոք իր կողմից վկայակոչված փաստերի իրավական հիմնավորվածությունը, թե ոչ, և միայն այդ դեպքում հնարավոր կլինի բավարարել պահանջները, ինչն իրավաչափ կոնկրետ միայն, եթե դատաքննությամբ հաստատվի, որ հայցվոր կողմի պահանջները հիմնավոր են և բխում են գործով առկա իրավահարաբերությունները կարգավորող, գործող միջազգային, սահմանադրական և ներպետական օրենսդրական իրավական նորմերով սահմանված իրավական դրույթներից:

Գործի դատաքննությամբ դատարանը պարզել է, որ դատավարության կողմերի միջև ծագած վեճն ըստ էության կարգավորվում է տեղեկատվություն տրամադրելու, տեղեկատվության ազատության հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի պահանջներով, սակայն մինչ դրանց ուսում-



նասիրությունը գործով էական է պարզել իրականում տեղի ունեցած փաստական հանգամանքները՝ դրանց հիման վրա պահանջի վերաբերյալ օբյեկտիվ դիրքորոշում արտահայտելու ու իրավական ակտի այս կամ այն պահանջի կիրառելիությունը որոշելու նպատակով:

Այսպես՝ գործի դատաքննությամբ ու ներկայացված փաստերով դատարանը պարզել ու հաստատված է համարել, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 29.05.2012թ.-ի գրությամբ հարցում է կատարվել «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին՝ խնդրելով տրամադրելու տեղեկատվություն՝ հետևյալ բովանդակությամբ.

1. Ստացել են արդյոք պարզեատրումներ (պարզեավճարներ, նվերներ) այդ հիմնարկի աշխատակիները 2011թ.-ին,
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքան գումարով (ի՞նչ նվերով),
3. Որքա՞ն է կազմել հիմնարկի աշխատակիցների ստացած դրամական բարգեատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել հիմնարկի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Ի կատարումն վերը նշված հարցման՝ «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 01.06.2012թ. գրությամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրվել է 29.05.2012թ. գրությամբ բարձրացված 1-ին եւ 4-րդ հարցերով պահանջվող տեղեկատվությունները:

Սակայն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 20.06.2012թ.-ի գրությամբ կրկին հարցում է կատարվել «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին՝ խնդրելով տրամադրելու դեռեւս 29.05.2012թ. գրության 2-րդ եւ 3-րդ կետերով բարձրացված հարցերի պատասխանները, քանի որ դրանք չեն տրամադրվել:

Մինչդեռ «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 02.07.2012թ. գրությամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրվել է 29.05.2012թ. գրությամբ բարձրացված միայն 3-րդ հարցով պահանջվող տեղեկատվությունը, մասնավորապես՝ նշվել է, որ հիմնարկի բոլոր աշխատակիցները 2011 թվականի ավարտին ստացել են միայն դրամական պարգեատրում հիմնարկի աշխատողների հաստիքացուցակի համամասնությամբ՝ ընդհանուր 1.994.740 ՀՀ դրամ, իսկ 2-րդ հարցով բարձրացված խնդրանքը մերժվել է «Տեղեկատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին մասի եւ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 199-րդ հոդվածի իրավական նորմերի հիմքով, ինչպես նաեւ հիմք ընդունելով այն փաստը, որ բացակայում է պետական հիմնարկի առանձին աշխատողների 2011թ.-ին ստացված պարգեատրումների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու օրենքով սահմանված համաձայնությունը:

Այսպես, դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված հայցային պահանջներին օբյեկտիվ իրավական գնահատական տալու համար, դատարանը նախ եւ առաջ անհրաժեշտ է համարում պարզելու այն իրավաբանական փաստերի շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն սույն քաղաքացիական գործի լուծման համար եւ ենթակա են պարզման գործի քննության ընթացքում, քանզի իրավաբանական նշանակություն ունեցող հենց այդ փաստերի համակցությունն էլ կկազմի սույն գործով ներկայացված հայցային պահանջի ապացուցման առարկան:

Հաշվի առնելով այն փաստը, որ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերը դատարանը պետք է պարզի հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի ուսումնասիրությամբ, դատարանը հարկ է համարում վկայակոչել հարաբերությունները կանոնակարգող ներքոհիշյալ իրավական նորմերի պահանջները.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները, իսկ 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

Օրենքի 2-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:

Օրենքի 3-րդ հոդվածով տրված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների նշանակությունները, մասնավորապես, ի թիվս այլ հասկացությունների, նշված են.

- տեղեկատվության ազատություն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.
- տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ).
- տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք.
- հարցում՝ տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով

սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը, իսկ 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման եւ իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, դատարանի որոշմամբ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

Սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը: Սույն գործի փաստերի առանձնահատկությամբ պայմանավորված՝ դատարանը պարզել է, որ դատավարության կողմերի վեճը կայանում է գրավոր հարցմամբ պահանջված տեղեկատվությունը չտրամադրելու հարցի իրավաչափության շուրջ, հետեւաբար՝ վերը նշված օրենքով սահմանված հոդվածներում պարունակվող իրավական նորմերում առկա բառերն ու արտահայտությունները վերլուծելով դրանց տառացի նշանակությամբ՝ տեղեկատվության տրամադրելու ու այն մերժելու հարցի իրավաչափությունը դիտարկելով ողջ իրավակարգավորման համատեքստում՝ դատարանն արձանագրում է, որ հայցը ենթակա է լուծման՝ նախ եւ առաջ ներքոհիշյալ եական նշանակություն ունեցող փաստերի հաշվառմամբ.

տեղեկատվություն փնտրող տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական հիմնարկներից, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններից, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններից եւ դրանց պաշտոնատար անձանցից տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իր իրավունքը (այսուհետ՝ նաեւ Իրավունք) պետք է իրականացնի տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր հարցմամբ (դիմումով):

Իրավունքը, դրա իրականացման ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, այսինքն՝ նաեւ այն դեպքում, երբ դա խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.

Իրավունքը, դրա իրականացման ազատությունը տեղեկատվությունը տիրապետող անձը կարող է սահմանափակել վերը նշված հիմքերի առկայության դեպքում միայն:

Տվյալ դեպքում, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 29.05.2012թ.-ի գրությամբ հայցված տեղեկատվությունը համապատասխանել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, իսկ տվյալ գրության 2-րդ կետով ներկայացված, ինչպես նաեւ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 20.06.2012թ.-ի գրությամբ կրկին պատասխանողից հայցված՝ «Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով)» հարցին ի պատասխան տեղեկատվություն տրամադրելու մասին խնդրանքը պատասխա-

Նող «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը 02.07.2012թ. գրությամբ ամբողջությամբ մերժվել է, քանի որ մերժման գրության մեջ հստակ նշվել է հետեւյալը. «2-րդ կետի վերաբերյալ տեղեկատվություն չեմ կարող տրամադրել»՝ ելնելով «Տեղեկատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին մասի եւ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 199-րդ հոդվածի իրավական նորմերի հիմքով, ինչպես նաեւ հիմք ընդունելով այն փաստը, որ բացակայում է պետական հիմնարկի առանձին աշխատողների 2011թ.-ին ստացված պարգևատրումների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու օրենքով սահմանված համաձայնությունը:

Սույն գործի փաստերով ու դատաքննությամբ դատարանը պարզել է ու հաստատված է համարել, որ պատասխանողն ըստ էության չի առարկում այն հարցի շուրջ, որ հայցվորի կողմից պահանջվող ամբողջ տեղեկատվության մասով վերջինս սահմանափակված է այն ստանալու իրավունքից, քանի որ պատասխանող կողմը դատաքննությամբ ընդունել է, որ իրենք պատրաստ են տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը միայն ըստ հաստիքների, սակայն ոչ անվանական աշխատողների տվյալների բացահայտման տեսքով, իսկ տեղեկատվության տրամադրումը մերժվել է՝ ելնելով հայցվող խնդրանքի ոչ ճիշտ ձեւակերպումից, քանի որ հայցվորի ներկայացուցիչը դատաքննության ընթացքում հստակ նշել է, որ եթե հայցվոր կողմը տեղեկատվությունը պահանջում է ըստ հաստիքների, առանց անհատական տվյալների բացահայտման, ապա իրենք պատրաստ են տրամադրելու այդ տեղեկությունը:

Վերը նշված փաստերից ակնհայտ է, որ հայցվորի կողմից ներկայացված 2-րդ հարցի վերաբերյալ պատասխանողը տեղեկություն չի տրամադրել՝ ելնելով հարցի ձեւակերպման խնդրից, հարցով հայցվող տեղեկատվության ոչ որոշակիությունից, քանի որ այն դիտել է որպես ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ, 199-րդ հոդվածների, Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքի առկայության հիմքերով տրամադրման ոչ ենթակա անհատական բնույթի տեղեկատվություն, որը վերաբերում է աշխատողի անձնական կյանքին ու տրամադրման ենթակա չէ:

Այսինքն՝ պատասխանողի կողմից հայցվորի խնդրանքը մերժվել է տվյալ տեղեկատվությունն առհասարակ օրենքով պաշտպանվող տեղեկատվություն լինելու ու այն տրամադրելու հայցվող կողմի իրավունքն այդ հիմքով սահմանափակված լինելու պատճառաբանությամբ, քանի որ հարցման 2-րդ կետը պատասխանողի կողմից ընկալվել է որպես անհատական բնույթի տեղեկատվություն տրամադրելու մասին հայցվող խնդրանք:

Նախ, դատարանը փաստում է, որ պատասխանողին ուղղված գրության մեջ վկայակոչված հարցերը հիմնավորելու որեւէ պարտավորություն պատասխանող կողմը չէր կրում եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով՝ այնտեղ վկայակոչված հարցերը դիմողը պարտավոր չէր հիմնավորելու, իսկ դրանց ոչ պարզ, ոչ հստակ ու անորոշ լինելու դեպքում՝ պատասխանողը կարող էր պատասխան գրությամբ դիմել հայցվորին՝ դրանք պարզաբանելու խնդրանքով, ինչպիսի վարքագիծ մինչեւ դատարան դիմելու պահը իրականում պատասխանողի կողմից չի դրսևորվել:

Մինչդեռ 29.05.2012թ. գրության 2-րդ կետով ներկայացված՝ «Եթե այո, ապա

ովքե՞ր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով)» հարցի ձեւակերպումից ակնհայտ է, որ հայցվորի կողմից պահանջված հարցումը չի կրել անհատական բնույթ, քանի որ «ովքե՞ր են պարզեւատրվել» հարցին ակնկալվող պատասխանն ինքնին բացահայտվել է «ըստ հաստիքների» փակագծերում նշված արտահայտությամբ, այսինքն՝ հարցն ու դրա ակնկալվող պատասխանն ինքնին պետք է վերաբերեին հաստիքներին, այլ ոչ թե կոնկրետ աշխատողների անվանական տվյալներին, իսկ «ովքե՞ր» դերանունը վերագրվել է ոչ թե կոնկրետ անձին բնորոշ տվյալներին՝ անվանը, ազգանվանը, հայրանվանը եւ այլն, այլ այս կամ այն հաստիքը զբաղեցնող անձին կամ անձանց, օրինակ՝ իրավաբանի, հաշվապահի եւ այլ հաստիքներին, որոնց վերաբերյալ տեղեկություն հայցելիս գրական հայերենով, քերականորեն ճիշտ պետք է հարցը ձեւակերպվի «ովքե՞ր» դերանվան միջոցով, քանի որ հարցը ոչ թե վերաբերում էր զուտ հաստիքներին, այլեւ այն անձանց, առանց որեւէ անվանական տվյալների բացահայտման, որոնք զբաղեցնում են այս կամ այն հաստիքները (օրինակ՝ իրավաբանի հաստիքը զբաղեցնող անձինք եւ այլն), իսկ «ովքե՞ր» դերանվան օգտագործմամբ հայցորն ի նկատի է ունեցել հաստիքները զբաղեցնող անձանց, այդ իսկ պատճառով գրավոր հարցման մեջ օգտագործվել է ոչ թե «ինչ հաստիքներ են պարզեւատրվել» հարցադրումը, այլեւ՝ վերը նշված պատճառաբանությամբ օգտագործվել է «ովքե՞ր» դերանունը, իսկ «ըստ հաստիքների» բացահայտող արտահայտությամբ՝ հայցվորը ակնկալել է ստանալու աշխատողների ոչ անհատավորված, այլ այս կամ այն հաստիքը զբաղեցնող փաստով պայմանավորված պարզեւատրումների ու դրանց չափի մասին տեղեկատվություն՝ իրականացնելով ազատ տեղեկատվություն ստանալու իր իրավունքը, որն այս դեպքում սահմանափակված չէ ո՛չ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքում, ո՛չ էլ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով:

Հետեւաբար՝ վերը նշված հանգամանքների առումով հայցվորի պատասխանում վկայակոչված փաստարկները, ինչպես նաեւ այն փաստարկը, որ պատասխանողը չէր կարող տրամադրել իր աշխատողների դրամական կամ նվերով պարզեւատրման վերաբերյալ տեղեկատվություն՝ նրանցից յուրաքանչյուրի համար առանձին-առանձին միայն հաստիքային նշագրմամբ, քանի որ դա կարող էր լինել աշխատողների անվանական տվյալներ համապատասխան հաստիքներով նրանցից յուրաքանչյուրի համար առանձին պարզեւատրման չափերով, դատարանն անհիմն է համարում, քանի որ աշխատողների անվանական տվյալները չբացահայտելով՝ հեշտությամբ հնարավոր էր նշել այս կամ այն հաստիքը զբաղեցնող անձանց այն թիվը, որոնք ստացել են պարզեւատրում, որոնք ոչ, ինչպես նաեւ հնարավոր էր նշել պարզեւատրման գումարի չափը :

Այսինքն՝ վերը նշված պատճառաբանություններից ելնելով՝ դատարանը հաստատված է համարել, որ հարցումը եղել է ձեւավորված պարզ ու ընկալելի ձեւով, ու դրան պատասխանողը կարող էր պատասխանել այնպես, որպեսզի չբացահայտվեին աշխատողների անհատական տվյալները, այսինչ այդ ուղղությամբ պատասխանող կողմը որեւէ քայլ չի ձեռնարկել՝ բավարարվելով գրավոր հարցման 2-րդ կետով սահմանված խնդրանքն ամբողջությամբ մերժելու վարքագիծ դրսեւորելով, արդյունքում՝ խախտվել է հայցվորի՝ ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Բացի վերը նշված հիմքերից՝ դատարանը հայցը հիմնավոր է համարել՝ ելնելով ներքոհիշյալ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ու ուշադրության արժանի փաստերից.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 3-րդ կետի համաձայն, ի թիվս այլի, տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

Քննվող գործով «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 02.07.2012թ. գրությամբ 2-րդ հարցով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բարձրացրած խնդրանքը հստակ կերպով մերժվել է, իսկ մերժման գրության մեջ պատասխանողը չի նշել ոչինչ՝ հարցի պարզաբանման անհրաժեշտության մասին, հարցը ոչ պարզ լինելու, իր մեջ որել է անորոշություն պարունակելու վերաբերյալ:

Մինչդեռ դատարանի վերը նշված դիրքորոշման լույսի ներքո պետք է փաստել, որ հարցը կոնկրետ աշխատողների անհատական հատկանիշների բացահայտման տիրույթում հասկացվելու հիմքեր չկային, իսկ եթե, այնուամենայնիվ, պատասխանողն այդպես կարող էր ընկալել, ապա անգամ այդ դեպքում Օրենքի վերը նշված պահանջից ելնելով՝ վերջինս պարտավոր էր տրամադրել իր տնօրինության տակ գտնվող ամբողջ տեղեկատվությունը, իսկ պահանջվող տեղեկատվության ամբողջի մի մասն է կազմում ըստ հաստիքների ու յուրաքանչյուրի մասով վճարված պարգևատրումների չափի վերաբերյալ տեղեկատվությունը, որը ստանալու հայցվող կողմի իրավունքը որել է իրավական ակտով սահմանափակված չէ, ինչն ընդունել է նաեւ պատասխանող կողմը, ուստի եթե պատասխանողը, մերժման գրության մեջ նշված պատճառաբանություններից ելնելով, չի տրամադրել աշխատողների անհատական հատկանիշների բացահայտող տեղեկատվությունը, ապա տնօրինվող տեղեկատվության մնացած մասը՝ ըստ հաստիքների ու յուրաքանչյուրի մասով վճարված պարգևատրումների չափի վերաբերյալ տեղեկատվությունը, վերջինս պարտավոր էր տրամադրելու՝ Օրենքի վերը նշված պահանջից ելնելով, եւ հենց այդ տեղեկատվությունն էլ ակնկալում էր ստանալու տղեկատվություն հայցող կողմը, իսկ Օրենքի այդ պահանջը պատասխանողի կողմից պահպանվելու ու փաստացի կիրառվելու արդյունքում՝ սույն հայցով պահանջվող տեղեկատվությունը հայցվորը կստանար ու անհարկի չէր խախտվի վերջինիս՝ Օրենքով սահմանված ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը եւ դատական կարգով այն վերականգնելու անհրաժեշտություն ինքնին չէր առաջանա:

«Տեղեկատվության ազատության մասին» 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում? արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը, իսկ 11-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն

մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

Վերը նշված հոդվածում պարունակվող իրավական նորմերի պահանջները պատասխանողի կողմից կիրառելը ենթադրում է, որ աշխատողների անհատական հատկանիշների վերաբերյալ տեղեկություններից բացի վերջիններիս հաստիքների ու դրանք զբաղեցնող աշխատողներին տրամադրված պարզեւատրումների ու դրանց չափերի վերաբերյալ տեղեկություններ չունենալով՝ պատասխանողը, վերը նշված օրենքի պահանջից ելնելով, պետք է գրավոր մերժման մեջ նշեր նաեւ նման տեղեկատվության բացակայության փաստը, սակայն վերջինս բավարարվել էր հարցման սեփական եւ այն էլ ոչ պատշաճ ընկալման փաստով, ու տեղեկատվությունը տրամադրելու անհնարինության այլ փաստեր չէր արձանագրել, սակայն գործի դատաքննությամբ դատարանը հաստատված է համարել, որ տեղեկատվության տրամադրումը պատասխանողի կողմից մերժվել է ոչ դրա բացակայության փաստով պայմանավորված, քանի որ գործի դատաքննության ընթացքում առանց աշխատողների անվանական տվյալների բացահայտման ու ըստ հաստիքների տեղեկատվությունը տրամադրելու հարցում պատասխանող կողմը հանդես է եկել այն տրամադրելու պատրաստակամ իրավական դիրքորոշմամբ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Քննվող գործով «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 02.07.2012թ. գրությամբ 2-րդ հարցով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բարձրացրած խնդրանքը հստակ կերպով մերժվել է այնպիսի փաստից ելնելով, որը տվյալ հարցին պատասխանելու միակ միջոցը չէր, քանի որ դատարանի վերը նշված պատճառաբանություններից հետեւում է, որ պատասխանողը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 3-րդ կետի պահանջով ղեկավարվելով, հիմք ընդունելով հայցվող հարցի բովանդակային նշանակությունը, մի կողմից մերժելով հայցվորի խնդրանքը՝ պահանջվող տեղեկությունն աշխատողների անհատական հատկանիշների բացահայտմանն ուղղված լինելու պատճառաբանությամբ, մյուս կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պարտավոր էր տրամադրելու ըստ հաստիքների պարզեւատրումներ տրամադրելու ու դրանց չափի վերաբերյալ տեղեկատվությունը, որը ստանալու հայցվող կողմի իրավունքը որեւէ իրավական ակտով սահմանափակված չէ, ինչպիսի փաստն ընդունել է նաեւ պատասխանող կողմը, իսկ Օրենքի այս պահանջը եւս պատասխանողի կողմից պահպանվելու ու փաստացի կիրառվելու արդյունքում՝ սույն հայցով պահանջվող տեղեկատվությունը հայցվորը կստանար ու անհարկի չէր խախտվի վերջինիս՝ Օրենքով սահմանված ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը եւ դատական կարգով այն վերականգնելու անհրաժեշտություն ինքնին չէր առաջանա:

Բացի այդ, գործի դատաքննությամբ դատարանում հայցվորը պարզաբանել է իր պահանջը եւ հստակ նշել է, որ իր կողմից հայցվող հարցով ակնկալվող



տեղեկատվությունը վերաբերում էր ու ներկայումս հայցով պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է ոչ թե պատասխանողի աշխատողների անհատական հատկանիշները բացահայտելուն, այլև՝ աշխատակիցներին 2011թ. տրամադրված պարզեւատրումների չափերին՝ բացահայտելով միայն աշխատակիցների զբաղեցրած հաստիքների վերաբերյալ տվյալները, որից հանարվոր չէ պարզել այս կամ այն աշխատողին անհատականացնող հատկանիշները:

Մինչդեռ պատասխանող կողմը, չնայած ընդունելով այդ տեղեկության տրամադրման իրավաչափությունը, այն տրամադրելու հնարավորության փաստը, պահանջն այդ կերպ հիմնավոր լինելու փաստը, արդյունքում այդպես էլ գործի քննության ընթացքում չի կատարել հայցվորի պահանջը, իսկ այդ կապակցությամբ գործի դատաքննության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը հայտնել է, որ իրենք պատրաստ են տրամադրել տեղեկատվությունը՝ դրա ճիշտ ձեւակերպման ու գրավոր հարցման դեպքում միայն, եթե իհարկե հայցվորը հրաժարվի իր պահանջից, ինչպես նաեւ նշել է, որ իր վստահորդ իրավաբանական անձի տնօրենը հայտնել է, որ հայցով պահանջվող տեղեկատվությունն իրենք տրամադրել չեն կարող, քանի որ բացակայում է առանձին՝ այդ մասին գրավոր հարցումը, քանի որ միայն այդ դեպքում պարզ կլինի, թե ինչպիսի տեղեկատվություն է դա, ու հնարավոր է արդյոք այն տրամադրել, թե՛ ոչ:

Պատասխանողի ներկայացուցիչը նշել է, որ եթե հայցվոր կողմը տեղեկատվությունը պահանջում է ըստ հաստիքների, առանց անհատական տվյալների բացահայտման, ապա իրենք պատրաստ են տրամադրելու այդ տեղեկությունը, սակայն միայն այն դեպքում, երբ կողմը հայցից հրաժարվի, որից հետո իրենք կտրամադրեն պահանջվող տեղեկատվությունը՝ ըստ հաստիքների, ոչ կոնկրետ աշխատակիցների անունները լուսաբանելու:

Չայտնել է նաեւ, որ եթե դատարանը գտնի, որ պետք է տեղեկատվությունը տրամադրվի առանց անվանական ու ըստ հաստիքների, ապա իրենք կտրամադրեն այն, իսկ կողմը չի ցանկանում հաշտվել:

Վերը նշված փաստերի համադրումից հետեւում է, որ պահանջը հստակ պարզաբանվել է գործի դատաքննության ընթացքում հայցվորի կողմից, այդ պարզաբանումն ընդունվել է պատասխանողի կողմից, դատարանը տրամադրել է ժամկետ հաշտվելու համար, ինչպես նաեւ ժամկետ՝ ստեղծված իրավիճակում հայցով ներկայացված պահանջը կատարելու, հետեւաբար՝ նաեւ հայցվորի խախտված իրավունքը վերականգնելու համար, ինչը կատարելու արդյունքում հայցը կարող էր մերժվել՝ հայցային պահանջը փաստացի կատարված լինելու հիմքով, սակայն նման իրավիճակում գործի դատաքննությամբ պատասխանող կողմը որեւէ ակտիվ գործողություն չի ցուցաբերել՝ առաջ քաշելով հայցվորի կողմից հայցից հրաժարվելու անհիմն նախապայմանը, ինչը կարող էր տեղի ունենալ միայն, եթե հայցային պահանջը փաստացի կատարվեր:

Չետեւաբար՝ վերը նշված պատճառաբանություններից ու հանգամանքներից ելնելով՝ դատարանը փաստում է, որ պատասխանողը, հայցվորի 29.05.2012թ. գրությամբ բարձրացված 2-րդ հարցի էությունն անգամ սխալ ընկալելու հանգամանքի պատճառաբանությամբ մերժելով հայցվող տեղեկատվության տրամադրման հայցվորի խնդրանքը, կարող էր դա կատարել:

գործի քննության ընթացքում, որի ժամանակ պատասխան հայցվող հարցի բովանդակությունն ավելի քան որոշակիություն էր ձեռք բերել, սակայն այս դեպքում եւս պատասխանող կողմը մերժել է տրամադրել տեղեկատվություն՝ բերելով ոչ միայն հայցվորի կողմից հայցից չհրաժարվելու անհիմն պատճառաբանությունը, այլ հիմնվել է նոր գրությամբ լրացուցիչ հարցում կատարելու անհրաժեշտության փաստի վրա, որը եւս անհիմն փաստարկ է, քանի որ հայցվորի կողմից գրավոր հարցում արդեն իսկ կատարված էր եւ այն էլ՝ կրկնակի անգամ, իսկ գործի քննության ընթացքում հայցվորը ոչ թե ավելացրել է նախորդ հարցումներով ներկայացված հայցվող տեղեկատվության ծավալն ու ներկայացրել է բոլորովին նոր հարց, այլեւ գործի դատաքննությամբ ավելի է լուսաբանվել պահանջվող տեղեկատվության բնույթը, սակայն այն կրկին պատասխանողի կողմից չի տրամադրվել, ուստի ստեղծված փաստական հանգամանքներում հայցվորի պահանջն առավել քան հիմնավոր է:

Ինչ վերաբերում է պատասխանող կողմի այն փաստարկներին, ըստ որի՝ պատասխանողը, տրամադրելով հիմնարկի աշխատողների հաստիքացուցակի համամասնությամբ ընդհանուր 1.994.740 ՀՀ դրամի չափով պարգեատրման վերաբերյալ տեղեկատվությունը, արդեն իսկ կատարել էր հարցման պահանջը, ապա դատարանն արձանագրում է, որ տվյալ տեղեկատվությամբ պատասխանող կողմը ընդամենը պատասխանել է 29.05.2012թ. գրավոր հարցման 3-րդ հարցին, իսկ 2-րդ հարցը վերաբերել է ոչ թե ընդհանուր աշխատողների հաստիքացուցակների համամասնությամբ պարգեատրման ընդհանուր գումարին, այլեւ այն վերաբերել է յուրաքանչյուր հաստիքի մասով վճարված պարգեատրության չափին՝ առանձին-առանձին, քանի որ միայն այդ տեղեկության միջոցով հնարավոր կլինի բացահայտելու ընդհանուր գումարից այս կամ այն հաստիքի աշխատողներին հատկացված պարգեատրումների չափը, ուստի պատասխանող կողմի մեկնաբանություններն այս առումով դատարանն անհիմն է համարում, ավելին՝ անկախ հարցմամբ ակնկալվող տեղեկատվության ու բուն հարցման հետապնդող նպատակներից՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցվորը՝ որպես դիմող, պարտավոր չէր հիմնավորել հարցումը:

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից...2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք ... անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում...այլ անձանց հեղինակությունը կամ իրավունք-ները պաշտպանելու...նպատակով»:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով անկախ պետական սահմաններից»:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներ

րով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում...այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար...: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

ՀՀ Սահմանադրության 42 հոդվածում ամրագրված է, որ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ:

Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Այսինքն՝ գործի Էությունից ելնելով՝ կարելու է հատկապես ընդգծել ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ 27 և 42 հոդվածների հարաբերությունը, մասնավորապես՝ այն, որ ՀՀ Սահմանադրությունը, ամրագրելով տեղեկատվության և խոսքի ազատության իրավունքը, միաժամանակ մեկ այլ՝ 42 հոդվածով սահմանափակում է 27 հոդվածով սահմանված ազատությունը, որի իմաստից հետեւում է, որ նշված ազատությունը կարող է սահմանափակվել օրենքով և կիրառվել այնքանով, որքանով դա չի խախտում այլոց իրավունքները՝ դրանով իսկ բացառելով ազատության իրավունքի չարաշահումն ու անձի իրավունքների ու ազատությունների խախտումը, ինչը նշանակում է, որ եթե ներպետական օրենսդրությամբ սահմանված է տեղեկատվություն փնտրելու ու ստանալու ազատության որոշակի սահմանափակում՝ կապված տարածված տեղեկատվությունն օրենքով տրամադրման ենթակա չլինելու փաստի հետ ու այդ մասով տեղեկատվություն ստանալու իրավունքն օրենքով սահմանափակված լինելու փաստի հետ, ապա տեղեկատվություն ստանալու հայցվող կողմի ազատությունը այդ դեպքում սահմանափակված է:

Փաստորեն, վերոգրյալը հիմք ընդունելով՝ հարկ է նշել, որ ցանկացած քաղաքացիաիրավական սուբյեկտ, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվություն փնտրելու ու ստանալու իրավունքի ազատության սկզբունքներից ելնելով, գրավոր հարցմամբ դիմելով համապատասխան մարմին՝ այն ստանալու խնդրանքով, պետք է նախ և առաջ ղեկավարվի ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով և ազատության իրավունքը իրականացնի օրենքին համապատասխան: Նույն կերպ պետք է վարվի նաև տեղեկատվությունը տնօրինող կողմը, ում ուղղված է հարցումը, քանի որ և տեղեկատվություն փնտրողը, և այն տրամադրող կողմերը պետք է այդ հարաբերություններում գործեն այնպես, որպեսզի չխախտվեն այլոց իրավունքները և ազատությունները՝ այդ կերպ գործելով օրենքի շրջանակներում և խուսափելով օրենքով սահմանված պատասխանատվությունից:

Բացի այդ, դատարանն ընդգծում է, որ սահմանադրորեն ամրագրված վերոհիշյալ իրավական նորմերի պահանջը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում, որտեղ ժողովրդավարությունն ունի իր առաջնահերթ դերն ու նշանակությունը, պետք է պաշտպանվի եւ խրախուսվի տեղեկատվություն տրամադրելու իրավունքի իրականացման ազատության, տեղեկատվություն տարածելու գործողությունները, ակայն, միաժամանակ, սահմանադրորեն ամրագրված նորմի (ՀՀ Սահմանադրության 43 հոդված) բարձրագույն իրավական պահանջից հետեւում է, որ այդ ազատությունն ու տեղեկատվություն տարածելու, ստանալու, փնտրելու իրավունքները թե՛ տեղեկատվությունը հայցող անձի, թե՛ այն տրամադրող մարմնի կողմից պետք է իրագործվի օրենքի պահանջներից բխող, այսինքն՝ այն որել է կերպ չպետք է հակասի օրենսդրի կողմից սահմանված այն չափանիշներին, որոնք պայմանավորված են ժողովրդավարության անհրաժեշտ տարրերի պահպանման անհրաժեշտությունից, ինչպես նաեւ պետք է համապատասխանի տեղեկատվության ստացման, փնտրման ու տարածման այն սահմանափակումների շրջանակին, որոնք օրենսդրի կողմից համապատասխան իրավական նորմով հետապնդում են այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության իրավական նպատակ, որի անհրաժեշտությունը պայմանավորվում է ժողովրդավարական հասարակություն չափանիշներով, ուստի եթե տեղեկատվությունը հայցող անձը գործում է օրենքի պահանջների խախտմամբ՝ չարաշահելով սահմանադրորեն եւ միջազգային պայմանագրերով ամրագրված իր՝ Սահմանադրության 27-րդ հոդվածով, ինչպես նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով ամրագրված իրավունքները, ապա տեղեկատվությունը տնօրինող անձը պարտավոր է սահմանափակել հայցվող կողմի՝ ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ հիմնավորելով սահմանափակման փաստը գործող իրավական ակտերի պահանջներով, սակայն ոչ կամայական կերպով՝ բացառելով քաղաքացիական հասարակության եւ ժողովրդավարական պետության համար ոչ անհրաժեշտ՝ կատարյալ ազատության առկայության փաստը:

Մինչդեռ գործի փաստերով, դատարանի վերը նշված դիրքորոշմամբ պայմանավորված՝ պետք է փաստել, որ քննվող գործով հայցվորի կողմից 29.05.2012թ. գրավոր դիմումի 2-րդ կետով հայցվող տեղեկատվությունն իր բնույթով չի հանդիսացել օրենքով տարածման ոչ ենթակա տեղեկատվություն: Այն չի տրամադրվել պատասխանողի կողմից՝ աշխատողի անձնական կյանքին վերաբերող տեղեկությունները ստանալու հայցվող կողմի իրավունքն օրենքով սահմանված կարգով սահմանափակված լինելու պատճառաբանությամբ, սակայն մյուս կողմից գործի դատաքննությամբ պարզվել է, որ հայցվորը նման տեղեկատվություն ստանալու նպատակ չի հետապնդել, վերջինիս հարցման ձեւակերպումից ակնհայտ է, որ տեղեկատվությունը պահանջվել է ոչ անվանական, այլեւ՝ ըստ հաստիքների, ավելին՝ այդ փաստը լուսաբանվել ու պարզաբանվել է գործի դատաքննությամբ, իսկ Օրենքի ուժով պատասխանողը, անկախ տեղեկատվությունը որպես աշխատողի անհատական տվյալներից բխելու ոչ ճիշտ ընկալման փաստից, պարտավոր էր տրամադրելու իր տնօրինության ներքո գտնվող ամբողջ տեղեկությունը, որը օրենքով պաշտպանված չէ, անգամ եթե հարցման էությունն ընկալել էր ոչ ճիշտ, պարտավոր էր մերժելու հայցվող տեղեկատվությունը միայն մասնակի՝ մյուս մասով տրամադրելով օրենքով չպաշտպանված, այսինքն՝ ըստ հաստիքների տեղեկատվությունը:

Միևչդեռ ,գործի դատաքննությամբ՝ դատարանը պարզել ու հաստատված է համարել, որ պատասխանող կողմը, չնայած եւս ընդունել է ըստ հաստիքների, առանց աշխատողների անվանական հատկանիշների բացահայտման տեղեկատվություն ստանալու հայցվորի իրավունքի իրականացման իրավաչափության փաստը, այնուամենայնիվ իրաժարվել է տեղեկատվությունը տրամադրելուց՝ անհիմն պատճառաբանություններից ելնելով, հետեւաբար՝ դատարանը գործով ապացուցված է համարում տեղեկատվություն ստանալու հայցվորի՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի, Սահմանադրությամբ ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված, պաշտպանված իրավունքի խախտման փաստը, որը սույն վճռով ենթակա է վերականգնման՝ հայցվող տեղեկատվությունը դատական կարգով տրամադրելուն պատասխանող կողմին պարտավորեցնելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից եւ փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության եւ գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Անդրադառնալով դատական ծախսերից փաստաբանի վարձատրության հարցին՝ դատարանը գտնում է, որ այդ մասով պահանջը հիմնավոր է միայն մասնակի՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

Գործի դատաքննությամբ հաստատվել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ու «Մեժլումյան եւ Պետրոսյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ միջեւ 20.08.2012թ. կնքվել է փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր, ըստ որի՝ պայմանագրով նախատեսված՝ «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի դեմ նարկայացվող՝ իրավունքի խախտման փաստը ճանաչելու ու տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին գործով մատուցվող ծառայությունների դիմաց պետք է վճարվեր 127.000 ՀՀ դրամ գումար: Նշված պայմանագրի հիման վրա կողմերը 20.08.2012թ. կազմել ու հաստատել են ծառայությունների մատուցման հաշիվը: Վերը նշված պայմանագրով սահմանված ծառայությունների արժեքը վճարվել է, մասնավորապես՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ կողմից «Մեժլումյան եւ Պետրոսյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ հաշվին փաստացի փոխանցվել է 127.000 ՀՀ դրամ գումար՝ ըստ 20.08.2012թ. կողմերի միջեւ կնքված պայմանագրի՝ ըստ 20.08.2012թ.-ի վճարման թիվ 109 հանձնարարականի: Տվյալ դեպքում՝ դատարանը արձանագրում է, որ հայցվորի կողմից ներկայացված պահանջը ենթակա է բավարարման մասնակի՝ վերը նշված գումարի կիսով՝ 63.500 ՀՀ դրամ գումարի չափով, քանի որ նախ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի 1.1 կետի վերլուծությունից հետեւում է, որ սույն գործով ծառայությունները պետք է մատուցվեն ոչ միայն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, այլև՝ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում, քանի որ հստակ նախատեսված է, որ ոչ բարենպաստ դատական ակտի դեպքում, ծառայություններ մատուցողը պետք է նաեւ այն բողոքարկի:

Այսինքն՝ ծառայությունների մատուցման համար սահմանված վճարը՝ 127.000 ՀՀ դրամ գումարը, սահմանվել է ոչ միայն առաջին ատյանում հայց-

վորի շահերի պաշտպանության համար, այլև ընդհանուր բոլոր երեք ատյաններում հայցվորի շահերի պաշտպանության համար, ուստի հայցվորի կողմից ներկայացված՝ 127.000 ՀՀ դրամ գումարի պահանջն այս հիմքով ամբողջությամբ բռնագանձելն ինքնին անհիմն է՝ զուրկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 հոդվածով սահմանված փաստաբանին վարձատրելու գումարի չափի խելամտության սկզբունքից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «ՄԵԼՏԵԶՍ» ՍՊԸ-ն եւ Մետրոպ Մոսկուայան ընդդեմ ՀՀ (գանգատ թիվ 32283/04) 2008թ. հունիսի 17-ի վճիռը, որի 10-րդ կետով արձանագրվել է, որ դատարանի նախադեպային իրավունքի համաձայն դիմումատուին տրամադրվում է իր ծախսերի եւ ծախսերի փոխհատուցում միայն այն դեպքերում, երբ ցույց է տրվում, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ եւ իրենց ծավալով ողջամիտ են:

Բացի այդ, Եվրոպական դատարանը, իր կայացրած վճիռներում անդրադառնալով դատական շախսերի հատուցման խնդրին, մշտապես նշում է, որ կրած դատական ծախսերի համար դիմումատուն պարտավոր է ցույց տալ, որ

- 1) այդ ծախսերն իսկապես արվել են,
- 2) արվել են անհրաժեշտաբար,
- 3) ներկայացված ծախսերը «խելամիտ» են:

Հետեւաբար՝ դատարանն արձանագրում է, որ հայցվորն իրավունք ունի դատական ծախսերի եւ վճարումների հատուցման այն չափով, որ չափով որ ապացուցված է, որ այդ ծախսերն արվել են փաստացի եւ անհրաժեշտաբար ու ողջամիտ են իրենց ծավալով, խելամիտ են: Տվյալ դեպքում՝ վերը նշված չափանիշները հաշվի առնելով՝ Դատարանը գտնում է, որ ողջամիտ է հանդիսանում կատարված ծախսից միայն կեսը՝ 63.500 ՀՀ դրամ գումար տրամադրելը՝ որպես իր շահերը դատարանում ներկայացնելու համար փաստաբանին փաստացի վճարված ծախսի հատուցում, քանի որ սույն գործով հայցվորի կողմից փաստացի կատարվել է 127.000 ՀՀ դրամ դատական ծախս, սակայն մատուցված ծառայությունների ծավալից, բնույթից ելնելով՝ այն ողջամիտ, անհրաժեշտ ու խելամիտ չէր:

ՀՀ դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ դատական իշխանություն իրականացնելիս դատավորը պարտավոր է չհաստատել այն դատական ծախսերը, որոնց չափը չի համապատասխանում դրանց ողջամիտ արժեքին:

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ սույն գործով փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու եւ ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տեղողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաեւ դատական ակտով բռնագանձվող գումարի եւ պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (տես՝ ըստ հայցի Ֆերդինանտ Առաքելյանի ընդդեմ Հարություն Պետրոսյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, եւ հակընդդեմ հայցի՝

27.07.2007 թվականի փոխառության գործարքը չկնքված համարելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 29.06.2012թ.-ի թիվ ԵԿԴ/1587/02/10 գործով կայացրած որոշումը):

Ներկայացված դատական ծախսի հատուցման պահանջը քննության առնելով նաև Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշման լույսի ներքո, ելնելով վերը նշված չափանիշներից եւ նկատի ունենալով, որ փաստաբանը սույն գործով ի շահ հայցվորի կատարել է կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով սահմանված դատավարական գործողությունները, որոնք, հնարավոր է դեռ չեն ավարտվել, ինչպես նաև հաշվի առնելով գործի քննության կարճատևությունը, այն, որ փաստաբանը գործով մասնակցել է ընդամենը երեք դատական նիստի, կազմել է հայցադիմումը, գործն իր բնույթով չէր պահանջում բազմաթիվ իրավական ակտերի ուսումնասիրություն՝ ելնելով վիճակի իրավահարաբերության բնույթից՝ դատարանը սույն գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումարի որջամիտ չափ է համարում 63.500 ՀՀ դրամը:

Ելնելով փաստաբանի վարձատրության չափի խելամտության սկզբունքից, հիմք ընդունելով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից բխող դատարանի կողմից վերը նշված պատճառաբանությունները՝ դատարանը գտնում է, որ հայցը բավարարման ենթակա լինելու հիմքով՝ պատասխանողը պետք է հայցվորին վճարի խախտված իրավունքը վերականգնելու համար հայցվորի կողմից փաստացի կատարված դատական ծախսը, որը կազմում է 63.500 ՀՀ դրամ՝ իսկ մնացած մասով հայցվորի պահանջը ենթակա է մերժման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Համաձայն «Պետական տուրքի» մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Սույն օրենքի 9 հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված կարգով ներկայացված պահանջով հայցադիմումի համար պետական տուրքը կազմում է՝ ոչ գույքային պահանջով՝ բազային տուրքի քառապատիկի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ դեպքում, հայցվորը դատարան ներկայացրած հայցային պահանջի մասով նախապես վճարել է պետական տուրքի գումար՝ 4.000 ՀՀ դրամի չափով, քանի որ դատարանին ըստ էության ներկայացրել է մեկ ոչ գույքային պահանջ՝ խնդրելով իրավունքի խախտման փաստի ճանաչման հիմքով պարտավորեցնել տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը, հետևաբար՝ հայցի բավարարման պարագայում փաստացի կատարված դատական այս ծախսը եւս պետք է բռնագանձվի իրավունքը պախտած անձի կողմից՝ պատասխանողից՝ ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73 հոդվածով սահմանված՝ բավարարված պահանջների համամասնության կարգով պետական տուրքի բռնագանձման սկզբունքունից:

Վերոգրյալների հիման վրա, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68, 73, 124, 130-132 եւ 140-1401 հոդվածներով՝ դատարանը

### Վ Ճ Ո Ւ Շ Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելու և պարտավորեցնելու, դատական ծախսերի գումարի բռնագանձման պահանջների մասին հայցը բավարարել մասնակի:

Ճանաչելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը՝ պարտավորեցնել ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրելու տեղեկատվություն առ այն, թե 2011թ.-ին հիմնարկի աշխատակիցներն ինչքան գումարով են պարգևատրվել՝ տեղեկատվությունը տրամադրելով ըստ հաստիքների, առանց հիմնարկի աշխատակիցների անվանական տվյալները բացահայտելու տեսքով:

«Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 63.500 (վաթսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես խախտված իրավունքը վերականգնելու համար հայցվորի կողմից փաստացի կատարված խելամիտ, ողջամիտ ու անհրաժեշտ փաստաբանի վարձատրության գումար, ինչպես նաև 4.000 (չորս հազար) ՀՀ դրամ՝ որպես գործով որպես խախտված իրավունքը վերականգնելու նպատակով դատարան դիմելու համար հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի՝ փաստաբանի վարձատրության դատական ծախսի՝ 63.500 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջի մասով, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1671/02/12

ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռ դատավոր՝ Ա.Մելքումյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն**

Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քաղաքացիական դատարանը  
Նախագահությամբ՝ Ա.Պետրոսյանի  
մասնակցությամբ՝ Ա.Խառատյանի, Կ.Չիլինգարյանի

2013 թվականի ապրիլի 25-ին,

դռնբաց դատական նիստում քննելով ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի վերաքննիչ բողոքը Հայաստանի Հանրապետության Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ նաեւ՝ Դատարան/ 23.11.2012 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցնելու, դատական ծախսերի գումար բռնագանձելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը դատարանին հայտնել է, որ դիմել են պատասխանողին տեղեկատվություն տրամադրելու պահանջով, սակայն վերջինս մերժել է հարցման 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրումն այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է: Ուստի, խնդրել է ճանաչել տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ պարտավորեցնել տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե 2011թ.-ին աշխատակիցներն ըստ հաստիքների ինչքան գումարով են պարգևատրվել, ինչպես նաեւ բռնագանձել դատական ծախսերի գումարը:

Դատարանը 27.07.2012թ.-ին հայցադիմումն ընդունել է վարույթ, իսկ 23.11.2012թ.-ի վճռով հայցը բավարարել է մասանկի, վճռել է ճանաչել տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին պարտավորեցնել տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե 2011թ.-ին հիմնարկի աշխատակիցներն ինչքան գումարով են պարգևատրվել՝ տեղեկատվությունը տրամադրելով ըստ հաս-

տիքների, առանց հիմնարկի աշխատակիցների անվանական տվյալները բացահայտելու: Պատասխանողից հոգուտ հայցվորի բռնագանձել 63.500 ՀՀ դրամ՝ որպես խախտված իրավունքը վերականգնելու համար կատարված փաստաբանի վարձատրության գումարի մի մասը, ինչպես նաև 4.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Իսկ 63.500 ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության դատական ծախսի բռագանձման մասով պահանջը մերժել է:

ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը 21.12.2012թ.-ին նշված վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը 27.12.2012թ.-ի ընդունվել է վարույթ:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչը 04.02.2012 թ.-ին ներկայացրել է վերաքննիչ բողոքի պատասխան:

## **2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները եւ պահանջը.**

Վերաքննիչ բողոքը քննվում է հետեւյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի եւ 134-րդ հոդվածի 1-ին կետի, 199-րդ հոդվածի պահանջները.

Դատարանը գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտություն չի կատարել: Դատարանը որեւէ ձեւով չի հետազոտել պատասխանողի ներկայացրած ապացույցները՝ բավարարվելով միայն հայցվորի եւ պատասխանողի կողմից դրանց շարադրանքով, եւ բացարձակապես չի լուծել դրանց գնահատման հարցը, այսինքն՝ դատարանը պատասխանողի առարկության հիմքում ընկած իրավական ակտերի վերաբերյալ որեւէ մեկնաբանություն կամ անդրադարձ չի կատարել:

Դատարանը չի անդրադարձել տեղեկատվության ազատության սահմանափակումներին, քանի որ պատասխանողը, մերժելով տեղեկատվության տրամադրումը հայցվորին, առաջին հերթին հղում էր կատարվել նաև վերը նշված իրավական ակտի պահանջներին:

Գործի արդյունավետ քննության եւ արդար վճիռ հրապարակելու համար անհրաժեշտ էր վերը նշված հոդվածների կիրառումը դատարանի կողմից, քանի որ հայցվորի հարցման 2-րդ կետով պահանջված տեղեկատվությունը պատասխանողի կողմից մերժվել էր՝ նաև այս իրավական ակտի պահանջները հաշվի առնելով, հետեւաբար՝ դատարանը հայցվորի հայցը բավարարել էր, իսկ պատասխանողի այն իրավական փաստարկները, որոնք ընկած էին հայցադիմումի պատասխանի հիմքում, չի ընդունել եւ վճիռը կայացրել է առանց անդրադառնալու պատասխանող կողմի առարկության հիմքում առկա իրավական ակտերի պահանջների վրա:

Հայցվորը պարզեւատրումը չի համարում աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալներ, սակայն աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ աշխատավարձը ներառում է

հիմնական աշխատավարձը եւ գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ վարձատրությունը, իսկ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքի վարձատրության տեսակ է համարվում լրացուցիչ աշխատավարձը, որի մեջ մտնում է նաեւ պարգեւատրումը:

Հետեւաբար՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերը նշված հոդվածների տառացի մեկնաբանությամբ պարզ է դառնում, որ հայցվորի կողմից պարգեւատրումը կամ պարգեւատրման չափի վերաբերյալ տվյալները ոչ այլ ինչ են, քան աշխատավարձի վերաբերյալ տվյալներ, սակայն դատարանը հաշվի չի առել վերը նշված օրենքի պահանջները եւ կայացրել է անհիմն վճիռ:

Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել դատարանի վճիռը:

### 3. Վերաքննիչ բողոքի պատասխանի փաստարկները.

Պատասխանողը որեւէ ապացույց դատարանին չի ներկայացրել, իսկ պատասխանողի առարկության հիմքում ընկած իրավական ակտերը? օրենքներին հղումները, ապացույց չեն, ապացույցների հասկացությունը եւ տեսակները սահմանված է քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով, որոնց մեջ իրավական ակտը, օրենքը, որպես ապացույց, նշված չեն:

Դատարանը նյութական իրավունքի նշված նորմերը չի խախտել, քանի որ վճռել է տեղեկատվություն տրամադրել առ այն, թե 2011թ.-ին հիմնարկի աշխատակիցներն ինչքան գումարով են պարգեւատրվել՝ տեղեկատվությունը տրամադրելով ըստ հաստիքների, առանց հիմնարկի աշխատակիցների անվանական տվյալները բացահայտելու տեսքով:

Ուստի խնդրել է մերժել վերաքննիչ բողոքը եւ ավելացնել դատական ծախսի համար բռնագանձման ենթակա գումարը:

### 4. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետեւյալ փաստը.

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 29.05.2012թ.-ին հարցում է կատարել ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները՝

ա) Ստացե՞լ են արդյոք պարգեւատրումներ (պարգեւավճարներ, նվերներ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին,

բ) Եթե այո, ապա ովքե՞ր են պարգեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):

գ) Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած դրամական պարգեւատրումների ընդհանուր գումարը,

դ) Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրա-

սենյակ» ՊՅ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Ի պատասխան այդ գրության՝ պետական հիմնարկը հայտնել է, որ հիմնարկի աշխատողները 2011թ.-ի ավարտին ստացել են միայն դրամական պարգեւատրում՝ պետական հիմնարկի աշխատողների հաստիքացուցակի համամասնությամբ: Հիմնարկի աշխատողները 2011թ.-ի ընթացքում նվերներ չեն ստացել:

2. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը, ստանալով թերի պատասխան, 20.06.2012թ.-ին կրկին հարցում է կատարել պետական հիմնարկին՝ խնդրելով տրամադրել 29.05.2012թ.-ի գրության 2-րդ եւ 3-րդ կետերով բարձրացված հարցերի պատասխանները: Ի պատասխան այդ գրության՝ հիմնարկը հայտնել է, որ հիմնարկի բոլոր աշխատողները /թվով 17 հոգի/ 2011թ.-ի ավարտին ստացել են միայն դրամական պարգեւատրում պետական հիմնարկի հաստիքացուցակի համամասնությամբ՝ ընդհանուր 1.994.740 ՀՀ դրամի չափով: Ինչ վերաբերում է յուրաքանչյուր աշխատողին տրված պարգեւատրմանը, ապա ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ եւ 199-րդ հոդվածների կարգով պետական հիմնարկի աշխատողների 2011թ.-ին ստացած պարգեւատրումների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու օրենքով սահմանված համաձայնությունը բացակայում է:

5. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները եւ եզրահանգումները Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի եւ հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը հիմնավոր է հետեւյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության 53-րդ հոդվածի՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետեւությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունն ու փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը եւ ներքին համոզմունքը:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն իր՝ 19.04.1993թ.-ի Կրասկան ընդդեմ Շվեյցարիայի գործով կայացված վճռով այս հարցի կապակցությամբ հայտնել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը դատարանին պարտավորեցնում է կատարել կողմերի ներկայացրած բացատրությունների, փաստարկների եւ ապացույցների պատշաճ հետազոտում, առանց խոչընդոտելու դատարանի՝ ապացույցների վերաբերելիությունը գնահատելու իր հալեցողությանը:

Նման դիրքորոշում է հայտնել նաեւ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր՝ 26.01.2007 թ.-ի թիվ 3-12/ՏՂ/ նախադեպային որոշման մեջ:

Սույն գործի փաստերի համադրման արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանը չի իրականացրել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննություն, չի համադրել այդ ապացույցները, որը հանգեցրել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ, 134-րդ

Եւ 199-րդ հոդվածների խախտմանը: Այսպէս՝ համաձայն աշխատանքային օրենսգրքի 131-րդ հոդվածի՝ աշխատողի անձնական տվյալները աշխատանքային հարաբերությունների հետ կապված եւ որոշակի աշխատողին վերաբերող, գործատուին անհրաժեշտ տեղեկություններն են: Աշխատողի անձնական տվյալների մշակում է համարվում աշխատողի անձնական տվյալներն ստանալը, պաշտպանելը, համակարգելը, փոխանցելը կամ ցանկացած այլ կերպ օգտագործելը, իսկ համաձայն նույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի՝ աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է պահպանել հետեւյալ պահանջները. 1) աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպէս նաեւ օրենքով նախատեսված այլ դեպքերում...:

Չամաձայն նույն օրենսգրքի 199-րդ հոդվածի՝ աշխատողի աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալները տրամադրվում կամ հրապարակվում են միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ աշխատողի համաձայնությամբ:

Սույն հոդվածների համադրման եւ վերլուծության արդյունքում վերաքննիչ դատարանը գտնում է, որ աշխատողի աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալները երրորդ անձի կարող են տրամադրվել երկու դեպքում. առաջինը, երբ դա նախատեսված է որեւէ օրենքով կամ իրավական ակտով, եւ երկրորդ դեպքում, երբ առկա է աշխատողի համաձայնությունը, ում վերաբերյալ պետք է տրամադրվի տեղեկություն: Այսինքն՝ օրենքը հստակ սահմանում է այն երկու պայմանները, որոնց առկայության դեպքում գործատուն կարող է աշխատողի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել երրորդ անձանց:

Տվյալ դեպքում՝ հայցվորը հարցում է կատարել պատասխանողին եւ խնդրել է տրամադրել տեղեկություններ այն մասին, թե հիմնարկի աշխատակիցները 2011թ.-ին ստացել են պարզեւատրումներ, եթե այո, ապա ովքեր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքան գումարով, որքան է կազմել դրամական պարզեւատրումների ընդհանուր գումարը եւ որքան է կազմել հիմնարկի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը: Չիմնարկը պատասխանել է հայցվորի հարցմանը, սակայն, չբավարարվելով պատասխանողի կողմից տրամադրված տեղեկատվությամբ, հայցվորը կրկին հարցում է կատարել՝ նշելով, որ հարցմանը սպառիչ պատասխան չի տրվել: Այս հարցմանը հիմնարկը պատասխանել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ եւ 199-րդ հոդվածների կարգով բացակայում է պետական հիմնարկի աշխատողների 2011թ.-ին ստացած պարզեւատրումների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու օրենքով սահմանված համաձայնությունը:

Չամաձայն աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի՝ աշխատավարձը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է: Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը եւ գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ վարձատրությունը, իսկ 195-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքի վարձատրության տեսակ է համարվում լրացուցիչ աշ-

խատավարձը, որի մեջ մտնում է նաեւ պարգեւատրումը: Հետեւաբար՝ հայցվորի կողմից պարգեւատրումը կամ պարգեւատրման չափի վերաբերյալ տվյալները եւս հանդիսանում են աշխատավարձի վերաբերյալ տվյալներ:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն վեճի լուծման համար էական նշանակություն ունեն հետեւյալ հանգամանքները. թե որեւէ օրենքով նախատեսված է պահանջվող տեղեկատվության տրամադրում, եւ երկրորդ, արդյոք առկա է հիմնարկի աշխատողների համաձայնությունը հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու համար: Հայցվորը, ինչպես նաեւ դատարանը, չեն մատնանշել որեւէ օրենք կամ իրավական ակտ, որը սահմանում է հիմնարկի աշխատողների պարգեւատրումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրելու կարգ: Ուստի, նման դեպքում անհրաժեշտ է պարզել աշխատողների համաձայնության առկայության կամ բացակայության փաստը: Մինչդեռ, դատարանը չի պարզել, թե հիմնարկի աշխատողները երբեւէ գրավոր համաձայնություն տվել են իրենց վերաբերյալ հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ, թե ոչ: Ավելին՝ երկրորդ հարցման պատասխանում հիմնարկը մերժել է հարցմանը պատասխանել՝ նշելով, որ հիմնարկի աշխատողների համաձայնությունը բացակայում է: Նման պայմաններում՝ դատարանը քննության առարկա չի դարձրել այդ հարցը, հաշվի չի առել հարցումը մերժելու վերաբերյալ պատասխանող կողմի նշված փաստարկը եւ գործի քննությամբ չի պարզել այդ աշխատողների համաձայնության առկայությունը կամ բացակայությունը: Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ դրամական պարգեւատրումները եւս կազմում են աշխատավարձի մաս, որի արդյունքում չի իրականացրել բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննություն:

Վերոգրյալի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ, 134-րդ եւ 199-րդ հոդվածների խախտումների վերաբերյալ բողոք բերողի փաստարկները հիմնավոր եւ բավարար են դատական ակտը բեկանելու եւ նոր քննության ուղարկելու համար, որի ընթացքում դատարանը պետք է քննության առարկա դարձնի հիմնարկի աշխատողների համաձայնության առկայության կամ բացակայության փաստը, որն ունի կարեւոր եւ էական նշանակություն սույն գործով վեճի լուծման համար:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում դատարանը պետք է քննության առարկա դարձնի նաեւ դատարանում՝ որպես պատշաճ կողմ՝ պատասխանող հանդես գալու հարցը: Մասնավորապես՝ նկատի ունենալով, որ համաձայն «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ստեղծվում է Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, դատախազությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաեւ օրենքի հիման վրա ստեղծված՝ պետական կառավարչական գործառույթներ իրականացնող այլ պետական մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք եւ արդյունավետ իրականացման եւ քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով: Հիմնարկն իր իրավասության սահմաններում, Հայաստանի Հանրապետության անունից, կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դա-

տարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի՝ հիմնարկն իրավաբանական անձ չէ եւ գործում է իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա, իսկ համաձայն այդ մարմնի կանոնադրության 1-ին կետի՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը բնապահպանության նախարարության կազմում գործող՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է: Հիմնարկի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Իսկ Կանոնադրության 16-րդ կետի՝ հիմնարկն իր հիմնադրի անունից կարող է ունենալ քաղաքացիական իրաքվունքներ եւ կրել քաղաքացիական պարտականություններ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ եւ 221-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վերաքննիչ բողոքը բավարարել: Ամբողջությամբ բեկանել ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.11.2012 թվականի վճիռը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ նոր քննության արդյունքում կայացված դատական ակտով:

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ,

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ա.ԽԱՌԱՏՅԱՆ, Կ.ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Բողոք բերող անձ

Հայցվոր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ Ներկայացուցիչ-փաստաբան՝ Կարեն Մեժլումյան

Գործին մասնակցող անձ՝ ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»ՊՀ

Բողոքարկվող դատական ակտ՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԴ/1671/02/12 քաղաքացիական գործով 25.04.2013թ. որոշում

27.05.2013թ.

### Վ Ճ Ռ Ա Բ Ե Կ Բ Ո Ղ Ո Ք

Նյութական եւ դատավարական իրավունքի խախտման հիմքով

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը քննելով թիվ ԵԿԴ/1671/02/12 քաղաքացիական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի (այսուհետ՝ ԻԱԿ) ընդդեմ ՀՀ ԲՆ «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի (այսուհետ՝ Պետական հիմնարկ)՝ տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին՝ 23.11.2012թ. վճռով հայցը բավարարել է եւ վճռել. «Ճանաչելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը՝ պարտավորեցնել ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրելու տեղեկատվություն առ այն, թե 2011թ.-ին հիմնարկի աշխատակիցներն ինչքան գումարով են պարզեւատրվել՝ տեղեկատվությունը տրամադրելով ըստ հաստիքների, առանց հիմնարկի աշխատակիցների անվանական տվյալները բացահայտելու տեսքով:

«Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկից հոգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 63.500 (վաթսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես խախտված իրավունքը վերականգնելու համար հայցվորի կողմից փաստացի կատարված խելամիտ, ողջամիտ ու անհրաժեշտ փաստաբանի վարձատրության գումար, ինչպես նաեւ 4.000 (չորս հազար) ՀՀ դրամ՝ որպես գործով որպես խախտված իրավունքը վերականգնելու նպատակով դատարան դիմելու համար հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի՝ փաստաբանի վարձատրության դատական ծախսի՝ 63.500 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջի մասով, մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2013թ. որոշմամբ 23.11.2012թ. վճիռը բեկանվել է. եւ գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:



## 2. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

- 1) ԻԱԿ-ը Պետական հիմնարկից պահանջել է տրամադրել վերջինիս տնօրինության տակ գտնվող եւ անվանական տվյալ չհանդիսացող տեղեկատվություն, ինչի մասին հայտնել է դատարանին եւ վերաքննիչ դատարանին, այդ թվում բողոքի պատասխանի եւ բանավոր հայտարարության ձեւով:
- 2) Պետական հիմնարկը ամբողջական տեղեկատվություն չի տրամադրել:

## 3. Բողոքում բարձրացված իրավական խնդիրը

Բողոքում բարձրացված հարցերը հետեւյալն են՝

- 1) Առանց անվանական տվյալները բացահայտելու տեղեկատվության տրամադրումը կարո՞ղ է արդյոք համարվել անձնական տվյալի բացահայտում:
- 2) Պետական կառավարչական հիմնարկը դատավարական իրավասուբյեկտությամբ օժտվա՞ծ է, թե ոչ, մասնավորապես՝ իր տնօրինության տակ եղած տեղեկատվության տրամադրման հետ կապված վեճով, դատարանում կարո՞ղ է հանդես գալ որպես կողմ (պատասխանող), թե՞ ոչ:
- 3) Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտում արձանագրելիս, պե՞տք է նշի այն ապացույցը (ապացույցների համակցությունը), որը սխալ է գնահատվել, թե՞ ոչ:

## 4. Վճռաբեկ բողոքի հիմքերը եւ հիմնավորումները

Գտնում եմ, որ բողոքարկվող վճիռը կայացվել է նյութական եւ դատավարական իրավունքի նորմերի խախտումով եւ ենթակա է բեկանման՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

- 1) Վերաքննիչ դատարանը, բեկանելով վճիռը, պատճառաբանել է, որ ստորադաս դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտում, մասնավորապես՝ չի իրականացրել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննություն, չի համադրել այդ ապացույցները, որը հանգեցրել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ, 134-րդ եւ 199-րդ հոդվածների խախտման:

Գտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման վերաբերյալ նման ձեւակերպմամբ որոշումը, երբ վերաքննիչ դատարանը չի նշում որեւէ ապացույց (ապացույցների համադրություն), որն, ըստ իրեն, սխալ է գնահատվել, այսինքն՝ չի հիմնավորում իր եզրահանգումը, չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաեւ հեղինակավոր:

Այս առումով, վերաքննիչ դատարանը խախտել է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ եւ 132-րդ հոդվածների պահանջները, դրանց վերաբերյալ իր իսկ վկայակոչած՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 19.04.1993թ. Կրակասն ընդդեմ Շվեյցարիայի գործով կայացված վճռով ու ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007թ. թիվ 3-12/ՏԴ/ որոշմամբ, այլեւ՝ 21.12.2006թ. թիվ 3-2504/ՏԴ, 25.12.2007թ. թիվ 3-1789(ՎԴ) որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում:

- 2) Նախորդ կետում նշվել, որ ըստ վերաքննիչ դատարանի՝ ՀՀ քաղաքացիա-

կան դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտումը հանգեցրել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ, 134-րդ եւ 199-րդ հոդվածների խախտման, որոնցով պաշտպանվում են անձի անհատական տվյալները:

Գտնում եմ, որ նյութական իրավունքի խախտման վերաբերյալ վերաքննիչ դատարանի եզրահանգումն անհիմն է, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ, 134-րդ եւ 199-րդ հոդվածների սխալ մեկնաբանման արդյունք է, քանի որ Ղատարանը 23.11.2012թ. վճռով վճռել է. «Ճանաչելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը՝ պարտավորեցնել ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրելու տեղեկատվություն առ այն, թե 2011թ.-ին հիմնարկի աշխատակիցներն ինչքան գումարով են պարզեւատրվել՝ տեղեկատվությունը տրամադրելով ըստ հաստիքների, առանց հիմնարկի աշխատակիցների անվանական տվյալները բացահայտելու տեսքով»:

Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե ըստ հաստիքների, առանց աշխատակիցների անվանական տվյալները բացահայտելու տրամադրման ենթակա տեղեկատվությամբ ինչպես կարող է խախտվել անձի անձնական տվյալի գաղտնիության իրավունքը, քանի որ բացակայում է որոշակիացված անձը (անուն, ազգանուն, հայրանուն, բնակության հասցե, հեռախոսի համար եւ այլն), որի անձնական տվյալներն էլ ենթակա են պաշտպանության:

Գտնում եմ, որ վերը նշվածը նաեւ դատական ակտի իրավական հիմնավորվածության պահանջի խախտում է:

Վերը նշված խախտման արդյունքում խախտվել է բողոք բերողի՝ տեղեկատվության ազատության իրավունքը, որը երաշխավորված է Սահմանադրության 27.1-րդ հոդվածով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3, 6, 9 եւ այլ հոդվածներով:

3) Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ պետական կառավարչական հիմնարկը իր տնօրինության տակ եղած տեղեկատվության տրամադրման պահանջի գործով չի կարող պատշաճ պատասխանող լինել դատարանում եւ դրա համար հղում է կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածին:

Գտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածին հղումով նման եզրահանգման գալով՝ վերաքննիչ դատարանը խախտել է նույն հոդվածի 5-րդ մասի պահանջը, որի համաձայն. «Պետական ու այլ հիմնարկների առանձին տեսակների իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով եւ այլ իրավական ակտերով»:

Վերաքննիչ դատարանը խախտել է նաեւ «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն. «Հիմնարկն իր իրավասության սահմաններում, Հայաստանի Հանրապետության անունից, կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող»:

Վերը՝ 1-ինից 3-րդ կետերում նշված խախտումները հանգեցրել են դատական սխալի, ինչի արդյունքում խախտվել է հայցվորի՝ իր փնտրած տեղեկատվությունը ստանալու ազատության իրավունքը, ինչը Սահմանադրությամբ երաշ-

խավորված իրավունք է եւ ինչի խախտումը ծանր հետեւանք է:

### 5. Բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի համաձայն. «1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ՝

- 1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ
- 2) վերանայվող դատական ակտն առերեւույթ (prima facie) հակասում է Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ
- 3) ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերեւույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետեւանքներ»:

Գտնում եմ, որ բողոքում բարձրացված հետեւյալ հարցի՝ առանց անվանական տվյալները բացահայտելու տեղեկատվության տրամադրումը կարո՞ղ է արդյոք համարվել անձնական տվյալի բացահայտում պատասխանը էական նշանակություն կունենա ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131, 134-րդ եւ 199-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը իր իրավական դիրքորաշմամբ կպարզաբանի՝ առանց անվանական տվյալները բացահայտելու տեղեկատվության տրամադրումը համարվում է արդյոք անձնական տվյալի բացահայտում, թե ոչ:

Գտնում եմ, որ բողոքում բարձրացված այն հարցի՝ թե արդյոք վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտում արձանագրելիս, պետք է նշի այն ապացույցը (ապացույցների համակցությունը), որը սխալ է գնահատվել, թե ոչ պատասխանը կարող է էական նշանակություն ունենալ իրավունքի զարգացման համար, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 130-րդ եւ 132-րդ հոդվածների միատեսակ կիրառության առումով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 19.04.1993թ. Կրակասն ընդդեմ Շվեյցարիայի գործով կայացված վճռով ու ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.01.2007թ. թիվ 3-12/ՏԴ/ որոշմամբ, այլեւ 21.12.2006թ. թիվ 3-2504/ՏԴ, 25.12.2007թ. թիվ 3-1789(ՎԴ) որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում:

Գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանի որոշումն այն մասին, թե Պետական կառավարչական հիմնարկը դատավարական իրավասություններով օժտված է, թե ոչ, մասնավորապես՝ իր տնօրինության տակ եղած տեղեկատվության տրամադրման հետ կապված վեճով, դատարանում կարող է հանդես գալ որպես կողմ (պատասխանող), թե ոչ, կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության, մասնաորապես «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենսիք 3-րդ հոդվածի եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի միատեսակ կիրառության համար, առավել էւս, որ սույն գործով առաջին ատյանի դատարանը գտել էր, որ նման հիմնարկը կարող է հանդես գալ դատարանում որպես պատասխանող, իսկ վերաքննիչ դատարանը՝ ոչ: Դա նշանակում է, որ առկա է նշված դրույթների վերաբերյալ դատարանների տարընկալում:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ բաժնի պահանջներով՝

**խնդրում եմ**

Վճռաբեկ բողոքն ընդունել քննության:

Բեկանել թիվ ԵԿԴ/1671/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2013թ. որոշումը եւ օրինական ուժ տալ նույն գործով Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.11.2012թ. վճռին:

Նկատի ունենալով այն, որ առաջին ատյանի դատարանը գործի համար փաստաբանին վճարված 127.000 դրամից, որպէս առաջին ատյանի դատական ծախսի ողջամիտ գումար բավարարել է 63.500 տրամի պահանջ: Սակայն այժմ գործը գտնվում է Վճռաբեկ դատարանում, որտեղ եւս իմ վստահորդին ծառայություն եմ մատուցում, ուստի խնդրում եմ անդրադառնալ դատական ծախսի գումարին, ավելացնելով այն, հաշվի առնելով, որ գործը քննվել է նաեւ վերաքննիչ դատարանում, ինչի համար էլ մատուցվել է ծառայություն, այդ թվում վերաքննիչ բողոքն ուսումնասիրելու եւ սույն պատասխանը կազմելու ձեւով:

Կից ներկայացնում եմ՝

Պետական տուրքի վճարման անդորրագիր,

Բողոքը վերաքննիչ դատարան եւ պատասխանողին ուղարկելու մասին ապացույց:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՈՎԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում 2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1671/02/12

Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան

Դատավորներ՝ Ա. Խառատյան

Կ. Զիլինգարյան

**ՈՐՈՇՈՄ**

**ՎՃՈՎԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«26» հունիսի 2013թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը,

նախագահությամբ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

մասնակցությամբ՝ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

քննարկելով՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ)՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցնելու, դատական ծախսերի գումար բռնագանձելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2013թ.-ի որոշման դեմ Կազմակերպության ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը,

**ՊԱՐԶԵՑ**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է ճանաչել Կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ պարտավորեցնել տրամադրելու պահանջվող տեղեկատվությունն առ այն, թե 2011 թվականին Հիմնարկի աշխատակիցներն ըստ հաստիքացուցակների ինչքան են պարզեւատրվել, ինչպես նաեւ բռնագանձել դատական ծախսերը:

Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 23.11.2012թ.-ի վճռով հայցը

բավարարվել է մասնակիորեն՝ ճանաչվել է Կազմակերպության տեղեկատվությունն ստանալու իրավունքի խախտման փաստը՝ պարտավորեցվել է Հիմնարկին տրամադրելու տեղեկատվություն առ այն, թե 2011թ.-ին Հիմնարկի աշխատակիցներն ինչքան գումարով են պարգևատրվել՝ տեղեկատվությունը տրամադրելով ըստ հաստիքների, առանց Հիմնարկի աշխատակիցների անվանական տվյալները բացահայտելու տեսքով: Հիմնարկից հոգուտ Կազմակերպության բռնագանձվել է 63.500 ՀՀ դրամ՝ որպես խախտված իրավունքը վերականգնելու համար Կազմակերպության կողմից փաստացի կատարված խելամիտ, ողջամիտ ու անհրաժեշտ փաստաբանի վարձատրության գումար, ինչպես նաև 4.000 ՀՀ դրամ՝ որպես խախտված իրավունքը վերականգնելու նպատակով դատարան դիմելու համար Կազմակերպության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար: Կազմակերպության հայցն ընդդեմ Հիմնարկի՝ փաստաբանի վարձատրության դատական ծախսի՝ 63.500 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջի մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2013թ.-ի որոշմամբ Հիմնարկի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Ղատարանի 23.11.2012 թվականի վճիռը բեկանվել է, եւ գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչը եւ պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2013թ.-ի որոշումը եւ օրինական ուժ տալ Ղատարանի 23.11.2012թ.-ի վճիռն:

Վճռաբեկ դատարանը, քննարկելով վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, գտնում է, որ բողոքը ենթակա է վերադարձման՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում նույն օրենսգրքի 231-րդ հոդվածի եւ 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, նոր երեւան եկած կամ նոր հանգամանքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ եւ 5-րդ ենթակետերի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ եւ նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, եւ դրանց հիմնավորումները, կամ որոնք են նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հետեւանքով գործի վերանայման հիմքերը, նույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի որեւէ ենթակետի հիմնավորումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եսկան նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վե-

րանայվող դատական ակտն առերեւոյթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերեւոյթ դատական սխալ, առկա է նոր երեւան եկած կամ նոր հանգամանք:

Վերլուծելով բողոք բերած անձի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Հետեւաբար՝ բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով բողոքը վարույթ ընդունելու կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոք բերած անձի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ վճռաբեկ բողոքում նշված որոշումների հիմնավորումները կիրառելի են սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ: Հետեւաբար՝ բերված բողոքում նշված հիմքը նույնպես հիմնավորված չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաեւ, որ բողոք բերած անձի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում: Հետեւաբար՝ բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված հիմքը նույնպես հիմնավորված չէ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ եւ 5-րդ ենթակետերի եւ 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: Հետեւաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջին համապատասխան, այն ենթակա է վերադարձման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ, 233-րդ եւ 234-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վերադարձնել թիվ ԵԿԴ/1671/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2013թ.-ի որոշման դեմ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից եւ ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Դատավորներ՝ Մ. ԴՐՄԵՅԱՆ, Վ. ԱԲԵԼՅԱՆ, Ս. ԱՆՏՈՆՅԱՆ, Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ, Է. ՀԱՅՐԻՅԱՆ, Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն, Նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան

Պատասխանող՝ ՀՀ բնապահպանության նախարարության  
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական  
հիմնարկի տնօրեն՝ Վ. Մարտիրոսյան

23.07.2012թ.

### Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին

#### 1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ԻԱԿ) 29.05.2012թ.-ին թիվ 171-ի 4 համարի գրությամբ հետեւյալ բովանդակությամբ Տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել է «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանին. «Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

Դեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները:

1. Ստացե՞լ են արդյոք պարզեւատրումներ (պարզեւածարներ, նվերներ) «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած դրամական պարզեւատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Նշված հարցմամբ առաջադրված հարցերի մի մասին պատասխան է տրվել պատասխանողի 01.06.2012թ. N1-01/151 գրությամբ: Նշված փաստերը հաստատվում են 29.05.2012թ.-ին թիվ 171-ի 4 հարցման եւ 01.06.2012թ. N1-01/151 պատասխանի օրինակներով: Առաջին հարցման թերի պատասխանը ստանալուց հետո 20.06.2012թ. թիվ 174-ի 2 հարցմամբ ԻԱԿ-ը կրկին դիմել է



պատասխանողին հետևյալ հարցմամբ.

«Հարգելի պարոն Մարտիրոսյան,

2012թ.-ի մայիսի 29-ին « Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ? խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ստացել են արդյոք պարզեատրումներ (պարզեավճարներ, նվերներ) «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած դրամական պարզեատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Սակայն, «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» ստացել է թերի պատասխան, քանի որ չեն տրամադրվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» խնդրած «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի՝ պարզեատրում ստացած աշխատակիցների եւ դրամական պարզեատրումների չափի մասին տեղեկությունները (2-րդ եւ 3-րդ հարցերի պատասխանները): Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված վերոնշյալ տեղեկությունները:

Նշված հարցմանն ի պատասխան՝ ստացվել է պատասխանողի 02.07.2012թ. թիվ 1-01/160 գրությունը, որով տեղեկություն է տրվել նաեւ հարցման 3-րդ կետում նշված հարցման վերաբերյալ, սակայն հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետին եւ 199 հոդվածին մերժվել է հարցման 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրումը, այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է:

## 2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության

- 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով? անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամառաջարկություններ ներկայացնելու եւ

ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի՝

- 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է ... հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա»,
- 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են՝ տեղեկություններ ունեցող ... պետական հիմնարկներ ...եւ դրանց պաշտոնատար անձինք,
- 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:
- 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ինչպես տեսնում ենք, պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության՝ չի տրամադրել 29.05.2012թ. եւ 20.06.2012թ. հարցումների 2 կետով պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի որ աշխատակիցներն են պարզեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետին եւ 199-րդ հոդվածին հղում կատարելով՝ 02.07.2012թ. գրությամբ տեղեկատվության տրամադրման մերժումը եւս անհիմն է, քանի որ տեղեկատվությունը պահանջվել է ըստ աշխատողների հաստիքների, այլ ոչ թե անվանական, բացի այդ աշխատողին տրամադրված պարզելը կամ պարզեւավճարի չափը ո՛չ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ աշխատանքային հարաբերությունների հետ կապված եւ որոշակի աշխատողին վերաբերող, գործատուին անհրաժեշտ տեղեկություններ են (աշխատողի անձնական տվյալ) եւ ո՛չ էլ 199-րդ հոդվածով սահմանված աշխատողի աշխատավարձի եւ աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալներ է:

Այս հարցին անդրադարձել է նաեւ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը իր՝ 07.11.2011թ. թիվ ՎԴ/0480/05/10 որոշմամբ, որի հիմնավորումները ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վկայակոչում ենք որպես իրավական փաստարկ: Նշված դատական ակտով վերաքննիչ դատարանը որոշել է. «Վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն՝ ՀՀ վարչական դա-

տարանի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ ՎԴ/0480/05/10 վարչական գործով կայացրած վճիռը բեկանել է փոփոխել, կայացնելով նոր դատական ակտ: Այն է՝ Լեւոն Բարսեղյանի հայցը բավարարել մասնակիորեն:

1. Ճանաչել տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը:
2. Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեին, Լեւոն Բարսեղյանին տրամադրել 2010 թվականի հունվարի 18-ի թիվ 1 հարցումով հայցված հետեւյալ տեղեկատվությունը՝ «ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցներից ովքեր են որպես խրախուսանքի միջոց պարգևատրվել «Տերմինալ Պահեստ» ՍՊԸ-ից ձեռք բերված «Breitling» մակնիշի շվեյցարական արտադրությանժամանացույցներով՝ հիշատակել պարգևատրվածներին անուն-ազգանուններով եւ պաշտոններով, ինչպես նաեւ հիշատակելով նրանց հանձնված ժամացույցները՝ ըստ տեսակների»:

Վերաքննիչ դատարանը վերը մեջբերված որոշումը կայացրել է հետեւյալ իրավական հիմնավորումներով. «Բողոք բերած անձի հղումը «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերին, ինչպես նաեւ դրա հետ կապված փաստարկները, հիմնավոր չեն՝ հետեւյալ պատճառաբանությամբ. «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մշակողի տնօրինության տակ գտնվող անհատական տվյալները խորհրդապահական տեղեկատվություն են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում կարող է սահմանվել անհատական տվյալների հանրամատչելի տեղեկատվության ռեժիմ (հեռախոսային տեղեկատուներ, հասցեների գրքեր, կենսագրական տեղեկատուներ, մասնավոր հայտարարություններ, եկամուտների հայտարարագրում եւ այլն)»:

Բողոք բերած անձը, վկայակոչելով նշված իրավական նորմերը, չի հիմնավորել նշված օրենքի իմաստով հայցվող տեղեկատվությունը անհատական տվյալ հանդիսանալու հանգամանքը:

Նման պայմաններում՝ Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծել նշված օրենքով կարգավորվող իրավահարաբերություններին վերաբերող նորմերը: «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենքը կարգավորվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները»:

Նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է, որ «անհատական տվյալ՝ ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը»: Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետեւում է, որ օրենքը կարգավորվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները, իսկ անհատական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տա-

լիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը:

Այսինքն՝ նշված իրավական նորմերով կարգավորվում են անձի անհատական տվյալների հանրամատչելի տեղեկատվության հետ կապված հարաբերությունները, մինչդեռ տվյալ դեպքում պահանջվում է տրամադրել տեղեկատվություն, որի տրամադրման հետ կապված հարաբերությունները սահմանված են «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցվող տեղեկատվությունը չի հանդիսանում հարկային ծառայողին վերաբերող տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը: Ավելին՝ այդ տեղեկատվությունը չի կարող համարվել անհատական տվյալ, քանի որ վերաբերում է երկարամյա ծառայության, ծառայողական պարտականությունները եւ հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու, ինչպես նաեւ աշխատանքի նկատմամբ նվիրվածության համար հարկային ծառայողի նկատմամբ խրախուսանքի տեսակ՝ հուշանվերով պարգևատրում, կիրառելու հետ կապված՝ այսինքն՝ պետական մարմնում գործունեության հետ կապված հարաբերություններին:

Բացի այդ՝ հարցման պատասխանում նշված օրենքը չի վկայակոչվել, իսկ պահանջվող տեղեկատվությունը, որպես Կոմիտեի համապատասխան աշխատակիցների անհատական (անձնական) կյանքին վերաբերող տվյալներ, չեն դիտվել»:

Ինչպես տեսնում ենք, վարչական վերաքննիչ դատարանը, որպես անհատական տվյալ չի համարել հարցմամբ պահանջվող կոնկրետ անձանց պարգևատրելու վերաբերյալ տեղեկությունները, ուստի առավել եւս այդպիսին չի կարող լինել չկոնկրետացված անձի, զուտ հաստիքով, առանց անուն ազգանունի նշման անձի վերաբերյալ նույնաբովանդակ տեղեկությունը, որը ենթակա էր տրամադրման 5-օրյա ժամկետում, սակայն չի տրամադրվել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝

- 189.7-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական հիմնարկի պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով»:
- 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են՝ սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով,
- 254-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն. «Արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված դեպքերում»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում ներառված՝ 151-րդ հոդվածի համաձայն. «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով»:

Պատասխանողը, լինելով պետական հիմնարկի պաշտոնատար անձ, պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել, ուստի ենթակա է վարչական

պատասխանատվության: Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով ու 26-րդ գլխի պահանջներով՝

**Խնդրում եմ՝**

1. Պահանջվող տեղեկությունների տրամադրումը ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Վ. Մարտիրոսյանի կողմից երկու անգամ մերժելու համար նրան տուգանել 30.000 (երեսուն հազար) դրամի չափով:
2. Պատասխանողից բռնագանձել նաեւ դատական ծախսերի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր.
2. Հարցումները,
3. Պատասխանները,
4. Զաղ. Ծառ. Խորհրդի գրությունը,
5. Հայցադիմումը պատասխանողի կողմից ստանալու մասին ապացույց,
6. Լիազորագիր,
7. Արտոնագրի պատճեն:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին**

09.11.2012թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը հետեւյալ կազմով՝  
Նախագահող դատավոր՝ Կարեն Մաթեոսյանի,  
քարտուղարությամբ՝ Լիդյա Դանիելյանի,  
մասնակցությամբ՝ հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ,  
Ներկայացուցիչ Կարեն Մեժլումյան  
պատասխանող՝ «Բնապահպանական ծրամրերի իրականացման  
գրասենյակ» ՊՀ տնօրեն Վ. Մարտիրոսյան,  
Ներկայացուցիչ Ալիկ Մաթեոսյան

դռնբաց դատական նիստում քննության առնելով՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Վ. Մարտիրոսյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի վերաբերյալ, վարչական գործի վարույթը կասեցնելու մասին հարցը,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Վ. Մարտիրոսյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին, որը ՀՀ վարչական դատարանի որոշմամբ ընդունվել է վարույթ, այնուհետեւ նշանակվել է քննության:

Հայցվորի կողմից դատարան է ներկայացվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի՝ հայցվորի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ պահանջվող տեղեկատվությունը (2011թ. աշխատակիցները ըստ հաստիքների ինչքա՞ն գումարով են պարգևատրվել) տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, եւ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.07.2012թ. որոշումը, որով վարույթ է ընդունվել հիշյալ հայցադիմումը:

Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է կասեցնել սույն գործի վարույթը

մինչեւ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող վերը նշված քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

Վարչական դատավարությունում գործի վարույթը կասեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով (օրենսգրքի 89-րդ հոդված):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչեւ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը»:

Դատարանը հարկ է համարում նշել, որ մեկ այլ գործի առկայության պայմաններում քննվող գործի քննության անհնարինությունը, ի թիվս այլ հանգամանքների, կարող է պայմանավորված լինել նաեւ նրանով, որ մյուս գործով կայացվելիք դատական ակտը կարող է հանդիսանալ տվյալ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող որեւէ փաստի վերաբերյալ ապացույց: Նման պայմաններում քննվող գործի վարույթը պետք է կասեցվի մինչեւ մյուս գործով կայացվի վերջնական դատական ակտ եւ այն մտնի օրինական ուժի մեջ:

Տվյալ դեպքում՝ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվում է քաղաքացիական գործն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի? հայցվորի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ պահանջվող տեղեկատվությունը (2011թ. աշխատակիցները ըստ հաստիքների ինչքա՞ն գումարով են պարգևատրվել) տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին: Միաժամանակ սույն վարչական գործով խնդրո առարկա է այն հարցը, թե արդյո՞ք ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենը ոչ իրավաչափորեն չի տրամադրել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության պահանջած նույն տեղեկատվությունը:

Նման պայմաններում, թեպետ երկու գործերով հանդես եկող դատավարության կողմերի կազմը տարբեր է, հիշյալ քաղաքացիական գործով կայացվելիք դատական ակտը կարող է տվյալ վարչական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի վերաբերյալ ապացույց հանդիսանալ: Հետևաբար՝ վարչական գործի քննությունն անհնար է, իսկ վարույթը ենթակա է կասեցման՝ մինչեւ խնդրո առարկա քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի կայացնելը եւ դրա օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ, 117.2-րդ, 125-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով, 144-րդ հոդվածով՝ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**


Վարչական գործի վարույթն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Վ. Մարտիրոսյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին, կասեցնել մինչև Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող? ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի՝ հայցվորի տեղեկատվությունն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ պահանջվող տեղեկատվությունը (2011թ. աշխատակիցները ըստ հաստիքների ինչքա՞ն գումարով են պարգևատրվել) տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը եւ դրա օրինական ուժի մեջ մտնելը:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից եւ կարող է բողոքարկվել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան այն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

ՂԱՏԱՎՈՐ՝

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ





**Գործ 12.**  
**ԻԱԿ-ն ընդդեմ**  
**ՀՀ կառավարությանն առընթեր**  
**ազգային անվտանգության**  
**ծառայության**

## Գործի համառոտ նկարագրությունը

**Ի**նֆորմացիայի ազատության կենտրոնը 2013թ.-ի փետրվարի 11-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությանը՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

«ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագրի շրջանակներում.

1. Ո՞ր տեղեկությունների գաղտնիության աստիճանն է վերանայվել:
2. Ովքե՞ր կարող են դիմել գաղտնագրված տեղեկությունները ստանալու համար:
3. Գաղտնագրված տեղեկությունները ո՞ր մարմնից կարելի է ստանալ:
4. Խնդրում եմ տրամադրել 2011թ.-ի ապրիլի 18-ին ստորագրված «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագրի պատճեն»:

2013թ.-ի փետրվարի 21-ին ԱԱԾ-ն տրամադրել է թերի պատասխան: ԻԱԿ-ը ԱԱԾ-ի պատասխանը համարել է թերի, քանի որ ԱԱԾ-ն ըստ էության չէր պատասխանել ԻԱԿ-ի ներկայացրած հարցերին, ինչպես նաեւ չէր տրամադրել խնդրված համաձայնագրի պատճենը:

2013թ.-ի մարտի 7-ին տեղեկություն ստանալու գրավոր կրկնակի հարցմամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմեց ԱԱԾ-ին՝ սակայն կրկին ստացավ բառացիորեն նույն թերի պատասխանը:

Արդյունքում, 2013թ.-ի ապրիլի 5-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» հայց ներկայացրեց ՀՀ Վարչական դատարան՝ խնդրելով ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի՝ տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը եւ պարտադրել ԱԱԾ-ին ԻԱԿ-ին տրամադրել սպառնիչ տեղեկատվություն:

Դատական գործը դեռ ընթացքում է:

## Գործի նյութերը

### ՀՀ Վարչական դատարանին

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն, նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Ներկայացուցիչ՝

Գեուրգ Դուկասի Հայրապետյան

Պատասխանող՝

ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայություն

### Հայց

տեղեկատվություն ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին

ՀՀ վարչական դատարանին ենք դիմում՝ իրացնելով ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով երաշխավորված, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ նաեւ Օրենք) 11-րդ հոդվածով ձեւակերպված մեր հոդվածով ձեւակերպված դատկան պաշտպանության իրավունքը:

#### 1. Հայցի եության հակիրճ նկարագրությունը

1.1. ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությունից տեղեկատվություն ստանալու հարցումներով պահանջել ենք «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագրի շրջանակներում գաղտնիության աստիճանը վերանայված տեղեկությունների մասին, գաղտնագրված տեղեկությունների տրամադրման մասին տեղեկատվություն, ինչպես նաեւ «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագրի պատճենը: ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությունը տրամադրել է թերի պատասխան՝ պատասխան չի տվել հարցումներով առաջադրված հարցերին: Սույն հայցով խնդրվում է ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստի ճանաչում եւ տեղեկություն ստանալու իրավունքների վերականգնում:

#### 2. Փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը

2.1. 2011թ.-ի հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրվել է «Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միության գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագիրը, որը ստորագրել է նաեւ Հայաստանի Հանրապետությունը:

2.2. 2013թ.-ի փետրվարի 11-ին թիվ 194-4 տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» ՀԿ-ն (հետայսու՝ նաեւ

ԻԱԿ) դիմել է ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության տնօրեն պարոն Գորիկ Յակոբյանին:

**2.3.** Հարցմամբ ԱԱԾ-ից խնդրվել էր տրամադրել «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագրի շրջանակներում գաղտնիության աստիճանը վերանայված տեղեկությունների մասին հետեւյալ տեղեկությունները.

2.3.1. Ո՞ր տեղեկությունների գաղտնիության աստիճանն է վերանայվել:

2.3.2. Ովքե՞ր կարող են դիմել գաղտնագրծված տեղեկությունները ստանալու համար:

2.3.3. Գաղտնագրծված տեղեկությունները ո՞ր մարմնից կարելի է ստանալ:

2.3.4. Խնդրում եմ տրամադրել 18.04.2011թ. ստորագրված «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագրի պատճեն:

**2.4.** Հարցումն ԱԱԾ ուղարկվել է պատվիրված նամակով՝ 2013թ.-ի փետրվարի 11-ին:

**2.5.** 2013թ.-ի փետրվարի 11-ի թիվ 194-4 հարցմանն ի պատասխան՝ ԱԱԾ-ից ստացվել է 2013թ.-ի փետրվարի 21 թվագրված գրություն:

**2.6.** ԱԱԾ-ի գրությունն ունեցել է հետեւյալ բովանդակությունը.

2.6.1. «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո, համաձայնագրի պահանջների համաձայն՝ գաղտնի տեղեկությունների կրիչների գաղտնագրծումը իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ կիրականացվի Կողմ հանդիսացող պետությունների կազմակերպությունների կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:

**2.7.** 2013թ.-ի մարտի 7-ին թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր կրկնակի հարցմամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀԿ-ն նորից դիմել է ԱԱԾ-ի տնօրեն պարոն Գորիկ Յակոբյանին:

**2.8.** Կրկնակի հարցմամբ ԻԱԿ-ը ԱԱԾ-ին հայտնել է, որ ԱԱԾ-ից ստացված պատասխան գրությունում առկա չեն ԻԱԿ-ի հարցմամբ ներկայացված հարցադրումների պատասխանները:

**2.9.** Կրկնակի հարցմամբ ԻԱԿ-ը եւս մեկ անգամ խնդրել է տրամադրել 2013թ.-ի փետրվարի 11-ի թիվ 194-4 հարցմամբ խնդրվող տեղեկությունները:

**2.10.** Կրկնակի հարցումն ԱԱԾ ուղարկվել է պատվիրված նամակով՝ 2013թ.-ի մարտի 7-ին:

**2.11.** 2013թ.-ի մարտի 7-ի թիվ 194-8 հարցմանն ի պատասխան՝ ԱԱԾ-ից ստացվել է 2013թ.-ի մարտի 15 թվագրված գրություն:

**2.12.** ԱԱԾ-ի գրությունն ունեցել է հետեւյալ բովանդակությունը.

2.12.1. Կրկին հայտնում ենք, որ «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո, համաձայնագրի պահանջների համաձայն՝ գաղտնի տեղեկությունների կրիչների գաղտնազերծումը իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ կիրականացվի Կողմ հանդիսացող պետությունների կազմակերպությունների կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:

### 3. Հայցի իրավական հիմքերը

**3.1.** ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

**3.2.** ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի համաձայն.«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

**3.3.** «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն.«Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից»:

**3.4.** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

**3.5.** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

- 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը»:

**3.6.** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ

կետի համաձայն՝ «Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը»:

**3.7.** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- 5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները»:

**3.8.** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-ին կետի համաձայն՝ «Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ»:

**3.9.** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը»:

**3.10.** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն. «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ ... տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն...»:

**3.11.** ՀՀ Վարչական դատավության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները...»:

**3.12.** ՀՀ Վարչական դատավության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որեւէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը»:

**3.13.** ՀՀ Վարչական դատավության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «Վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետեւանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետեւանքով»:

#### 4. Հայցի փաստարկները

**4.1.** ԱԱԾ-ն «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում ամրագրված՝ տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքներն ապահովելու համար պարտավոր էր կատարել

4.1.1. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով կամ նույն հոդվածի 10-րդ կետով սահմանված գործողություններից որեւէ մեկը, կամ

4.1.2. նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված գործողություններից որեւէ մեկը, ընդ որում՝ Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

**4.2.** 4.1.1. դեպքում խոսքը գնում է հայցվող տեղեկատվությունն ըստ էության տրամադրելու մասին, երբ ըստ Օրենքի ԱԱԾ-ն պարտավոր էր կամ տրամադրել հարցմամբ ներկայացված բոլոր 4 հարցերով խնդրվող տեղեկությունները եւ փաստաթղթերի պատճենները, կամ հայցվող տեղեկությունները հրապարակված լինելու դեպքում տրամադրել տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը (հղում կատարել տեղեկատվության աղբյուրին):

**4.3.** 4.1.2. դեպքում խոսքը գնում է հայցվող տեղեկատվության տրամադրումը մերժելու մասին, երբ ըստ Օրենքի ԱԱԾ-ն պարտավոր էր Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերի առկայության դեպքում մերժել ներկայացված բոլոր 4 հարցերով խնդրվող տեղեկությունները, կամ, եթե պահանջվող տեղեկության միայն մի մասն (4 հարցերից 1-ը կամ մի քանիսը, բայց ոչ բոլորը) է պարունակում տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն տրամադրեր մնացած մասի (մնացած մի քանի կամ 1 հարցերի) վերաբերյալ, իսկ մնացած մասով մերժեր: Ընդ որում՝ տեղեկատվության տրամադրումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով ԱԱԾ-ն պետք է ներկայացնել մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը:

**4.4.** Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի՝ ԱԱԾ-ն պարտավոր էր պատասխան գրությամբ տրամադրել ամբողջական տեղեկատվություն, այն է, անդրադառնար ԻԱԿ-ի հարցմամբ բոլոր 4 հարցերով խնդրված տեղեկություններից յուրաքանչյուրին: Այս առումով, ԱԱԾ-ն պետք է տրամադրեր ԻԱԿ-ի հարցման բոլոր 4 հարցերով խնդրված տեղեկություններից յուրաքանչյուրն ըստ էության, կամ պետք է ներկայացներ խնդրվող տեղեկություններից յուրաքանչյուրի տրամադրման անհնարինության վերաբերյալ տեղեկատվություն (օրինակ՝ տեղեկությունը չտնօրինելու վերաբերյալ), իսկ խնդրվող տեղեկությունները մերժելու դեպքում պետք է ներկայացներ ԻԱԿ-ի հարցման 4 հարցերով խնդրված յուրաքանչյուր տեղեկությունը մերժելու հիմքերը եւ համապատասխան նորմերը:

**4.5.** Սույն հայցին 4.1., 4.2., 4.3. եւ 4.4. կետերում նշված գործողություններից յուրաքանչյուրն ԱԱԾ-ի կողմից չկատարելն առավել վառ արտահայտվում է ԻԱԿ-ի հարցումների 4-րդ հարցով հայցված տեղեկատվությունը չտրամադրելու եւ դրա տրամադրմանն առհասարակ ԱԱԾ-ի կողմից չանդրադառնալու մեջ: Հարցման 4-րդ հարցով ԻԱԿ-ը խնդրել է տրամադրել 18.04.2011թ. ստորագրված, ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին եւ համաձայնագրի պատճենը: Այս դեպքում խոսքը գնում է պատճեն տրամադրելու մասին: Պատճենի տեսքով տեղեկատվության առկայությունն, ի տարբերություն տեքստային շարադրանքի տեսքով ներկայացվող տեղեկատվության առկայության՝ մեկնաբանման խնդիր չունի: Ուստի, տվյալ դեպքում ԱԱԾ-ն պետք է կամ տրամադրեր «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագրի պատճենը, կամ Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով հիմնավոր մերժել դրա տրամադրումը: Նշված գործողություններից որեւէ մեկն ԱԱԾ-ն չի կատարել:

**4.6.** ԱԱԾ-ն «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» կողմից տեղեկատվություն ստանալու հարցում ստանալուց հետո տրամադրել է պատասխան, կատարել է գործողություն, որով, սակայն, չի ապահովել վերը նկարագրված գործողություններից ոչ մեկը, ինչը ոչ իրավաչափ է: ԱԱԾ-ն ոչ իրավաչափ գործողությամբ (ոչ պատշաճ պատասխան տրամադրելով) խախտել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքները:

## 5. Հայցի պահանջը

Ելնելով վերագրյալից եւ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով եւ 11-րդ գլխի պահանջներով՝

### Խնդրում եմ

**5.1.** Ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը



**Յետեւանքների վերացման ածանցյալ պահանջը**

**5.2.** վերացնել այն հետեւանքը, որը առաջացել է ԱԱԾ-ն՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման հետեւանքով, այն է՝ պարտադրել ԱԱԾ-ին տրամադրել «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»՝ 2013թ.-ի փետրվարի 11-ի թիվ 194-4 եւ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»՝ 2013թ.-ի մարտի 7-ի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով փնտրվող սպառնիչ տեղեկատվություն,

**6.** Տեղեկություններ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ

**6.1.** «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» կողմից փնտրվող տեղեկատվությունը ԱԱԾ-ի կողմից չտրամադրելը վերադասության կարգով չի բողոքարկվել, քանի որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը նման պարտադիր պայման չի նախատեսում:

**7. Ապացույցների ցանկը**

**7.1.** Գրավոր ապացույց - «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»՝ 2013թ.-ի փետրվարի 11-ի թիվ 194-4 տեղեկություն ստանալու գրավոր հարցման պատճենը (վերաբերալի է 2.2, 2.3 կետերում նշված փաստերին),

**7.2.** Գրավոր ապացույց- «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»՝ 2013թ.-ի փետրվարի 11-ի թիվ 194-4 տեղեկություն ստանալու գրավոր հարցումն ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայությանն ուղարկելու փոստային անդորրագրի պատճենը (վերաբերալի է 2.4 կետում նշված փաստին),

**7.3.** Գրավոր ապացույց - «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»՝ 2013թ.-ի փետրվարի 11-ի թիվ 194-4 հարցմանն ի պատասխան ԱԱԾ-ի՝ 2013թ.-ի փետրվարի 21 թվագրված գրության պատճենը (վերաբերալի է 2.5, 2.6 կետերում նշված փաստերին),

**7.4.** Գրավոր ապացույց - «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»՝ 2013թ.-ի մարտի 7-ի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցման պատճենը (վերաբերալի է 2.7, 2.8, 2.9 կետերում նշված փաստերին),

**7.5.** Գրավոր ապացույց - «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»՝ 2013թ.-ի մարտի 7-ի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումն ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայությանն ուղարկելու փոստային անդորրագրի պատճենը (վերաբերալի է 2.10 կետում նշված փաստին),

**7.6.** Գրավոր ապացույց - «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»՝ 2013թ.-ի մարտի 7-ի թիվ 194-8 հարցմանն ի պատասխան ԱԱԾ-ի՝ 2013թ.-ի մարտի 15 թվագրված գրության պատճենը (վերաբերելի է 2.11, 2.12 կետերում նշված փաստերին):

Հացվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»  
ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյրոյան

Հայցվորի ներկայացուցիչ՝ Գեւորգ Հայրապետյան

## **Գործ 13.**

**ԻԱԿ-ն ընդդեմ**

**Հայաստանի հանրապետության**

**Ազգային ժողովի**

## Գործի համառոտ նկարագրությունը

**Ի**նֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ.-ի նոյեմբերի 22-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ Ազգային ժողովին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Տեղադրված են արդյոք ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ՀՀ ԱԺ նախագահի կարգադրությունները,
2. Խնդրում ենք տրամադրել ՀՀ ԱԺ նախագահի 2012թ.-ի առաջին կիսամյակի կարգադրությունների պատճենները:

Հարցման պատասխանը չստանալով՝ 2012թ.-ի դեկտեմբերի 5-ին ԻԱԿ-ը տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում ներկայացրեց ԱԺ-ին՝ կրկին խնդրելով տրամադրել հայցվող տեղեկատվությունը: Նույն օրը՝ 2012թ.-ի դեկտեմբերի 5-ին, ստացվեց ԱԺ էլեկտրոնային պատասխանն այն մասին, որ տեղեկատվությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, եւ այն կտրամադրվի 30-օրյա ժամկետում:

2013թ.-ի մարտի 4-ին՝ հարցումն ուղարկելուց ավելի քան 3 ամիս անց, ՀՀ Ազգային ժողովը տրամադրեց թե-

րի պատասխան՝ ներկայացնելով ՀՀ ԱԺ նախագահի 2012թ. առաջին կիսամյակի կարգադրությունները՝ ըստ հերթական համարների չներկայացնելով 12 կարգադրությունների պատճեն:

2013թ.-ի մարտի 7-ին ԻԱԿ-ը կրկին հարցմամբ դիմեց ԱԺ-ին՝ խնդրելով տրամադրել նաեւ չտրամադրված կարգադրությունների պատճենները: Սակայն, ԱԺ-ն մերժեց տրամադրել դրանք՝ պատճառաբանելով, որ տվյալ կարգադրությունները պարունակում են աշխատողի վերաբերյալ անձնական տվյալներ:

2013թ.-ի ապրիլի 8-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» հայց ներկայացրեց ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի՝ վիճարկելով ԱԺ-ի մերժումը: ԻԱԿ-ը դատարանից խնդրեց ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ ՀՀ Ազգային ժողովին պարտավորեցնել տրամադրել հայցվող տեղեկությունները:

Գատական գործը դեռ ընթացքում է:

## Գործի նյութերը

### ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն, նախագահ՝ Շուշան Դոյրոյան  
 Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան  
 Պատասխանող՝ ՀՀ Ազգային ժողով

08.04.2013թ.

### Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին

#### 1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

1) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաեւ՝ ԻԱԿ) 22.12.2012թ-ին հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածներին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին, թիվ 185-ի 9 հարցմամբ Տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել ՀՀ Ազգային ժողովի նախագահ պարոն Զովիկ Աբրահամյանին, խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

«1. Տեղադրված են արդյոք Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում՝ [www.parliament.am](http://www.parliament.am)-ում, ԱԺ նախագահի կարգադրությունները:

2. Խնդրում ենք տրամադրել ՀՀ ԱԺ նախագահի 2012թ. առաջին կիսամյակի կարգադրությունների պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):»

Նշված հարցման պատասխանը չստանալով՝ ԻԱԿ-ը 05.12.2012թ-ին թիվ 187-ի 2 համարով «Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում» է ներկայացրել, հայտնելով, որ մինչ օրս չի ստացվել 22.11.2012թ. հարցման պատասխանը եւ կրկին անգամ խնդրել է տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Նույն օրը՝ 05.12.2012թ-ին ստացվել է ԱԺ Էլեկտրոնային պատասխանն այն մասին, որ տեղեկատվությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ուստի այն կտրամադրվի 30-օրյա ժամկետում:

Դրանից հետո ստացվել է ԱԺ աշխատակազմի ղեկավար, գլխավոր քարտուղար Գ. Դումանյանի 04.03.2013թ. պատասխանը, որին կից ներկայացվել են

ԱԺ նախագահի կարգադրությունները, որոնց մեջ բացակայել են հետևյալ համարի կարգադրությունները՝ 10, 12, 13, 14, 19, 44, 48, 49, 50, 59, 66, 72:

ԻԱԿ-ը 07.03.2013թ-ին հերթական անգամ դիմել է ԱԺ-ին՝ խնդրելով տրամադրել նաեւ չտրամադրված կարգադրությունների պատճենները, որի վերաբերյալ ստացվել է 18.03.2013թ. պատասխանն այն մասին, որ այդ կարգադրությունները պարունակում են աշխատողի վերաբերյալ անձնական տվյալներ:

Նշված փաստերը հաստատվում են ԱԺ-ի 04.03.2013թ. եւ 18.03.2013թ. պատասխաններով եւ ԻԱԿ-ի 07.03.13թ. հարցմամբ:

## 2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի

- 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա»,
- 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող եւ՝ տեղեկություններ ունեցող պետական հիմնարկներ եւ դրանց պաշտոնատար անձինք,
- 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:
- 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ինչպես տեսնում ենք, պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության՝ չի տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե ՀՀ Ազգային ժողովի պաշտոնա-

կան ինտերնետային կայքում՝ [www.parliament.am](http://www.parliament.am)-ում, ՀՀ ԱԺ նախագահի կարգադրությունները տեղադրված են, թե ոչ, ինչպես նաև չի տրամադրել ԱԺ նախագահի թիվ 10, 12, 13, 14, 19, 44, 48, 49, 50, 59, 66, 72 կարգադրությունները եւ որեւէ կերպ չի հիմնավորել, այդ կարգադրություններում առկա տեղեկությունների անձնական տվյալ լինելը:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով, 11-րդ Գլխի, այդ թվում 71-րդ հոդվածի պահանջներով՝

### **Խնդրում եմ**

ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ ՀՀ Ազգային ժողովին պարտավորեցնել տրամադրելու ՀՀ Ազգային ժողովի նախագահի թիվ 10, 12, 13, 14, 19, 44, 48, 49, 50, 59, 66, 72 կարգադրությունների պատճենները:

Միաժամանակ խնդրում եմ պատասխանողից բռնագանձել դատական ծախսերի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր.
2. հարցումները,
3. պատասխանները,
4. փոստային անդորրագրերը,
5. հայցադիմումը պատասխանողի կողմից ստանալու մասին ապացույցներ,
6. լիազորագիր,
7. արտոնագրի պատճեն:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ՝  
Շուշան Դոյդոյան



«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**2011-2013**

**ԳԻՐՔ III**

Կազմեցին՝

Շուշան Դոյրոյան, բգթ.

Գեորգ Յայրապետյան

[www.foi.am](http://www.foi.am)